Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* **http://www.armin.am**

*էլ. փոստ՝* **info@armin.am**

Ցոլակ Ղանդիլյան - ՆԺԴԵՀ



Մաքսիմ Ոսկանյան - ՆԺԴԵՀ

Մ. Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

# ՀՈԳԵՎՈՐ ՆԺԴԵՀԸ

**Նժդեհի իմաստունի գրավոր վկայությունները աստվածաշնչյան բանալիներով ընթերցելիս**

Երևան
«Լուսաբաց հրատարակչատուն»
2008

ՀՏԴ 941 (479.25):23/28:32
ԳՄԴ 63. 3 (2Հ)+86.37+66
Ո – 459

Ոսկանյան Մ.Ա.
Ո – 459 Հոգևոր Նժդեհը.- Եր.:
Լուսաբաց, 2008.- 186 էջ:

Գրքում լուսաբանվում են Նժդեհի՝ Մեծ Հայրենասերի, Զորավարի, Իմաստունի, Քրիստոնյայի մտքերը, կյանքի դրվագները, հայացքները՝ կենտրոնանալով ավելի շատ նրա քրիստոնեական հայացքների վրա: Զորավարի կյանքն այս կտրվածքով շատ քիչ է քննարկվել ու լուսաբանվել, այդ բացը լրացնելուն է միտված գրող, լրագրող, հոգևոր խնդիրների մեկնաբան Մաքսիմ Ոսկանյանի աշխատանքը, որը «Լուսաբաց հրատարակչատունը» ուրախությամբ ու ակնածանքով ներկայացնում է հայ հասարակությանը, որպեսզի մեր ժողովուրդը առաջիկա հազարամյա ճանապարհը կարողանա ընթանալ իմաստուն Ուղեկցողի առաջնորդությամբ:

Գիրքը նախատեսված է Հայոց կուսակցությունների, պատգամավորների, բանակի հրամանատարների, բուհերի ուսանողների, դպրոցների ուսուցչության և բանիմաց հավատացյալների համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)+86.37+66

© «Լուսաբաց հրատարակչատուն», 2008
© Մաքսիմ Ոսկանյան, 2008

**Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տե՛ր,**
**Զգործս ձեռաց մերոց՝ հաջողեայ մեզ: Ամեն:**

## ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս փոքր աշխատասիրությունը նախաձեռնեցի բարեկամներիս հետևողական պնդմամբ թե՝ Անդրանիկ Զորավարի «Հավատի էջերի» նման մի գիրք էլ Նժդեհի մասին գրիր: Մարդկայնորեն անընդհատ հրաժարվում էի թե՝ Նժդեհն արդեն լավագույնս գրել է ինքն իր մասին: Պարզապես, Նժդեհի լույսը վայելելու համար հարկ է նրան Սուրբ Գրքի բանալիներով կարդալ:

Ասացին՝ այդ էլ խնդրում ենք, որ գրավոր անես: Դու կարող ես: Տերը քեզ հետ է:

Հարկ էր տարանջատել հոգևոր Նժդեհին՝ կուսակցական և իբր հեթանոս Նժդեհից: Որովհետև ժամանակային պարտադրանքներն ու մարդկային որոնումները հաճախ հակադարձ են լինում բուն մարդուն, որ Աստծուց առաքելություն ունի: Օրինակ. Աստծո լուսավորիչ Նժդեհն ամենևին կուսակցություն չէր ընդունում, թեպետ որոշ ժամանակ անդամակցում էր դաշնակցական կուսակցությանը.

**«Հասկանանք, որ հայը պատճառ չունի կուսակցականանալու: Իսկ մեր ժողովրդի թվական տկարությունը, մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը և երեկվա մեր եղեռնը կը բավեն գիտակցելու, որ հայը կուսակցականանալու նաև իրավունք չունի»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

Բնականաբար, իմաստասիրական իր աշխարհայացքով տարբեր լինելով որևէ կուսակցությունից, Նժդեհին որևէ կուսակցությունը չէր պահի իր շարքերում, և հեռացվեց:

Համազգայինը, այսինքն՝ քրիստոնեական նկարագիր ունեցող ժողովրդին ամենայն կուսակցություններից Նժդեհի

նման առավել դիտելով է, որ Զորավար Անդրանիկը հայտարարում է.

**«Իմ կուսակցությունը իմ ժողովուրդն է»:**

Բայց իր ժամանակի մեջ, որպեսզի կուսակցության արդեն եղած ուժերը գործածի աշխարհասփյուռ հային օգուտ տալու համար, Նժդեհը ունի նաև կուսակցական բազմաթիվ էջեր:

Օրինակը երկրորդենք. Խորհրդային աստվածամերժ տարիներին հայ հզոր այրեր ունեինք, որ հանուն հոգևոր Հայրենիքի օգուտի էին միայն կուսակցական, սակայն ներքնապես կուսակցություն չէին էլ ընդունում: Նրանք հայրենասեր, եկեղեցասեր, Աստծո կամքը հանուն հայության գործադրող մարդիկ էին, որ օգտվեցին կուսակցական լծակներից:

Նույն բանալիով էլ պիտի դիտել Նժդեհի թե՛ կուսակցական և թե՛ իբր հեթանոս լինելը: Եղեռնի արհավիրքից հուսահատ Նժդեհը կարող էր մի պահ Քրիստոսից հայացքը որպես թե շեղել, ում անվանում է մարդկության միակ Ուսուցիչը, Ամենազորեղը, մարդու ձգտման բարձրակետ, նպատակակետը և մարդկությանը դեռ անարժան՝ Քրիստոսի քարոզած խաղաղությանը.

**«Քսան երկար ու ծիգ դարեր են անցել Գողգոթայից մինչև մեր օրերը, և, ավա՜ղ, խաղաղության ու սիրո Ուսուցչի աստվածաշունչ խոսքը շարունակում է մնալ որպես «ձայն բարբառոյ յանապատի»** *(ՆԺԴԵՀ. էջեր իմ օրագրէն. Հակամարտութեան օրէնքը):*

**«Որի՞ն հետևել- ահա հարցերից ամենաճակատագրականը, ո՞րին- Նազովրեցո՞ւն, թե՞ Բյուխներին, Էմերսընին, թե՞ Մարքսին, Մամիկոնյանների՞ն, թե՞ հայ մտավորականության քաղաքականապես ակնապաշտ մասին:**

**Առաջինները - ոգու հսկաներ - քո մեջ կապրեցնեն աստվածայինը, վերջինները՝ մարդկորեն անասնականը. առաջիններ-ը քո մեջ կմշակեն իդեալիստը, ասպետը, հերոսը, վերջինները՝**



**գորտի հոգով առօրեապաշտ պաղ մահկանացուն»** *(«Ռազմիկ» Սոֆիա, 1941, թիւ 3,: Գարեգին Նժդեհ, հտ. 1, էջ 432):*

Ուստիև, նման արմատական աշխարհայացքով, Նժդեհը չէր կարող հեթանոս լինել: Պարզապես մեծ եղեռնի ցավը, որ Կոմիտասին հասցրեց խելագարության, Նժդեհին էլ մղեց ցեղակրոնությամբ ռազմահայրենասիրական ցեղ կազմավորել՝ պայքարի նպատակով:

Եղեռնից հուսալքված ժողովրդին ռազմահայրենասիրական պաշտպանությանը մղելու համար, Նժդեհը մի պահ միայն հարաբերվեց հեթանոսությանը, որ փոքր-ինչ չափով վնասեց նաև իմաստունին, սակայն թվում է՝ Նժդեհը վերագտավ ինքն իրեն և իր վերջնական գաղափարախոսությունը հիմնեց Տարոնականության վրա, որի արմատը ԵԿԵՂԵՑԱՊԱՀ ՎԱՐԴԱՆԱՆՔ ԷԻՆ և անգամ որպես հայ եկեղեցու որդի պարծեցավ թե. «Տարոնականությունը նշանակալից է, ՈՐՈՎՀԵՏԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՕՐՀՆԵՑ»:

Ավելին նաև, Հոգևոր Նժդեհը մեր աշխարհում այն մեծ լուսատուներից է. ում համար անգամ ամենասիրելին՝ Հայրենիքը, դիտվում է Աստծուց հետո: Որովհետև, ճշմարիտ որ, առանց Աստծո էլ ի՞նչ հոգևոր Հայրենիք, առանց հոգու՝ էլ ի՞նչ հոգևոր, երբ Հայրենիքը սոսկ հողատարածք չէ, այլ հոգով կենդանի, արժանի մարդկանց բնակավայր:

**«Իմ հոգին զույգ հենարաններ ունի՝ Աստված և հայրենիք»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

**«Մեր հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստծո փեշից, դուք էլ բռնեք ինձանից»** *(Ռ. Համբարձումյան «Վարք Նժդեհի» էջ 105):*

Բնականաբար, թույլերին չի՞ ասում՝ դուք էլ ինձանից բռնեցեք, որովհետև հոգով ուժեղների համար Նժդեհյան պատվերն այլ կերպ չի թարգմանվում, քան.

-Մեր հայրենիքի բախտի համար դուք էլ ինձ նման Աստծո փեշից բռնեցեք:

Ուստի և, հարկ է մեզ տարանջատել ՀՈԳԵՒՈՐ ՆԺԴԵՀԻՆ մարդ Նժդեհից, իբրև թե կուսակցական Նժդեհից և իբրև թե հեթանոս Նժդեհից: Եվ եթե հոգով ուժեղ ենք, ընտրենք հոգևոր Նժդեհին՝ Աստծո փեշից բռնելու իր արմատական պատվիրանով: Հոգևոր Նժդեհին, որ չընդունեց կամ կեղծ դիտեց բոլոր այն մարդկանց հայրենասիրությունը, ովքեր Աստծուն չընդունեցին.

**«Նա, ով ընդունում է Աստծո գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականությանց՝ ազգ, հայրենիք, պետություն: Ուզու՞մ եք խորապես ճանաչեք մեկին, խոսեք և խոսակցեք նրան Աստծո մասին, և նա իր պաշտանքի կամ անհավատության միջոցավ պիտի մատնե իր հոգևոր հասակը: Անաստվա՞ծ ես, ասել է՝ զուրկ ես սրբության նվիրումից, պարտականության զգացումից, ասել է՝ վաղ թե ուշ դու պիտի դավաճանես նմաններիդ»** *(«Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ»,«Ռազմիկ» 1943թ. Գարեգին Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

Այսինքն. Նժդեհի համար անԱստված մեկը ճշմարիտ հայրենասեր երբևէ լինել չէր կարող: Կարող է նմանը միայն խաբել թե՝ է, սակայն՝ չլինելով: Իսկ պակաս Աստվածճանաչը՝ պակաս էլ հայրենասեր է լինում, իր պակաս աստվածճանաչության չափ՝ պակաս վստահելի մարդ է: Կամ նմանի հայրենասիրությունը արդեն խաբեական է և կեղծավոր կամ անմիտ:

... Այսպես: Երբ Հոգևոր Նժդեհի մասին գրելու պնդումները երկար ժամանակ չդադարեցին, մտածեցի՝ կամքն Աստծունն է: Որովհետև մեզանում Նժդեհին շատերն «առանց Աստծո» են կարդում, երբ Նժդեհն ինքն է խոստովանում թե՝ եղել է ԽՈՐ ՀԱՎԱՏԻ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ մարդ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ՏԱԼՈՎ ԱՍՏԾՈՆ, ԱՊԱ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՆՎԻՐԱԿԱՆԻՆ՝ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ: Այդպես էր նաև Վարդան Զորավարը: Այս ամենը հուշում են, որ Նժդեհ ընթերցելու բանալին Աստվածճանաչության չափանիշով պիտի լինի, որովհետև «Մարդու գիտակցական չափանիշն ու հասակը, նորմալ մարդ լինելը ճանաչվում է մարդու Աստվածճանաչության մակարդակից»,- ուսուցանում է Նժդեհը: Բնականաբար. Հայրենիքն ընբռնելու ելած ազգային մեծերն առավել պիտի լինեն Աստվածճանաչ, քան ժողովուրդը, որ կարողանան ճշմարիտ լուսավորել և օգուտ տալ իրենց ժողովրդին:

Այս գրքով ջանացի նաև իմ բաժին սքանչացումը փոխանցել Աստվածաշնչյան Նժդեհ ներկայացնելիս, որովհետև ոմանք թերուս ընթերցումով՝ մեր ոսկե դարի մեծերին որդիորեն ընկերակցող, Քրիստոսատուր ոսկին ներկրող Նժդեհի անունը ոչ միայն Աստծուն մերձակից, այլ մեղք գործելու չափ՝ հակառակ են դիտում: Նաև ջանացի չխուսափել Նժդեհի կյանքի անկյունադարձին Քրիստոսին չընբռնելու պահի մասին ևս խորհրդածելով խոսել: Ո՞ր մեկիս հետ նման պահեր չեն պատահել: Պետրոս ու Պողոս առաքյալների հետ ևս նման պահեր չեղա՞ն: Մարդ ենք մեղանչական: Սողոմոն իմաստունի հե՞տ նույնը չեղավ: Եվ նման հարցի մասին ավելի լավ է բարեկամը խոսի, քան թողնել թշնամուն, որ եղած ընտիրը պատրաստ է ավերել, ծուռ կամ վնասաբեր ներկայացնել՝ Նժդեհի քրիստոնեական լույսի մեկ տոկոսն էլ ինքը չունենալով, բայց ամբողջականորեն խաչ քաշելով քրիստոնյա Նժդեհի վրա, իբր ինքն իր գործերով եսիմ ով է: Որովհետև մարդիկ կան, որոնց դեռ թվում է, եթե մեծերի դեմ Քրիստոսի անունով դատաստանի խոսք ասեն՝ իրենք էլ մեծ կերևան: Ինչու չէ, իմաստունի անկման պահի հանգամանքին ևս պիտի բնականորեն անդրադառնալ, որովհետև Նժդեհի նման լուսավոր հսկան, այնուամենայնիվ, բոլոր կողմերից է երևում: Հիսուս ասում է. **«Մի քաղաք, որ լեռան վրա է կառուցված՝ չի կարող թաքնվել և ամեն կողմից երևում է»:**

Նժդեհ իմաստասերը Աստվածաշնչյան բանական լեռան վրա կառուցված մի փոքր ու գեղեցիկ, բանական քաղաք է,

որ երևում է ոչ միայն Հայաստանից, այլ աշխարհի՝ ճշմարիտը գնահատող իմաստասեր մարդկության կողմից էլ:

Կուսակցությունները քարոզում են մարդ Նժդեհին կամ խառնը. հաճախ, ըստ իրենց նախասիրությունների՝ փոխելով-ծռմռելով մեծ իմաստասերի խոսքերի իմաստները, սակայն մենք այս գրքով քարոզեցինք Հոգևոր Նժդեհին, և այդ արեցինք բնականության եղանակով, ինչպես ցորենն են էրնում, որ թեփը բուն հատիկից անջատեն և ցորենն ընտրեն: Պարզապես Աստվածպաշտության բանալիներով ընթերցեցինք հոգևոր Նժդեհի տողերը, առանձնացնելով աշխարհիկից և ցեղակրոնությունից:

Աստված օրհնի հոգևոր Նժդեհին և նրա Աստծո ընթացականին: Ամե՛ն:

Հայտնի է, որ Նժդեհ իմաստունը գրել է դասական ուղղագրությամբ, սակայն, քանի դեռ մեր դպրոցներում դասական ուղղագրություն չի ուսուցանվում, առավել օգտակար նկատեցինք Նժդեհից արված մեջբերումները կատարել այսօրվա ուղղագրությամբ, առայժմ առավել կարևորելով ասելիքը ժամանակին տեղ հասցնելու պարագան, քան ուղղագրությունը, որ ընթերցողների մի մասին կարող էր խոչընդոտել, դժվարացնել Նժդեհյան կուռ խոսքի ընկալումն ու վայելումը: Նաև՝ որ մեր գիրքը առավել շատ հոգևոր մեկնումզրույցների փունջ է, քան միայն բանասիրական աշխատանք: Այսինքն թե՝ դասականով ներկայացնելու պարտավորությունը առայժմ միայն մի կողմ դրեցինք՝ առավել քանակով ընթերցողներ շահելու նպատակով:

Այս աշխատանքում ինձ առավելագույնս աջակցողներին, խմբագրական և սրբագրական աշխատանքներին լծակից, «Ավանգարդ» թերթի խմբագիր՝ Ջուլիետ Մարտիրոսյանին, հարկավոր գրականությունը տրամադրող գրչեղբայրներիս՝ պատմաբան, Նժդեհագետ Ռաֆայել Համբարձումյանին,



(որ գիրքը գրելու ողջ ընթացքում ջերմությամբ հետաքրքրվում էր թե՝ ինչպե՞ս են գործերն ընթանում, ուշադրություն հրավիրում Նժդեհի Քրիստոնեականի այս կամ այն հատվածին), արձակագիրներ՝ Գրիգոր Ջանիկյանին և Գագիկ Մախսուդյանին, որ Նժդեհի հատորներից տրամադրեցին, Ըմբշամարտի աշխարհի չեմպիոն «Զորավար Անդրանիկ բարեգործական միության» նախագահ՝ Նորայր Մուշեղյանին՝ հանգուցային որոշ հարցեր միասին տրամաբանորեն քննելու համար, գիրքը գրելուն քաջալերողներ, հոգևորական՝ Հայր Սերովբեին, լրագրող, «Հավատի էջեր զորավար Անդրանիկի կյանքից» գրքի խմբագիր Սեմեոն Սարայանին, որ առաջիններից էր, երբ պնդում էր նման գրքի կարևորությունը, նրա գործընկեր Խաչիկ Սարգսյանին, որ հետևողական լինեմ այդ գործն անել, ականջի ետև չգցեմ կամ չծուլանամ, հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը և նրանց ու գրքին մյուս բոլոր ի սրտե աջակցողների, բարին կամեցողների համար խնդրում Տեր Աստծո ամենայն բարեհաճությունը: Ամե՛ն:

Թեման մեծ էր, և մի քանի հանգուցային, կարևոր հարցեր միայն հասցրեցի քննարկել: Իսկ ինչ չհասցրեցի, այդ ամենի համար խնդրում եմ ձեր ներողամտությունը, որովհետև մեր ուժն ու հնարավորությունը, ցավոք, այժմ այդքանն էր: Հավատում ենք, որ ինչ չենք հասցնում, այդժամ Աստված այդ կիսատը լրացնող շարունակողներ է վեր հանում: Եվ այդ բանի համար ևս աղոթում ենք:

## ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՀԵՐ՝ ՀԵՌԱՄԲ ՆԺԴԵՀԻՄԱՍՏՈՒՆԻ

### ԱՆՀՈԳԻ ՄԱՐԴԸ ՀԱՐԱԳՈՐԾ Է, ՀՈԳԻՆ Է ԲԱՆԱԼԻՆ ՏԻԵԶԵՐՔԻ

«Զգալ, որ հոգի ունես- ահա՛ թե երբ են բացվում, խոսում, ժպտում ճշմարիտը, բարին, գեղեցիկը:

Անհոգի,- ասում է պարզ ժողովուրդը և դրանով անսխալորեն բնութագրում այնպիսիներին, որոնք կարող են իրենց չարագործություններն ու դաժանությունները ներոնականության հասցնել:

Հոգու համար՝ երկնքի կապտության հետ մրցող շուշանը բույս չէ՛ միայն, արևի հետ ամեն օր առաջինը համբուրվող լեռը՝ հողեղեն կարկառ, բարձունք չէ՛ միայն: Հոգին-որին մատչելի է ամեն խորք, բարձունք, հորիզոն - հոգի՛ն է բանալին տիեզերքի, թարգմա՛նը բնության:

Զգալ, որ հոգի ունես- ա՛յս է մարդկայնացում մեզ, միայն ա՛յս» *(ՆԺԴԵՀ. Իմաստասիրական խոհեր):*

### ՈՒԶՈՒՄ ԵՔ ԽՈՐԱՊԵՍ ՃԱՆԱՉԵՔ ՄԵԿԻՆ. ԽՈՍԱԿՑԵՔ ՆՐԱՆ ԱՍՏՑՈ ՄԱՍԻՆ

«Նա, ով ընդունում է Աստծո գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականությանց՝ ազգ, հայրենիք, պետություն: Ուզու՞մ եք խորապես ճանաչեք մեկին, խոսեք և խոսակցեք նրան Աստծո մասին, և նա իր պաշտանքի կամ անհավատության միջոցավ պիտի մատնե իր հոգևոր հասակը: Անաստվա՞ծ ես, ասել է՝ զուրկ ես սրբության նվիրումից, պարտականության զգացումից, ասել է՝ վաղ թե ուշ դու պիտի դավաճանես նմաններիդ» *(«Խոսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ. Գարեգին Նժդեհ. հտ. 1):*



### ՀՈԳՈՒ ՁՈՒՅԳ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԸ՝ ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ

«Իմ հոգին զույգ հենարաններ ունի՝ Աստված և Հայրենիք» *(«Ռազմիկ» 1941թ. Գարեգին Նժդեհ, հտ. 1, Երևան, 2002, էջ 430):*

### ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐՈՆ

«Գիտություն և կրոն. սրանք թշնամիներ չեն, այլ զինակիցներ, որոնցից մեկը գործում է մտքի, մյուսը՝ սրտի միջոցով» *(«Խոսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., Գարեգին Նժդեհ. հտ. 1):*

### ԱՌՈՂՋ ՀՈԳԵՎԻՃԱԿ ՉԷ ԱՆԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ

«Մեր օրերի հակակրոն հոսանքը պիտի բացատրել մարդկային տիպի հոգևոր անկատարությամբ: Առողջ հոգեվիճակ չէ անկրոնությունը: Մարդը միշտ էլ հեռանում է իր նմաններից և ապա հետո՝ իր Աստծուց» *(«Խոսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., Գարեգին Նժդեհ. հտ. 1):*

### ՉԿԱ ՄՇԱԿՈՒՅԹ ԱՌԱՆՑ ԿՐՈՆԱԿԱՆ ԶԳԱՑՈՒՄԻ

«Չարություն է շնչում ամեն անկրոն: Մարդկային անհատը միայն այն չափով է ընկերային, ինչ չափով որ դա կրոնաշունչ է: Կրոնապես տկարացա՞վ մարդկությունը- և ահա այլևս երկինք չունի նա, փլավ նրա հույսերի աշխարհը. այսօր այնտեղ էլ մահն է գործում իր դեմ...Չկա մշակույթ առանց կրոնական զգացումի: Ցամաքում են նրա ստեղծագործ խանդի աղբյուրները, հենց որ դա դառնում է նյութապաշտիկ» *(«Խոսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ.: Գարեգին Նժդեհ. հտ. 1):*

# ԳԱՐԵԳԻՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԻՆՔՆ ԻՐԵՆ ԱՆՎԱՆԵՑ ՆԺԴԵՀ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՕՏԱՐԱԿԱՆ

«Ծանոթ, բարեկամ, ազգական - ոչ ոք իր դուռը
կբանա առջևդ, եթե անգամ
Նազովրեցու խաչն ուսիդ և փշե պսակը
արնածոր ճակատիդ իր պաշտպանությունը փնտրես»
*(Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Ինքնակենսագրություն):*

Գարեգին Տեր-Հարությունյանը այս աշխարհի որդիների մեջ օտարական եղավ: Գարեգինի խոսքն օտարի խոսք էր՝ «լսելու ունկ չունեցողներին»: Շատ ժամանակ պետք չէր, որպեսզի իմաստունն այդ բանում համոզվեր-վստահեր, որ իր խոսքը մակերեսորեն (հաճախ՝ խիստ մակերեսորեն կամ հակառակ) են ըմբռնում, որ իր ձայնն ևս «ձայն բարբառոյ յանապատի» է, ինչպես Հովհաննես Մկրտչի ձայնը և «Ուսուցչի՝ Քրիստոսի աստվածաշունչ խոսքը» *(ՆԺԴԵՀ. «էջեր իմ օրագրէն»).*

Եվ Նժդեհը Տեր-Հարությունյան իր ազգանունը փոխեց՝ դառնալով՝ Գարեգին Նժդեհ: Նժդեհն օտարական էր նաև իր վարքով. երբ այսօր «ազգասերները» պաշտոնները կուսակցությունների մեջ բաժանելով, բացի իրենց աշխատավարձերից կան, որ ուտում են անազնիվ ու անարդար եկամուտներ և ոմանք իրենց հայրենակիցներին էլ են ուտում, օտարի տված դրամ դրդումով վաճառում ազգային նվիրական արժեքներ, Նժդեհ օտարականը գրում է. **«Ռոճիկ չեմ ստացել ողջ կյանքում, հրաժարվել եմ անգամ օտար պետության նշանակած թոշակից: Ունեցել եմ հարուստ լինելու և ճոխ ապրելու ամեն կարելիություն, սակայն ապրել եմ իբրև ժողովրդի մարդ, համեստորեն, աղքատ կոչվելու աստիճան: Նյութապաշտությունը... զորականի, հայրենասերի համար համարել եմ մեկը մեր աշխարհի ամենամեծ պղծություններէն ... Կռիվներում եղել եմ մարդ- առավել քան մարդ, անգամ թուրք ու թաթարների դեմ»** *(Գարեգին Նժդեհ, Հատընտիր, «Ինքնակենսագրություն»):*

«Առաքելական կանոններում» խոսվում է հոգևորականների եկամտաբեր գործեր չձեռնարկելու, եկամուտ ունեցողիներին չձեռնադրելու մասին, պատճառաբանությամբ, որ հոգևորականը ամբողջ իր անձն ու ժամանակը ծառայության մեջ դնի հոտի համար: Նժդեհը, ինչպես տեսնում ենք, նույն ըմբռնումներով է ապրել՝ հոգևոր իր հայրերի սկզբունքով, քանի որ քահանայի որդի էր և տիրացուի թոռ:

Ճշմարիտ որ՝ Նժդեհ, այսինքն՝ հոգով Օտարական եղավ ու չարչարվեց այս նյութապաշտ աշխարհի գայլացած զավակների մեջ:

**«Մեր հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստծո փեշից, դուք էլ բռնեք ինձանից»: Խոստովանում է օտարական Նժդեհը** *(Ռ. Համբարձումյան «Վարք Նժդեհի», էջ 105):*

Քրիստոսի աստվածաշունչ խոսքը, այսինքն ճշմարտությունը, մարդիկ չեն կարողանում լսել,- դժգոհում է մեծ իմաստունը, երբ թե մարդու, թե հայրենիքի բախտը «Աստծո փեշից ամուր բռնելու մեջ է»: Այսինքն, Նժդեհի խոսքի ելակետ- հենարանը՝ խաղաղության Ուսուցչից է:

Գրեթե նույն խոսքն է Նժդեհն ասում, նույնը, որ հեթանոսների քարոզիչ Պողոս մեծ առաքյալն է ասում. «Ես նմանվում եմ Քրիստոսին, դուք էլ ինձ նմանվեցեք»: Այսինքն՝ ի՛նձ նման վարվեցեք, ինձ նման ապրեցեք, որպես երկնքի որդիներ:

**ՆԺԴԵՀԻ ԱՂՈԹՔԸ**

**«Լսի՛ր, Տե՛ր, հայրենազուրկ գաղթականն է քեզ կանչում: Լսի՛ր և մի՛ տանիր զմեզ ի փորձություն՝ մեր սուրբ երկրեն դուրս, օտարի դռանը, օտարի հացով երկար մնալու: Այլ բա՛ց, Տե՛ր, մեզ համար միշտ բա՛ց պահիր բոլոր ճանապարհները դեպ Հայրենիք և մոտեցուր, Տե՛ր, ո՞հ, փութացուր երջանիկ օրը մեր դարձի: Ամեն»** *(Ռ. Համբարձումյան «Վարք Նժդեհի», էջ 41: «ժայռ». 1917թ. յունիս 11, էջ 2):*

## ՆԺԴԵՀԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

**«Ներսես Մեծը, լսելով Հայաստանի գլխին եկած դժբախտությունների մասին, հունական զորքերով կմտնի Հայաստան:**

**Մերուժանը, հրամայելով բերդի պարսպից կախ տալ հայ նախարարների կանանց, կը թողնի Հայաստանի սահմանները և օգնություն կը խնդրի Շապուհից: Կը հասնեն պարսից զորքերը, և դավաճանը կը շարժվի Հայաստանի դեմ:**

**Կռիվը կսկսվի Ձիրավի տափարակի վրա... երբ Ներսես Մեծը կը բարձրանա Նպատ լեռը, ձեռքերը կը բարձրացնէ դեպ երկինք և աղոթելով, կիջեցնի ձեռքերը, մինչև որ չեն հաղթի Հայերը:**

**Ահա հաղթելու գաղտնիքը:**

**Ներսես Մեծը լեռան վրա. ինչպիսի՜ վեհ պատկեր:**

**Ինչպիսի՜ վսեմական նյութ՝ հանճարեղ վրձնի և մտահայեցության համար:**

**Իսկ առաջնորդի համար՝ սկիզբն ու վախճանը իմաստության:**

**Ռազմավարի համար՝ հաղթելու գաղտնիքը, նշանակը այդ աստվածային գաղտնիքի, որ շարունակում է արձանացած մնալ մեր պատմության ոսկե էջերից մեկի վրա:**



**Մեծ Պարթևը լեռան վրա. Սիրում եմ ապրել ու վերապրել այդ կախարդիչ պատկերի գեղեցկությունն ու վեհությունը»** *(ՆԺԴԵՀ. Հատընտիր, «Բախտորոշ մտավորականութիւն», էջ 136):*

Հայերիս համար մեր եկեղեցին կարևոր է հանապազօրդ հացի պես, հավիտենություն ճանապարհորդելու մեր ամուր հենարանն է: Մեր եկեղեցին մեր հոգատար մայրն ու մեր անառակություններից դարձի ժամին՝ գրկաբաց մեզ սպասող Հայրն է:

Որովհետև.

**«ՍԿԶԲԻՑ Ի ՎԵՐ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՁՈՒԼՎԱԾ ԵՆ Ի ՄԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ.... ԱՅՍ ԵՐԿՈՒՍԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՆՈՒՅՆԱՑԱԾ Է»**,- գրում է Նժդեհը: Ի վերջո, Տիրոջից կարգված հովվին ամոթ է իր հոտի առջև երևալ աշխարհին պարտված, երբ իր Ընդհանրական Տերն ու Հովիվը՝ Քրիստոս արդեն հաղթել է աշխարհին, քանի որ Մահվանն է հաղթել և այդ հաղթանակը նաև ամրագրում է իրեն ճշմարիտ դարձողների մեջ էլ: Այսինքն. յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա արդեն իսկ հաղթող է կամ գտնվում է հաղթանակի մեջ՝ Տիրոջ հաղթությամբ: Այդ հաղթանակը մեր եկեղեցին ունի՝ մեր լուսազգեստ առաքյալներով, Գրիգոր Լուսավորչով, Ոսկե դարով, Նարեկացիով, Հայոց մեծերով: Նրանց հաղթանակների վրա մենք պարտավոր ենք հաղթանակներ ավելացնել և ոչ թե պարտություններ, և ոչ թե պակասեցնել դրանք. չէ՞ որ ամեն օր նրանց հաղթանակի մեջ ենք մենք ևս, նրանց չարչարանքի վարձերի մեջ ծրիորեն գտնվելով:

**«ՎԵՐԱՑՆԵԼՈՎ ՄԱՀՎԱՆ ՈՒ ԿՑԱՆՔԻ ՄԵՋ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁՐՊԵՏԸ, ՆԱՁՈՎՐԵՑԻՆ ԺԽՏԵՑ ՄԱՀԸ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՀԱՆԴԻՍԱՑԱՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ ՈԳՈՒ ՀՍԿԱՆԵՐԻ՝ ՍՈՒՐԲԵՐԻ, ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ, ՀԵՐՈՍՆԵՐԻ»**,- գրում է Նժդեհը:

Ահա թե ում պիտի նմանվի Եկեղեցին. իր Տիրոջը՝ Քրիստոսի՛ն: Միա՛յն Քրիստոսին: Ուստի, քանի որ «Մենք ոգու ժողովուրդ ենք», Վարդանանց ժողովուրդ, արհեստականորեն չտկարանանք և միմյանց չտկարացնենք մեր «թուլությունը առաքինություն համարելով (կարծեցնելով) և սպանելով մեր ժողովրդի կամքը»,- ասում է Նժդեհը: Թուլություն ասածդ հաճախ շատ զուգակից է ջանք չանելուն, խաբեությանը, ծուլությանը և այն տկարության մասին չէ, երբ հոգևոր մարդն իր չար ցանկություններն է ընկճում՝ պահքով և աղոթքով առաքինի մարդ լինելու համար: Հիշենք, որ՝ և՛ մարդկության, և՛ մեր ազգի բոլոր մեծերն էլ մեծ պահեցողներ և աղոթքի հսկաներ են եղել, խիզախողներ՝ մեծ չարչարանքների գնով ոսկեսիրտ հաղթահարողներ: Իսկ այն թուլությունը, որի մասին խոսում է Նժդեհը, մարմնասերի քնեածության, մահացու ծուլության մասին է, գաղջության, ձևական-կեղծ քրիստոնեության, որի դեմ էր Նժդեհը: Այս, ստորին բացասումներից մեր եկեղեցու ազատվելու, մաքրվելու, ազնվականանալու կոչնակ էր հնչեցնում, ասելով.

**«Եկեղեցին: Դա վերագնահատումի պիտի ենթարկե քրիստոնեական սիրո իր սխալ ըմբռնումը, որպեսզի դադարի թուլությունը առաքինություն համարել և սպանել մեր ժողովրդի կամքը... Սիրում է նա, ով ուժեղ է. Քրիստոս սիրում էր, որովհետև ուժեղ էր... Նա սիրում էր, որովհետև սիրելու և ներելու չափ հզոր էր: Նրա (ՔՐԻՍՏՈՍԻ - Մ.Ռ.) անձնական կյանքը պիտի դառնա եկեղեցուն ուղեցույց...»**

Նժդեհի փափագած Եկեղեցին ինքն իր Տիրոջ՝ Քրիստոսի անվանը արժանի Եկեղեցին է, արթնության Եկեղեցին, սրբերի Եկեղեցին, Կենդանի Հայրերի Եկեղեցին, կենդանի վկայությունների եկեղեցին, կենդանի պտուղներ բերող Եկեղեցին, ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆ:



Թեպետ մեր եկեղեցին այդ զորության սերմնահատիկն ու ներդրումն իր կենսադաշտում մշտապես էլ (երբեմն առավել, երբեմն սակավությամբ, երբեմն պտղուցաչափ) ունի. եթե ոչ՝ ո՛չ Նարեկացի, ո՛չ Անդրանիկ, և կամ մեր մյուս Աստվածազարմ մեծերին չէինք ունենա: Մանավանդ մեր քահանայական դպրոցը, մշակներիս երկնային մայրական կաթ տվողը, երբ էլ որ կենսական է եղել, ապա այդժամ՝ եզակիներից է եղել ողջ աշխարհում:

Բայց, ինչպես հայտնի է, աշխարհն այսօր Մեծ Բաբելոն կառուցելու հետևից է՝ հարյուրավոր անբարո և անհեթեթ, հակամարդկային ծրագրերով: Եվ այս առումով մեր եկեղեցին ևս վտանգի մեջ է: Բնականաբար, այդ ծրագրերով, մեր եկեղեցուն ևս ներկայացրել և էլի կներկայացվեն այնպիսի պարտադրանքներ, որ հակաքրիստոնեական են: Ուստի, ինչպես Նժդեհն էր փափագում մեր Եկեղեցին տեսնել Զորավոր, աղոթենք մեր Եկեղեցու առավել քաջացման և լավագույնս դրսևորման, կատարելացման համար:

Իսկ որ մեր եկեղեցին (հավատավոր ժողովուրդը) արդեն կոչված Հաղթության Եկեղեցի է, այդ Հայտնի է Սուրբ Սահակի տեսիլքից, որ ապագա, ինչու չէ, նաև մեր օրերի համար է. **«... Զվարճացի՛ր ցնծալից ուրախությամբ, որովհետև Արարչից քեզ տրված զավակիդ արգանդից պիտի ելնեն բազում շառավիղներ՝ զորությամբ ընտիր տղամարդիկ, որոնց հետ միաբանելով Հայոց նախարարական տոհմերի քաջ մարդկանց ուրիշ բազմություններ՝ որոնք զորացած Աստծո սուրբ խոսքով և ոչինչ համարելով թագավորների զայրույթներն ու իշխանների սպառնալիքները, իրենց անձերը պիտի միացնեն երկնավոր կոչման բաղձալի հույսին, աչք չդնելով ո՛չ սնոտի մեծություններին, ո՛չ էլ ժամանակավոր փառքերին...»** *(Ղազար Փարպեցի, Երևան-1982, էջ 79 և 81):*

Նժդեհը քաջ գիտեր Հայոց պատմությունը, նաև գիտեր մեր Եկեղեցու սուրբ Սահակյան այս հաղթական նշանակը, որ Աստծով էր սահմանված և, բնականաբար, Եկեղեցուն թմբիրից ելնելու կոչնակ էր հնչեցնում:

## ՆԺԴԵՀԸ՝ ԱՇԽԱՐՀ ԱՌԱՔՎԱԾ ԻՄԱՍՏԱՍԵՐ

Նժդեհյան ևս երկու ոսկի՝ ընթերցանությունը պատվով շարունակելու համար:

**«Տառապանքները հանուն ճշմարտության՝ մարդը կը մոտեցնեն Աստծուն»:** *(ՆԺԴԵՀ. Բալկանյան պատերազմում արտասանած ճառից, Արմեն Սիւնի, «Հայկական վաշտը Անդրանիկի առաջնորդութեամբ», Բաքու, 1914, էջ 44):*

**«Վախը դադարում է, վտանգը տեղի է տալիս, մահը մեռնում է հենց որ մարդու որդին իր գիտակցության ամբողջ զորությամբ կրկնում է.- ե՛ս էլ Աստծո որդի եմ»:** *(ՆԺԴԵՀ. «Ազատ Հայաստան», թիվ 2-3):*

Մենք, քրիստոնյա լինելով, դեմ ենք մարդուն որպես կուռք ներկայացնել, ինչպես հաճախ կուսակցություններն են անում: Մեզ համար ո՛չ Նարեկացին, ո՛չ Նժդեհը կուռքեր չեն, այլ մեր ազգի համար երկնքի որդիներ, մեծ նվիրակներ ու հոգևոր դայակ-դաստիարակներ, Հիսուսով «մարդ լինել» սնուցողներ: Յուրաքանչյուրն իր չափ: Եվ որքան էլ մեծ լինենք, սակայն «Ամենքս էլ Աստծո առաջ մարդ ենք մեղանչական»: Այս առումով կուռքը սահմանափակում է առաջընթացը, որովհետև քարացած լինելով՝ ընդատված է զարգացումից: Թեկուզ և ժամանակակից կուռքերը վերցնենք (երգիչներ, մարմնամարզիկներ և այլն). շատեր իրենց գործերով իրենք իրենց էլ մատնանշում են, որպես գագաթ ու հենարան, իսկ ճշմարիտ մեծերը իրենց գործունեությամբ ամեն բանի սկիզբ ու հենարան՝ մատնանշում են Աստծուն՝ Սերը, անվերջանալին,



անսահմանը, կատարյալը, որ փափագ է արթնացնում ամենակատարյալ մարդու մեջ էլ, որ ինքն էլ առավել ևս կատարելանա: Այս բանալիով երբ դիտում ենք, Նժդեհն իր վիթխարի բանական խոսքով լիովին փշրում, փոշիացնում է կուռք գաղափարը, երբ կուռքից՝ կռապաշտությունն է, որ է ետընթացը, ճահճացումը, զարգացման ընդհատումը, կեղծը, վայրընթացը: Բաներ, որոնք փչացնում են ժողովուրդների զարգացման կենսական ներուժերը.

**«ՈՎ ՉԻ ԳԵՐԱՁԱՆՑՈՒՄ ԻՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ, ՆԱ ԱՆԱՐԳՈՒՄ Է ՆՐԱՆՑ ԱՆՈՒՆԸ՝ ՄԵՂԱՆՉԵԼՈՎ ՀՈԳՈՒ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԵՆՔԻ ԴԵՄ»**,*-հայտարարեց Նժդեհը:*

Այս խոսքը որպես նշան թե գծեինք՝ կստացվեր Հավերժության նշանը, որի շարժման ամեն պահն իսկ հաղթանակ և զարգացում է խորհրդանշում, կենսատու ճառագայթում: Նման մի ստուգություն Մխիթար Գոշն էլ է հաղորդում. **«Որովհետև ի սկզբանե ոչ թե ամենայն արվեստի գործ մեկ սկսողի կողմից ավարտվեց, այլ բազում ժառանգորդ այրերի ձեռքով»:**

Այս երկու մեծ և օրհնյալ այրերի ոսկե խոսքերը հերքում են կռապաշտությունը, նախանձը, լճացումը, քարացածությունը, այլ անընդհատի, հավերժական զարգացման ընթացքի մեջ են մղում մեզ: Սահմանափակում չեն դնում ժառանգորդներիս առջև: Որովհետև Աստծունը կատարյալն է, անհուն կատարյալը, որ միայն Սեր բառով է թարգմանվում, որ փափագ է արթնացնում մարդու մեջ և որին պիտի շարունակ ընթանալ:

Իսկ մենք այս գրությամբ այլ բան չենք անում, քան պարտավոր մեր խորին հարգանքն ենք մատուցում և պատվում մեծ մտածողին ու խիզախ մարդուն՝ Նժդեհին, որ խոր քրիստոնյա էր և որպես իմաստասեր-խոսնակ՝ ինքն ևս մատնացույց արեց Լույսի ակունքը՝ մեզ ժառանգություն թողնելով հոգևոր ոսկու անուրանալի շեղջեր: Եվ այս փոքր ուսումնասիրությունն ըստ քրիստոնեական մեր աշխարհայացքի սահ-

մանների ենք անում և ըստ մեր համեստ, բայց իմացական կարողության:

Յուրաքանչյուր ազգի համար պարծանք է Նժդեհի նման կենսական զորություն ներշնչող իմաստուն ունենալը: Նժդեհի խոսքը հակառակ է անգիրը քարոզողներին: Նույն՝ Ավետարանից մեզ ծանոթ մտքերը Նժդեհի խոսքում բևեռանում են, իրենց սահմանափակ տարածքում ներփակում Լույսի հսկայական, թվում է՝ անսահման կենսատու շիթեր, որ ներթափանցելով ընթերցողի հոգին, նրան ի զորու են շարժել ընդարմությունից, ի զորու են ճակատագրական գիրկապը՝ «ժառանգական մեղքի ժանգերը, շղթաները» քանդել, մարդուն պայծառակերպել: Որովհետև ոչ միայն խոսքով, այլ իր կյանքի դառն չարչարանքներով Նժդեհը մոտեցավ Աստծուն՝ Հավիտենական Բանին և իր անձնական չարչարանքներով ևս մաքրեց ու սրբացրեց իր կյանքի խոսքը:

**«Ցառապանքները հանուն ճշմարտության՝ մարդը կը մոտեցնեն Աստծուն»**,- տառապանքների մեջ ճանաչեց ու վստահորեն վկայեց Նժդեհը:

11 տարի բանտում, այն էլ՝ հանիրավի: Նժդեհագետներից մեկն իմաստասերի այս չարչարանքներն իրավամբ նմանեցնում է Խոր վիրապում Լուսավորչի բանտարկվելու տարիներին: Վկայում են, որ Նժդեհը բանտում իր հանդեպ ամենաանիրավ վերաբերմունքի դեպքում անգամ՝ երբևէ չհայհոյեց, չծխեց և մեկ տասնյակ հիվանդություններ ունենալով էլ՝ պահ իսկ չհուսալքվեց, չբողոքեց և գրեթե միշտ բանական լույսերի մեջ էր՝ հանդարտ, խոհուն, լուսավոր ու զարմանալի համբերատար: Խոստովանենք, որ նման վարքն իսկ արդեն դպրություն է, քաջ մնալու ուսուցում, որ ոգևորելով մեր երիտասարդությանը, մեր ամենքի ներքին, թաքնված ուժերը վեր է հանում, ազնվասրտացնում թե՝ մի՛ վախեցիր, հանուն



ճշմարտության տղամա՛րդ եղիր, վստահի՛ր, դու՛ էլ կարող ես հաղթել:

Ես չեմ պատկերացնում նորմալ մի երիտասարդի, որ հուսահատ պահին հոգևոր Նժդեհին կարդա ու հետո կամենա ինքնասպան լինել: Նժդեհի իմաստուն հանդիմանանքը նրան պիտի ոգեկոչի ու կասեցնի.

**«Անգամ մահդ էլ պիտի ծառայի հայրենիքիդ»** *(«Անձնակայություն», ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, Հատընտիր, 1955թ. մայիս):*

Երբ չարչարանքների մեջ գտնվողն է այդ ասում, չես կարող նրան չլսել:

Հոգևոր Նժդեհի իմացական լույսը, կարծում ենք ի զորու է վերջին հուսահատվածին անգամ պսակել հույսի հետ, եթե հուսահատվածը բանական մարդու վարք արժեքավորող լինի:

Իր չարչարանքները համբերատարությամբ տանելով, այսօրինակ խաչելությամբ՝ Նժդեհը հաղթեց աշխարհին՝ Քրիստոսի սիրո և օրինակի համաձայն. «Տառապանքով մոտենալով Աստծուն»: Նժդեհի բանտարկությունն ու մահը բանտում՝ Նժդեհի խաչելությունն եղավ: Նախապես բանտից գրեց եղբորը, թե՝ մարտիրոսվելու է, և հարկ է այդ մարտիրոսությունը դիմավորել իմաստուններին արժանի հանդարտությամբ ու ժամանակը խելամիտ օգտագործելու խաղաղությամբ: Եվ բանտում իր մարտիրոսության հանդիման նստած՝ Նժդեհը բանական լույսի շողարձակման հաղթանակներ էր հասցեագրում մեզ՝ իրենից հետո եկող սերունդներիս: Նժդեհը բանական լույսով կոխկրծեց ժամանակները, քանդեց իր բանտային շղթաները ու տարավ հոգևոր հաղթանակ: Եվ շատեր ազատության մեջ ավելի էին բանտարկյալ, քան հոգևոր Նժդեհը բանտում, ուր Աստծու իմաստության լույսերի մեջ կենաց խոսք էր ճառագայթում: Եվ Նժդեհյան այդ լույսը Նժդեհ-բանական մարդու, Հայոց լուսավոր մշակի հոգևոր հարությունը եղավ մեր ազգության մեջ:

«Վախը դադարում է, վտանգը տեղի է տալիս, մահը մեռնում է, հենց որ մարդու որդին իր գիտակցության ամբողջ զորությամբ կրկնում է.- ես էլ Աստծո որդի եմ» *(ՆԺԴԵՀ. «Ազատ Հայաստան», թիվ 2-3)*:

Այս ներքին ճիչն ամեն տեղ է մարդուն ըմբռնելի դարձնում Աստծո մոտիկությունն ու ճչացողի հոգևոր ազատագրումը:

Եվ վստահ ես, որ սաստիկ ճնշումների պահերին ինքը բազմաթիվ անգամներ Սուրբ Հոգու Զորությունն է զգացել իր մեջ և այդ խոսքի համոզմամբ հարություն առել, կենդանացել և ոտքի կանգնել: Նժդեհն անգամ Սուրբ Գրքից հենց այնպես անգիր հետևություններ չի արել, խտացրած խոսքի իր յուրաքանչյուր ոսկին ապրել, դրանք «կրակով փորձել է» ոչ միայն իր կյանքի ժամանակում, այլ եկող ժամանակների մեջ էլ, ապա նոր, որպես կենդանի ջրի աղբյուրից մի ումպ, գրել է իրենով մեզ հասցեագրված հերթական ոսկին: Որովհետև եթե կյանքիդ վկայությունը չունես, ասածդ անգիր խոսքը քո նման իսկ մեռած ու ծանծրալի պիտի հնչի՝ քեզ չփոխելով և մարդկանց էլ գուցե զզվեցնելով և հեռու վանելով:

Նժդեհի ոսկիները սոսկ իմաստասիրություն չեն, այլ իր չարչարանքներից արված ճշմարիտ հետևություններ: ՀԱՂԹԱՆԱԿ: Հաղթանակ՝ ողջ մարդկության համար էլ: Որովհետև նրա խոսքը երբեմն թվում է մեր լեզվով գրված պարզ մի արտահայտություն, բայց այնպիսի կենսական զորություն է ներփակում այդ կենդանագիր քարոզ- նախադասություն ճառագայթը, որ վստահեցնում է քեզ թե՝ կարող է մոլորակի վրա միլիոնավոր մարդկանց էլ հուսահատության ճիրաններից հանել կամ սև մաղձից ու փորձությունից, տհաճանքներից ազատել, եթե այդ պահին նրանք լսեն կամ կարդան Նժդեհյան կենդանագիր, հոգևոր շեփորումները: Որովհետև ոչ միայն քարոզում է Նժդեհը, այլ նաև՝ վստահեցնում, և նրա խոսքը լավագույն դեղի պես՝ ամիջապես ներգործում է, ոգի է բացում



քո մեջ, քեզ առաջնորդում սուրբ սիրո ասպարեզ, թե՝ մի՛ տկարացիր, Տերը սիրում է քեզ, ես և՛ իմ չարչարանքների մեջ սիրում եմ քեզ: Վստահի՛ր Տիրոջ սիրուն և իմ սիրուն էլ՝ Տիրոջով: Եվ կատարվում է Նժդեհյան Կենսական զորության փոխանցում, կատարվում է հոգու բժշկություն, որ խոր քրիստոնյա իմաստության և մեծ մարդասիրության պտուղ է:

Նժդեհը կարող էր կրկնել Քրիստոսի չարչարանակից փոքր եղբայրների խոսքը, թե. **«ես էլ հաղթեցի՛ աշխարհին՝ ի՛մ հնարավորության չափով և իմ Գողգոթայի խաչելությամբ, չարչարանքով հետևորդեցի նրան, ում իմ ազգը հետևորդեց»:**

Ոչ միայն մեր ազգի, այլ նաև մարդկության իմաստասիրական մտքի առողջացման համար էլ, եթե Նժդեհյան ոսկիները իմաստունների կողմից խելամտորեն գործածվեն աշխարհում, այդ օգուտը կտարածվի ողջ աշխարհով էլ մեկ:

## ԵԹԵ ՆԱ ԿԱ՝ ԵՍ ԱՆՄԱՀ ԵՄ

**«Հավատքի և պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը հատկացված են Աստծոն և Հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրավոր սրբազնագույնն ինձ համար»** *(ՆԺԴԵՀ. Ինքնակենսագրութիւն)*:

«Երկրաւոր սրբազնագոյնն», այսինքն՝ Նժդեհն ուներ ԵՐԿՆԱՎՈՐ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆԸ և ԵՐԿՐԱՒՈՐ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆԸ, որը մեկնողաբար ստացվում է Քրիստոս Փրկչի նշած՝ մարդուն պատվարժան պահող երկու ամենակարևոր պատվիրանները: Ինչպես որ հայկական համոզմունք է, երբ որևէ գործ անելուց առաջ ասում ենք. «Առաջ Աստված, ապա նոր՝ մեր ձեռնարկած գործը», այսինքն թե՝ Աստված մեր բարին ավելին է կամենում մեզ, քան ինքներս ենք մեզ կամենում, ուստի թող Աստծո կամքով լինի, որ բարին ավելի՛ն լինի մեզ համար և արդյունքն է լինում ուրախական կամ հաղթական: Ասել է թե՝ երբ ուզում ես քո անձի համար լավ լինի կամ առա-

վել լավ, ուրեմն. «ՍԻՐԻ՛Ր (նաև խոնարհվի՛ր, լսիր - Մ.Ռ.) նախ ՔՈ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ ՔՈ ԱՆՁԻՑ ԱՌԱՎԵԼ՝ ՔՈ ԱՄԲՈՂՋ ՍՐՏՈՎ, ՔՈ ԱՄԲՈՂՋ ՄՏՔՈՎ ԵՎ ՔՈ ԱՄԲՈՂՋ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ»:

Երկրորդ պատվիրանը մեր մերձավորներից ու ընկերներից է, ՈՐՈՆՑՈՎ ՆԱԽ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ, ԱՊԱ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆՆ Է ԿԱԶՄՎԱԾ: «ՍԻՐԻ՛Ր ԸՆԿԵՐՈՋԴ, ԻՆՉՊԵՍ ՔՈ ԱՆՁՆ ԵՍ ՍԻՐՈՒՄ»: Բնական է, ընկերդ նախ քո կողակիցն է, արյունակիցը, ազգակիցը, մերձավորը, բարեկամը, հայրենակիցը: Հոգևոր առումով Հայրենիքը Նժդեհի համար ընդլայնված է նաև մարդկության մեծ որդիներով. «ոգու հսկաներով, որ քո մեջ ապրեցնում են աստվածայինը»: Այսինքն. մարդկության հոգևոր հայրենիքը և Նազովրեցու ասած «Երկնքի արքայությունը» մեկ են ու նույնը, որ Հիսուս ասաց. **«Ձեր մեջ, ձեր ներսում փնտրեք, ոչ թե վազելով այստեղ կամ այնտեղ»:** Եվ այս պատվիրանը ազգային միաբանության ամենամեծ պատվիրանն է: Այսինքն, այդպես՝ պատվիրանի լայնախոհությամբ, Հոգևոր Հայրենիքդ ես սիրում: Այլ խոսքով, Նժդեհը փաստում է Աստվածաշնչյան երկու ամենակարևոր պատվիրանները, որ նաև երկու հիմքերն են նրա պայծառ իմաստախոսության:

Պողոս առաքյալը նախապես ընդդեմ էր Քրիստոսին, հողեղեն էր, դեռ չէր ճանաչում՝ ա՛յդ պատճառով: Բայց երբ ճանաչեց իր Աստծուն՝ իր ամբողջ կյանքով նվիրվեց նրան: Եվ, բնականաբար, գնահատվեց առաքյալի՝ Քրիստոսին ընդունելու և ոչ թե Քրիստոսին չընդունելու շրջանը: Եվ աշխարհում մարդկության շատ մեծանուն ներկայացուցիչներ՝ առաքյալներ ու զորավարներ, գիտնականներ, արվեստի մշակներ... սկզբում կասկածեցին, անգամ ընդդիմացան, ապա հիացան Աստծո ներկայությունից, ապա հավատացին, այնուհետև խոստովանեցին ու հավատարմեցին՝ իրենց անձերից առավել սիրելով Աստծուն՝ Կյանքի Ակունքին: Եվ իրենց ժողովրդին որպես իրենց անձը սիրելով հանդերձ՝ ամենից բարձր դասեցին հոգևոր ընդհանրական Հայրենիքը՝ եղբայրությամբ մարդկության մեծերի, որ հոգևոր չգերազանցված, Տիրոջ պարգև պտուղներով է պայմանավորված ողջ մարդկության: Անգամ. «Սիրի՛ր վեհը, գեղեցիկը, հերոսականը՝ նույնիսկ թշնամիներիդ մեջ», -հայտարարում է Նժդեհը, քանի որ եթե ազգդ սահմանափակվում է ինքն իրենով և կամ զատվում մարդկության ոգու հսկաների արժեքներից, ապա հարկ եղածին զարգացում չես կարող ապրել: Այլապես, եթե մարդկության ոգու հսկաներին, այն է՝ համամարդկային արժեքները հաշվի չառնես, քո հայրենասիրությունն արդյո՞ք կռապաշտություն չի լինի, և հավատդ՝ կույր, մոլեռանդի հավատ: Նժդեհը համամարդկային հոգևոր հասունությունը դիտում է հոգևոր մի պահեստարան, որից ազգերի արժանի որդիները վերցնում են վեհն ու գեղեցիկը, յուրաքանչյուրն իր վերցրած տաղանդով նախ իր ազգը զարգացնելու, ապա և՝ մարդկության ընդհանուր պահեստարանը (Բախ, Բեթհովեն, Մոցարտ, Շեքսպիր, Բալզակ, Լուսավորիչ, Մաշտոց, Մամիկոնյան, Նարեկացի, Անդրանիկ...) իր պտուղներով ևս հարստացնելու համար: Նժդեհն էլ հավատի իր անցման փուլերն ունեցավ. նախ մեր ժողովրդի դժբախտություններից ելնելով՝ փոքր ինչ կասկածեց, վթար ունեցավ (Տես՝ «ՆԺԴԵՀԻ ՈՐՈՆԱԾԸ ԿԱՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ» գլուխը), ապա ետդարձ ապրեց, այնուհետև վերստին դարձավ լույսի շռնդալից շեփորահար. մարդ, որ մուտք ու ելք ուներ երկնքի արքայություն՝ խոր հավատի իր բանալիով:

Ցեղակրոն Նժդեհը ևս մի օր իր որոնումների մեջ հիացավ Աստծո ներկայությունից: Եվ իր այդ փուլի՝ կասկածի ու թերահավատության մեջ անգամ՝ երևում է նրա հիացքը, սքանչացումը Աստծո ամենակարողության հանդեպ: Ահա թե ինչ է գրում այդ շրջանում.

**«Չգիտեմ՝ Աստված կա թե ոչ, բայց կուզենայի, որ նա լիներ: Եթե նա կա՝ ես անմահ եմ»** *(Նժդեհ. Աֆորիզմներ):*

«ԵԹԵ ՆԱ ԿԱ՝ ԵՍ ԱՆՄԱՀ ԵՄ»,- այս արդեն հույսի բացված դուռ էր դեպի երկինք, դեպի հավիտենական արժանվույն կյանք, սպասում-ակնկալումը հավիտենական լինելիության: Նժդեհի այս արտահայտությունն արդեն ներքին համաձայնում և ուրախություն է հոգու հավիտենական կենդանի լինելության: Այսինքն, եթե անմահություն կա, ապա միայն Աստծով է պայմանավորված: Նաև՝ Գրվածքն ասում է՝ «դևերն էլ են հավատում Աստծուն, սակայն վախենում են նրանից»: Այսինքն թե՝ որդիները Աստծո մեջ տեսնում են անմահությունն իրենց և ուրախանում են, ինչպես որ Նժդեհն է ուրախանում: Ուրեմն՝ վախն ինքը՝ դիվական, անառողջ բան է: Եվ Աստծո սիրո և կենդանության մեջ հայտնվելով՝ Նժդեհը ընդհանրապես մերժեց վախը: Եվ իր ներսում Աստծուն արդեն ներկրելով էր ուրախանում, ասելով՝ Եթե Նա (Աստված) կա, նրա Հոգու վկայությամբ իմ ներսում գիտեմ, վստահ եմ, որ անմահ եմ: Որովհետև եթե հավիտենությանը, հավետ կենդանի լինելուն հավատ չես ընծայում, ապա վախ կառաջանա մահվան, ընդմիշտ կորստի զգացում կառաջանա, որից, ընդմիշտ կորստից ավելի դաժան բան, թերևս չկա: Մարդը կդառնա ժամանակավոր քայլող դիակ: Ուրեմն՝ հավիտենության կենդանի հավատ ունեցիր և անմտություն կդառնա վախդ: Մերժի՛ր վախդ:

**«ԵԹԵ ՆԱ (Աստված) ԿԱ՝ ԵՍ ԱՆՄԱՀ ԵՄ»:**

Ապա երբ Նժդեհը խոստովանում է, թե. «Տառապանքն իրեն մոտեցրեց Աստծուն», սկսում է ճանաչել ու իր ճանաչածի լուսավոր չափանիշով՝ ճանաչեցնել Աստծուն, մեզ էլ հարաբերեցնելով իր վայելած անմահության հետ՝ վստահելով և վստահեցնելով.



**«Մահ չկա՛, կորուստ չկա՛ տիեզերքում, կա աստիճանական ոգիացումը նյութի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կա»** (*Նժդեհ. Բանտային գրառումներ):*

**«Կորուստ չկա տիեզերքում-կա անդադրում մի շարժ, որի ընթացքում կերպարանափոխվելով հոսում է ամեն ինչ... Եթե էապես գոյություն ունենար մահը՝ հավիտենական կորստի իմաստով, չէր ապրի մարդկության անցյալը, որին կոթնելու կարիք է զգում եկող ու անցնող ամեն սերունդ»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

**«ՉԿԱ ՄԱՀ, ԿԱ ԱՆՑՈՒՄ ՄԻ ԱՅԼ ՈՒՂՈՒՏ: ԱՆՄԵՌ է ՄԵՋ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂ, ՄԵՋ ՇՆՉԱՎՈՐՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՆԸ, ՈԳԻՆ»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

Աստծով անմահությունը և իր անմահությունը՝ այդպես վստահեցրեց ու կենդանագրեց Նժդեհը, մեզ ևս մղելով նույն բանին:

Ուստի, երբ մեզ Ստեղծող Բանը անմահ է, բնականաբար նրանով անմահ ենք և մենք: Այսինքն թե՝ մահկանացու մարմինը չէ մեր լինելիության որոշիչը, այլ՝ մեր հոգին: Եվ սքանչելի հստակությամբ է Նժդեհն այդ բանը ոչ միայն տեսնում, այլ նաև՝ (մարսված ընբռնումներով) վկայում, սնուցանում, ցուցանում լսողներին:

**«Մահը տրված է մարդուն՝ այն հաղթահարելու համար»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

- Այսինքն՝ մարմնի մահով մարդն անցնում է հոգևոր ուղորտ՝ հոգով կենդանի կյանքի մեջ մնալով: Ով հաղթահարում է մահն այս աշխարհում, ապա ստվերի պես անցնող աշխարհին երբևէ կուլ չի գնա, և նմանը իր միջուկով, իր բանականությամբ՝ ԻՐ ՀՈԳՈՎ հավիտյան կենդանի կմնա: Ուստի, պիտի չխաբվել ունեցվածքի գայթակղությանը, պիտի չխաբվել մարմնավորի բարեկեցության համար դառը հոգս անելուն, երբ մարդուն նյութը դարձնում է իր նման նյութ, անկենդան նյութը որպես Աստված պատրելով, և հավիտենարժեք խաբ-

ված մարդուն՝ իր նման փչացող և մեռնող է նյութապաշտին նյութը դարձնում: Նվիրականը մեծ սեր ունենալն է՝ հայրենիքի և մարդկության համար, պատարագվելու նման, պատարագվելու պատրաստ կամ հավասար սեր:

Հոգին և ոգին՝ (այդ զորությունը) ընտրողն է հավիտյան կենդանի:

**«Միայն կամավոր նահատակն է բացարձակ ազատություն վայելում»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

- Նժդեհը խոսում է անգամ օրենքի ստվերայնության մասին՝ հանդեպ մշտահաղթ սիրո և հոգևոր կենդանության: Մի բան, որ Նոր Կտակի հաղթանակն էր, Հինը այլևս տականքների ուղղման, չարիքը կրճատելու համար դիտելով: Որովհետև կամավոր նահատակը սիրով է առաջնորդվում և ոչ թե հրամանով, հրահանգներով և ոչ թե օրենքներով, որոնք ստվերային են, երբ Օրենսդրի հետ սիրո ընկերակից ես այլևս: Կամավոր նահատակը պատարագվում է իր և մերձավորի հոգու կյանքը պահպանելու համար և ոչ թե այն կորցնելու: Իսկ Սերն՝ Աստված Ինքն է՝ նրա հոգու մեջ, որ մահվան ենթակա չէ, այլ՝ լիարժեք լինելիություն է, հավիտենական և պատարագումը դառնում է հաղթանակ: Պիտի ընդունես Աստծուն քո մեջ, որ անսահմանության մեջ լինելությունդ ապրես: Եվ գիտակից մարդու համար միայն կրոնն է հավերժ լինելության բանալին՝ իր «Սփոփարար հավատքով».

**«Կույր պատահականության ծնունդ չէ տիեզերքը, և ես միակը չեմ տիեզերական անսահմանության մեջ- այդ սփոփարար հավատքն է տալիս մեզ կրոնը»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

- Այսինքն՝ Աստծո գոյությունը չընդունողները, անկարելի է, որ ճշմարիտ հայրենասեր լինեն կամ ճշմարիտ հայրենասեր երբևէ մնան:

**«Սուրը, թե գրիչը: Թե՛ մեկը և թե մյուսը- ես սիրեցի և գործածեցի երկուսն էլ: Սակայն դրված երկընտրանքի առջև՝ ես**



**պիտի նախընտրեի առաջինը, քանզի լինում են ժամանակներ, երբ գրիչը, խոսքը, ճշմարտությունն իրենց ճամփան հարթելու համար կարիք են զգում՝ սրի: Սիրում եմ սուրը հայոց արքայի, որ «գետին չընկավ», այլ իբրև հրեղեն կանթեղ մնաց կախված Սեպուհ լեռների վրա և պատմության անաստղ գիշերներին հայու դարավոր ճամփան լուսավորեց»** (խոսքը հեթանոսությունից դարձած, Քրիստոսով սրբացած Տրդատ արքայի և նրա սրի մասին է: Մ. Ռ.) *(Նժդեհ.Անձնավկայություն):*

Հոգևոր Նժդեհի այս հայտարարությունները մեծապես օգնում են մարդու որդիներին զգայական, սնոտի մեր պատկերացումները, պատրանքները ջախջախել և զորավորվել, իմաստուն ինքնաքննության միջոցով լցվել հույսով, լույսով և կենսասիրությամբ:

Մեծերի ու փոքրերի տարբերությունը նաև այն է, որ մեծը ինչ իր համար է գտնում՝ ամենքիս համար է նաև գտնում, փոքրը ինչ գտնում է՝ միայն ասես իր համար է գտնում: Նժդեհն իր տառապանքով ինչ գտավ կամ ինչի որ հասավ՝ օգուտ դարձրեց ամենքիս համար էլ, որովհետև անգամ բանտում էլ ոչ թե մենակ վայելեց Աստվածհայտնության հոգևոր իր ոսկիները, այլ գրի առնելով՝ իր սիրով լավագույնս մատուցեց մեզ և աշխարհին, ճշմարտության քաղցը ունեցողներին.

**«Մարդկությունը տառապանքին կպարտի իր հոգևոր ողջ մշակույթը»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

Ճանաչեց և վկայեց հոգևոր Նժդեհը:

# ԵՂԵԼ ԵՄ ԽՈՐ ՀԱՎԱՏՔԻ ԵՒ ԷԹԻԿԱՅԻ ՄԱՐԴ

## ԹՈՂ ՓԱՅԼԻ՛ԽԱՉԸ

«Նա, իմ ստրկացրած և դժբախտ հայրենիքի՝ Տաճկահայաստանի ողբերգական քույրը - Մակեդոնիան, իմ կրակոտ երևակայության մեջ պատկերանում է որպես ՄԻ ԱՀԱԳԻՆ ԳՈՂԳՈԹԱ, ՈՐԻ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԽԱՉՎՈՒՄ ԷՐ ՔՐԻՍՏՈՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ: Մակեդոնական ժողովուրդը.... ԹՈՂ ՓԱՅԼԻ՛ ԽԱՉԸ, ԹՈՂ ԿՈՐՉԻ՛ ԿԻՍԱԼՈՒՍԻՆԸ...» *(ՆԺԴԵՀԻ ճառից: Ռ. Համբարձումյան «Վարք Նժդեհի» էջ 30): Ընդգծումները ընթերցողի համար արեցի: Մ.Ռ.:)*

**«Նրանք այժմ արշավանք են ծրագրում դեպի Երևան, դեպի մեր սուրբ էջմիածինը... Թուրքերը որոշել են ֆիզիկապես ոչնչացնել հայ ժողովրդին և մեր հինավուրց քաղաքներում ու գյուղերում մահմեդական բնակչություն հաստատել, ոչնչացնել մեր սուրբ հավատը, աշխարհի երեսից ջնջել հայ անունը:**

**Բայց սիրելի՛ հայրենակիցներ, սիրելի՛ ժողովուրդ, մի՞թե մենք թույլ կտանք մեզ հետ այդպես վարվել:**

**Ո՛չ, հազար անգամ ո՛չ.... ես ձեզ կառաջնորդեմ սուրբ պատերազմի»** *(Ռ. Համբարձումյան. «Ղարաքիլիսայի ճակատամարտը»):*

**«Իմ մարտական եղբայրնե՛ր, մենք գնում ենք կռվելու մեր բազմաչարչար, քրիստոսաբար մարտիրոսացած հայ ժողովրդի համար: Ենիչերի վիժվածքներին թույլ չենք տա ծաղրուծանակել նրան: Հիշեցեք սրբազան էջմիածինը: Սուրբ Կամակատարին ուղղած մեր աղոթքները մեզ օգնական: Հանուն մեր հավատի, Աստվա՛ծ մեզ հետ»** *(Ռ. Համբարձումյան. «Ղարաքիլիսայի ճակատամարտը»):*



Հասնելով Ս. Սարգսի մատուռին՝ Նժդեհը «ՀԱՆԵՑ ԳԼԽԱՐԿԸ, ԽՈՆԱՐՀՎԵՑ ԼԵՌՆԵՐԻՆ, ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ԽԱՉԱԿՆՔԵՑ և դանդաղորեն, կարծես չուզենալով, ծին քշեց Փամբակի ծանծաղուտը» *(Կ. Բագրատյան, 1998թ. Կիև, էջ 37):*

«Նրա բոլոր արշավանքները սկսել են եկեղեցուց կամ աղոթքով: Նա եկեղեցիներում է անցկացրել նաև Սյունիքի և Լեռնահայաստանի Հանրապետությունների հիմնադիր համագումարները:- «Վարք Նժդեհի» գրքում գրում է Ռ. Համբարձումյանը:- Իր զենքերը, նույնիսկ սպարապետական գոտին օծվել են եկեղեցում: Իր զինվորներին հղած գրեթե բոլոր հրամաններն ու կոչերը ավարտվում են Աստված կանչելով.

**«Մեզ հետ Աստված և Դավիթ Բեկի վրիժակ հոգին», «Մեզ հետ Աստված և մեծ հայորդիների... անհանգիստ հոգիները», «ԱՍՏՎԱԾ ԵՒ ԻՄ ՍԵՐԸ ՔԵԶ ՀԵՏ»,** և էլի, նույնախոսք մաղթանքներ... *(տես՝ «Խուստուփեան կանչեր»):*

Այս հղմանն հետևելով, թերթեցի «Խուստուփեան կանչերը» և մի քանի զորընդեղ ոսկի ևս գտնելով՝ հավելեցի Ռաֆայելի մեջբերումներին.

«Մեզ հետ Աստված և մեր պատերազմական բաղդը, յառա՜ջ», «Զորավիգ ունենալով Աստծուն ու մեր ընտիր ռազմիկների՝ Դավիթ Բեգի ու Թորոս իշխանի հայրենանվեր ու վրիժակ հոգիները՝ դափանցիներ ենք մենք՝ միշտ հաղթող և անպարտ»: «Քաջերի՛ն, միայն քաջերի՛ն է լսում և զորավիգում պատերազմների քմահաճ Աստվածը: Վախկոտները ի զուր են կանչում նրան: Խուլ է նա նրանց համար»:

**«Իր զինակիցների հետ մտնելով եզիդական մի գյուղ, գյուղացիներին հավաքում է հրապարակ և վեր պարզելով Սուրբ Սարգիսի պատկերը, որին պաշտում էին նաև եզիդները, հրաշունչ ճառով նրանց համախմբում է իր շուրջ»** *(Ռ. Համբարձումյան. «Վարք Նժդեհի», էջ 39):*

**«Մենակի այդ ողբերգությունը մեր ժողովուրդն ավելի սուր, ավելի հստակ տեսնում և զգում է այսօր, երբ մեր անագորույն թշնամին նորից իր սուրն է բարձրացրել մեր կյանքի վրա, մեր Աստծո վրա... էլ բավ է, հայեր, ցնորք է օտարի հետ կապված հույսը: Մեր հույսը մենք ենք այլևս: Հավատանք մեր ուժին՝ մեր Աստծուն: Մարդկանց և ազգերի նկարագրի չափանիշը հավատարմության այն աստիճանն է, որ ցուցաբերում են նրանք իրենց գոյության ուխտի հանդեպ ... ԵՎ ԴՈՒՔ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ, ՕՐՀՆԵՑԵՔ ՀԱՅ ՁԻՆՎՈՐՆԵՐԻՆ, ՈՐ ՆՐԱՆՔ ԱՍՏԾՈ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ ԼԻՆԵՆ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԻՐԵՆՑ ԿՐՈՆՔԵՐԸ, ՈՐ ԲԱՑ ԵՆ ԱՐԵԼ ԹՇՆԱՄՈՒ ԱՌԱՋ...»** *(Ռ. Համբարձումյան. «Վարք Նժդեհի», էջ 53-54):*

Այս բոլոր մեջբերումներում կարդացվում է Նժդեհյան դավանության հիմնաքարը. «ԱՍՏՎԱԾ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ»: Այս հիմնաքարից դուրս Նժդեհն, իրավամբ, մարդուն բանական արարած լինելուց վայր ընկած է դիտում:

**«Անկրոն է դեպ իր նահատակներն անտարբեր ժողովուրդը, ասել է՝ և անհոգի, դատապարտված բարոյական փտության:- Մի ժողովրդի հզորագույն զինակիցները պատերազմի ժամանակ իր մեծ մեռելներն են: -Խեղճ է այն ժողովուրդը, որն իր պայքարի և խոյանքների ժամանակ չի զգում, թե իրեն աներևութաբար զորավիգում են իր մեծ մեռելները...»** *(ՆԺԴԵՀ. Պաշտամունքը մեծ մեռելների):*

Մեռել բառի կապակցությամբ առաջին հայացքից կարելի է չհամաձայնել Նժդեհի հետ: Բառը՝ մեռել, իհարկե ամենևին կենդանություն, կյանք չի հուշում: Եթե ոչ՝ ոչ մեկս էլ մեռելապաշտ չենք և կրոնը մեռելապաշտություն չէ: Կրոնը մեզ համար հավիտենարժեք կյանքի Ավետիս է: «Թող մեռելները թաղեն իրենց մեռելին, իսկ դու արի իմ ետևից»- ասում է Հիսուս: Հոգևոր Նժդեհի համար քրիստոնյա մեռելը ննջեցյալն է, որ հոգով կենդանի է: Նժդեհի բառապաշարում, ընդհանրապես «մեծ մեռելներ» արտահայտությունը, մարմնապես այն



ննջեցյալների մասին է, որոնց մարմինն է միայն մեռել, սակայն իրենք հոգով ու ոգով կենդանի են, գործուն և ամենակարևորը՝ այնքան են կենդանի, որ Աստծո իրենց կարողության չափով մշտապես զորավիգում են արդարությանը, մեր ազգին: Եթե ուզում ես տեսնել նրանց, նրանց նման կենդանի լինել, կենդանի մնալ, ապա նրանց նման քայլիր հավատի և արդարության ճանապարհներով և նրանց կտեսնես քո կողքին՝ քեզ զորավիգելիս,- խրատում է Հոգևոր Նժդեհը: Քո ազգի մեծերն են նրանք, որ քո կյանքի հենարաններն են: Եվ ինչպես Նժդեհն ինքն է հետո բառը մանրամասնում՝ Նժդեհյան «մեռելներ» խոսքը ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ, ՏԻՐՈՋՈՎ ԱՆՄԱՀՆԵՐԻ մասին է: Եվ Նժդեհը մահն ինչպես այս աշխարհում է ընդունված, ինչպես նախորդ գլխում տեսանք՝ ըստ աշխարհի ամենևին չի էլ ընդունում կամ պատկերացնում.

**«Մահ չկա՛, կորուստ չկա՛ տիեզերքում, կա աստիճանական ոգիացումը նյութի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կա»** *(Բանտային գրառումներ):*

Իսկ անմահ մեծերը, երբ էլ նրանք մարմնապես մահացած լինեն, յուրաքանչյուր ազգի և մարդկության համար՝ յուրօրինակ միջնորդներ, ընկերակիցներ են դեպի անմահություն, ըստ իրենց շնորհների և ձեռքբերումների: Նրանք քեզ են օգուտ, դու՝ իրենց, եթե մերժում ես խաբեապատիրն ու մահվան աշխարհը: Այս տեսակետից Նժդեհի դավանական այն կոչնակը, որ ուղղված է մեր նախնյաց, մեզ մեր կրոնից ծանոթ «Սրբերի բարեխոսության» մասին գործուն և կենդանի վկայություն է:

Առաքյալն ասում է. «Եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր հավատքը»: Բայց պատմական վկայություն է, որ Հարություն առավ, երևաց տասներկուսին և 500 հոգու էլ: Այսինքն, Աստծո Որդու խոստմամբ, քրիստոնյա լինելով և մնալով, մենք ևս, ընդհանուր հարության ժամանակ պիտի հա-

ություն առնենք և արժանանանք մեր աչքերով տեսնելու մեր նախնի մեծերին ու նահատակներին, սրբերին ու առաքյալներին, մեր անձնական Փրկչին՝ Քրիստոսին: Ըստ Աստծո Բանի, մարդիկ կան, որ այս կյանքում էլ՝ հոգով տեսնում են նրանց: Նժդեհը ոչ միայն քայլում էր արդարության ճանապարհներով, այլ նաև՝ որդի էր Աստծո Արդարության, ուստի հոգու աչքով ոչ միայն տեսնում, այլ գրեթե ամեն ժամ հարաբերվում էր մեծ նախնյաց ու Նահատակների հոգիներին, ոգեկոչում նրանց բարի պատերազմների: Այսինքն, քրիստոնյա մեր մեծերը ոչ միայն կենդանի են հոգով, այլև մեծ եղբայրակիցներն են մեր, որ հաղթելու փորձառություններ ունեն մեզ հաղորդելու, պարգևներ ու զորություն ունեն՝ մեր միջոցով գործադրելու: Եվ երանություն է նրանց համար էլ՝ սուրբ ծնողի նման մեր երազանքները կերտելիս մեզ աջակցելը: ԵՎ պատրաստակամ են անընդհատ մեզ օգնության հասնել, եթե Աստծո արդարությանն ենք հետևորդ: Նրանք մեր ազգի ընդհանրականը առ Աստված ուղղորդելու համար ջերմորեն հոգածու են, նվիրյալ և ջատագով: Մեծ ննջեցյալները մեր ծնողների նման, անգամ բազմապատիկ ավելին են մեզ սիրում: Մեր ընկերների նման և անգամ ավելին են մեզ ընկերակցում: Նրանք սրբեր են: Երեկ հոգևորն իրենց գործնական կյանքն է եղել այս աշխարհում, այժմ էլ նույն բանի մեջ իրենց ձեռքբերումներով մեզ են օգնականում. բանակ են կազմում մեզ հետ՝ բոլո՛ր արդար գործերում, Աստծո բանավոր ու մարմնավոր բոլո՛ր պատերազմներում էլ, որ իրենց արդեն հասու է եղել՝ մեզ հետ զորություն ու զորագունդ են և հաճախ իրենք են մեզ առաջնորդում բարի պատերազմների: Մենք նրանց հետ եթե միաբան ենք՝ առավել զորավո՛ր ենք ուրեմն: Որովհետև մահից այն կողմում քրիստոնյաների համար միմյանց սիրելու ընկերակցությունն է, ինչպես այս աշխարհում, առավել՝ այն: Յուրաքանչյուրիցս է կախված այդ սիրո մեջ այսօր



կմտնե՞նք, թե ոչ: Մենք մեզ Աստծով այսօր կարժանավորե՞նք, թե ոչ: Երանի՜ թե մշտապես նրանց կենդանությանը արժանավորապես հաղորդ մնանք: Այդ է, որ ազգ ու ընտանիքը դարձնում է ամուր ու անխորտակ:

Մեզ համար պարզ, բայց աշխարհի և ոչ քրիստոնյա ժողովուրդների համար անհասկանալի այս իրականությունն է Հոգևոր Նժդեհը վարդապետում ոչ միայն խոսքով, այլ նաև գործնականորեն:

Որպեսզի Նժդեհի կենդանի, ճշմարիտ որ, ինչպես ինքն է ասել «ԽՈՐ ՀԱՎԱՏԸ» պատկերացնենք, հարաբերենք Ավետարանի խոսքին:

Նժդեհի կենդանի հավատը սովորական մարդու հավատ չէ, այլ կենսակերպ դարձած խոր համոզմունք- վկայություն, որ վստահություն ներկրելով՝ ինչ որ տեղ՝ բարձր է արդեն հավատից: Այսինքն, այն, ինչ իր հավատով ակնկալում է հավատացյալը, Նժդեհի համար այդ արդեն անհամեմատ չափով նվաճված, կենդանի, առօրյա կյանք է, համոզվածություն, վստահություն, հասուն պայծառատեսություն:

«...ԵՍ ԵՄ ԱԲՐԱՀԱՄԻ ԱՍՏՎԱԾԸ, ԻՍԱՀԱԿԻ ԱՍՏՎԱԾԸ ԵՎ ՀԱԿՈԲԻ ԱՍՏՎԱԾԸ. ԵՎ ԱՍՏՎԱԾ՝ ՄԵՌԵԼՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԸ ՉԷ, ԱՅԼ՝ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ» (ՄԱՏԹ. 22/32),- վկայում է Քրիստոս-հոգով կենդանի, սակայն մարմնով արդեն հող դարձած մարդկանց մասին:

Հոգևոր Նժդեհը բանականությունը ավելի առաջ է դնում, քան ուժը: Իսկ աշխարհի բռնատերերը հակառակն արեցին. ուժը դրեցին բանականությունից առաջ: Մենք դեռ նոր ենք խոսելու Նժդեհին վերագրվող «Ուժն է ծնում իրավունք» արտահայտության մասին, որ ամենևին էլ Նժդեհի արտահայտությունը չէ, այլ բռնատերերի խոսքն է իմաստունը մեջբերում՝ հենց որպես բռնատերերի խոսք:

Քանի որ ուժը հետևանք է և ոչ թե ակունք, ուստիև՝ Բանականության փոխարեն կամ առանց բանականության իշխող ուժը Տիրոջ խոսք չէ, այլ սև ծառայամիտի սնոտի հպարտացմամբ վեր ելած (ժամանակավոր) մոլություն, անկման գնացող մոլուցք:

Հոգևոր փառքի ճշմարիտ պտուղը՝ Աստծո զորությամբ է, որ բազմաթիվ մարմնային ուժերի, անգամ բոլոր ուժերին կարող է գետնել, պարտության մատնել: Պարականոն մի գրքում Հիսուս ասում է. «ԵՍ ՉԱՐԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ԱՎԵԼԻ ԱՌԱՋ ՉԳՆԱՑԻ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՉԱՐԻ ԱՄԲՈՂՋ ԿԱՌՈՒՅՑԸ ՓՈՒԼ ԿԳԱՐ ԵՒ ՉԱՐԻ ՀԵՏ ԽԱՌՆՎԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ՊԻՏԻ ՁՈՀԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՐ, ԿԽԱՓԱՆՎԵՐ»: Զոհագործությունը, որ կատարվում է հանուն մերձավորների խաչելությամբ, այդտեղից էլ՝ Խաչի, այն է միմյանց անձի պես նվիրական սիրով սիրելու քրիստոնեության մշտակա հաղթանակն է:

**«Իր անմահներից չօգտվող, ասել է՝ սրանց պաշտամունքը չունեցող ժողովրդի բովանդակ ուժը իր թվի, իր քանակի մեջ է միայն, երիցս վա՜յ նման ժողովրդին...»** *(ՆԺԴԵՀ. «Պաշտամունքը մեծ մեռելների»):*

Եվ Գարեգին Նժդեհն էլ մի օր անցավ Հայոց նահատակների և անմահների շարքը, որ իր հոգու ակնհայտ կենդանությամբ զորություն ներշնչի մեզ: Բայց, որպեսզի առաջանա այդ զորությունը, պիտի զրուցես նրա հետ՝ ինչպես սրբերի, ինչպես որ նա էր ժամանակին դիմում մեր մեծ անմահներին՝ զորավիգ լինել: Այս գիրքը գրելիս էլ՝ Նժդեհն իր հոգու կենդանությամբ ու զորությամբ՝ ակնհայտորեն ինձ օգնում էր և կամ հասկացնում, որ այս կամ մյուս հարցը թերի եմ պատկերացրել, չընկծվեմ, այլ՝ բարի ու քաջ լինեմ ավելի խորությամբ քննել: Եվ ես, այդ՝ շնորհակալությամբ, թեպետ մարդկային մեծ տկարությամբս, ջանացի համբերատար ունկնդրել: Եվ ահա Նժդեհը հայրենական խնդիր ունեցողին օգնության հասնելու իր այդ խոստումն էլ էր ժամանակին վկայել և այդ ճանաչողությունը, փառք Աստծո, նորություն չէր ինձ համար էլ.



**«Ուր և երբ էլ մեռնեմ, հավատա՛, իմ ազիզ ժողովուրդ, որ արտաքին վտանգներիդ ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի և օգնության պիտի փութա իր հայրենի աշխարհին ...»** *(«Նախիջևան» պարբերաթերթ, 2000թ., թիւ 15):*

Այսօրվա նեղության օրերին հայ քաղաքական դաշտում ակնհայտորեն իրականանում է Նժդեհյան խոստումը:

Ինչպես տեսնում ենք՝ մեծ Նժդեհի համար կենդանի Զորությունը Առանց Աստծո մարմնավոր ամենայն ուժերից վեր է: Եվ այդ բանի համար է, որ միայն թվաքանակ (մարմնային ուժ), բայց ոչ անմահներ ունեցող մեծաքանակ ժողովուրդներին Նժդեհն ասում էր՝ երիցս վա՜յ:

Եվ որ՝ «ԱՍՏԾՈ ՓԵՇՆ ԵՐԲԵՒԷ ԲԱՑ ԹՈՂՆԵԼ ՊԵՏՔ ՉԷ ՄԱՐԴՈՒՆ»:

Նույնն բանն ասաց և Հայկ նահապետը. «Բարձրյալն Աստված շնորհել է մեզ զորություն, և բազմություն՝ մեր տոհմին: Արդ, օգնությամբ Արարչի, չլինենք (այլևս) ոչ ոքի ծառա և ոչ ոքի չծառայենք, բացի Արարիչ Աստծուց» *(«Քարթլիս Ցխովրեբա»-Վրաց ազգի Մայր Մատյան):*

Նույնն ասաց Վարդան Զորավարը. «Մենք շատ պատերազմների մեջ եղանք և ավելի շատ հաղթեցինք, քան թե պարտվեցինք: Բայց այդ հաղթանակները մարմնավոր պարծանքներ էին երկրավոր թագավորի հրամանով: Որքան ավելի մեծ արիություն պիտի գործենք Երկնավոր Թագավորի համար, որ Տերն է կենդանիների ու մեռելների և ամենքին հատուցելու է ըստ իր գործերի: Չվախենանք հեթանոսների բազմությունից և մահկանացուների սրի առաջ կռնակ չծռենք...»

Նույնն արեց Անդրանիկն իր ողջ կյանքով ու գործով. Անդրանիկը, որ իր հոգու կենդանությամբ այսօր ևս մասնակիցն է մեր արդար հավաքներին, մարտերին և գործերին և

այս գիրքը գրելիս էլ զորությամբ, խորհրդով օգնում էր ինձ՝ նյութը ավելի հստակ պատկերացնել:

Նույնն է մեր հայ կերպար-իդեալն ընդհանրացնող էպոսի ոգեկոչը. «ՅԱ՛, ՄԱՐՈՒԹԱ ԲԱՐՁՐԻ՛Կ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.... ՀԱ՛ՑՆ ՈՒ ԳԻՆԻՆ-ՏԵ՛Ր ԿԵՆԴԱՆԻՆ, ՅԱ՛, ԽԱ՛Չ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝ ԻՆՉ ՎԵՐ ԻՄ ԱՋ ԹԵՒԻՆ»:

ԽԱ՛Չ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝ ԻՆՉ ՎԵՐ ԻՄ ԱՋ ԹԵՒԻՆ:

Այսինքն, որքան Աստծու փեշին մոտ, այնքան՝ ճշմարտության մեջ:

Որքան Աստծո փեշին մոտ, այնքան՝ բանական, հոգևոր հաղթանակների մեջ:

Որքան Աստծո փեշին մոտ, այդքան հավիտենարժեք ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ:

Որքան Աստծո փեշին մոտ, այնքան՝ հավիտենական կյանքի մեջ:

Հոգևոր Նժդեհը գիտեր ինչ էր ասում: Ուստի՝ ուժը ոչ թե ծնում է իրավունք, այլ՝ Բանականության, Աստծո Բանի փոխարեն հանդես գալով (որն իր տեղը չէ), ՃՇՄԱՐԻՏ ԻՐԱՎՈՒՆՔ ՉԻ ՀԱՐՑՆՈՒՄ և հանկարծակի ու խայտառակ ընկնում է: Հենց այդ պատճառով էլ՝ Բանի փոխարեն հանդես եկող Առանց Աստծո ուժը, սոսկ մարմնային ուժը, խաբեությունը՝ խորապես դատապարտված է, քանի որ սրբազանը Խաչելության սիրո իրավունքն է, մերձավորի համար զոհագործության իրավունքն է: Հանուն կյանքի և շատերի փրկության՝ պատարագման իրավունքն է: Զորավոր ուժեղը գնահատելի մի բան է միայն այն ժամանակ, երբ ծառան և կամքը գործողը լինի Աստծո Բանի Սիրո իրավունքին:

Այդ Իրավունքն է ազնվականն ու աստվածայինը: Այդ է հավիտենական ճշմարտության և գոյության բանալին: Իսկ զորությունը, որ Աստծուց և ինքնըստինքյան անմահական սիրո հովվությունից է ծագում՝ պաշտպանն է այդ իրավ իրավունքի: Եվ ոչ միայն պաշտպան է, այլ պատերազմող Աստծո Բանի սրբության բոլոր հակառակորդների դեմ: Եթե ոչ՝ սխալ զորություն է: Եվ հավիտենական Բանի զորությունը նաև մեզ Աստծուն՝ ամենակալ- հաղթանակողին է հարաբերում: Եվ կարող է Տիրոջ զորությունն ավելանալ մարդու վրա՝ ըստ կրողի ընբռնման, ըստ ազգի ու մարդկության որդի լինելու նրա սուրբ արժանիքների, վարքի և առողջ նվիրման: Եվ այդ ավելացումը կարող է անչափելի լինել, ինչպես ասենք՝ Նարեկացու և Շեքսպիրի պարագայում:

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբեմն մեկը դատում է մյուսի ծխելը, ինքը պոռնկության մեղքի մեջ գտնվելով: Կամ բնական է համարում այլոց տակ փորելը, սակայն սուրճ խմելը մահացու դատապարտելի: Հոգեսպաններ կան, որ սովորական հայհոյանքը հանիրավի Սուրբ Հոգու դեմ են անվանում, որովհետև լսել են, թե Տերն այդ մասին խոսեց, սակայն իրենք գործով Հոգու դեմ հայհոյիչ են և Ավետարանն են ստում: Իսկ Հոգևոր Նժդեհը մեկնում-ասում է. «ՍՏԵԼՆ է ՀԱՅՀՈՅՈՒԹՅՈՒՆԸ»:

Բայց որտեղից ելան ճշմարտության շեղողները: Տգիտությամբ ցինիկները: Ավելի լավ չէ՞ ամենքս էլ նախ մեր ախտերի բժշկման մասին մտածենք և ոչ թե դատենք այլոց կամ այլոց անկումը որոնենք, երբ մեզ չար բան չեն արել: Եվ եթե որևէ ախտ ախտ չդիտենք՝ չենք էլ մտածի դրա բժշկման վերաբերյալ: Եվ բնական է, որ նենգափոխողները, ծռողները Աստծուց պիտի մի օր հանդիմանվեն, եթե ժամանակին չապաշխարեն այլոց հանիրավի, մինչ ի մահ որոգայթելուց ու այդպես հալածելուց:

Այսօր էլ, եթե պատահական 10 հոգու հարցնես թե՝ «ՈՒԺՆ Է ԾՆՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԸ» խոսքի հեղինակը ով է, հավանորեն 7-8-ը կասեն թե՝ Նժդեհը: Հեռուստացույցով որ՝ «քաջ գիտակները» հաճախակի և վստահորեն են թմբկահարում-տարփողում նույն այդ սատանայական, սուտ «միտքը»: Ես էլ, երբ Նժդեհ դեռ չէի կարդացել՝ այդպես էի լսել և այդպես գիտեի: Եվ անգիտորեն ասում էի՝ էլ ի՞նչ կարդամ Նժդեհ, երբ այդ խոսքերից բռնատիրության ու բարու դեմ ապստամբության հոտ է փչում:

Այս հարցը մեր պատմաբաններից մանրամասնորեն և ընտիր հստակությամբ քննել է Նժդեհագետ Ռաֆայել Համբարձումյանը, բողոքելով, թե՝ ոմանք, չգիտես ինչու Նժդեհին խեղաթյուրելով որոնում են նրան մեր ազգի հակառակորդի խոսքերը վերագրել և այդպես՝ հակաքրիստոնյա ներկայացնել մեծ և իմաստուն հավատացյալին, երբ Նժդեհը ոչ թե սովորական հավատավոր է, այլ՝ «խոր, հավատավոր» քրիստոնյա, եզակի հավատավոր մեր մեծերից: Ինքդ էլ գրիր այդ մասին: Գուցե լսեն:

Նժդեհի խոսքի որոշ «մեկնիչներ» տգետ ընթերցման պատճառով՝ այդպես խեղաթյուրված են դիտել քրիստոնյա հայ ժողովրդի խաչելությունը, որ իմաստունն է նկարագրում. երբ աշխարհը ծաղրում է խաչյալ հայ ժողովրդին այնպես, ինչպես տիրասպան չար հրեաներն էին ծաղրում խաչյալ Հիսուսին: Եվ... Սատանայի խոսքը վերագրում են... Հոգևոր Նժդեհին: Կարդում և աչքերիդ չես հավատում:

Նժդեհը Հիսուսի Ավետարանական Խաչելության պատկերն է նկարագրում, սակայն այս դեպքում, ինչպես ասացինք, Խաչի վրա հայ ժողովուրդն է.

**«Գողգոթայէն՝ Արևմտահայաստանէն կբարձրանար աղաղակը հավաքավառ խաչեցյալի,- օգնությո՛ւն, փրկությո՛ւն ինձ: Իսկ մարդկությունը՝ հանցավոր ու անտարբեր կպատասխաներ.**

**- Ծարա՞վ ես՝ արցունքդ արբ:**

**- Կոտրվու՞մ ես՝ որովհետև թույլ ես ... վաղուց է, որ եկեղեցիներիդ զանգերի քաղցր ղողանջը չես լսում, առանց իդեալի և վեհության կսողա՞ս միայն.... Ի՞նչը մղեց քեզ հավատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգավոր խոսքին...**

**- Թուլությունը,- ասում է աշխարհը,- ծնված է սնուցանելու ուժը: Ուժն է ծնում իրավունքը...**

**Այս էր աշխարհը հայկական Գողգոթայի հանդեպ...**

**Այսպես կպատասխաներ մարդկությունը մահվան դատապարտված այս ժողովրդին»**,- գրում է Նժդեհը:

Ստացվում է, որ Նժդեհը խստորեն դատապարտում է «Ուժն է ծնում իրավունքը» ասողներին, նրանց անտարբեր և անասնական դիտելով, սակայն Նժդեհի դատապարտության այդ խոսքը ոմանք, ասես դիտմամբ՝ ետ են հասցեագրում Նժդեհին:

Երբ Ավետարանիչը գրում է խաչյալ Հիսուսին ուղղված հրեաների ծաղրալից խոսքերը, կարդում ու հասկանում ենք, որ այդ ծաղրալից խոսքերը հրեաներն ասացին, և ոչ թե Ավետարանիչը: Այստեղ էլ նույնն է, Նժդեհը գրում է, թե՝ Խաչյալ մեր ժողովրդին աշխարհը (նոր հրեաները, որոնց մասին Հայտնության Գիրքն ասում է թե՝ իրենք իրենց մասին ասում էին՝ հրեաներ են, բայց ստում են և սատանայի ժողովուրդ են) նույնկերպ և «ՀԱՆՑԱՎՈՐ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՄԲ» ահա ծաղրում են հային:

Խոսքը միայն Տիրասպան հրեաների մասին է, որոնք և՛ երեկ, և՛ այսօր՝ հակաքրիստոնյաներ էլ մնացին, տարբեր ազգերի մեջ էլ գտնելով իրենց նման սուտը կերպարանվողներին: Սրանց համար էր, որ Հիսուս ասաց. **«Դուք ոչ թե Աբրա-**

**համի որդիներն եք, այլ ձեր հայրը Սատանան է, որ սկզբից ստախոս էր և մարդասպան»:**

Այս հրեաները որոնեցին մարմնավոր թագավորություն և սպանեցին Հոգևոր Թագավոր Հիսուսին: Մարմնավոր, ունեցվածքային աշխարհատիրությունը նման կեղծ հրեաների նպատակն էր՝ ինչպես Հիսուսի ժամանակ, նույնպես Նժդեհի ժամանակ, նույնպես և այսօր: Եվ ահա Նժդեհը աշխարհ ասելով ոչ թե խորհրդանշորեն, այլ հենց այն հրեաներին նկատի ունի, ովքեր հակառակ էին (են) երեկ Քրիստոսին, այսօր՝ քրիստոնյաներին, հային, որովհետև «Ուժն է ծնում իրավունք» արտահայտությունը պատմաբան Ռաֆայել Համբարձումյանի ուսումնասիրությամբ, պարզվում է, որ «Սիոնական արձանագրություններից առաջին արձանագրության առաջին նախադասությունն է»: Նժդեհը հենց այնպես հարցին չէր մոտենա և Հոգևոր Նժդեհի խոսքը հարկ է իմացականությամբ կարդալ և ոչ դիտումնավոր հակառակ: Իսկ այդ արձանագրությունների մասին ռուս մեծ հոգևորական Օլեգ Պլատոնովի ուսումնասիրությունից տեղեկացանք, որ դրանք՝ 70-ն են, որոնք ծրագրեր են՝ որոնցով Նեռի, նույն Չարի (դերաքրիստոսի) աշխարհ գալն են նախապատրաստելու, որ մարդկությունը գայթակղվելով Քրիստոսի փոխարեն ընդունի Նեռին ու նրա նյութապաշտության համակարգը:

- Մի հավաքարար,- պատմում է Պլատոնովը,- որ հրեա մասոնների մոտ էր աշխատում, այս արձանագրություններից քսաներկուսը գողացավ և տարավ, վաճառեց Նիկոլայ երկրորդ ցարին: Ցարն այդ արձանագրությունները գրքով հրատարակել տվեց, որ աշխարհն իմանա, թե ինչ չարիք է մարդկության գլխին նախապատրաստվում: Եվ Աստծո կամքով մարդկությունը այդպես տեղեկացավ Նեռի աշխարհ գալու նախապատրաստական ձեռնարկներին ու «աշխատանքային» ծրագրերին, այդպես՝ լրացնել-հաստատելով Հայտնության Գրքի նախազգուշացումները:



Խոսքը նույն սատանայապաշտների արձանագրությունների մասին է, որոնց Նժդեհը դասախոսություններ լսելով ծանոթ էր: Նժդեհը քաջ գիտեր մարդկության, մանավանդ փոքր ժողովուրդների համար դրանց թունալից, մահացու որոգայթներն ու վտանգները: Այսինքն, Նժդեհը խորությամբ քննել էր եղեռնի պատճառները և գիտեր թե հային ո՞ր չար ձեռքը հարվածեց՝ ի բնե չար թուրքին էլ գործիք դարձնելով:

Հոգևոր Նժդեհը գիտեր թե քրիստոնյա ազգերի և քրիստոնյա Հայի համար ինչ են նշանակում այդ ծրագրերը: Եվ որ մեծ եղեռնն էլ այդ արձանագրությունների կիրառման հետևանք էր: Եվ իզուր չէ, որ հայի խաչելությունը նկարագրելիս Նժդեհը մեջ է բերում հենց այդ արձանագրություններից, որով հատկապես է մատնանշում թե՝ հային խաչողն ու ծաղրողը աշխարհը Նեռի առջև նույն նախապատրաստողներն են. հակաքրիստոնյաները, ճիշտ նրանք, որ երեկ ծաղրեցին և խաչեցին Աստծո Որդուն՝ Հիսուսին, այժմ էլ Հային են և՛ խաչում, և՛ ծաղրում: Այսինքն թե, ողջ աշխարհում՝ Հայն է, որ ապրեց Աստծո Որդու նմանությամբ և Հայը խաչվեց նույն խաչողներից, որ երեկ Տիրոջը խաչեցին: Պատմականորեն այդպես էլ կա: Հայտնի է, որ թուրք առաջնորդները նեռի գալուստը նախապատրաստող արձանագրությունների ստրկահաճո հետևորդներ ու կամակատարներ էին, այդ դրդումներից էին առաջնորդվում, քանի որ սատանայապաշտ նույն հերձվածի՝ Սալոնիկի մասոնական օթյակի անդամներ էին և օթյակի ծրագրերից էին հրահանգավորվում: Եվ Աստծո անվամբ այդ արձանագրությունները գործադրող սատանայապաշտների դրդմամբ էլ թուրքերն սկսեցին եղեռնել (խաչել) հայերին: Այդ հայտնի, պատմական եղելություն է: Անգամ եղան մասոններ, որ այդ խոստովանեցին մեր հեռուստատեսութ-

յամբ: Օրինակ. 2007 թվականի Ապրիլի 24-ին հեռուստատեսությամբ անգլիացի մասոններ ելույթ ունեցան, ասելով, մենք ձեր եղեռն անող մասոններից չենք, մենք բարի ենք, և ոչ նրանցից, որոնցից էին եղեռնն իրագործող թուրք փաշաները: Պարզ խոսքով խոստովանեցին, թե եղեռնի հեղինակներն իրենց անվանակիցներն են, որոնց և այս մասոնները ևս չար անվանեցին:

Այսինքն, թե հայի և Նժդեհի հակառակորդն էր «Ուժն է ծնում իրավունքը» խոսքն ասողը: Եվ Նժդեհը իմանալով՝ հատկապես էր եղեռնողների բուն ակունքը նշում: Որ ահա տգիտորեն կամ դիտմամբ վերագրում են Նժդեհին: Ինչպես ասում են՝ անում են տգիտության սատանայից դրդվելով: Այդպես իսկ անարգելով հոգևոր Նժդեհի հայրենասիրությունը: Նաև կարծեցնելով, թե արյան հոտ բուրող դիվական այդ արտահայտության մեջ իբր ազգօգուտ ինչ-որ բան կա և ոչ թե բռնատիրություն ու եղեռն:

Եվ փոխանակ շատերս բացենք, Նժդեհյան բնագիրը կարդանք, կուրորեն դեռ առաջնորդվում ենք բամբասանք դարձրած լուրերով:

Պարզ է, իմաստությունից զուրկ մարմնական ուժի համանիշը միայն անասնականությունն է և մեքենայական բռնատիրությունը, որպես նպատակ: Եթե ուժը իրավունք է կարծեցվում, կեղծվում... իմաստության վրա, շնորհի վրա, սիրո վրա: Նշանակում է թե՝ մարմնային ուժն է իշխելու իմաստունին, մարդասպանը պոետին, այլասերվածը առաքինությանը, եկեղեցուն ու ժողովրդին: Այդպես և կապականվի և կընկնի նման որոգայթ ընկած ժողովուրդ ու ժողովուրդներ: Կապականվի և կընկնի մարդկությունը: Այսինքն թե, այդ արտահայտությունը իր նպատակով մարդկության կորուստը որոնող արմատ արտահայտություն է, որով է սկսվում սատանայականների արձանագրությունների գիրքը:



Ավետարանն ասում է. «Փշից խաղող չես քաղի»: Եվ թող Աստված օգնական Հայկական հոգևոր հարցերում մեզանում ամեն մի շեղի շտկման, ինչպես նաև այս կարևոր հարցի: Ամե՛ն:

Ընդհանրապես խաչյալի ողբերգականություն կա Նժդեհ անհատի և նրա թողած ժառանգության ճակատագրում: Ինքն ևս տեսնելով այդ, ինքն իրեն այս աշխարհին օտարական՝ ՆԺԴԵՀ անվանեց: Կենդանության օրերին հալածանք ու բանտ, բանտում խաչյալի երկարատև-չարչարանալից կյանք և մահ, իսկ մահից հետո իր գաղափարախոսության ոսկիների նմանօրինակ, չար աղավաղումներ:

Առաջ թռած «փարիսեցիական կեղծավոր խմորը», որ ոմանք խառնում են մեր ազգի մեծերի տված արդար հացին, որ քրիստոնեական արդար չարչարանքով էլ վաստակվել է: Չէ՞ որ պիտի տեղիք չտանք, որ չխառնեն: Աստված մեզանում այդ ամենը կարգավորի: Ամեն:

Հաջորդ գլխում պիտի կրկին խոսենք այն պարզ հարցի մասին, թե ինչո՞ւ է անկարելի, որ մարմնային ուժը իրավունք ծնի:

## ՈՒԺԸ ՉԻ՛ ԿԱՐՈՂ ԾՆԵԼ ՃՇՄԱՐԻՏ ԻՐԱՎՈՒՆՔ

Նախ Հովհաննեսի Ավետարանում ասվել է. «ՍԿԶԲԻՑ ԷՐ ԲԱՆԸ» և «ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ ՆՐԱՆՈՎ ԵՂԱՎ ... ԱՌԱՆՑ ՆՐԱ ՉԵՂԱՎ ՈՉԻՆՉ, ՈՐ ԵՂԵԼ Է... ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՈՎ ԵՂԱՎ...ԿՅԱՆՔԸ ՆՐԱՆՈՎ ԷՐ»:

Ուստի իրավունքն Աստծո խոսքինն է, քանի որ ամեն ինչ նրանով է: Ճշմարիտ իրավունքն ուրեմն Բանն Աստծոյինն է, այլ խոսքով ասած՝ Աստծո Բանականությանը, որ խոսքով է արտահայտվում: Նրանով է Կյանքը, նրանով է Ճշմարտությունը: Եվ, հայտնի է, որ Խոսքով է ամեն ինչ լինում: Եվ

չարն անգամ խաբելով մարդկանցս, օգտվում է Աստծո տված մեր այդ ոսկե զենքից՝ Խոսքից, խաբվողների Բանականությունը հենց իրենց դեմ մոլորեցնել-դարձնելով: Հենց խոսքով՝ համաձայնություն գտնելով մեր մեջ, որպես ինքն առավել է և այդպես՝ Խոսքը մոլորեցնելով, ոչինչ դարձնելով հենց մեզ համար: Եվ արդյունքն ավերմունքն է լինում, հոգեխեղումը բազմաթիվներիս, երբ կեղծ բարեկամ կամ կեղծ ծնունդ է հայտնվում մեր բանական դաշտում: Բազում գիտնականների ու Աստծո այլ շնորհակիրների Բանի փոխարեն մի կտոր մարմնի հացի հրապուրելով է չարն այդ անում՝ մոլորվածներին ծառայեցնելով կամ գցելով կորստի ու ավերածության ոտքերի տակ: Նախ զրկում է նրանց Աստծո տված հանապազորդ խելամտությունից, ապա պատրում է ու գայթակղում: Իսկ պատրանքն այն է, որ մեծ ճարպկությամբ խաբելով մեր սրտերը՝ նա չարը բարի է ներկայացնում, բարին՝ չար: Եվ հոգևոր աշխարհի մոլորումը որպես սպանդ է արտահայտվում նաև մարմնավոր աշխարհում:

Առանց Աստծո Խոսքի, Բանի և բանականության որևէ գործընթաց կամ շարժ երբևէ տեղի չի ունենում: Աստված ասաց՝ և ասածը եղավ: Սակայն ով Աստծուն է հետևորդում՝ կյանք է գտնում, ով չարին՝ նույն Աստծո Բանը չարափոխելով՝ ապա վերջում գտնում է մահ ու պատիժ, կորուստ, մոլորում և հոգեխեղում, մանավանդ ավելացրած այն վնասների չափերը, որ իր խարդախություններով շրջապատում առաջացրեց:

Եվ ինչպես նախորդ գլխից տեսանք՝ «Ուժն է ծնում իրավունքը» խոսքը երեկ Հիսուսին սպանողների և այսօր դերաքրիստոսի (սուտ քրիստոսի) ճանապարհը նախապատրաստողների խոսքն է Նժդեհը մեջբերում, որ իմանանք թե չարերն են Հիսուսին և հային խաչողներն ու ծաղրողները և ոչ թե քրիստոնյաները: Երբ Սատանան խոսում է ընդդեմ Աստծո



Բանին և Հային: Ուժն է ծնում իրավունքը, միևնույնն է, եթե պնդեին թե՝ մարմնավորինն է եկեղեցու կամ պոեզիայի կամ երաժշտության իրավունքը, այլ ոչ թե հոգունը, այլ ոչ թե սրբերինը, շնորհինն ու Աստծո մշակույթի զորությանը, իբր ոչ թե տաղանդինը կամ տաղանդավոր մարդկանցը, այլ գողերինն ու կիսանասուններինը, որ իրենց ուժը նյութի հարստությամբ ավերմունքներ գործելու մեջ են տեսնում : Ուժ, որ ոչ թե ի զորու է ծառայել մշակույթին ու եկեղեցուն, ժողովրդին, այլ ձգտում է տիրել նրանց և ապաշխարություն ապականել, խեղել ու փչացնել, քանի որ այդ ամեն ճշմարտությունից ոչինչ չի հասկանում: Իրենից ճշմարտություն չի ծնվում, քանի որ իրենով անհնար է ճշմարտություն լինի կամ հաստատվի:

ՑՈՒԼԸ ՄԱՐԴՈՒՑ ՈՒԺԵՂ Է, ԲԱՅՑ ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴԻԿ ՑԼԻՆ ԹԱԳԱՎՈՐ ԿԱՄ ՔԱՀԱՆԱ ԿԱՄ ՈՒՍՈՒՑԻՉ ՉԵՆ ԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՈՉ ԷԼ ՑՈՒԼԸ ԼԱՎ ԵՐԳԻՉ Է ԼԻՆՈՒՄ, ԳՐՈՂ ԿԱՄ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ: ԵՎ ՑԼԻ ԲԵՐԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՐԶԱՊԵՍ ԶԱՎԵՇՏ ՈՒ ՓՈՐՁԱՆՔ ՊԻՏԻ ԼԻՆԵՐ ԵՎ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԼԽՈՎԻՆ ԽԱՅՏԱՌԱԿ ԵՎ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ: ԻՆՉՊԻՍԻՆ ՈՐ Է, երբ սրբության պահպանությունը մնում է գողերի ու ավազակների ձեռքում:

Իսկ Շնորհը. Շնորհը հոգևոր Զորություն է տրված մարդուն, ճշմարիտ սիրո ներկայություն, ձիր ու տաղանդ, կյանք հավիտենական, որ թե մարդը մեռնի էլ որպես մարմին, սակայն շնորհների ի Տեր գործադրումներով կենդանի է մնում հավիտյան և հոգով գործուն, ինչպես օրինակ մեր Նարեկը: Եվ Նարեկացու նմանը կրկին Աստծով պիտի հառնի, ավելի սուրբ մարմին ստանա, քանի որ Շնորհների շնորհիվ հոգով կենդանի է մնում: Անկարելի է այլ կերպ կամ այլ մի բան մարդու համար, երբ հավիտենությունը կա, որ ինչպես գիտենք, կա՝ անվերջանալի և անսկիզբ: Կյանքն առանց այդ ճշմարտության շարունակական լինել չէր կարող: Ծնունդը կարող է

որպես սկիզբ դիտվել ժամանակի սահմանափակումների մեջ, բայց ոչ երբեք հավիտենությունը: Հավիտենականությունը սկիզբ չունի և չունի վերջ: Իսկ մեր հոգին հավիտենության կենդանի մի մասնիկն է և հավիտենական սերմնահատիկն է մահկանացու մեր մարմնում: Մարմին, որ նաև ժամանակավոր ուժի չափանիշն է: Այս ուժը պիտի ծառայեցնել Աստծո շնորհներին և ոչ թե Տեր կամ հրամայող դարձնել մեր հոգու և շնորհների վրա: Ուստի, ով հոգին է սնում, կատարյալ խելամիտ է, իսկ ով Շնորհները ծառայեցնում է չարին և մարմնի կամքին՝ չարամիտ է դեռ և ուշացած է փոշմանելու, եթե այդպես շարունակի: Բան, որ շատերն են ճանաչել ու վկայել: Աստծո զորավորը մահից այն կողմ էլ է շնորհներով զորավոր ու կյանքի մեջ հավետ կենդանի: Սոսկ մարմնապես ուժեղը, հոգևոր չլինելով՝ մահից այն կողմ պիտի վերածվի աղբի: Աստծո դեմ ապստամբները ստակրոնությունից կամ մոլեկրոնությունից կամ անհավատության մեղքից կարծում են լավ է անհոգի և անխելամիտ լինելով՝ սոսկ մարմնապես ժամանակավոր ուժեղ-անասնականը լինել-ընտրելը: Սակայն Աստծո որդիները՝ սուրբարդար Շնորհներով են զորավոր, որին հասնում են Քրիստոս հագած ապաշխարության դարձով: Մարմնավոր ուժը հանկարծահաս կոտրվողն է, իսկ սուրբ զորությունը կամ ապաշխարությամբ ձեռքբերվածը՝ արժանիի վրա ընդհատում չունի, այլ անընդհատ զարգացում է դեպի առավելն ու ավելի առավելը: Եվ հավետ ու անընդհատ է՝ թե այս աշխարհում, և թե առավելով՝ այն: Բան, որ շատերն են ճանաչել ու վկայել: Եվ ինչպես Աստծո ճանաչեցրածն է՝ իրավունքը Վերին Սիրուն է պատկանում, իսկ երկրում՝ անխաբ մարդասիրությանը: Ուժն, այսինքն՝ ծառա է միայն իմաստունների և սրբերի, Աստծո մարդկանց կամքին, և տաղանդավորներին ենթակա լինելով է միայն օգտակար: Ինչպես ձեռքն ու ոտքը սրտին և գլխին ենթարկվելով են օգտակար: Ինչի՞ նման կլինի, եթե սիրտն ու



գլուխը ենթակա լինեն ձեռքին ու ոտքին: Երբ ղեկավարը բանականությունն է, որ սիրտն ու գլուխն են իրագործում՝ հրաման տալով ոտքին ու ձեռքին, որ սրանք օգտակարը գործեն: Եվ եթե ձեռքն ու ոտքը ապստամբեն բանականության դեմ՝ մարդիկ կվերածվեն անասունների և նրանցից ցած էլ կիջնեն: Բնականաբար, նման ապստամբությունը հանկարծակի և խայտառակված կընկնի և նրան երբևէ պահող չի լինի, քանի որ ուժը անասնական է, եթե Աստծո Կամքի բանականությամբ չի ուղղորդվում:

Նապոլեոնն ասել է. «ԵՍ ՈՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԸ (ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆ) ՍԽԱԼՎԵՑԻՆՔ, ՄԵՆՔ ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԵՑԻՆՔ ՈՒԺԻ ՎՐԱ ԵՒ ՊԱՐՏՎԵՑԻՆՔ, ԻՍԿ ՔՐԻՍՏՈՍ ԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԵՑ ՍԻՐՈ ՎՐԱ ԵՒ ՀԱՂԹԵՑ, ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ԷԼ ՀԱՂԹՈՒՄ Է ԵՒ ՎԱՂՆ ԷԼ Է ՀԱՂԹԵԼՈՒ»:

Առաքելոց վանքի կռվում Զորավար Անդրանիկը 30 մարդով, միայն չախմախե հրացաններով 20 օր շարունակ կռվեց թուրքական 6 հազարանոց կանոնավոր զինյալ բանակի դեմ: Եվ երբ մեր Հերոսի փամփուշտները վերջացան, նա հեռացավ՝ ոչ այլ մի ճանապարհով, քան... թուրքական բանակի միջով: Երկու զոհ տվեց Անդրանիկը, այդ երկու զոհն էլ չէր լինի, եթե Անդրանիկի՝ ԱՍՏՇՈ ԲԱՆԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ հրահանգները ժամանակին և ճշտությամբ պահեին: Իսկ թուրքերի զոհերը 1800 են հաշվվել: Որովհետև մարմնային ուժը թուրքերի կողմն էր, իսկ բանական իրավունքը, զորությունը, որ նշանակում է Արդարությունն Աստծո, սերն Աստծո, օրհնությունն Աստծո՝ զորավիգ էին Անդրանիկին: Եվ բանական իրավունքն է Աստծո, որ ինչպես Ոգու Արծիվն է ապստամբած ճնճղուկներին միշտ հաղթում, այդպես ի վերջո հաղթելո՛ւ է մարմնավոր վեր թռած ուժին՝ բոլոր ժամանակներում:

Նույնն է նաև սուրբ Վարդանանց օրինակը: Պատերազմ՝ զորությամբ: Զորությունն է, արդարության ոգին, որ մարդուն

կամ ազգերին անվախ է դարձնում և նահատակվելո՛վ էլ նրանք չեն պարտվում. այլ մտնում են հավիտենական կյանքի դռներից ներս, քանի որ բանական հաղթողներն են հոգով կենդանի թե այս, թե այն աշխարհում: Մարմնավոր ուժին տուրք տված միլիարդավոր մարդիկ չեն հիշվում, նրանք մարդակերպ ստվերների պես եկան-անցան, բայց Վարդանը հոգով կենդանի է և այսօր էլ է իր հաղթության Վարդով և զորությամբ գոտևորում մեր ազգի գիտակցական դաշտի որդիներին:

Նույնը հոգու զորությամբ արեց սաղմոսերգու Դավիթը, որ երբ դեռ նորելուկ պատանի էր, մեն մի պարսատիկով և ոտաբոբիկ ելավ հսկայակազմ ու ոտից գլուխ զինված ու զրահավորված Գողիաթի դեմ, որի դեմ վախենում էին մարտնչել կոչված հսկաներն անգամ: Բայց Դավիթ պատանին ճշմարտության իրավունքով, սիրո և մարդասիրության, կյանքի իրավունքով, Աստծո Բանն իր մեջ ունենալով, վերին այդ զորությամբ ասաց. «Ես իմ Աստծով եմ գալիս քո դեմ, ով Աստվածհայոյ Գողիաթ» և պարսատիկի քարը մեխեց հսկայի ճակատի ճիշտ մեջտեղում ու նրան իր հսկա ուժի հետ տապալեց գետնին, թե՝ հող, քո մարմնական ուժի հպարտանքով ու բամբասանքով ինչպե՞ս ես ելնում Հավիտենարժեք Բանի դեմ, որ չպարտվող զորությամբ է: Երբ Աստծո Բանի զորությամբ լեցուն ահա անգամ մի երեխա կարող է քո սևը մշտապես և ամեն ժամանակ բերել: Այդպես է Տեր Աստծով եղել և լինում բոլոր ժամանակներում:

Աստծո իրավունքի զորությամբ, սիրո ու մարդասիրության զորությամբ, Աստվածաշնչյան դատավոր Սամփսոնը՝ մեն մենակ, էշի մի ժանիք ձեռքին՝ հակառակորդի բանակներն էր կոտորում, լափում էր հակառակորդին, ինչպես կրակն է երաշտից չորացած արտն սպառում: Սա ուժ չէ, այլ Գիտակցված զորությունն Աստծո: Սա ուժ չէ, այլ ոգեղեն



Աստվածընտիրների սուրբ մի տեսակ, երկնային տեսակ, բանական մարդ-արծիվ կերպարների տեսակ, երգելով կռվող մշտահաղթների տեսակ: ԱՆԿՈՏՐՈՒՄ ՈԳԻ: Զորավար Անդրանիկն ևս իր զինվորներին բանական նույն ոգեկոչն էր հրահանգում. **«Մեր զինվորները հարկ չէ որ հայհոյեն, ինչպես հակառակորդը, այլ հարկ է, որ մեր զինվորները երգեն ու կռվեն»:** Որովհետև հոգու սնունդը, զորանալը, այդ զորությամբ հազարավորներին հաղթելը՝ շնորհներով է, իսկ երգն ու երգի խոսքը, սրտանց աղոթքը՝ շնորհներով հոգին զորացնել, սնել է նշանակում: Այդ պատճառով՝ երգելով կռվողներն են արծվանում և ոչ երբևէ Գողիաթի նման հայհոյիչները: Ինչպես գիտենք, Դավիթը, ում Քրիստոս մոր կողմից հայր անվանեց, պատանի օրերին մերկ ձեռքերով առյուծ էր սպանում, սակայն նա առաջին հերթին Սաղմոսերգու էր և Աստծու Խոսքն ու Շնորհքն էր նրա մեջ գերմարդկային այդ զորությունը, որպես նաև ուժ առաջացնում: Ոգու արծիվ էր, ուրեմն և ոչ թե միայն մարմնով ուժեղ մարդ և... երգելով էր զորավորվում, ուժով լցվում, կռվում ու հաղթում իրենից քանիցս զորավորներին: Հայտնի է, որ սուրբ Գևորգ և սուրբ Սարգիս անպարտելի զորավարները նույնպես երգելով էին ելնում մարտի, նույն հաղթող Դավթի սաղմոսները երգելով:

Քրիստոսի սիրով զգեցած մեր Կամսարական իշխանների հեծյալ խումբը, մեկ տասնյակի չափ, շրջափակվում են մոտ 20 000 անոց պարսկական բանակով: Դիմում են Հիսուսին և իրենց վրա զգում երկնքից իջած նրա Բանական զորությունը: Մշտապես և ամենքին Հաղթող Հիսուսի կենդանի զորությունն իրենց մեջ տեսնելով՝ մարգարեանում են, թե՝ ահա ճեղքելու ենք թշնամու բանակը և անգամ մի քերծվածք չենք ստանալու: Եվ ապա Աստծո Բանի զորությամբ իրենք են հարձակվում և ինչպես դանակը կարագը ճեղքի՝ կոտորելով ու կտրելով թշնամու ամուր շարքերը, անվնաս դուրս են գա-

լիս շրջափակումից,- պարսից հրամանատարներին թողնելով ապշանքի մեջ: Ճշմարիտ որ՝ քերծվածք անգամ չստանալով են ելնում գերությունից: Եվ ապշահար պարսիկները հրավիրում են Կամսարական իշխանին, որ իրենց զորքերի սպարապետը դառնա ու՝ դառնում է:

Այս մեկն էլ վկայություն իմ կյանքից: Այն մասին, որ՝ արդար Քրիստոնյայի զորությունը, հիրավի, մահից այն կողմում էլ է կենդանի, մասնակից այս աշխարհում իրենց մերձավորների, հայրենակիցների, բանական դաշտի մարդկանց, երեխաների, որբերի կյանքին:

Ծնողներս մահացան, երբ ութերորդ դասարանում էի: Բարեկամներս ինձ տարան արհեստագործական մի ուսումնարան, ուր սնում էին, հագցնում, գիշերելու տեղ տալիս: Ստեղծագործում էի: Մի օր ինձ ու ընկերոջս, թաղի «գող» տղերքը՝ 7-8 հոգի, սկսեցին ծաղրել ու ծեծել: Ընկերոջս դեմ ինչ-որ բան ունեին: Ընկերոջս հաջողվեց փախչել: Քիչ անց ինձ էլ հաջողվեց: Փողոցի այն կողմն էի վազում: Ետ նայեցի: Մեկը, որ քիչ օրեր անց մեր ուսումնարանի տղերքից մեկին դանակահարեց ու կյանքը չհաջողվեց փրկել, նույն այդ մեկը դանակը բաց հասնում էր ինձ: Շարունակեցի վազել, և... անդորր եղավ հանկարծ, ու որոտընդոստ մի ձայն լսեցի: Հոգևոր ձայն, միայն ինձ լսելի: «Կանգնի՛ր, ես Անդրանիկ Զորավարն եմ, ե՛տ դարձիր»: Ես ետ դարձա: Այդժամ, զգացի, որ մինչև գոտկատեղս Զորավարի սուրբ Հոգին իջավ իմ մեջ և ձեռքս (այդ պահին՝ պայմանականորեն էր իմ ձեռքը) ետ գնաց ու հզոր ապտակ իջավ հետապնդողիս դեմքին: Նա երկայնակի փռվեց փողոցի մեջտեղում ու թպրտում էր: Ես ավելի դանդաղ, հանգիստ վազքով անցա փողոցն ու մտա ուսումնարան: Ուժը չէր իմ կողմը, այլ՝ ճշմարիտ իրավունքը, որ որբ էի ու տարիքով երեխա՝ միայն մարմնով մեծ և ուժեղ և լկտի իմ հակառակորդի առաջ: Իրավունքս չանտեսվեց Աստծուց, որ



նախապես ասել էր իր ընտրյալներին, թե. «որբի իրավունքը կպահեք» և Տիրոջ ընտրյալներից Անդրանիկը, որ ժամանակին բազմաթիվ որբերի էր փրկել, այդ օրն էլ շնորհի հետևորդիս ապրելու իրավունքը պահեց՝ արդեն իր առավել հոգևոր աստիճանակարգում, աշխարհի մեջ: Մի աստիճանակարգ, որտեղ կենդանի հոգով սրբերն են գործում: Այդ օրն իմ առաջ բացվեց երկնքի վարագույրի անդենային մասից մի զորավոր ու կենդանի, ապրող պահ: Եվ ակնհայտ տեսա, որ՝ ինչ կյանքով էլ ապրենք, այդ մեր նախնի մեծերից անտես չէ և եթե բարին ենք գործում՝ առանց նրանց չէ: Ուստի և, անգամ մտքի մեջ մեղք գործողը տեսնվում է նրանցից, օգնության արժանին՝ օգնություն գտնում: «Սրբերի բարեխոսություն» որ ասում ենք՝ սրբերի նման միջնորդությունները նկատի ունենք: Որոնք ակնհայտ բաներ են: Հոգևոր հարազատություն: Հոգևոր-բանական ազգ-ընտանիք: Իզուր չէր հոգևոր Նժդեհը պատերազմի ելնելիս մեր նախնի մեծերից աղոթքով խնդրում նրանց կենդանի զորակցությունը: Խնդրածը՝ նրանց կենդանի ոգու զորակցությունն էր, որով զորավարը հաղթում էր մարմնով և թվաքանակով ուժեղներին: Իսկ Նժդեհն այդ ամենը գիտեր, որովհետև քահանայի որդի էր և մանկուց Աստվածաշնչից էր սնվել՝ մարմնական ուժի հանդեպ Շնորհի զորության գերակայությունը առաջնային տեսնելով: Նույնն է թե, մանկականորեն ասած, Նժդեհի ժամանակում, նրանից մարմնապես ուժեղ տասնյակ հազարավոր մարդիկ կային, ովքեր սակայն պատիվ էին համարում խոնարհ լինել Նժդեհի Աստվածային տաղանդների, Շնորհների զորության առաջ: Որովհետև բանականության արծիվն էր հոգևոր Նժդեհին և գլուխ և ղեկավար:

Հոգևոր կյանքի, այն է՝ Աստծո Բանի զորության նվիրապետական այս բանալին մեր օրերում էլ է հրաշքներ գործում: Ո՞վ չի հիշում Շուշի քաղաքի ազատագրումը: Քահանայի թոռ

Արկադի Տեր-Թադևոսյանն իր փոքրաքանակ զինվորներին հրամայեց աջ ձեռքերի և մեջքի վրա Փրկչի Խաչի նշանը դնել և Խաչի հովանու տակ ելնել պատերազմի: Եվ ԽԱՉԻ ԵՐԵՄԱՆ ՏՈՆԻ ՕՐԸ ՀԱՐՁԱԿՎԵՑԻՆ ԵՒ ՏԱՐԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ՊԱՏՎԻՆ ԱՐԺԱՆ ՍՔԱՆՉԵԼԻ ՀԱՂԹԱՆԱԿ: Խաչի նշանով պատերազմի ելնելու Տերունական խրատն եղավ Կոստանդինոս արքայի օրոք: Նա փոքրաթիվ իր զորքով կամենում էր հաղթել մեծաքանակ բարբարոսներին: Չհպարտացավ, որ գնարջարդվեր, այլ՝ սրտանց խնդրեց Աստծուն թե՝ ինչպե՞ս վարվել: Այդժամ երկնքում, ամենքին ի տես, հայտնվեց մի դրոշ՝ վրան Խաչի նշանը և գրված՝ ՔՐԻՍՏՈՍ և վերստին գրված. «Սրանո՛վ հաղթիր»: Եվ ինչպես մեր Կոմանդոսը վարվեց, Կոստանդինոսն էլ, իր զինվորներին զենքից բացի զինեց Քրիստոսի Խաչի նշանով: Եվ մեկը մյուսի ետևից մեծաթիվ հակառակորդների դեմ տարավ փառավոր հաղթանակներ: Ապա Կոստանդինոսը, ասում են, դարձավ աշխարհի ամենահավատացյալ արքան: Թվում է, մինչ այսօր չգերազանցված: Կոստանդինոսը մեր Տրդատի ու Լուսավորչի ժամանակակիցն էր: Բնականաբար, այս ևս, ինչպես մյուս օրինակներում՝ Աստծո զորության, Բանական ոգու հաղթանակն էր՝ սոսկ մարմնով ուժի հպարտության հանդեպ:

Այս ամենը մեզ համար իմանալը նախ մեզ համար էլ կարևոր է, որովհետև մենք փոքր ազգ ենք, բայց Աստծո զորությամբ կարող ենք մեծերի խարդավանքները պատժել: Բանալին կա այսինքն:

Նույն հավատի զորությամբ, երբ Շուշին լցված էր էլչիբեյի զորքերով՝ ֆիդայի Ալֆրեդ Ներսիսյանը, որ կենսաբանության գիտությունների թեկնածու է, այժմ՝ Բնապահպանության նախարարության վարչության պետ, արձակագիր Վրեժ Իսրայելյանի, արվեստաբան- լրագրող՝ Սպարտակ Ղարաբաղցյանի և մի օդաչուի հետ, օրը ցերեկով, տաքսի մեքենայով ուխտի գնաց գերավար Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին: Եվ ազերի զինվորներն ու ազերի «բնակիչները« Շուշիի փողոցներում լսում էին Զորավար Անդրանիկի մասին Ալֆրեդ Ներսիսյանի երգերն ու չէին կարողանում ո՛չ որևէ բան հասկանալ, ո՛չ ձեռնարկել, ո՛չ պատասխան տալ: Որովհետև ուխտագնացությունը վստահ Հույսով և Հավատով էր. ՁՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈ և ոչ երբեք միայն մարմնական ուժով, այլ՝ հավատի Քրիստոսատուր արդեն հաղթանակած Բանական ոգով: Շուշիի ուխտագնացությունը Տիրոջ այն խոստմամբ էր, որ հավատավորի ներսում Աստված է բնակվում, իսկ Աստծո առաջ անհնար կամ դիմակայող ոչինչ չկա: Իսկ մեր փոքր ժողովրդի մեջ ամո՛թ է Քրիստոսի հանդեպ հավատ չունենալը կամ սակավ հավատ ունենալը, քան անհրաժեշտ է հավիտենական մեր կյանքին: Քա՛ջ լինենք՝ հավատալ, ըստ այս մեծ ու վեհ հավատավոր մարդկանց ընտիր օրինակների էլ:

Մեր «Սասունցի Դավիթ» էպոսն իսկ Աստծո զորության այս հիմնաքարով է: Երբ մեր գենի արտահայտիչ նախնին՝ Սանասարը, Աստվածածնի պատվերով մկրտվում է սուրբ Ավազանում, այդժամ դառնում է յոթնապատիկ հսկա և զորավոր, քան էր: Հորինվածք չէ մեր էպոսը, այլ հայկական գենի կենդանի սերմնահատիկ, որ ննջած է մեր հոգում, և որ մեր քրիստոնեական կյանքով պիտի արթնացնենք և մեր այդ տեսակին մենք հավատարմենք: Եվ պիտի քրիստոնեավայել ապրենք, որ այդ սերմնահատիկն առավել աճեցնի Աստված բազում բարի ու առատ պտուղներով:

Զորությունն Աստծո, որ երկնքի այն արծիվն է, որի երևալով միաբանված ուժովները՝ մանր կենդանիների նման զարհուրած, ճողոպրում են: Եվ որքան այդ կենդանիները շատ լինեն, անկարելի է, որ արծվի հանդեպ զարհուրիանքը երբևէ անբանական իրենց միաբանությամբ հաղթահարեն, որովհետև չգիտեն, թե՞ որ մեկին կբռնեցնի: Զարհուրելի է կեն-

դանի Աստծո ձեռքն ընկնել,- վկայում է Սուրբ Գիրքը: Որովհետև եթե բանական լինեին, այսինքն, եթե արծիվ լինեին՝ Արծվի կողմից կլինեին, նրա ճշմարիտ թագավորությունը կընդունեին և չէին հակառակի: Եվ այդպես՝ ամենն են զարհուրում Աստծո Բանի զորությունից, Աստծո Արծվից. եթե անգամ միաբան լինեն՝ ո՞վ կարող է իր Ստեղծողի դեմ ելնել ու կենդանի մնալ, խեթ նայել ու մեծապես չվնասվել կամ հավետ չկորչել, կամ հավետ չխեղվել, եթե ժամանակին դարձ չանի իր հպարտանքներից:

Քրիստոս Բանականություն Արծվից, ինչպես Հայտնության Գրքում է գրված, պիտի խայտառակությամբ պարտվի համաշխարհային թագավորների ողջ միությունը, որ այսօր կազմավորվում է և այժմ դեռ հաջողում է մարմնավոր իր պատիր ուժը որպես իրավունք դիտել տալ մարդկությանը: Այսինքն. Ուժն է ծնում իրավունք ասողները պիտի խայտառակվեն Քրիստոսի հայտնվելուց: Եվ ամեն բան, որ բաբելոնացվելով որպես ուժ կապստամբի Աստծո Բանի, Աստծո Արծվի դեմ՝ խայտառակվելով պիտի ընկնի Աստծո սրի առաջ, որ Խոսքով է ծագում աշխարհի վրա: Եվ թող մարդասերն Աստված թողություն տա մեր՝ հավատացյալներիս մեղքերին և որ ժամանակին դարձ ապրենք, քանի որ՝ ինչու՞ ուշանանք: Տկա՞ր ես, ջանք արա: Ճիշտ է, այդ ամեն ինչ չէ, բայց այդ էլ է մի բան, քան ոչինչը:

Հին Կտակի մարգարեներից մեկը՝ Դանիելը պատմում է, որ երբ Աստծո զորությունը սկսեց մոտենալ, բոլոր ուժվները, մարմնապես կուշտերը, այսինքն՝ մարդակերպ ցուլերն ու գայլերը, ի ծնե շները նաև, հանկարծ զգայական սարսափ զգալով՝ փախան այդ վայրից և միայն ինքը մնաց, որ պահքով մարմնապես տկարացել, բայց հոգով զորացել էր: Իսկ Տիրոջ հրեշտակն երևաց նրան մարդու որդու նմանությամբ և նրան անվանեց. «Սիրելի մարդ»: Անսիրտ մարդակերպ ցլերին, շներին, գայլերին սիրելի մարդ չէր անվանի. նրանք թեպետ արտաքնապես կուշտ և ուժեղ, սակայն սարսափահար փախչում էին Տիրոջ մոտեցող զորությունից, Շնորհի պայծառությունից: Որովհետև այդ զորության ներկայությունից կարող էին մեռնել կամ սարսափից ցնորվել, կամ վերածվել աղբի: Ինչպես տեսնում ենք՝ մարմնապես ուժվներինը չէ երբևէ ճշմարտությունն ու իրավունքը և ոչ էլ՝ առավել ևս՝ Տիեզերական իշխանությունը, և ոչ էլ ճշմարիտ կյանքը և առավել ևս՝ ոչ էլ սուրբ Սերը: Որովհետև իրավունքը հոգևոր, ոգեղեն իմաստնություն է՝ զորությամբ Տիրոջ:

Մեր օրերի վերջում, ինչպես ասացինք, և ինչպես արդեն լինում է, Աստծո զորության Արծվի դեմ միաբանվելու են երկրի գրեթե բոլոր թագավորները, ոչ թե Աստվածերկյուղ, այլ՝ վայ-նյութապաշտ, կաշառասեր իշխանավորները, բայց Բանի զորության Արծիվը տարերային աղետներով բռնացնելու է նրանց և զարհուրանքից ոչ մի թագավոր պահպանված չի զգալու ինքն իրեն, չգիտեն՝ ո՞ր մեկին է բռնեցնելու կարկուտով, ցունամիով, երկրաշարժով կամ արևի տապով (գլոբալ տաքացմամբ), համաճարակով. (գրվածքն ասում է՝ և հայտնի և մեզ անհայտ տարերային աղետներով) մինչև մեր Տիրոջ ամեն հակառակողներն էլ հալվեն, մաշվեն ու ընկնեն՝ Աստծո անսպառ զորության Արծվի առաջ: Ուրեմն, հաղթող այն թագավորն է կոչվելու, որ Տիրոջով հովվի ու խնամի իր երկիրը:

«ԵԹԵ ՉԱՊԱՇԽԱՐԵՔ, ԱՄԵՆՔԴ ԷԼ ՊԻՏԻ ԿՈՐՉԵՔ»,- նախօրոք ասել է Հիսուս:

Եվ այն թագավորները, որ Քրիստոս Տիրոջով չեն կամ Աստծո օրենք են արհամարհում, դրանք իրենց հակառակ իմաստի փոխում, պիտի ընկնեն իրենց չարով և ոչ թե բարիով միաբանվելու պատճառով: Միթե չե՞նք տեսնում, որ ինչքան աշխարհը բաբելոնացվում է, անբարոյականությունն ու պոռնկությունն այդքան ավելանում են, և նույնքան էլ տարե-

ռային աղետներն են շատանում, մեծանում ու հսկայանում, ինչպես գրվածքում խոստացել է Աստված՝ աղետները մեծացնել, երբ նրա տված բանականությանն ու սիրոն հակառակ՝ աշխարհը բաբելոնանա ու ապականվի: Եվ խոստացել է թե՝ վայ է լինելու կողմնակցողներին, կամակիցներին: Եվ քանի՜ քանիսը ուշացած, շատ ուշացած պիտի հասկանան երկնքի Արծվի՝ Քրիստոսի խոսքը թե. «Եթե (ժամանակին) չապաշխարեք, ամենքդ էլ կորչելու եք»: Եվ բաբելոնացող մարդկությանը Աստված խոստացել է ոչ թե ջրհեղեղով այս անգամ կործանել, այլ կրակով այրել: Եվ պարզից պարզ. աշխարհի ապականման հետ մեկտեղ, ողջ երկրագունդն սկսել է տաքանալ: Սակայն մարդիկ դրանից անհանգստացած, ասես աչքերը կապված, չեն խոսում Աստծո զգուշացման մասին, թե՝ «Կրակով այրելու եմ ապստամբներին», այսինքն՝ անբան ուժը (մահը) իրավունք կարծեցնողներին: Այսինքն. լսողներիս համար, լսել-հասկանալու պահն իսկ՝ դարձի նոչնակ է, և ինչպես Տիրոջով ժամանակին ամենքիս է ասվել հինգ իմաստուն կույսերի առակով. «Երանի ժամանակին լսողներին, ոչ թե ուշացածներին»:

Չէ՞ որ շատերս ենք փափագում հավիտենության հետևորդ լինել և ոչ թե անցնող ժամանակի: Կյանքի հետևորդ լինենք և ոչ թե դժբախտության և անմիտ փորձությունների կամ ահռելի աղետների մեջ ընկնելը փնտրողների:

ՈՒՍՏԻ, ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՍՏԾՈՆՆ Է, ՆՐԱ ՍԻՐՈՎ ԵՎ ԸՆԿԵՐԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՂԻՆԸ:

Տերունական աղոթքում, պատահականորեն չէ, որ ասում ենք՝ ՔՈՆՆ Է ՋՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՉԵՆՔ ԱՍՈՒՄ ՈՒԺԸ, որ խիստ ցածր ու խիստ ստվերային բնորոշում կլիներ:

Հոգևոր Նժդեհի խոսքի այն հատվածը, ուր հայն է նկարագրվում խաչի վրա, ցնցող և զորավոր է մեր ամենքի համար: Սակայն հարկ է անխարդավ կարդալ և թշնամու խոսքը



Նժդեհին չվերագրել, քանի որ մենք զորության «ոգեղեն» ժողովուրդ ենք և ոչ որպես թե՝ մեր կոչումով ժամանակավոր, իբր նյութագոյության մահ ուժին կեր ժողովուրդ կամ նյութին կուլ գնացող ժողովուրդ: «ՈԳԵՂԵՆ», այսինքն՝ ՋՈՐՈՒԹՅԱՆ ժողովուրդ ենք, որ Խաչվելով էլ գիտի սքանչելիորեն հաղթել և հարություն առնել: Հոգևոր ժողովուրդ, որ մարմնասեր, նյութապաշտ որպես թե ուժեղ հպարտներին պիտի թողնի իրենց պարտության և շարունակական ամոթի ու տաժանքի մեջ, իսկ ԱՍՏԾՈ զոհագործման նպատակի հակառակները ավելի վատ վիճակում պիտի մի օր հայտնվեն և որպես թե անկասելի ուժեղ որքան հակառակեն՝ է՛լ առավել պիտի պատժվեն:

## ՆԺԴԵՀ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ

**«Երբ ցեղն է գործում, Գարահիսարցի մի հյուսն դառնում է Անդրանիկ»** *(ՆԺԴԵՀ. Ցեղակրոնութիւնն իբր հաղթանակի զօրոյթ):*

Մեր ժողովրդի մեջ բարեբախտություններ են, երբ այս կամ այն ժամանակում ծնվում եւ միասին գործում են մի քանի մեծություններ: Օրինակ. ՍԲ. Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ արքան, Սուրբ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, Վարդան Զորավարը- Եղիշեն ու Ղեևոնդ երեցը և Հայոց մեծերի շքահանդեսում շատ այլ արքայական անուններ:

Բնականաբար հայորդիներիս հետաքրքրում է թե՛ այս ընտրյալների փոխհարաբերությունները միմյանց հետ, թե՛ նրանց միասնական, համատեղ գործերը և թե նրանց անձերն իբրև անհատակություն՝ իրենց առանձին աստվածարյալ գործերով: Ի վերջո՝ նրանց խոսքով, արվեստով, ներդրած կյանքով, ինչու չէ, նաև նրանց աստվածաշնորհ վարքի օրինակներով էլ ենք մենք կրթվել ու կրթվում: Նրանք ազգը սնուցողներ, յուրատիպ առաքյալներ, ազգայինը պահպանողներն ու

ազգի հոգեւոր խնամարկուներն են եղել և կան մեր կյանքում: Եվ եթե նրանցից մեկն ու մեկը հանգել էլ է, ապա Հիսուսի ասած ցորենի հատիկի նման, նա իր «մեռնելով էլ բազում պտուղներ է տվել» մեր ազգի մեջ, մեր կյանքում: Նրանք իրենց գործերի մեջ էլ մարմնով մեռան, սակայն իրենց արած գործերով հարություն առան: Այսօր հոգով, վաղը մարմնով էլ պիտի հառնեն: Ժամանակի շունչն են մեծ անհատականությունները եւ երաշխիքներն են մեր ազգի կենսունակության: Եվ Աստվածային կյանքի համ են նախ մեզ համար, ապա մարդկության բանավոր մասի համար էլ:

Երբ, չար ժամանակների բերումով մեր եկեղեցին տկարացավ, այդժամ Աստված սկսեց նաև եկեղեցու «աշխարհիկ», սակայն հավատացյալ իր մշակ որդիներին վեր բարձրացնել, որոնց հետո պատվեց: Եվ ժողովուրդն էլ սիրեց նրանց՝ իր արժանավոր, պտղաբեր որդիներին՝ (զորավարներ, բանաստեղծներ, նկարիչներ, երաժշտահան-երգիչներ, դերասաններ, գիտնականներ), սիրեց նրանց որպես բարի մշակների, բարության սերմնացանների և ի վերուստ առաքելություն ունեցող մարդկանց: Այնուամենայնիվ, Եկեղեցին (Հոգով) առաքելանման այս մշակների համար մնաց կենսական արմատ ու հենարան, Մայր և խոնարհման վայր: Իսկ Սուրբ Հոգին առաքելության պատրաստող և ուղեկից- առաջնորդը մնաց նրանց ողջ կյանքում: Իսկ թե (երբեմն կամ հաճախ) ընդդիմում ենք՝ նրանց մարդկային մեղքերը հիշելով, թող այդ պահին բարի լինենք՝ մեր մեղքերն ևս և նախապես հիշել, որպեսզի անարժան, ամոթալի կամ չափազանցված դատաստաններ չանենք՝ այն դեպքում, երբ նրանց կատարած բարի մշակության տասնորդական մասն էլ, շատերս պարզապես անկարող էինք գործել: Հիշենք նաև, որ՝ հանճար թե ծառա՝ մարդ ենք՝ ադամական մեղանչման բնույթով: Ուստի, պատիվ պիտի ընդունենք մեզ՝ մեր մեծերին խորապես



հարգել, որովհետև նրանց բարի վաստակների պտուղներից ենք և մենք ծրիորեն օգտվում: Ուրեմն պատիվ պիտի ընդունենք հարգել նրանց եւ ոչ միայն պարտականություն:

Մեր մեծերը աստվածարյալ մարդիկ են եղել, մարդկային ներելի մեղքերով:

**ՍՈՒՐԲ ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՆԺԴԵՀ:**

Կարելի է նմանեցնել Հայր եւ որդու՝ գործի եւ ամենից առաջ հավատի տեսակետից: Երկուսն էլ սովորական զորավարներ չէին:

**ԵՐԿՈՒՍՆ ԷԼ ՄԵԾ ՀԱՎԱՏԻ ՏԵՐ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ ԷԻՆ:**

Նժդեհի ոգեկոչումով Աստծո պահած մեր անցյալի մեծ անմահներն էլ էին մասնակից դառնում հանուն արդար հաղթանակների պայքարին, պայքար, որից հաճախ աշխարհիկ ոչ մի կիրթ զորավար բան չէր հասկանա եւ երկնային պահերի թելադրանքը չէր ըմբռնի: Նժդեհը տեսնում էր, որ նսեմ է այն ազգը, որ «Մեծ մեռելներ (սրբեր ու նահատակներ) չունի, որոնք իրենց կենդանի զորությամբ թիկունք են ազգին նրա բանավոր (մշակութային) և մարմնավոր պատերազմների ժամանակ էլ»: Նժդեհը խոսում էր մեր այդ «մեծ մեռելների» հետ, որոնք հոգով կենդանի են ու կյանքի մեջ, և կոչում էր նրանց՝ հանուն Աստվածային այս փոքրաթիվ ազգի՝ մարտնչել մեր բոլոր փորձությունների ժամանակ:

Անդրանիկի աստվածային հավատն արդեն նախապես զինաթափ էր անում թշնամուն, ինչպես որ Աստվածաշնչում խոստացել էր Աստված, թե. երբ Տիրոջ անունով ես, ապա նա եւ քո առջևից և քո թիկունքից եւ քո աջ ու ձախ թևերից միաբան պատերազմում է: Աստծո զորությունն է այդպես քեզ հետ միասին ելնում հաղթանակ տանելու: Եվ հակառակորդն իր դեմ տեսնելով Զորավարին, ինչ թվաքանակ էլ ունենար՝ արդեն նրանց շարքերում՝ զարհուրանքն էր իշխում: Գիտեին, որ Աստծո մարդն է, Աստծո Մատը և գերբնական զորությամբ

է օժտված. և հաճախ, գրեթե առանց պատերազմելու կամ հանձնվում էին կամ փախչում կամ էլ խայտառակորեն պարտվում Աստծո հրեղեն Մարդու առաջ: Ըստ Սուրբ գրային ըմբռնումների՝ Անդրանիկի հավատով՝ ոչ միայն մեր ազգի մեծ անմահների հոգիները, այլ նաև Երկնքի հրեշտակների զորքերն էլ էին միաբան ու մասնակից Զորավարի պատերազմներին: Անդրանիկի համար, օրինակ, երկմտելի չէր թուրքական 6000 - անոց կանոնավոր բանակի դեմ 37 հոգով պատերազմելը: Եվ քսանօրյա այս պատերազմը Անդրանիկը դադարեցրեց միայն... ռազմամթերքի և պարենի սպառվելու պատճառով՝ եւ պատերազմի դաշտից անվնաս հեռացավ ոչ այլ կերպ, քան... թուրքական բանակի միջով: Այսինքն, պատերազմում էր ոչ թե մարդկային, այլ՝ Աստծո նախախնամող Աջով ու սիրով, կենսական ոգով: Անդրանիկն ապացուցեց, որ Քրիստոս Արծիվն է երկնքում իշխում, երկրում բնակվելով իրեն սիրելի մարդկանց մեջ:

Մենք պատերազմ չենք սիրում եւ չենք որոնում,- ասում է մեծ Նժդեհը,- բայց պարտավոր ենք դեռ պատերազմել. «Քսան երկար ու ծիգ դարեր են անցել Գողգոթայից մինչեւ մեր օրերը, եւ, ավա՜ղ, խաղաղության ու սիրո Ուսուցչի աստվածաշունչ խոսքը շարունակում է մնալ որպես «ձայն բարբառոյ յանապատի»: Երկու հակամարտ ուժերի արնոտ պատմությունը- սրի եւ սիրո խոսքի պայքարը- երկու ուժեր, որոնցից մեկը երազում է վերացնել սահմանները երկրների եւ ժողովուրդների միջից, իսկ մյուսը համառում է հաստատ պահել այդ սահմանները, ասել է եւ ազգամիջյան թշնամանքը՝ իր գոյությունը հավերժացնելու համար: Եվ դեռ իշխում է վերջինը, դեռ ուժեղ ու հաղթական է վերջինը, ու հույս չկա, թե մեր դարում սուրը կը վերածվի արորի»:



**«Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր կռվի»- ա՛յս է մնում օրվա հրամայականը** *(ՆԺԴԵՀ. Էջեր իմ օրագրէն. Հակամարտութեան օրէնքը):*

Զարմանալի է թվում. ահա ցեղակրոն համարվող Նժդեհը երազանքով, երանի տալով է խոսում մի բանի մասին, որն ինքն էլ ցավով խոստովանում է, թե՝ ափսոս անհնար է: Ասում է՝ Մարդկությունը ցավոք դեռ պատրաստ չէ լսել Խաղաղության Ուսուցչին՝ Հիսուսին: Ուստի, եթե խաղաղություն ես ուզում՝ ստիպված ես պատրաստվել պատերազմի: Խոսքը բնականաբար՝ նախ բանավոր, արդար պատերազմի մասին է, ապա, երբ այլ ելք չկա՝ մարմնավոր. Անդրանիկն ու Նժդեհն այս երկու՝ Բանավոր եւ մարմնավոր պատերազմները խայտառակ այդ ժամանակներում միացնում էին իրար. ավելին, անգամ դաժան ժամանակի ստիպմամբ՝ չէին տարանջատում և, բնականաբար, բանավորն էին գերադասն ընդունում:

Նրանց համար կարևոր էին՝ Աստծո մշակությունը և սուրը՝ քովընդքովի, որպես գոյատևման հենարան:

1912 թվականի Նոյեմբերին Հայկական վաշտը Անդրանիկի և Գարեգինի ղեկավարությամբ հարձակվում է թուրքական բանակի վրա: Եվ եավեր փաշան հանձնվում է՝ 3 գնդապետներով, 242 սպաներով և 10 հազար զինվորներով:

Դիլմանի ճակատամարտում կրկին Անդրանիկը և Գարեգինը միասին են: Միայն հաղթանակ, քանի որ մեջտեղում Վանի հայության կոտորումից փրկելու հարցը կար: Եվ Դիլմանի ճակատամարտի հաղթանակով փրկվեց Վանի 200 000 հայությունը:

Լավ է ասել Նժդեհը. «Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր կռվի,- ա՛յս է մնում օրվա հրամայականը»: Եվ այդ կռիվն իսկ սկսվելու է մեր տնից, մեր Հայրենիքից, որպես հոգեւոր ինքնաճանաչման կյանք.

«Մի կարծեք թե եկա խաղաղություն հաստատելու երկրի վրա, չեկա խաղաղություն հաստատելու, այլ՝ սուր, քանի

որ եկա, որ բաժանեմ որդուն իր հորից եւ դստերն իր մորից եւ հարսին իր կեսուրից: Մարդու թշնամիները իր տնեցիները կլինեն: Ով իր հորը կամ մորն ինձնից ավելի է սիրում՝ ինձ արժանի չէ, ով իր որդուն կամ դստերն ինձնից ավելի է սիրում՝ ինձ արժանի չէ: Եվ ով իր խաչը չի վերցնում ու իմ ետեւից չի գալիս՝ ինձ արժանի չէ: Ով իր անձը գտնում է, այն կկորցնի, իսկ ով իր անձը կորցնում է ինձ համար, այն կգտնի: Ով ձեզ է ընդունում՝ ինձ է ընդունում եւ ով ինձ է ընդունում, ընդունում է ինձ ուղարկողին: Ով մարգարեին ընդունում է իբրեւ մարգարեի, մարգարեի վարձ կստանա, ով արդարին ընդունում է իբրև արդարի՝ արդարի վարձ կստանա: Եվ ով այս փոքրիկներից մեկին մի բաժակ ջուր տա խմելու իբրեւ աշակերտ՝ իր վարձը չպիտի կորցնի» *ՅԻՍՈՒՍ. (Մատթեոս-Ժ).*

Այդպես է միայն կայանում ընդհանրական բարորությունը, երբ կուլ չես գնում անգամ մերձավորներիդ՝ հանուն ճշմարտության, հանուն ընդհանուր արդար հաղթանակի: Այդպես ճշմարիտ սիրո, հավերժ կյանքի գերակայություն ամեն ինչի հանդեպ՝ հայտարարեց եւ օրինակ թողեց Յիսուս:

Անդրանիկն ու Նժդեհն այս խոսքի զորավարներն էին: Նրանց նման լինելու համար տաղանդ ունենալուց բացի՝ նրանց նման էլ հավատ ունենալ է անհրաժեշտ: Ժառանգավորական հավատ, որ գենետիկ ենք ասում: Նրանց հավատին արժանի հավատ, սուրբ երկյուղածություն, ակնածանք Աստծո մեզ Տեր ու Փրկիչ լինելու հանդեպ:

Այնուամենայնիվ ցավոտ մի հարց մնաց այս երկու մեծերի այսաշխարհային կյանքի մի դրվագում, մեզ համար ևս տխուր մի էջ: Հայոց զորքերի գլխավոր հրամանատար Նազարբեկյանի հրամանով Անդրանիկը պահում էր Լոռվա դարբասները, քանի որ Վրաստանի հյուսիսում բնակվող թաթարազերիները այդ կողմից ևս հարձակվում էին: Անդրանիկը զորքով Լոռվա դարբասների հսկումն էր իրականացնում, գրավելով Գարահիսարը (թրքական) և Ջելալ Օղլուն և Մայիսի 17-18-ին, 25-30 հազար գաղթականներ էլ զորքի հետ, հասավ Վարդաբլուր գյուղը, այնուհետեւ բարձրացավ Դսեղ՝ Հովհաննես Թումանյանի միջոցով շրջանի բնակչության դիմադրությունը կազմակերպելու համար: Այս ամենի մասին տեղեկանում ենք Անդրանիկ Չելեպյանի գրքից:

Այդ օրերին էլ Ղարաքիլիսայի ճակատամարտն սկսվեց և Նժդեհը օգնության համար մարդ էր ուղարկել և սպասում էր Անդրանիկին: Եթե Անդրանիկը օգնության հասներ՝ հաղթանակ կտոնեին: Օգնության հասնելու լուրը սակայն Անդրանիկին փոխված էր հասել և մեր սակավաթիվ ու վատ զինված զորքի պարտությունն ակնհայտ էր և մերոնք ստիպված էին նահանջել: Թե Անդրանիկն ինչու՞ չհասավ, բնականաբար, ժամանակակիցների կարծիքները մեզ չեն բավարարում, որովհետև դրանք կողքից դիտված զգայական վշտացածի ոչ ամուր քննումներ են և ոչ թե ճշմարտություն: Սակայն կա Անդրանիկի ամիջական վկայությունը և մեզ այդ վկայությունն է վստահելին: «Զորավար Անդրանիկը կխոսի» գրքում Անդրանիկը վկայում է. «Առաջին օրվա չորս ժամ կռիվեն վերջ, հետևյալ առավոտ կռիվը կվերսկսվի և երեք ժամ հետո կիմանամ, թե Ղարաքիլիսէն հանձնած են արդեն և նահանջած են դեպի Դիլիջան»: Այսինքն թե՝ էլ ո՞ւմ հասնես օգնության, երբ նահանջել են: Պարզվում է սատանի մատ է գործել այս երկու մեծերի և մեր ազգային ճակատագրական այդ պահի բախտի մեջ, քանի որ Ղարաքիլիսայի ճակատամարտը չորս օր է տևել և ոչ թե չորս ժամ առաջին օրը և մի քանի ժամ հաջորդ օրը, ինչպես սուտ լուր էին հասցրել Անդրանիկին: Ղարաքիլիսայի ճակատամարտի առաջին օրը Անդրանիկին հաղորդում են թե՝ «հայերը ոգեւորված հալածում են թշնամուն», որ հանգստության «գլխի տակ փափուկ բարձ դնելու նման» մի լուր է եւ ոչ թե անհանգստացնող, մանավանդ Զո-

ռավարի հետն էլ 25-30 հազար գաղթականներ կային, որ ուր Անդրանիկը գնում էր, գնում էին նրա հետեւից: Իսկ հաղթանակի լուրը օգնություն աղաղակողի ձայն չէր, որ երկաթգծի եւս կարևոր հսկումը թողնելով նույն պահին Անդրանիկը շտապեր օգնության: Իսկ հաջորդ առավոտյան Անդրանիկին արդեն «լուր» են բերում, թե. «ՀԱՅԵՐԸ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՆ ՀԱՆՁՆԵԼ ԵՆ ԵՒ ԱՐԴԵՆ ՆԱՀԱՆՁԵԼ ԵՆ ԴԻԼԻՋԱՆ»: Էլ ո՞ւմ հասնես օգնության: Մեջտեղում խաբեությունն է գործել: Եվ ոչ թե Անդրանիկին պիտի հանիրավի մեղադրել, որ ոմանք անում են՝ բամբասանք սարքելով, թե՝ չհասավ, այլ ճշգրտել, թե սուտ լուրը ինչպես տարածվեց կամ ովքեր սարքեցին: Նժդեհն Անդրանիկին սուտ լուր հասցնելու մասին տարակուսած ասում է. «Ո՞Վ, Ի՞ՆՉ ԵԱՄՓՈՎ ԿԱՐՈՂ ԷՐ ԱՅԴ ՍՏԱՀՈՂ ԼՈՒՐԸ ՀԱՂՈՐԴԵԼ ՆՐԱՆ (ԱՆԴՐԱՆԻԿԻՆ, Մ.Ո.), ԱՅՆ ԷԼ ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԸ»: Արդեն գիրքն ավարտել էի, երբ Ռադիովեմի ԱԿՈՒՆՔ հանդեսով հարցազրույց լսեցի պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մարությանի հետ եւ խոսքը հենց այս մութ մնացած հարցի մասին էր: Ըստ վերջին եւ համոզիչ ուսումնասիրությունների, Նժդեհի հարցը իր պատասխանն է ստանում: Պարզվում է, որ ամեն բան արվում էր, որ Անդրանիկը Ղարաքիլիսայի ճակատամարտին չմասնակցեր: Նախ ճակատամարտի հրամանատար են նշանակում ոչ թե Անդրանիկին կամ Նժդեհին կամ այլ զորավարի, այլ Բեյ Մամիկոնյանին, որ առանց այդ էլ պարտվողական տրամադրություն ուներ, ապա, ըստ ուսումնասիրողների, Դաշնակցությունը մտադիր էր բանակցությունների միջոցով թուրքերի հետ խաղաղ դաշն կնքել, որին Անդրանիկը կտրականապես համաձայն չէր:- Մենք արյուն տալով ինչ գրավում ենք, առանց մի կրակոցի հանձնում եք՝ բնակչությանը մատնելով կոտորածի կամ գաղթականության- ասել էր Զորավարը և խիստ տարաձայնություն ունենալով այդ կուսակցության հետ, միայն Նազարբեկյանի հրամաններն էր խոստացել կատարել: Եվ կուսակցությունն էլ առանձին հրահանգ ուներ Անդրանիկին ամեն կերպ հեռու պահել մարտական գործողություններից, ինչպես նաև Ղարաքիլիսայի ճակատամարտից: Այսինքն թե, այդ հրահանգով էլ, դիտմամբ սխալ տեղեկություն էր տրվել Անդրանիկին, այդպես խափանելով Անդրանիկի օգնությունը Ղարաքիլիսայի ճակատամարտին: Որ միայն պարտությամբ չավարտվեց, այլ թուրքական ծեռագրի համաձայն՝ բնակչության կոտորածներով շարունակվեց: Այնուամենայնիվ, լսելով, որ հայերը նահանջել են Դիլիջան և թուրքերը հետապնդում են մեր նահանջողներին, Անդրանիկը երկաթգծի հսկումը թողնելով իջնում է Դիլիջան, որովհետև լուր ուներ, թե թուրքերը Դիլիջանը գրավել են: Սակայն թուրքերը դեռ Դիլիջան չէին հասել և լսելով, որ Անդրանիկն արդեն Դիլիջանում է, Դիլիջանի վրա չեն համարձակվում հարձակվել: Իսկ Մայիսի 28-ին, թուրքերն իրենք են զինադադար առաջարկում:

Եվ լավ չէ, որ մեզանից ոմանք հստակ դիտում չանելով՝ խոսքը վերածում են մեր մեծերին ուղղված բամբասանքի, թե՝ իբր օգնության չհասնողը Անդրանիկն է, երբ պատմական փաստերն այլ բան են վկայում:

Ականատեսի վկայությամբ Ղարաքիլիսայից Նժդեհը հեռացավ ամեն բան արդեն Աստծո հույսին թողնելով: Հարգանքի այն վկայությունը, որ Նժդեհը նահանջից առաջ գլխարկը հանեց սուրբ Սարգսի մատուռի առաջ եւ խոնարհվելով երեք անգամ խաչակնքեց, իմաստասերի մեծ Աստվածերկյուղ մարդ լինելու մասին ավելի արժեքավոր է նրանով, որ այդ վկայողը ոչ միայն Նժդեհի համախոհներից չէր, այլ նրա «քաղաքական համոզումների թշնամին էր», որ սակայն հարգում էր Նժդեհին՝ նրա անկեղծ հայրենասերի և քրիստոնյա լինելու համար. «Լինելով նրա քաղաքական համոզումների թշնամին, ես ինչ-որ

ներքին զգացողությամբ, հնարավոր է՝ ենթագիտակցաբար նրա նկատմամբ հարգանք էի տածում, որպես խիստ ողբերգական ճակատագրի տեր մի մարդու եւ որպես իր հայրենիքի համար անկեղծորեն մտահոգ օրինավոր հայ քրիստոնյայի» *(Կ. Բագրատյան, 1998թ. Կիև, էջ 37):*

Նախ՝ Բանավոր սուրը՝ Քրիստոնեական լիարժեք խոսքն ու գործածումը կյանքով, Սերն այսինքն՝ որպես կարեւոր նպատակ, հոգևոր կյանքի, հոգևոր հայրենիքի նպատակ. ապա այդժամ, երբ անկասելի պահանջը պարտադրի, զորավոր կլինի նաև մարմնավոր սուրը բոլոր հակառակորդների դեմ: Նժդեհյան ընթերցումների եզրահանգումն Աստվածաշնչյան այդ խրատներին է հանգեցնում մեզ:

- ԱՍՏՎԱԾ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ,- իր դավանության մասին հայտարարեց մեծ Նժդեհը: Որովհետև առանց Աստծո ինչպե՞ս - կարող է հարատեւող Հայրենիք լինել, ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ, որին մեր ազգի հոգով հզորներն են փափագել ու այդ բանի համար կյանք դնելով, նվիրականորեն գործել, և այժմ էլ փափագում ու այդ բանի համար Տիրոջով կյանք ներդնելով գործում են:

Եվ հանիրավի չեն փափագել ու փափագում, որովհետեւ Աստծո Խոսքի բանալին են ունեցել և ունեն, թե՝

- ՈՎ ԻՆՉ ՈՐՈՆՈՒՄ Է՝ ԱՅԴ Է ԳՏՆՈՒՄ:

Պատահական չէ, որ Նժդեհը երկմտելի էր դիտում բոլոր նրանց հայրենասիրությունը, ովքեր Աստվածապաշտ չեն. «Նա, ով ընդունում է Աստծո գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականությանց՝ ազգ, հայրենիք, պետություն»:

Եվ մեր մեծերը նրանք են, ովքեր ըստ այս Վերից տրված դեղ խոսքի, Հույսի և Լույսի բանալու, ջանացել եւ ջանում են՝ ողջ մեր ազգը բարձրացնել մինչև Հոգևոր Հայրենիք, որ պիտի մի օր լիարժեք կայանա, հակառակորդներին թողնելով իրենց



ամոթի և պատժի մեջ: Հոգևոր Հայրենիքի կերտում Հիսուս Քրիստոսով, և որ օրհնյ՞ալ է հավիտյանս. ամեն:

## ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ

**«ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼԸ- ԴԱ ԹՇՆԱՄԻՆ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ, ԲԱՐԵԿԱՄԸ՝ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ»** *(Նժդեհ. Կուսակցամոլություն):*

Եթե ասենք, թե քաղաքականությունն ամենևին հոգևորի հետ կապ չունի՝ սխալված կլինենք, որովհետև ճշմարիտ հոգևորով է ազգային մշակություն իրականացվում: Նաև հոգևոր մշակությամբ է միայն հնարավոր ձևավորել առողջ քաղաքականություն: Եվ Երկնավոր քաղաքականությամբ է ձևավորվում երկրավոր քաղաքականությունը: Նժդեհն իրավամբ դժգոհում է հայ կուսակցություններից՝ մանավանդ նրանց Աստվածաճանաչ չլինելու, նրանց «կրոնական պաղության» պատճառով.

**«ԿԵՂԾ ԵՎՐՈՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԻ ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՂՈՒԹՅՈՒՆ ՄՏՑՐԻՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ: ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻ Է ԱՄԵՆ «ԳԻՏՆԱԿԱՆ», ՈՐ ԹՈՒԹԱԿՈՒՄ Է. «ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԿՐՈՆ ՈՒՆԻ, ՈՉ ԷԼ ՀԱՅՐԵՆԻՔ»: ՄԵՐ ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ԱՆՀԱՅՐԵՆԻՔ, ԱՆՑԵՂ ԵՒ ԱՆԱՍՏՎԱԾ Է ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՏՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

Կուսակցության և կուսակցամոլության մասին Նժդեհյան խոսքը խորապես Ավետարանական պատվիրանի իրագործման որդիական արտահայտություն է՝ ըստ Հիսուսի այն խոսքի թե. «ԵԹԵ ՄԻ ՏՈՒՆ ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ Է ԲԱԺԱՆՎՈՒՄ, ՆՄԱՆ ՏՈՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱԼ»: Իսկ կուսակցությունները հաճախ կամ գրեթե միշտ են միմյանց դեմ, այսինքն՝ բաժանված: Իսկ մի փոքր ժողովրդի մեջ, որ մերն է, այդքան տարաբաժանումն արդեն վտանգավոր է և աղետաբեր:

Նժդեհը որոշ ժամանակ կուսակցական է եղել և եկել է այն հետևությանը, որ կուսակցություններ ամենևին հարկավոր չեն, մանավանդ՝ հայ ժողովրդի մեջ.

**«ՀԱՍԿԱՆԱՆՔ, ՈՐ ՀԱՅԸ ՊԱՏՃԱՌ ՉՈՒՆԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԱՆԱԼՈՒ: ԻՍԿ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՎԱԿԱՆ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՒ ԵՐԵԿՎԱ ՄԵՐ ԵՂԵՌՆԸ ԿԸ ԲԱՎԵՆ ԳԻՏԱԿՑԵԼՈՒ, ՈՐ ՀԱՅԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԱՆԱԼՈՒ ՆԱԵՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

Յուրաքանչյուր կուսակցություն ծանր կշռաքարն իր կողմը ձգելով, սկսում է անտեսել համազգային արժեքները: Եթե համազգային նշանակության մի մարդ անդամակցում է այս կամ այն կուսակցությանը, մյուս կուսակցությունները ողջ ազգի առաջ երբեմն նվաստացնում, նսեմացնում, սևացնում են այդ մարդու արժանիքը, որպես հակառակորդ կուսակցության անդամի, այդպես իսկ խոչընդոտելով այդ մշակի համազգային աշխատանքին: Այս էր պատճառը, որ հոգևոր Նժդեհը իրավամբ դեմ է համազգային նշանակություն ունեցող պաշտոններ կամ կոչում ունեցող մարդկանց որևէ կուսակցության անդամ լինելուն: Մեր օրերում ասվածը վերաբերում է նաև նախարարներին և պատգամավորներին, բազմաթիվ այլ կարևոր պաշտոնների, որոնք, ցավոք, հաճախ խիստ կուսակցականացված են: Նմանները ուզած-չուզած խտրական են՝ կամա-ակամա իրենց կուսակցության մասնակին առավել դասելով Հայրենիքի ընդհանուր շահերից: Եվ ամենևին խելամտություն չէ կուսակցականացված պաշտոններ ունենալը, երբ ժողովրդի մեջ հարկավոր մարդն այլ կուսակցությունից կարող է լինել կամ անկուսակցական, սակայն, ցավոք, պաշտոնին տիրում է ահա խիստ համեստ արժանիքների կուսակցական և Հայրենիքի համար շնորհների աճը պռատում, կասեցնում է, այդպես իսկ վնասելով ընդհանուր ժողովրդի շահերին:



**«ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ՈՒՍՈՒՑԻՉ, ԳՐՈՂ, ԳԻՏՆԱԿԱՆ, ՁՈՐԱԿԱՆ, ԳՈՐԾԻՉ- ԱՅԱ ԸՆՏՐԱՆԻՆ: ՍՐԱՆՑ ԿՈՉՈՒՄԸ ՀՐԱՄԱՑՈՂԱԲԱՐ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՆԵՐՈՒԺ ԿՑԱՆՔ: ՕՐԳԱՆԱՊԵՍ ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆ Է ԸՆՏՐԱՆԻՆ, ՈՐՈՎ ԲԱՑԱՐՁԱԿԱՊԵՍ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԴԱ»** *(Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ, «Ռազմիկ« 1943թ.):*

Նժդեհը մեծ իմաստասեր էր և մեծ հայրենասեր և երբ ընդհանրապես կուսակցությունն էր վնաս դիտում մեր ժողովրդի համար, բնականաբար, առավել ևս անհանդուրժելի էր տեսնում կուսակցամոլությունը. այսինքն՝ նեղ շահերի այն կիզակետը, որ կամա-ակամա հակազգային դիրքերի էր մղում կուսակցականին: Այդ էր նաև պատճառ, որ Անդրանիկ Զորավարը միմյանց նսեմացնող կուսակցամոլներին հանդիմանեց, ասելով.

«ԻՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է»:

Իրենց նեղ շահերն ունենալով, անկարելի է, որ կուսակցությունները կատարյալ լինեն: Սակայն ինչու՞ մեր ազգի շատ մեծեր, թե՛ երեկ և թե՛ այսօր, ներգրավվել ու ներգրավվում են կուսակցությունների մեջ: Կրկին, եթե միամտորեն ամենադրականը վերցնենք, ազգային ազատագրական հարցերի համար են այդ արել ու անում, քանի որ կուսակցությունները խոստումներ, դրամական միջոցներ և ծուռ կամ շիտակ հնարավորություններ, լծակներ են ունենում, որոնք պետք են ազգանվեր անհատներին: Սակայն այս անվանիներն էլ վերջում տեսնում ու վկայում են, որ կուսակցամոլները որոշակիորեն խոչընդոտել, խանգարել են իրենց՝ ժողովրդի համար առողջ ու լիարժեք պտուղներ տալու խնդիրներում:

Փոքր ազգի մեջ բաժանումները կամ միմյանց դեմ լարվելն ու դրդվելը, մեղմ ասած, ամենևին մեր օգուտի մասին չի խոսում, բայց վնասն ակնհայտ ու ցայտուն, հաճախ նույնիսկ՝ անուղղելի հանցանք է դառնում: Ու նաև այդ կերպ ընդհանուր հակառակորդի առջև դարձնում է մեզ արդեն ազգովին

նկուն ու ջլատված, միմյանց որոգայթող գաղափարական մտքի պատերազմից խիստ տկարացած, սակավամտացած ու ջղագրգիռ, հաճախ միմյանցից բզկտված, պատրաստ կեր դրսի ուժերին: Ինչպես այսօր բավականաչափ ջլատվածություն ունենք մեր Հայրենիքի ընդհանուր թշնամու՝ Բաբելոնացման, այն է՝ Աստվածաշնչի նշած և արդեն նաև մեր երկրում էլ ոտք դնել ջանացող ՄԵԾ ԽԱՌԱՆԱԿՈՒԹՅԱՆ վտանգի առաջ: Վերջապես լավ է լավ հիշենք, սիրով հիշենք Տիրոջ խրատը թե.

**«ԻՆՔՆ ԻՐ ՄԵՋ ԲԱԺԱՆՎԱԾ ՑՈՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱԼ»:**

Բնականաբար, դրսի ոչ բարի ուժերն են ջանում մեր կուսակցություններին որոգայթելով իրենց կամքը նրանց թելադրել տալ: Կամ մեր կուսակցությունների թիվն ավելացնել՝ Հայ ժողովրդի ներքին բաժանումներն ավելի մեծացնել ջանալով և այդպես մեզ առավել ջլատել ջանալով: Սակայն, երբ կուսակցությունների առատությունը խոսում է նաև մեր տարաբաժանումների մեծացման մասին, այս արդեն փաստում է, որ մեր ազգի միաբանությունը հնարավոր է միայն Մայր եկեղեցու և Ավետարանի լայն ծավալով քարոզության գրավական: Ինչպես որ դարեր ի վեր ունեցել ենք: Քանի որ.

**«ՍԿԶԲԻՑ Ի ՎԵՐ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՁՈՒԼՎԱԾ ԵՆ Ի ՄԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ.... ԱՅՍ ԵՐԿՈՒՍԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՆՈՒՅՆԱՑԱԾ Է»**,- ասում է հոգևոր Նժդեհը:

Այս է բնականը և բանականը և մեր միաբանության, միմյանց սիրելու բանալին: Ուստիև՝ հարկ է, և աղոթենք, որ մեր բոլոր կուսակցությունները ընդունեն Քրիստոսին որպես ամենքի Ուսուցիչը, Խաղաղարարը, Փրկիչը, Թագավորն ու Տերը: Սուրբ Ավետարանի իմաստությունները դարձնելով իրենց գործունեության նպատակը, շարժառիթն ու հենարանը, քանի որ միայն Ավետարանն է, որ կարող է փոքր ժողովրդի համար առողջ ծրագիր և աներեր հենման արքայական կետ լինել:



Թերևս չկա մեկը մեր ազգության, գուցեև՝ մարդկության մեջ, որ կուսակցամոլների նեղ ըմբռնումներն ու վնասները, նրանց արթնացրած վտանգներն ամենքի համար այնքան հասկանալի քննությամբ ներկայացրած լինի, որքան հոգևոր Նժդեհը, որ հայտնապես խոսեց նրանց բերած ազգային մեծ վտանգների, աղետալի արք ու բարքի մասին: Ուստիև Նժդեհը ոչ միայն քննեց մարդու համար այդ վտանգավոր արատը՝ կուսակցամոլությունը, այլ արձանագրելով՝ ժառանգություն թողեց. (համոզված եմ՝ ոչ միայն հայ ազգի կուսակցականներին, այլ ողջ մարդկության կուսակցականներին էլ), որ զգույշ լինեն և այդ արատներին ամենևին տեղիք չտան: Մեջբերենք Նժդեհյան այդ զգուշացում-ոսկիներից մի քանիսը.

**«ՉԿԱ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՉԱՐԻՔ, ԱՎԵԼԻ ՄԵԾ ԱՂԵՏ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ, ՔԱՆ ԿՈՒՑՐ ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹՅՈՒՆԸ: ԱՅԴ ՏԱՐԱՄԵՐԺ ՈԳԻԻ ՀԱՄԱՐ ՉԿԱՆ ԲԱՑԱՐՁԱԿ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՐԱ ՀԱՄԱՐ ՉԿԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀ, ՊԵՏԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ: ՆՐԱ ՀԱՄԱՐ ՕՏԱՐ Է ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՈՐ ԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՆԻՔԸ ՉԻ ԿՐՈՒՄ: ԻՆՉ ՈՐ ԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՆՈՒՆԴԸ ՉԷ՝ (ՆՐԱ ՀԱՄԱՐ) ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՈՒ ԱՆՀԱՆԴՈՒՐԺԵԼԻ...»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ՍԵՒՄՈՐԹԻՆ ԱՎԵԼԻ ՀԵՇՏ Է ՃԵՐՄԱԿՑՆԵԼ, ՔԱՆ ՍՐԱՆ (ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼԻՆ) ԸՆԴՈՒՆԵԼ ՏԱԼ ԱՄԵՆԱՊԱՐՁ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ...»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՉԱՐ ՈԳԻՆ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ՄԹԱԳՆՈՒՄ Է ՍՐԱՆՑ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԼԱՆՈՒՄ ԽԻՂՃԸ, ԵՒ, ՎԵՐՁ Ի ՎԵՐՁՈ, Ի ՍՊԱՌ ՍՊԱՆԵԼՈՎ ԱՅԴ ԴԺԲԱԽՏԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԱՐՁՆՈՒՄ Է ՍՐԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՊՈՒԾ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅՀՈՅԱՆՔ, ԿԵՂԾԻՔ, ԲԱՆՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ,- ԱՀԱ ՍՐԱ «ԿՈՒՍԱԿՑԱՇԷՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹՅՈՒՆԸ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ՆԱ ԹՈՒՆԱՎՈՐԻՉՆ Է ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ: ՆԱ ԹՇՆԱՄԱՆՔ, ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ Է ՍԵՐՄԱՆՈՒՄ ՄԻԵՒՆՈՒՅՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԵՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ՆԱ ՍՏԵՂԾՈՒՄ Է ՆԵՐՔԻՆ ՃԱԿԱՏՆԵՐ, ՋԼԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՅԺԵՐԸ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՎ ԲՈՆՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԿԱՆ ՏԽՈՒՐ Է, ԱՊԱԳԱՆ՝ ԱՆՀՈՒՍԱԼԻ: ԱՅԴ ԱԽՏՈՎ ՀԻՎԱՆԴ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԻՇՏ ԷԼ ՆԵՐՔՈՒՍՏ ՊԱՌԱԿՏՎԱԾ Է, ՄԻՇՏ ԷԼ ՊԱՏՐԱՍՏԻ ՈՐՄ՝ ԻՐ ԳԻՇԱՏԻՉ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀԱՄԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ. ԱՅՍ ՁՁՎԵԼԻ ԱԽՏԵՐԸ ՀԵՏԵՒԱՆՔ ԵՆ ԵՐԿՈՒ ԲԱՆԻ. ԱՌԱՋԻՆԸ ՀՈԳԵԿԱՆ ԱՂՔԱՏ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ԵՐԿՐՈՐԴԸ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՁԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՏՀԱՍՈՒԹՅԱՆ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱ ԵՍ ԵՄ«,- ԱՀԱ՛ՆՐԱ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն):*

**«ՆԱՀԱՏԱԿՆԵ՛ՐԸ... ԱՅՈ ՄԵԾ ՄԵՌԵԼՆԵՐԸ ԱՄԵՆԵՆ ՔԻՉ ԻՐԵՆՑ ԵՒ ԻՐԵՆՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՑ ԿԸ ՊԱՏԿԱՆԻՆ, ԱՄԲՈՂՋՈՎԻՆ՝ ԻՐԵՆՑ ՑԵՂԻՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ: ...ՉԿԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ ՈՒ ՀԵՐՈՍՆԵՐ, ԿԱ ՈՒ ԿՄՆԱ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՀԵՐՈՍԱԿԱՆԸ:**

**ՍԱԿԱՅՆ ԱՅԴՊԷ՞Ս Է ՀԱՍԿԱՑԵԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՈՉ, ԴԺԲԱԽՏԱԲԱՐ:**

**ՀԵՏԵՒԱՆՔԸ: ՄԵՐ ՆԿՈՒՆ ՈՒ ՈՂԲԱԼԻ ՎԻՃԱԿԸ:**

**ՊԱՏՃԱՌԸ: ԿՈՒՅՐ ԵՒ ԲԱՐԲԱՐՈՍ ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹՅՈՒՆԸ- ՄԻ ՁԱՐՀՈՒՐԵԼԻ ԱԽՏ, ՈՐ ՊԻՏԻ ԹՈՒԼԱՆԱ, ՈՐ ՈՒԺԵՂԱՆԱՆՔ ԱԶԳՈՎԻՆ:**



**ԱՅՍ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՊԻՏ ԱՇԱԽԱՏԵՆ ԴՊՐՈՑԸ, ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԻՆՔԸ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ»** *(Նժդեհ. էջեր իմ օրագրէն, Պաշտամունքը մեծ մեռելների):*

**«ՄԱՐԴԱՍԵՐ Է ՀԱՅԸ՝ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԱՆԱԼՈՎ ԴԱՌՆՈՒՄ Է ԱՆՁԻՂՁ, ՔԱՆՁԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԱ ԿՈՐՑՆՈՒՄ Է ՄՑԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՒ ԽՂՃՄՏԱՆՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՍԿՍՈՒՄ ԽՈՐՀԵԼ, ՁԳԱԼ ԵՒ ԳՈՐԾԵԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՐԷՆ»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

**«ՇՈՅԵԼՈՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՀԵՏԵՒՈՐԴՆԵՐԻ ՄԵՋ ՏԿԱՐԱՑՐԻՆ ՑԵՂԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ: ՏԿԱՐԱՑԱՎ ՀԱՅԿԱԿԱՆԸ Ի ՀԱՇԻՎ ԽՄԲԱԿՑԱԿԱՆԻ: ՆՐԱՆՔ ԴԱՐՁԱՆ ՓԱԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՈՐՈՎ ՄԻ ՁԱՏԻՉ ՊԱՏ (ԴՐԵՑԻՆ) ԻՐԵՆՑ ԵՒ ԱԶԳԻ ԿԵՆԴԱՆԻ ՈՒՅԺԵՐԻ ՄԻՋԵՒ»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

**«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ (ԺԸ ԵՒ ԺԹ ԴԱՐԵՐԻ), «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆ» (Ի ԴԱՐԻ) - ԵՍ ՉԵՄ ՀԱՒԱՏՈՒՄ ՈՉ ՄԵԿԻՆ ԵՒ ՈՉ ՄՅՈՒՍԻՆ: ԵԹԵ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ ԼԻՆԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՐԵՐՈՎ ԱՍԻԱԿԱՆ ԽԱՎԱՐ ՈՒՅԺԵՐԻ ԴԵՄ ՃԱԿԱՏԱԾ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՁԱՐԴԵՐԸ»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

**«ՏՈՒՐՔ ՏԱԼՈՎ ԿԵՂԾ ԵՎՐՈՊԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԹՇՆԱՄԻՆ ԵՒ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ ՓՆՏՌԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՇՈՅԻ ՄԵՋ, ԵՒ ԽԱԽՏԵԼՈՎ ԱԶԳԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԹՈՒԼԱՑՐԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԿԱՊԸ ԱՐՅՈՒՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՒ»** *(Նժդեհ. հտ. 1, Երևան 2002):*

Ինչպես տեսնում ենք՝ Նժդեհն իր գաղափարախոսությամբ որպես իմաստասեր՝ ամենևին էլ կուսակցական չէր կարող լինել, և եթե ժամանակավորապես կուսակցական էլ եղավ՝ կուսակցական լծակներով հանուն իր հայրենավանդ

ծրագրերից փոքրիշատե իրագործելու նպատակով: Քանի որ եթե կուսակցություններն արդեն կային, մարդկայնորեն կամենում էր դրանց ուժերն ևս, թե հնար է՝ առավելս գործադրել հայրենակարոտ հայի համար, թե Հայրենիքում, թե սփյուռքում որովհետև Հայաստանը պետականություն չունենալու պատճառով կուսակցություններն էին, որ իրենց շարքերում ներառում էին հայ գործուն մտավորականության, հայ հայրենասերների որոշակի մասի հավաք ներուժերը: Այսինքն, կա մարդ Նժդեհը, որ պայմանների բերումով նաև կուսակցական կարող էր լինել և կա ՀՈԳԵՒՈՐ ՆԺԴԵՀԸ, համամարդկային մեծություն, որ ամենևին չի ընդունում որևէ կուսակցություն: ԵՎ ճշմարտության լույսը հոգևոր Նժդեհի մեջ է:

## ՄԱՅՐԵՐԻ ԱՓԻ ՄԵՋ ՊԻՏԻ ՓՆՏՐԵԼ ԱԶԳԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

**«Բաներ կան, որոնք հավիտյան պաշտելի են- Աստված, Հայրենիք, Մայր- որոնց մասին մարդ արարածը, եթե հոգեպես խաթարված չէ, չի կարող առանց կրոնական հարգանքի խոսել»** *(ՆԺԴԵՀ-Բաց նամակ Մայքլ Արլէնին):*

**«Իրենց որդիներով պիտի ճանաչել ու գնահատել կանանց»** *(ՆԺԴԵՀ. Առյուծածին մայրեր):*

Առաջին կնոջից՝ Եվայի անկումից սկսվեց մարդկության անկումը, որից սկսեցին հանցագործ ու մեղսասեր երեխաներ ծնվել. այդ է ցավոտ ճշմարտությունը և, Աստծո կամոք՝ երկրորդ Կնոջից՝ Սրբուհի Կույս և Լույս Մարիամ Մորից սկսվեց մարդկության սրբացումն ու արդարացումը՝ կորստական այդ անկումից, քանի որ Մարիամից ծնվեց մարդկության Փրկիչն ու Ուսուցիչը՝ ԱստվածՈրդին, Տերը և Հովիվը մեր, որ Իր Կյանքը դնում է յուրաքանչյուր Իրեն դարձող, ապաշխարող մեղավորներիս համար. և մենք, այդ հասկանալով, սկսում ենք ընկճել մեր ներսում Եվա-ադամյան մեղսասեր մեր ցանկությունները, դրանք արդեն ստոր, ցած և կորստական տեսնելով: Եվ Մարիամից ծնված Քրիստոսով Սկիզբ առավ՝ անհավանական թվացող Հաղթանակը մահվան դեմ, որ և դարձավ Շոշափելի ու Ակնհայտ, Առկա ու Վստահելի և օրեցօր մահվան դեմ շողշողացող Լույս: Հայաստանում այդ Հաղթանակը շողաց՝ հայ Եկեղեցու արգանդից ծնված նոր, ինչպես հոգևոր Նժդեհը կասեր. «Առյուծածին մայրերի» միջոցով:

Կանանց սրբության, աստվածապաշտության դարձի չափից էլ յուրաքանչյուր ազգի արդարությունն է երևում, որովհետև, ինչպես Սուրբ Գրքից գիտենք, առաջին կնոջ գայթակղվելով իսկ մարդկությունը դարձավ մեռնող- մահկանացու, իսկ երկրորդ Կնոջից սկսվեց նվիրակների, առաքյալների, ընտիր զորավարների և օծյալ սրբերի ծնունդները, որ ժողովուրդներ բարձրացրեցին իրենց ստորացած վիճակներից, և որոնք Տիրոջով հաղթեցին մահին անգամ կոխկրծելով բոլոր ժամանակները: Նրանք Աստծո որդիներ էին՝ զորընդեղ և ծնունդներ օրհնության:

Հայերը այս նկատի ունենալով՝ առանձնապես սիրեցին Տիրամորը: Ինչպես արդեն նախորդ գլուխներից մեկում հիշեցինք, մեր գենոֆոնդի կենդանի զորությունն արտահայտող էպոսում Սանասարը յոթնապատիկ զորավոր դարձավ՝ լսելով Սրբուհի Տիրամոր խորհուրդները: Իսկ Սասունցի Դավիթն իր Թուր Կեծակու անկասելի հարվածն իջեցնելուց առաջ հետևյալ աղոթքն էր անում, կոչելով Աստվածածնի և սուրբ Խաչի զորակցությունը:

Յա՜, Մարութա բարձրիկ Աստվածածին,
Յա՜, Խաչ Պատերազմին,
ինչ վեր իմ աջ թևին.
Կանչեց, զարկեց Թուր Կեծակին:

Ավելին էլ հիշենք, Հայաստանի երկրորդ դարձը Հռիփսիմյաց կույսերի միջոցով սկսվեց, իսկ Հռիփսիմյաց կույսե-

ին Տիրամայրն էր, որ երևաց և հրամայեց գալ Հայաստան: Այսինքն թե՝ մեր երկրորդ դարձը դարձյալ Տիրամորով սկսվեց: Այս է նաև պատճառ, որ մեր եկեղեցիների կեսից ավելին Տիրամոր անունով են և մեր գրեթե բոլոր եկեղեցիների բեմի կենտրոնում Տիրամոր նկարն է և Սրբուհու բարեխոսությանը դիմողների համար առանձին խորան ևս կա մեր գրեթե բոլոր եկեղեցիներում:

Սրբուհի Տիրամոր անունով է և մեր Մայր Տաճարը:

Որ այլևս հայ կանայք Տիրամոր նման մահին հաղթող առյուծ որդիներ ծնեն: Ահա այդ հիմքը դրեց Աստվածամայրը Հայոց մեջ:

Հոգևոր Նժդեհը իմաստնությամբ ճանաչեց ու ճանաչեցրեց կնոջ երկու՝ Եվայական և Մարիամական տեսակները: Մոր Մարիամական սուրբ տեսակը, մոր կատարելության կարևորությունը մարդկանցս համար նշելով, թե կատարյալ մոր տեսակից միայն կարելի է կատարյալ որդիներ ունենալ: Ուստիև.

«ՄԱՅՐԵՐԻ ԱՓԻ ՄԵՋ ՊԻՏԻ ՓՆՏՐԵԼ ԱԶԳԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ»:- հայտարարեց Նժդեհ իմաստունը:

Իսկ լավ մայրեր ունենալը սերունդների հոգևոր ծննդյան, Աստծո արդարությամբ ապրելու արդյունք է:

Եվ այն ազգն է մյուսներից արքայական, որ Ավետարանը ավանդույթ ապրող Տիրամորը նմանվող սուրբ կանայք ունի. սուրբ կանայք, ովքեր որդիներին կաթի հետ սնուցեցին ու սնուցում են Քրիստոսին հավատալու և լսելու արծվենի պտուղներով:

Հին կինը և նոր կինը: Հին կնոջով մահն աշխարհ եկավ, նոր կնոջով՝ կյանքը: Մահկանացու խոսքն իսկ թարգմանությամբ նշանակում է՝ մահ, որ եղավ կանացու, այսինքն առաջին կանանց (գայթակղվող տեսակի) միջոցով, առաջին կնոջ օտարին խաբվելով: Սակայն, Աստծո կամոք, հավատացյալ Հայրերի ամենակատարյալ սերունդներից՝ աշխարհ



եկավ Դավիթ Սաղմոսերգուն (ում Հիսուս մոր կողմից հայր անվանեց): Դավթի սերընդից ծնվեց մարդկության ամենասուրբ կինը՝ Տիրամայրը, որից էլ Սուրբ Հոգով աշխարհ եկավ Աստծո Որդին: Եվ Տիրամայրն եղավ սուրբ մայրերի նոր սերնդի օրինակը, իսկ ամենակատարյալ մայրերը՝ նրա նմանության, նրանից շող ունեցող կենդանի օրինակներ:

**«Հայուհին, որ կարող է փոխարինել խաչափայտի առջև աստվածանման որդու վերքերը սգացող Տիրամորը...»** *(Նժդեհ. Որդիների պայքարը հայրերի դեմ):*

Մեր ազգի հաճախակի խաչվող ընտրյալ որդիների մայրերի համար՝ իրավամբ ասում է հոգևոր Նժդեհը՝ կատարելության գագաթ տեսնելով Տիրամորը, ում հետ համեմատելով է միայն հայուհու արժանավայել կերպարը ի հայտ լինում:

Այսինքն՝ հայրենին կազնվանա, կապաքինվի հայ կնոջ Ավետարանական առաքինության հարստացմամբ, զորընդեղ սեր ունեցող Հայոց մայրերի ժայռակոփ հենարանով:

«Հայ կինը: Սրա միջոցավ հոգեփոխենք հայ ընտանիքը: Այդ վերջինի միջոցավ հայությունը» *(Նժդեհ-Առյուծածին մայրեր):*

«Ո՛չ իմաստասերներ, ո՛չ էլ թագավորներ օգնության կանչենք Հայրենիքին, այլ մայրական ազդեցությունը միայն» *(Նժդեհ. Առյուծածին մայրեր):*

«Ամեն ինչ- սեր, խնամք, ակնածանք՝ հայրենասեր մորը: Եվ ամեն ինչ հայրենասեր մորից-հերոս որդիներ, հաղթական դափնիներ, անկախ Հայրենիք» *(Նժդեհ. Առյուծածին մայրեր):*

Ուստի յուրաքանչյուր ազգի, յուրաքանչյուր տան և ողջ մարդկության պատիվն ու փառքը կնոջ առաքինության բարձրացումն է, որ նախագծվեց ամենակատարյալ կնոջ օրինակով՝ Տիրամորով՝ ողջ մեր աշխարհին:

Նժդեհն ինքն էլ «Աստծու հոգուց հեռու մնացող» կնոջն անկատար է դիտում, մարդկության համար՝ կորուստ, այն-

պես ինչպես կա աշխարհին խաբված կինը: Աստվա՜ծ իմ, դրանից ավելի դաժանություն չկա: Եվ մեծ, տառապանալից ցավով ասում է.

**«Կինը, որ կարող էր առաքինության օրինակ ծառայել աշխարհին, դառավ փողոցի սեփականությունը: Հետևա՞նքը:- Լիքն են բանտերը, հիմարանոցները, հիվանդանոցները: Ինչու՞, ինչու՞ է այդպես: Ինչու՞ կտառապի մարդկային ցեղը: Որովհետև միամիտ մարդը, իրենից, իր ՀՈԳՈՒՑ դուրս փնտրեց և կփնտրի երջանկությունը: Որովհետև ՆՅՈՒԹԱԿԱՆԱՑԱԾ մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկությունը և իր կյանքը վերածեց դժոխքի»** *(ՆԺԴԵՀ. Նախ մարդը: Նշումներն իմն են՝ Մ.Ռ.):*

Հոգևոր Նժդեհը գիտեր, որ լավ դուստր, կին ու մայր լինելը սերունդների սրբավարք ապրելու արդյունք է: Աստվածաշնչյան առաքինությամբ ապրելու արդյունք: Ուստիև դրսի օտար ուժերին, որոնք ինտեգրելով ազգերին թուլացնում են կնոջ սերունդներով ազնվականացած ձեռքբերումները, նա աղետաբեր և կործանարար էր դիտում: Դարավոր բարերար ավանդները չպիտի փոխանակել ապականության ու անեծքների հետ:

Ինչու՞ դարավոր դժվարությամբ ձեռքբերածդ մի վայրկյանում քամուն տաս: Եվ որպեսզի պատկերացնենք թե ինչպիսի դժվարությամբ է Աստվածային արդարությունը ավանդ դառնում մարդկանց մեջ, բերենք կրկին Տիրամոր օրինակը:

ՈՐՊԵՍԶԻ ԱՍՏՎԱԾԱԾԻՆԸ՝ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԵՐԱՆԵԼԻ ՄԱՅՐԸ ԾՆՎԵՐ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՂԱՎ ԱԲՐԱՀԱՄԻՑ ՍԿՍԱԾ՝ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԸՆՏՐՅԱԼ ՀԱՅՐԵՐԻ ԵՐԵՔ 14 ՍԵՐՈՒՆԴ: Այսինքն թե՝ նոր կնոջ օրինակ տեսակը պատահմունքով կամ բախտի բերումով աշխարհ չեկավ, այլ հզոր մարդկանց վարքեր վարքերի վրա ավելացնելով, մինչև արժանավոր եղավ Լույսի Մոր ծննդյան համար: Եվ հոգևոր Նժդեհը



կոչում է հեռու մնալ ամեն տեսակի նորաթուխ ուժերին ինտեգրվելուց, որպեսզի օտարները ազգիդ արքայական լինելու դարերով գտած տեսակդ և մշակությունդ չապականեն: Մինչդեռ շատ կանայք այդ ինտեգրումների պատճառով դառնում են «Փողոցի սեփականությունը»: Այս ամենն ավելի հասկանալի կլինի, երբ մտածենք, որ այդ կանայք՝ մեր մայրերն ու քույրերն են, մեր դուստրերը, մեր փոքր Հայրենիքի զավակները, և ոչ թե օտարներ: Եվ նրանցով է հայրենիք միջավայրը կազմվում: Ի վերջո, առաքինությամբ՝ առաքինություն և արատով արատ է բազմանում և աշխարհը լցնում: «Հայ կնոջ անկումը Հայաստանում» աններելի պիտի դիտենք: Եվ գայթակղություն իսկ թույլ տալով մեր ազգի մեջ, վտանգի դաշտ ենք թույլ տալիս՝ մեր մերձավոր կանանց համար էլ: Սակայն երբ շրջապատիդ մեջ աղբ է, անկարելի է, որ չառնչվի քեզ: Մամոնան՝ նյութը և Հոգին. այսօր այս հակադրությունն է առաջ քաշվում՝ ամեն մի նոր օրով և նյութը պաշտողները՝ մարդկության անկումն են խորացնում: Երբ Հոգո՛վ է միայն Աստվածահաճո կինը՝ կին կատարյալ, սո՛ւրբ, վեհ և առաքինի, նվիրյա՛լ և աղամանդի նման թա՛նկ: Ընտանիք լուսավորող: Հայրենին լուսավորող: Եվ երբ էլ նյութականը՝ մարմնայինն է առաջնային դիտվել, պարտադրվել կամ գայթակղվել, արձանագրվել է կնոջ մեծ անկումն ու մարդկային ցեղի մեջ մեծ անկումներ: Եվայի անկումն ու նրանով մարդու անկումը Նժդեհը նույնն է դիտում՝ տեսնելով պատճառը ոչ թե հոգով ընթանալու, այլ նյութականի գայթակղությամբ վայր ընկնելու մեջ: Սատանան Եվային խնձորով գայթակղեց, այժմ հայ կանանց գայթակղում է նյութով, զիզի-բիզի ունեցվածքով, դրսից եկած չարի անպարկեշտ բարքերին ինտեգրման վայրընթացներով: Որ հրապուրում են Աստծո կամեցած մի կտոր հացը ոչ թե հասցետիրոջը հանձնել, այլ որոգայթ դարձնել կնոջն ապականելու: Ինչպես տեսնում ենք մարդ-

կության տառապանքի պատճառի շուրջ՝ հոգևոր Նժդեհի դիտարկումները իմաստասիրական առումով՝ զուտ Աստվածաշնչյան-արմատական են:

Եվ Տիրամոր նման կնոջ լինելն իսկ ամոթանք և օրինակ է անբարո աշխարհին և այդպես է Աստծով առաքելություն: Աստծոն խոնարհ լինելու առաքելություն:

Եկեղեցու սուրբ մայրերով կրկին վերարժեքավորվեց կինը: Այդ բանի համար ամենասուրբ բաները հայերս մայր անունով սկսեցինք կոչել՝ Մայր Հայրենիք, Մայր Եկեղեցի, Մայր Մատյան, Մայրաքաղաք, Մայր օրինակ (ակունք օրինակ) և այլն: Եվ բառն ունի միայն ամենամաքուրի և ամենասուրբ լինելու, գերագույն ակնածանքի ընբռնում: Եվ Նժդեհն էլ մեր ազնվական ծագման ու ապահովության բանալին ցույց տվեց սուրբ Մայրերի առաջ գալով, ազգի համար նրանց արդարացված արմատով: Արդեն՝ հայ եկեղեցուց ծնված Մայրերի օրինակով:

**«Հայուն հատուկ է սրբության զորավոր զգացումը՝ աղբյուրը հոգևոր անսպառ ուժի, նվիրումի, պաշտամունքի: Նրա համար բարձր ստորոգութեան առարկաները-հայրենի հող, նախահայրեր, մայրություն-վերացարկվելով մարդկայինից՝ դառնում են սրբազան: Վերաբերմունք դեպի այդ կարգի առարկաները- ահա՛ մի այլ փորձաքար, որի վրա ճշտել կարելի է ժողովուրդների նկարագրի մետաղը»:**

«Ամենագեղեցիկն աշխարհում իմ մոր աչքերն են»,- ասել է հոգեվարող Նիցշեն:

**«Ամենաբարին աշխարհում իմ մոր դեմքն է»**,- ասում եմ ես *(Նժդեհ. Իմաստասիրական խոհեր):*

Ուրեմն ոչ այլ մի տեղ, քան.

**«ՄԱՅՐԵՐԻ ԱՓԻ ՄԵՋ ՊԻՏԻ ՓՆՏՐԵԼ ԱԶԳԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ»** *(Նժդեհ. Որդիների պայքարը հայրերի դեմ):*

«Առյուծածին մայրերի ափի մեջ»:



Միայն մեր քրիստոնեական ավանդներով, Ավետարանի միջոցով մեր ընտանիքներն ուժեղացնելով է, որ այսօրվա աշխարհի ալեկոծումների մեջ պիտի կարողանանք մեզ արժանավայել պահպանել, որպես դարավոր հոգևոր ազգություն: Մեր ապագա մայրերի վեհության դեմ դրսի կեղտեր ու կեղծություններ թույլ չտալով մեր երկրում: Եվ ամենևին պատահական չէ, որ դրսի ստրկատեգ վատ ուժերը՝ մեր ազգի դեմ այսօր նախ սկսեցին մեր կանանց ավանդույթները «դեմոկրատիայի» (կեղծ ժողովրդավարության) կամ այլ չար միջոցներով խախտել-քայքայել ջանալ, և, մեղա Աստծո, հնարավորինս լկտիացնելով մեր կանանց գայթակղվող մասին ևս՝ ապականամիտ ֆիլմերով, աղտոտ գրականությամբ, մամուլի գայթակղված, ցինիկ մասով փչացման դաշտ ստեղծելով:

Բնականաբար՝ կատարյալի քաղցը մեզ ավելի պիտի զորավորի, քաջալերի՝ գայթակղությունների դեմ ելնել առավել հոգևոր պատերազմներով և ոչ միայն պաշտամունքով: Ամեն օր ու ժամ ազգդ ու եկեղեցիդ պիտի պահպանե՞ս, որ այնտեղ այլոց եղծ ոտնձգություններից ազատ, ճշմարիտ նաև սրբության պաշտամունք իրականացնես: Քանի որ ապականությունը «Բաբելացման շնչով», ցավոք, մեր երկրում էլ է մեծ չափով ավելացել և չար աչք դրել նաև մեր Եկեղեցուն: Այդպես ավելացնելով հայ ազնվական մտավորականների և հոգևոր ժայռակոփ այրերի խաչերի ծանրությունը:

**«Վայելչասերների շրջանը- ահա անբարոյականը և անբարոյացուցիչը: Հեռո՛ւ այդ շրջանից, որ նեխություն կը հոտի»**:- ասում է հոգևոր Նժդեհը *(Նժդեհ. Որդիների պայքարը հայրերի դեմ):*

Լավ կանայք, լավ մայրեր ունենալը՝ Քրիստոսատուր դպրոցով է, միայն այդ Աստվածարյալ դպրոցով: Ուստիև մայրության արժանապատիվ այդ դպրոցը պիտի հաստատուն պահել:

**«Մի ժողովրդի բարքերը - գովելի թե պարսավելի - կախում ունեն մայրերից»** *(ՆԺԴԵՀ. Առյուծածին մայրեր):*

**«Իդեալ մայրեր ունենանք՝ երջանիկ հայրենիք ունենալու համար»** *(ՆԺԴԵՀ. Առյուծածին մայրեր):*

**«Ժաննա դ Արկի հայրենիքը պարտվեց ա՛յն օրը, երբ մերօրյա ֆրանսիացու դեմո- լիբերալիստական մտածողությունը կենդանաբանական մի պարտեզի վրա գրեց. «Գիտության համար ո՛չ հայրենիք կա, ո՛չ էլ կրոն»** *(ՆԺԴԵՀ. Երկեր, հտ 1, 2002թ.):*

Ավետարանական կանայք՝

Կին, որ եկեղեցի է իր ամուսնու, իր զավակների համար: Այս է մեզ անհրաժեշտ և օրհնության հենարան. սրբարան ընտանիքին և ազգին: Իսկ սրբանվե՛ր մայրական օրհնություն ձեռք բերելու համար՝ մշակություն է պետք, բարի, հասուն մշակույթ և ավելի առատ, քան այսօր ունենք: Առողջ և հզոր, կյանքային հոգևոր քարոզչություն է պետք մեզ: Ոչ թե միայն պաղ միջոցառում՝ հավուր պատշաճին ու արտաքին ցուցադրականը, որի մեջ կեղծավորություն կա: Այլ՝ Աստվածամերձն ու սուրբը, խղճմտանքովն ու համազգայինը:

Ինչպես Նժդեհի մի գրառումից ենք տեսնում՝ նրա մայրը մեծ ապաշխարության և մեծ սրբության հետևորդ էր, Հիսուսաշնորհ կին, Մարիամական սուրբ ծնունդ, հայ սուրբ մայրերին ընդհանրացնող մի փառավոր օրինակ: Այդ տեսնում ենք իմաստունի պատմած այս փոքրիկ, սակայն զորավոր դրվագից, որ հավաստում է, թե՝ պատահական չէ, որ նման մորից Նժդեհ կարող էր ծնվել.

**«Կալանավոր էի ցարի օրով, և մայրս ամեն կիրակի ինձ այցի կու գար հեռավոր գյուղից. կու գար ոտքով:**

**Իր նիոբեական վշտից ազդված՝ կը զայրանայի, որ ինձ համար կը նահատակէ իր անձը: «Ի՞նչ,- կը պատասխանեի,- կա՞ռք նստեմ, կա՞ռք վայելեմ, երբ շղթաների և զրկանքների մեջ ես դու»... «Դեպի քաղաք ճամբա ընկնելուց առաջ,- կպատմեին քույրերս,- մայրիկը հսկումի է կանգնում Տիրամոր առջև, արյուն լալիս, կուրծքը եկեղեցու քարերին քսում, մինչև որ արյունեն ստինքները. խեղճ կին՝ կուզէ որ քարերն էլ զգան իր ցավը»: Ահա մայրը, որի նման են բոլոր հայ մայրերը»** *(ՆԺԴԵՀ. Ի-մաստասիրական խոհեր):*

Երբ կարդում ես Տիրամոր հատկանիշներ ունեցող, որդու խաչելության առջև տառապող Նժդեհի մոր նկարագրությունը, վերստին համոզված ես՝ այս արդարասեր մայրերով է, որ հարուստ է մեր չարչարված ազգը, մեր Հայրենին: Այս մայրերի աղոթքը՝ հենարան- հովանի է մեզ էլ: Նման՝ խաչ կրելու տառապանքով մայրական նվիրակ կերպարները չեն մոռացվում, այլ արժան են մեծ պատվի և ապագա երանության: «Բոլոր ազգերը քեզ երանի են տալու»,- Տիրամոր մասին հայտնում է Սուրբ Գիրքը: Տիրամոր նման հատկանիշներ կրող մայրերը ևս երանելիներ ու օրհնյալներ են մեր եկեղեցի- ժողովրդի մեջ, մեր ազգության մեջ, ամենքիս համար և ամենուրեք: Մշտապես ակնածելի են: Օրհնյա՛լ թող լինեն նրանք: Ամե՛ն:

Իզուր չէ, որ Հայտնության գրքում եկեղեցու խորհրդակիրը կինն է, որ արու զավակ է ծնում. վիշապը սպասում է եկեղեցու զավակի լույս աշխարհ գալուն, որ.... պարզապես կուլ տա ծնվող արու զավակին: Սակայն, ինչպես հիշում ենք, ծնված զավակն ամիջապես հափշտակվում, տարվում է երկինք՝ Աստծո աթոռի մոտ: Սա արդյո՞ք հափշտակության մասին չէ, որի մասին խոսում է Սուրբ Ավետարանը: Երբ Աստված հափշտակում, տանում է իր եկեղեցին՝ մեծ աղետներից, անտանելի փորձություններից առաջ: Վստահ եմ, որ այդ է նշանակում կամ նաև այդ:

Աստվածաշնչյան կինը. որին նմանվել պիտի ձգտեն մեր մայրերն ու քույրերը, որպեսզի մեր ազգը առավել սրբանա և դառնա առավել ընտրյալ անհատների, նվիրակ որդիների և ընտրյալ արքաների ժողովուրդ: Մինչդեռ, չենք կարծում թե

չկան այնպիսի զավակներ, որ տանջալից բեռ, ամոթ ունեն՝ իրենց մայրերի պատճառով, մայրեր, ովքեր թերևս, ժամանակին Աստվածաշնչյան անհրաժեշտ դաստիարակություն, կնոջ արդարակեցության ավանդույթ չստացան: Պատճառը նաև այրերի հավատի անկումն էր: Որովհետև սուրբ գիրքն ասում է, որ կնոջը այրը պիտի կերտի ԱՍՏՈՒԾՈ ԽՈՍՔՈՎ: Այսինքն թե՝ Աստծո խոսքն իր մեջ չունեցող այրը ինչպե՞ս պիտի կերտեր իր կնոջը: Այսինքն. պիտի խնդրենք նախ հայ այրերի բարձրացումը ավանդապահ Աստվածաշնչյան ապրելակերպին, որպեսզի նրանք ըստ Աստծո արդարության կերտեն իրենց կանանց: Սակայն սրանց հավատավոր որդիներին ևս Աստված չի թողնում, երբ նրանք հավատարմում են, որովհետև սրանք յուրովի որբեր են. երբ Գրվածքն ասում է. «Որբի հայրն ինքն Աստվածն է»: Կամ

**«ԵԹԵ ԼՍԵՍ ԱՍՏՈՒՆ՝ ՆԱ ՔՈ ՄՈՐԻՑ ԷԼ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՊԻՏԻ ՍԻՐԻ ՔԵԶ»:**

Աբրահամը որդի ունեցավ նախ իր կնոջ սպասուհուց, կնոջ պնդմամբ, քանի որ Սառան ամուլ էր: Ապա, Աստծո կամոք, օր ծերության՝ իր կնոջից էլ զավակ ծնվեց: Եվ Աստված այս պատվական զավակի՛ն դիտեց որպես ճշմարիտ ժառանգորդ, այլ ոչ թե սպասուհուց ծնվածին: Նույնպես էլ՝ երկնքին առավել որդիներ լինելու համար, մենք ապաշխարում ենք, որպեսզի եկեղեցում Քրիստոսի հովվությամբ քայլենք և օծվենք որպես օրինական ժառանգներ: Տիրոջ Եկեղեցու արգանդից ծնվածներ և ոչ թե մնանք Եվա կնոջ որդիներ: Այսինքն թե, ովքեր իրենց մեղավոր մայրերից ծնված լինելը նկատի առնելով, անարժան են իրենց գտնում կամ ամոթ ունեն, թող հույս ունենան նաև դարձ ընթանալ, արժանանալ որդեգրվելու Տիրոջ եկեղեցուն: Անշուշտ, մերժելով, ատելով այն ցածը, որ իրենց ծնողներից որպես արատ ունեն: Այդպես միայն «իրենց ծնողներով կապված ճակատագրերի ժանգերը



քանդելով»՝ այդպես միայն մոտենալով վեհին ու կյանքի Վեմին, սրբությամբ Հաղթանակողին ու Փառավորողին: Եվ այդ օծմանն արժանանալու համար՝ հարկ է մեզ սուրբ լինել՝ ողջ անձով հանձնվել ճշմարտությանը, Աստծո Որդու Բժշկարար Վարդապետությանը ազգովի դառնալով ականջալուր հովիվների Հովվի՝ Քրիստոսի խոսքին: Չվիրավորվե՛նք: Դավիթ մարգարեն էլ, Սողոմոն իմաստունն էլ, ասացին թե՝ կնոջից մեղքով ծնվեցինք, բայց Աստծով լուսավորվեցինք և ընդունեցինք Տիրոջով հավիտենականը, գնահատեցինք հավիտենարժեքը: Այս մարդիկ ճանաչեցին մարդու մեղավոր բնույթը (քանի որ իրենց ծնողներն էլ էին մարդիկ, իրենք ևս, ուստի՝ կամա-ակամա՝ եվա-ադամյան մարդկայինով մեղավոր): ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ,- ասում է հոգևոր Նժդեհը,- ՈՐԴԻՆԵՐԻՑ Է ՀԱՏՈՒՑՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԵՂՔԵՐԻ ԴԻՄԱՑ: Ուստի եթե փախչենք հատուցման մեր խաչը կրել՝ այդ «թեթևությունը» միայն թվացյալ կլինի և Աստծու հանդեպ անարժանի վարմունք, զուր փախուստ: «ՆԱ, ՈՎ ՉՎԵՐՑՆԻ ԻՐ ԽԱՉԸ ԵՒ ԻՄ ԵՏԵՒԻՑ ՉԳԱ՝ ԻՆՉ ԱՐԺԱՆԻ ՉԷ»,- ասաց Հիսուս և ողջ մարդկության պարտքերի դիմաց խաչն ինքը վերցրեց՝ օրինակ դառնալով իր հետևորդներին, նվիրյալներին, սիրո և մարդասիրության մոհիկաններին: Նույնն է և հայրենիի և մայրենու համար խաչ կրելը: Մայր Հայրենիքի համար նույնն է պահանջվում նրա առյուծ որդիներից: Պահանջվում է ճշմարիտ խաչակիր սեր, և ոչ թե կեղծ խաչակիր սեր:

Հայրենիքի մեղքերի դիմաց՝ Հայրենիքի խաչը կրել՝ մինչև պատարագում, որ հերոսներն են անում, այդ Վերին ոլորտի պատգամ է ընտրյալներին: Այդ Խաչն էր վերցրել հոգևոր Նժդեհը և ծանոթ էր այդ Խաչի ծանրությանը:

**«Ամենածանր Խաչ կրելը,- ասում է հոգևոր Նժդեհը,- քո ժողովրդի ճակատագրի Խաչն է»:**

«Հարգի՛ր ծնողներիդ, որպեսզի երկար կյանք ունենաս»,- ասում է Աստվածաշունչը:

Որովհետև եթե «հատուցման խաչդ ես տանում», միայն խաչիդ ծանրությունը չէ քո վրա, այլ նաև քո վրա են քո ծնողների, քո Հայրենիքի պատիվները, փառքերն ու փառավոր հաղթանակները, հոգևոր նվաճումների ողջ գանձարանը քեզ հետ են: Այսինքն թե՝ մոր կաթի հետ ունես այն, ինչի համար կարելի է պատարագվել (նահատակվել): Մի բան, որ ամենքին տրված չէ: Իսկ Մայր Հայրենիքի համար պատարագվողները՝ հավիտյան են հիշվելու: Ինչպես որ Վարդանանք այդ պատարագի բացված Վարդն են մեր ժողովրդի սրտում: Եկեղեցի մոր արգանդից ծնված որդիներ են նրանք: Ապա որքան փառավոր կլինի Աստվածաշնչյան զորավոր մայրեր ունենալը, որոնք եկեղեցուն մատուցում են առավել մաքրասիրտ, ազնվական և բանիմաց որդիներ, սուրբ որդիներ, Գրիգորներ, Վարդաններ, Նժդեհներ ու Անդրանիկներ: Լավ մայրերը, առաքինի կանայք, ինչպես հոգևոր Նժդեհը կասեր՝ առաքինանալու քաղցի հագեցումն է յուրաքանչյուր ժողովրդի և նրա ճակատագրի օրհնության-հենարանը: Ի վերջո, որքան էլ կատարյալ ու սուրբ սերմ սերմանես վատ, անապատացած կամ փչացած հողում՝ անկարելի է, որ լավ պտուղ դուրս գա կամ լավ որդիներ ծնվեն: Ամեն կնոջից չէ, որ կարող ես ընտիր որդիներ ունենալ: Ուստիև Աստվածաշնչյան արդարակյաց կին կերտելը պիտի սկսվի մանկապարտեզից, դպրոցից, բուհից: Հիշենք, որ Տիրամորը նրա ծնողները տաճարի ավանդապահ ուսուցմանը հանձնեցին, երբ նա երեք տարեկան էր: Այսինքն թե՝ մեզանում գենետիկ (ժառանգավորական) հավատի կյանք ձևավորել է այսօր պետք:

Ավետարանական մայրերը, որ անգամ մեր անարժան վիճակներն են ապաշխարում, չարչարվում մեզ համար, գիշեր ու զոր արտասվում, խնդրում, աղոթում, բեռ կրում մեզ



համար և առանց որևէ դժգոհանքի կամ ծանր բողոքի, հեզորեն ամեն ժամ են այդպես վարվում: Եվ եթե ողջ աշխարհի կողմից էլ մոռացված լինենք, եթե ամենքն էլ մեզ լքեն, աստվածաշունչ դաստիրակությամբ ձևավորված մեր մայրերը՝ մեզ չեն լքի, եթե մենք չլքենք մեր Աստծուն ու մեր առյուծածին մայրերին: Այս ամենը Աստծով եղան, բոլոր սրբությունները ու սքանչելիքները, հաղթական խոնարհումներն ու ճշմարիտ խոնարհումներով հաղթանակներն այս աշխարհում և որով է մեր՝ ամենքիս լինելությունը: Այս ամենի մասին է խոսում հոգևոր Նժդեհը՝ մեր ազգի բարձրացումը տեսնելով կնոջ խոնարհության և առաքինության բարձրացման մեջ:

Ըստ ճանաչողական գիտության, մայրը որդու սիրտն է ձևավորում, որ Աստծո հետ կապող ամենաուղիղ զարկերակն է, նաև մոր հեռակառավարումը որդուն: «Բարի ծառն է բարի պտուղ տալիս, ասում է Հիսուս, իսկ չար ծառը՝ չար պտուղ, պտղից է ծառը ճանաչվում»: Սակայն նաև ասում է թե.

ՁԵՐ ՁԵՌՔԻՆ Է ԾԱՌԸ ԲԱՐԻ ԿԱՄ ՉԱՐ ԴԱՐՁՆԵԼԸ:

Եթե մեր ձեռքին է, մեր ազգի որդիների ձեռքին, ապա «Ծառերը բարի դարձնելը», ուրեմն պատահմունքով ուղղվելիք բաներ չեն, այլ՝ կերտվող, վարքով ձեռք բերվող: Աստվածաշնչյան Վարք ապրելով կերտվող:

Ժամանակը չէ՞ արդյոք, որ մեր եկեղեցուն կից բացվեն մանկանց կրթարաններ, օրիորդաց դպրոցներ և կանանց մենաստաններ: Վստահ ենք, որ եթե սրտանց ենք որոնում մեր ժողովրդի հոգևոր արդար ծաղկումն ու բարգավաճումը, ոչինչ չպիտի խանգարի նման Աստվածահաճո գործերին:

## ՆԺԴԵՀԸ՝ ՄԱՐԳԱՐԵ

**«Զոհաբերի՛ր...**

**Զոհաբերի՛ր անվերջ՝ առանց մնացորդի:**

**Սովորի՛ր և սիրի՛ր զոհաբերել ու տանջվել բավականության լուսափայլ ժպիտը երեսիդ... և դու կմոտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ- Աստված...**

**ԱՅԴՊԵՍ Է ՊԱՏԳԱՄՈՒՄ ԻՄ ՄԱՐԳԱՐԵՆ ԻՐ ՀՐԵՂԵՆ ԽՈՍՔԸ...** *(ՆԺԴԵՀ. «Դաշնակցության պանթեոնը» շարքից):*

Բնականաբար՝ ամենօրյա Խաչելության նման կյանք ապրելու մասին է խոսքը, որ շեփորում է հոգևոր Նժդեհը: Եվ արդ, Նժդեհն ինքն է ասում, թե մարգարեական շնորհ ունի: Պողոս առաքյալը հաստատում է նույնը, թե Տիրոջ եկեղեցուն են վերապահված առաքելական, մարգարեական և այլ շնորհները: Նժդեհն ահա ինքնաճանաչմամբ հայտնում է, որ իր ասած այս ազնիվ խոսքերը ոչ թե իրենն են, այլ իր ներսում բնակվող մարգարեական հոգունը:

Նժդեհը Տիրացուի թոռ էր ու քահանայի որդի: Իսկ մոր եզակի Աստվածապաշտության մասին՝ արդեն իսկ հիշատակել ենք: Ուստիև, այս մեծ անհատի ճանաչողության սանդղակը ճանաչված շատ մտավորականներից իր իմաստությամբ և ծնունդով անհամեմատ բարձր էր: Նաև որ՝ Նժդեհը կենդանի հաղորդություն ուներ Աստծո հետ, ինչպես ինքն է ասում թե՝ իր ներսում հրեղեն խոսքով մարգարե է ապրում:

Եվ առանց հաշվի առնելու, որ Նժդեհը նաև քահանայանման մարգարե էր, նրա կյանքից շատ դրվագներ անհասկանալի էլ կմնան՝ մանավանդ Խորհուրդների անհավատ երկրում ապրած, լենին-ստալինյան խառնակումներով բոլոր խեղվածներիս, զարկվածներիս, աղավաղվածներիս, դեն գցվածներիս համար: Երբ ամեն օր էր քարոզվում ծուռը շիտակ, շիտակը՝ ծուռ դիտել: Քարոզվում էր ճնշում հոգևոր ազատության վրա և նյութաստվածություն:

Խորհուրդների պետությունն օրինակ՝ չէր ընդունում Նժդեհին, որովհետև Աստվածաշնչյան հայտնատեսությամբ հոգևոր Նժդեհը համոզված էր, որ ԽՍՀՄԸ չար պետություն էր, մարքս- լենինյան սկզբունքը՝ անհավատություն, անաստվածություն սերմող, ուստիև՝ մեծ արատներ կրող: Երբ Նժդեհը Քրիստոսին անվանում է. «Ոգու հսկա, ում ետևից պիտի գնալ», նույն դեպքում Մարքսին անվանում է. «Մարդկայնորեն անասնականը, ում, բնական է՝ ամենևին չպիտի հետևորդել»: Աստված սկզբից էլ, ջրհեղեղից հետո՝ դեմ եղավ մարդկանց ու ազգերի միատեղմանը, գլոբալացմանը, որովհետև մարդն ի բնե չար լինելով, ազգերի միաբանությամբ առավել սոցիալական, նյութապաշտ և մեծ ապստամբ է դառնում և սակավանում կյանքից, այսինքն՝ հոգևորից, երբ միայն վերջինովս է մարդու համար հավիտենական կյանքը, սերը, ամեն արժեքավոր բան, արդար մշակություն և Աստծո տված բարիքի արդար վայելումը: Սակայն Գլոբալացվելով՝ մարդն ինքն իր կյանքի և հոգու դեմ է սկսում գործել: Գլոբալացումն, ուրեմն, ինչպես առաջին Բաբելոնի ժամանակ, պատմության էջերում երբ էլ ի հայտ է եկել՝ դժոխքի լայն դռներ և որոգայթներ է բացել մարդկության առաջ, որովհետև բանականությունը թողած՝ մարդկությունը հակվում է մարմնայինը, ցանկությունները, կռապաշտությունը, սոցիալականը, նյութականը աստվածացնելուն, այդպես ընդդիմելով կենդանի Աստծուն, որով է ամեն բան և բարիքը և օգտակարը և կյանքը: Բաբելոնացումն ընդունում է մարմնի բարեկեցությունը և ոչ թե հոգին և հոգևոր աճը: Այսինքն՝ անհոգի կամ սակավհոգի լինելով, վաղ թե ուշ մարդը դատապարտվում է կործանվող նյութին նմանվել, նյութին կռապաշտել, որի համար է, թվում է, այլևս ապրում: Եվ այդպես մարդիկ ստրկանում են միմյանց հանուն

նյութի և ոչնչանում: Բանականությունից հեռանալու չափազանցությունն է այդ, որ կրքերի, ինքնաապականման և վաղ թե ուշ՝ ինքնաոչնչացման է տանում մարդ արարածին: ԽՍՀՄ-Բաբելոնը ևս ավարտվեց հանկարծահաս փլգումով, ինչպես Գիրքն էր նախազգուշացրել: Եվ այսօր եկող Նոր, Վերջին Բաբելոնն է կազմավորվում, որ Հայտնության Գրքում նմանեցվում է գազանի, որը մարդուն տանում է մարմնի առավել գազանացման ու ԿՐՔԵՐԻ ՄՈԼԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, իր առավել ծայրահեղ ապականվելու ծրագրերի գործադրմամբ: Բնականաբար, ինչպես Գիրքն է ասել՝ սա ևս ընկնելու է մեծ կործանումով:

**«Կրքերն ու կարիքները ծառաներ պիտի լինեն և ոչ թե տեր ու բռնակալ»,**- ի հակադիր այդ ամենի՝ քարոզում է հոգևոր Նժդեհը *(Նժդեհ. «Որդիների պայքարը հայրերի դեմ»)*:

**«Ազգերն ունեցել են, ունեն և պիտի ունենան իրենց արժանի ճակատագիրը: Քեզանից զատ. խրատում է պատմությունը, ոչ ոք կարող է բարեփոխել քո դրությունը»,**- քարոզում է Նժդեհը *(Նժդեհ. «Որդիների պայքարը հայրերի դեմ»)*:

**«Հիվա՜նդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչև այժմ երկու առաքինություն է ունեցել՝ իր դժբախտությունները վերագրել արտաքին պատճառների և փրկությունը հուսալ արտաքին ուժերից»** (Նժդեհ. «Բաց նամակներ հայ մտավորականությանը»):

**«Օտար լծերի տակ երկարորեն ապրած ժողովուրդներին հատուկ է մի հոգեգիծ, որը հոգեգիտությունն անվանում է «Ստրկական երկյուղ»:**

**Այդ ամոթալի արատից, այդ չարիքից զերծ է հայ էությունը, որովհետև օտար իշխանությանց լուծը կրելով հանդերձ նա չէ դադարել իրեն զգալ ավելի բարձր իր երկրին բռնորեն տիրողից»** *(Նժդեհ. «Բանտային գրառումներ»)*:

Իզուր չէ գլոբալացվող պետությունը նոր ծնվող մանկանը կուլ տալ ցանկացող վիշապի տեսքով նկարագրվում



Հայտնության գրքում: Նժդեհը գիտեր, որ ԽՍՀՄ-Ն էլ է գլոբալացվող Բաբելոն և կողմ էր միայն ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ, որ քննեցինք թե ինչպես էր հնարավոր ձևավորել, որ «Եվրոպական հովերով տարված խաբեական ու ապական միաբանություններով» անկարելի էր: ԵՎ ԿԱՐԵԼԻ ԷՐ ՄԻԱՅՆ «ԱՍՏՎԱԾ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ» ՈՒՂԵՆԻՇՈՎ: Նժդեհը ուղենիշ դրեց գազանի բռնատիրող ուժերի դեմ՝ ոտքի հանել ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՈԳԵՂԵՆ ՄԵՐ ՏԵՍԱԿԸ: Գտնելով, որ միայն մեր այդ տեսակը կարող է դիմակայել ապագա փոթորիկներին: Նահատակությամբ էլ մերժել չարը և երբևէ չնսեմանալ: Եվ որ՝ Նոյ Նահապետի թոռներն իրավունք չունեն աշխարհի մոլորմամբ մոլորվել, երբ «Սկզբից ի վեր հայերը քրիստոնյա են»՝ Ադամից և Նոյից սկսած: Նկատի ուներ Նոյի, Հաբեթի և Հայկի ուղիղ Աստվածպաշտությունը: Ուշադիր լինենք, Նժդեհը չի ասում մոտ 2000 տարիներ ի վեր հայերը քրիստոնյա են, այլ՝ ՍԿԶԲԻՑ Ի ՎԵՐ, այդպես փառավորելով Աստծուն, որ Սկզբից էր հոգածու հայկական հոգեղեն մտքին ու սրտին, հայկական առանձնահատուկ գենին: Եվ որ «ՍԿԶԲԻՑ ԷՐ ԲԱՆԸ ԵՒ ԲԱՆԸ ԱՍՏՈՒՇՈ ՄՈՏ ԷՐ», այսինքն թե՝ Քրիստոսն սկզբից էր և հավիտենական Աստվածություն և միայն ժամանակի մեջ մարդկային մարմին առավ, որ ճանապարհ ու ճշմարտություն ցույց տա մարդկության հավատավոր մասին: Այդ Ավետարանական ճշմարտությանը Նժդեհը տեղյակ էր իր ներսում ապրող «Մարգարեի հրեղեն խոսքով»: Մի բան, որ այսօր Նժդեհին մակերեսորեն տեսնողները, ցավոք, հոգեպես թերուս մնացած մարդիկ, ամենևին ո՛չ ըմբռնում են, ո՛չ ընդունում, թե Քրիստոս ոչ թե 2000 տարիներ ի վեր կա, այլ Սկզբից կար, ինչպես որ իր ներսի հրեղեն մարգարեով ճանաչեց և հայտարարեց նաև Նժդեհը:

**«Սիրի՛ր թշվառին, ծառայի՛ր սրան, թող քո ցավը թշվառի ցավը, Քո Աստվածը՝ թշվառի Աստվածը լինի...**

**...Գոյությունդ քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա, մի՛ ստիր...**

**Ստել՝ նշանակում է՝ հայհոյել ճշմարիտը, ուրանալ՝ նշանակում է դադարել մարդ լինելուց...**

**Եղի՛ր բացարձակ...**

**ԱՅՍՊԵՍ Է ՊԱՏԳԱՄՈՒՄ ԻՄ ՄԱՐԳԱՐԵՆ ԻՐ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԽՈՍՔԸ և հոգիս նրա հրեղեն պատգամներին գերի, վեհորեն իր թևերն է պարզում...** *(«Դաշնակցության պանթեոնը» շարքից. «ժայռ» 1917):*

Բնականաբար էլ, ինչպես մարգարե Հովհաննես Մկրտիչը Հերովդեսից դատվեց, Նժդեհն էլ՝ սուտ մեղադրանքով դատվեց ԽՍՀՄ- Բաբելոնից և բանտում, բազում չարչարանալից տարիներից հետո, մարտիրոսվեց՝ մարգարեի էլ վախճանով:

Բաբելոնը ժամանակակից բառով՝ ազգերի գլոբալացումն է, որ սկզբից ևեթ հանգում է Աստծո դեմ ապստամբության: Առավել ճիշտ՝ հենց ապստամբությամբ էլ սկսվում է այդ միաբանությունը՝ նյութը որպես աստվածություն՝ գայթակղեցնելով: Հայտնի է, որ Խորհուրդների «օրենքով» անհավատ միությունը ոչ միայն բանտարկեց ու կոտորեց մեծաթիվ հոգևորականների, որոնց ստվերն էլ չարժեր, ապա կենդանի մնացածների վրա էլ՝ բռնացավ, աքսորեց, ավերեց նաև մեզ մարդ կերտող, իր տեսքով անգամ մեզ առաքինության կոչող լուսավոր հենարանները՝ մեր շատ եկեղեցիներ, հոգևոր փրկության ճրագի դարավոր վկայարաններ: Եվ այն ժամանակ Աստծոն հավատալը, ըստ ԽՍՀՄ ներքին օրենքի՝ հանցանքի նման բան էր դիտվում: Այս ապստամբության մասին Աստվածաշնչյան մարգարեություններում Աստված ասում է.

«Բաբելոնին 70 տարի ժամանակ եմ տալու և ապա պիտի այցելեմ Բաբելոնին և այն ազգին, որին (գետնաշարժով) հավիտենական ավերակների եմ վերածելու»:



Կազմավորման ուղիղ 70 տարին լրանալուց հետո, Աստծո աներևույթ այցելությամբ՝ ԽՍՀՄ-ը, ճշմարիտ որ, ըստ Գրվածքի՝ փլուզվեց, կրկին տարաբաժանվեց ազգ ու ցեղերի, ինչպես առաջին Բաբելոնը. և տարաբաժանվեց, որպեսզի կրկին Աստծո կամքին դառնայինք: Քիչ դարձանք կամ հարկին չդարձանք: Եվ... ԽՍՀՄ 70 տարին լրանալուց հետո, մեծ երկրաշարժով հավիտենական ավերակների վերածվեց Հայաստանի 1/3- րդ մասը, երբ Հայտնատեսական գրականության մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ)- Աստված ասում է, որ 1/3- ը իր բերած աղետների չափ- նշանն է, կնիքը, ստորագրության նման մի բան: Իսկ պատիժն այն էր, որ մենք սոցիալական, նյութական գոյության ախտով ավելի էինք վարակվել, խաբվել, խիստ սակավացրել հոգևոր մեր խնջույքները, հարկ եղածին չափ չէինք պայծառացրել մեր եկեղեցիները, հոգևոր արժանի մակարդակի գործերով ու կյանքով հարկ եղածին չափ չէինք ապրում, որովհետև սովորել էինք սոցիալիստական մտածողության, որ խաբեություն էր: Սոցիալիստական մտածողությունը հանուն միայն մարմնավոր բարեկեցության առանց Աստծո ապրելն էր, ըստ Մարքսի այն հիմար տեսության էր, թե իբր՝ կեցությունն է որոշում գիտակցությունը: Երբ խելամտություն է հարց տալ. ԱՌԱՆՑ ԿԱՏԱՐՅԱԼ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ԻՆՉ ԿԱՏԱՐՅԱԼ ԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ: ՊԻՏԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱ՞Ս, ՈՐ ՔՈ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵՍ: ԲՆԱԿԱՆԱԲԱՐ, ՑԱԾ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԾ ԿԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ ՑԱԾ ՊԻՏԻ ԼԻՆԻ:

Ի ծնե հանցասերի կեցությունը բարելավես՝ կկամենա ողջ աշխարհն էլ ապականել իր հանցանքով: Ամեն օր եթե խորոված կերցնենք և փափուկ գորգերի վրա քնեցնենք շան բնույթի մարդուն, չէ՞ որ լավ բանաստեղծ կամ ընտիր երաժշ-

տահան չի դառնա: Եվ ինչ կեցությամբ էլ շրջապատեցին կապիկին՝ նրանից մարդ չծնվեց:

Ուստի և առանց Աստծո արդարության ոչ մի օգտակար կեցություն չի բարելավվի, եթե բարելավվի էլ, ավելի մեծ վնաս կտա, խաբեական և բաբելոնյան բարելավում լինելով (լավ կեցություն առանց Աստծո կորստաբեր մոլորությամբ) շուտով փուլ կգա՝ խորտակվող մարդկանց վայնասունները առաջացնելով:

«ՆԱԽ ՓՆՏՐԵՑԵՔ ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱ ՄՆԱՑԱԾԸ ԻՆՉ ՊԵՏՔ է (ՈՒՏԵԼՈՒ ԵՒ ՀԱԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ) ԱՍՏՎԱԾ ԱՎԵԼԻՈՎ ԿՏԱ, ԹԵՐԱՀԱՎԱՏՆԵՐ»,- ՈՒՍՈՒՑԱՆԵՑ ՀԻՍՈՒՍ:

Այսինքն թե՝ արդար ու բարի գիտակցություն ունեցեք, որ արդար ու բարի կեցություն ունենաք:

Միթե գիտակցություն ունեցողն իր կառուցած տան ցեմենտը կգողանա՞ր, որ տունը երկրաշարժից փլվեր: Նորմալ գիտակցություն ունեցողը նման բան չէր անի: Մարդատյացության այն չափանիշը, որ իր ազգակիցների համար տուն կառուցողները ցեմենտ չէին խառնում ավազին, որ տունն ամուր չլինի, սովորական, ընդունելի անեծք էր դարձել: Անաստված, գայլային վարք էր դարձել: Այսինքն, հարկ եղած չափի՝ մենք հավատավոր էլ չէինք, այլ՝ հակառակն ավելին էր դիտվում ու թութակվում, տեղ չտալով հավատավորների ազնվական ըմբռնումներին: Մենք մեր 1/3- ով՝ նյութագոյությունից խաբված՝ չարություն գործող, եղծված ազգ էինք դարձել: Ինչու՞: Եվ 1/3-ով էլ ընկանք, առանց պատերազմի: Երկրաշարժն հարվածեց Հայաստանի 1/3-րդ տարածքին: Որովհետև ԽՍՀՄ փոքր Բաբելոնից ելնում էինք՝ ոչ թե Աստծուն խոնարհվելու, ոչ թե համազգային ապաշխարության, այլ՝ ամենամեծ Բաբելոնին ինտեգրվելու, նրան ևս խաբվելու, մի քանի կտոր հացի դիմաց նրանից ևս առավելս խարդախվել-ապականվելու, փչացվելու:



Մարգարեական գրքերում սոցիալիզմից խաբված իրողությունը ավելի տեսանելի, հասկանալի բնորոշումով է արտահայտվում հետևյալ խոսքերով.

**«Նրանք ասացին՝ իմ քսակը, իմ քսակը և թե՝ տանենք տուններս լցնենք»:**

Այդպես էր ասում 1/3- րդ «մեր հասարակությունը», այս էր մեր 1/3- րդ հասարակության կյանքն ու կամքը, անօրեն չափանիշը դարձել: Բան, որին ամոթ է հոգևոր կյանքի անհրաժեշտ չափ ու մակարդակ, անգամ հոգևորի ստվերը կոչել, եթե ոչ միայն՝ պատժաբերություն և խայտառակություն պիտի անվանենք: Այնքան չկայունացանք հոգևորով, որ աղետն Աստված ի չիք աներ Հայաստանից, ինչպես դա արեց Նինվե քաղաքի համար, երբ քաղաքացիները չարհամարհեցին Աստծո զգուշացումները, այլ լսեցին Հովնանի քարոզներն ու լացով ու կոծով ապաշխարեցին և... հարվածը նրանց չխփեց:

Է, մենք չունեի՞նք այդ զգուշացումները, որ Նինվե քաղաքն ուներ: Ամբողջ մի մատենադարան ունենք՝ լի այդ զգուշացումներով: Բայց լավ է, որ մատենադարանը մեր ներսում լիներ և ոչ միայն շենքի մեջ, որպեսզի հավատայինք, հասկանայինք և մեր Աստծուն լսեինք:

Է, ու՞մ է պետք այն անհավատությունն ու հպարտությունը, որ այնուամենայնիվ աղետով, լացով ու կոծով է ավարտվում, այն էլ՝ լաց ու կոծ՝ արդեն.... դաժան աղետի իրականացումից, կորստից հետո միայն: Ավելի լավ չէ՞ նախապես վիշտն ու լացը՝ փրկությամբ, ինչպես Նինվեի օրինակում, քան դաժան ավերումից ու մարդկային մեծ կորուստներից հետո միայն:

Եվ ինչի՞ է նման «Ընկերոջիցս գողանամ, տանեմ իմ տունը լցնեմ» կամ «իմ քսակը հաստացնեմ, ընկերս քաղցած

էլ յոլա կգնա» հոգեբանությունը, որ ամենևին չի հուշում մերծավորին սիրելու, նրան օգնելու Աստվածային պատգամները:

Եվ երբ սոցիալական մտածողությունը հակադրություն է Աստծուն, հակադրություն սրտանց ողորմած լինելուն, հակադրություն՝ «մերծավորին անձի պես սիրելուն», հակադրություն՝ «ձրի առաք, ձրի տվեք» սրբավարք արտահայտությանը, հակադրություն՝ «քո ձախ ձեռքը չիմանա թե (մերձավորիդ) ինչ տվեցիր քո աջով»-ին: Մի խոսքով, հակադրություն է մեկ միաբան ազգ լինելուն, այդպես Աստծո կամքը գործելուն, հապա միթե ի վերջո պատժի ենթակա չպիտի լիներ նման անբնական և հակաստվածային որևէ ընթացք:

Այսօր էլ՝ մի՞թե այդպես չէ: Մեր 1/3-րդ մասը տոգում է, երբ չքավոր մասը հանապազորդ հաց գտնելը՝ արկած կամ օրվա բարեբախտություն է համարում: Երբ միմյանց ծառայելու սուրբ պատվիրաններով է ազգն ազգ դառնում ու պահպանվում: Երբ միմյանց ծառայելով և օգնելով է սերը սեր: Այսօր անգամ ընկերասիրությունն ասես որոգայթ է դարձել: Մինչդեռ՝ Աստվածային խոսքին, այսինքն թե՝ վերին մարդասիրություն և եղբայրասիրություն քարոզելով ապրելուն պիտի կողմ լինեինք: Իմացեք, որ Աստված կա, վախ ունեցեք:

Այսօր «իմ քսակը» պնդողների մեջ ո՛չ ընկերասիրություն կա, ո՛չ մարդասիրություն, ո՛չ աղքատասիրություն, ո՛չ էլ, առավել ևս՝ փոքր ինչ ողորմածություն: Առավել ևս՝ ո՛չ էլ՝ Քրիստոս և քրիստոնեություն: Կամ առավել ճիշտ աշխարհում արդեն կա՝ կեղծ Քրիստոս ու կեղծ քրիստոնեություն, և դրամի համար՝ երեսպաշտություն անելը սովորական երևույթ է դառնում, կազմվում է քրիստոնեություն նմանակողների և վարպետորեն ի փորի շահի կապկողների բանակներ:

Այսօր էլ, նոր գլոբալացման սոցիալական խոստումները հսկա չափերով տառացիորեն նույն մոլագար, անձնապաշտության սարդոստայնով դրսի «գրանտներով» որսում են մեր՝ հոգևոր գիտելիքից թշվառ, բայց ունեցվածքի խոստումներից հիպնոսացված միամիտ կամ անգետ հայրենակիցներին, ովքեր «դրսից» ի մահ որս անող խայծերն ու ուռկանները չգիտես ինչ հրաշքով «չեն տեսնում»: Շատեր, մի կտոր հացի, մի քանի կոպեկ շահի, մի կեղծ պատվի գայթակղությունից՝ դիտմամբ չեն տեսնում: Բնականաբար, իշխողների և սուտ հովիվների կողմից նման խայծերի հանդուրժումը՝ բարկացնում են Աստծուն և «տարերային» անվանվող աղետներ և մեծ պատիժներ են ներկրում իրենց մեջ, հասունացնում եկող օրերի մեջ երկնայինի Բարկության առավել պայթելու դրդումներով:

Դրսի այդ ծրագրերից մեկով, ինտեգրող ուժերը մի դպրոցում սպիդից պաշտպանվելու համար սեռական օրգանների ապահովիչներ են բաժանել աշակերտությանը: Ռադիոյով մեր մի խումբ մտավորականներ դատապարտեցին այդ եղելությունը: Որովհետև դեռահասը արդյո՞ք չէր գայթակղվի այդ «Նվերները» փորձել ու ընկնել անբարոյականության որոգայթը: Ինչպես Քրիստոս է ասում՝ վայը պիտի լինի գայթակղողին:

Երկյուղենք, որ անգամ ՄԵԾ ՆԵՐՄԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ ժամանակին դարձ չապրողների համար հիմք էլ չի թողնի. «ԵԹԵ ՉԱՊԱՇԽԱՐԵՔ՝ ԱՄԵՆՔԴ ԷԼ ՊԻՏԻ ԿՈՐՉԵՔ»,- ասել է մեր Տերը: Մեծ եղեռն և մեծ երկրաշարժ տեսած ժողովրդի համար այս առավել ևս պիտի զգոնացնող լինի: Եվ ամոթ է հայի համար հոգևորը թողած ապրուստի ետևից միայն վազել՝ ապագա դժնիկ ու ապագա պատիժ դիզելով:

Այսինքն, իզուր չէր Նժդեհի գարշումն ու մեծ անհանգստությունը ընդհանրապես գլոբալացման նկատմամբ և իզուր չէր Նժդեհը ԽՍՀՄ-ի ու թուրքերի չարությունը ինչ-որ տեղ՝ նույնը դիտում: Որովհետև Հայաստանը Նոյյան Հայրենիք լինելով, առավել ևս պարտավոր էր Աստծուն խոնարհվել և հե-

տևորդել, այլ ոչ թե խառնակվել գլոբալացման սուտ- ընկերային վիշապի, սոցիալական ախտերով ցնորողների և ցնորվածների հետ: Հին Կտակում ասվում է, որ Աստծո պատվարժանությունը թողած ժողովուրդներին Աստված Ինքն է Բաբելոնին խառնելու: ԱՅԴ ՓՆՏՐԵՑԻՐ, ԱՅԴ ԷԼ ՔԵԶ, ՃԱՇԱԿԻՐ ՈՒ ՏԵՍ, ՈՐ ՎԱՅԴ ԵՍ ՓՆՏՐԵԼ: Ուրեմն. եթե հոգևոր լինենք, այդ չենք փնտրի, այլ կուղղորդվենք դեպի Աստծո փրկության Ավետարանը:

**«ՉԱՐՈՒԹՅՈՒՆ է ՇՆՉՈՒՄ ԱՄԵՆ ԱՆԿՐՈՆ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՀԱՏԸ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՉԱՓՈՎ է ԸՆԿԵՐԱՅԻՆ, ԻՆՉ ՉԱՓՈՎ, ՈՐ ԴԱ ԿՐՈՆԱՇՈՒՆՉ է: ԿՐՈՆԱՊԵՍ ՏԿԱՐԱՑԱ՞Վ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ- ԵՒ ԱՀԱ ԱՅԼԵՒՍ ԵՐԿԻՆՔ ՉՈՒՆԻ ՆԱ, ՓԼԱՎ ՆՐԱ ՀՈՒՅՍԵՐԻ ԱՇԽԱՐՀԸ, ԱՅՍՕՐ ԱՅՆՏԵՂ ԷԼ ՄԱՀՆ է ԳՈՐԾՈՒՄ ԻՐ ԴԵՄ... ՉԿԱ ՄՇԱԿՈՒՅԹ ԱՌԱՆՑ ԿՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԳԱՑՈՒՄԻ: ՑԱՄԱՔՈՒՄ ԵՆ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԽԱՆԴԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՀԵՆՑ ՈՐ ԴԱ ԴԱՌՆՈՒՄ է ՆՅՈՒԹԱՊԱՇՏԻԿ»** *(ՆԺԴԵՀ. «ՌԱՉՄԻԿ» ԹԵՐԹ, 1943Թ.):*

Գրվածքն է զգուշացնում թե՝ Աստծո պատվիրաններն անտեսողները պիտի որոգայթվեն (գերավարվեն) Բաբելոնով, նույնն է՝ Գլոբալացմամբ: Այդպես եղավ երեկ՝ ԽՍՀՄ-ով, իսկ այսօր, քանի դեռ չենք հասցնում խրատվել, ապա Համաշխարհային մեծ գլոբալացման հզոր ալիքներն են կամենում Հայաստանին ևս իր մեջ ներառել ու խեղդել, խեղել, ապականել և ապա՝ կուլ տալ, ինչպես Հայտնության գլոբալացման վիշապն է ակնկալում կուլ տալ նորածին մանկանը: Այսօր հարկ է մեր հայրենասերներին զինվել Աստվածաշնչի մեկնողական խոսքով և հավատով, և վերին ներշնչմամբ Վարդանանց նման բարի դաշտ կազմել հայրենյայց վրա եկած վտանգների ու ապականման արհավիրքների առաջ: Մենք մեծ եղեռն տեսած ու մեծ երկրաշարժ ապրած ժողովուրդ ենք: Ասել է թե՝ մեզ վայել չէ Աստվածաշնչյան մարգարեությունների իմաստությունները անտեսել, մի կողմ դնել կամ չտեսնելու տալ:



Նժդեհը տեսավ «Հային խաչի վրա, իբրև Աստված Որդուն»,- որ խաչի վրա ծաղրվում էր բթամիտ, նյութապաշտ «ուժի իրավունքից» և ոգեկոչեց մեր նախնիների ու ներկաների զորությունը, ազնվականների զորությունը, Լույսի որդիների զորությունը՝ բթամիտ, «նյութապաշտիկ» (Նժդեհի բառն է) անասնուժից ծագած ուժի կեղծ իրավունքի դեմ: Իմաստությունն է, որ ծնում զորության այրեր: Մարդկության տիտաններ: Բնականաբա՛ր: Եթե մարմնավոր ուժի, թվաքանակի ծնած իրավունքը ճշմարտության իրավունքը լիներ՝ թուրքերն էլ Նարեկացի կունենային: Կամ Բաբելոնն էլ ամենքի Արարիչ Աստծուն կունենար իր սրտում և այլևս ապական Բաբելոն չէր լինի: Ճշմարտության իրավունքը մինչդեռ Խաչի վրա է: Բայց հաղթական և բոլոր ուժերին հաղթող Խաչի: Մնացածը՝ միայն ժամանակի հարց է կամ ժամանակների: Քա՛ջ լինենք և համբերատար: Մարգարեական Նժդեհը երբեք հուսահատության կողմ չեղավ: Որովհետև Օրհնյալ է մեր Փրկիչ Աստված, որ հույս է ու կյանք: Ամե՛ն:

Այստեղ լավ է հիշենք Սուրբ Սահակ Պարթևի մարգարեությունը, որ Համաշխարհային Նեռին հայերը՝ եկեղեցու զավակներով հաղթելու են, և հաղթողների մեջ ոչ քիչ թվով իշխանավորներ են լինելու: Օրհնյալ է Աստված:

## «ԱՍՏԾՈՒ ՓԵՇԻՑ ԲՌՆԵՑԵՔ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՅԱՅՑ»

Նժդեհի քրիստոնեականը խտացումներով է արտահայտվում: Նժդեհը նեղություններից ծնված իմաստությամբ, հոգատար մեծ եղբոր նման, որդուն սիրող հոր նման՝ ընթերցողին քաջալերում է Քրիստոսի նշած երկու ամենակարևոր պատվիրանների մեջ: Այդ պատվիրանները յուրաքանչյուր

ազգ ու ժողովրդի գոյության հիմքն են: Նախ՝ Տե՛րն Աստված, որ է ամենայնը, որով է ամենայնը, ապա՝ հայրենիք-ժողովուրդը, որ մեր մերձավորներն են, մեր ընկերները, մեր ազգակիցները: Որովհետև. եթե չլիներ Ամենայնը՝ ինքդ չէիր լինի և մերձավորներդ չէին լինի: Որովհետև՝ ոչնչից՝ ոչինչ, բարուց՝ բարին և չարից էլ՝ չարն է առաջ գալիս: Այսինքն, Քրիստոսի այն պատվիրանի ընբռնումն է Նժդեհի ասածը, թե. «ՍԻՐԻՐ ՔՈ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ ՔՈ ԱՆՁԻՑ ԱՌԱՎԵԼ (որովհետև նա է կյանքի աղբյուրը) ԵՒ ՍԻՐԻՐ ԸՆԿԵՐՈՋԴ, ԻՆՉՊԵՍ ՔՈ ԱՆՁՆ ԵՍ ՍԻՐՈՒՄ (որ կյանքի աղբյուրները միանալով՝ ծովանան իրենց մեկ ակունքի մեջ. այստեղ՝ երկրավոր հայրենիքում, ինչպես երկնքում է)», Նժդեհը թարգմանում է այդ ամենին հավատարմելու, հանձնառության մեկ պատգամով.

ԱՍՏՎԱ՛Ծ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ, որ հայ մարդու համար ամեն հարցի նախադուռը պիտի լինի:

Պիտի արքայականորեն մաքուր լինել, հրեղեն խոսքի մարգարե լինել այս բաները դիտել կարողանալու և Հոգով լեցուն՝ սրտանց հանձնառելու համար: Տգետը, փոքրոգին, խորամանկը չի՛ հանձնառի, թե նախ Աստված, ապա հայրենիքը: Ի բնե Իմաստունը կհանձնառի հանուն արդար արդյունքի: Իսկ մեծի նման խոստովանությունն իսկ՝ արդեն նաև փորձառություն և դաս է դառնում ընբռնողի համար: Ինչպես՝ Նարեկացու Մատյանը: Այն թեպետ խիզախ խոստովանությունների շարքերից է բաղկացած, բայց այնքան լի է Աստծով, մեղք գործելու պատճառով ափսոսանքի և այնպիսի՜ մեծությամբ և ահռելի, բնական հառաչանքներով, ապաշխարանքի այնպիսի՜ խորամուխ, բանական ջանադրությամբ, որ խոստովանությունները դառնում են արդեն կյանքով լեցուն հաղթանակներ և պատվար՝ այդ նույն մեղքերի դեմ, որ խոստովանությամբ թվարկվում են: Որովհետև գաղտնիք չէ, որ մեղք խոստովանողն սկսում է մի օր զզվել իր խոստովանած մեղքից, իսկ մեղքից հեռանալն արդեն՝ սկսում է առողջացնել մարդուն՝ թե՛ հոգեպես և թե՛ մարմնապես: Շատեր երկար տարիներ և ավելի առողջ կապրեին և ներքին խաղաղությամբ կապրեին, եթե ժամանակին իրենց մեղքերը խոստովանեին Աստծուն և միմյանց առաջ: Եվ հակառակը. շատեր իրենց կյանքն են կրճատում՝ իրենց մեղքերը չխոստովանելով միմյանց ու Աստծուն: Նույնն է թե՝ Նարեկով կամ ի սրտե ջերմեռանդ խոստովանությամբ՝ Կյանքի սերը հաղթանակ է տոնում ամենուրեք և ամենքի մեջ, ովքեր անկեղծորեն քրիստոնեավայել են խոստովանում, բնական է, արժանի ընկերներին և ոչ թե անարժաններին: Ճշմարտությո՛ւն, ճշմարտությո՛ւն և առավել ևս ճշմարտությո՛ւն. այս բանին են հետամուտ մեծերը, որոնց խոստովանություններն անգամ հաճախ վարվելակերպի, փորձառության և սրբազանը ճանաչելու, Կյանք մտնելու մեծ բալասաններ են, վիմական բալասաններ, երբ անկեղծորեն հարգենք, ընդունենք նրանց հաղթանակները: Դեղ կարող են դառնալ՝ փորձության մեջ գտնվողների համար և կյանքի դպրություն՝ հավատավոր ժողովուրդներ սնուցող:

Մեծերը՝ սուրբ են և ակնածելի: ԵՎ մարդկության ճշմարիտ մեծերն են մեր հոգևոր Հայրենիքը կառուցում: Իր վստահեցնող հավատով սուրբ և ակնածելի է նաև հոգևոր մեր Նժդեհը: Նժդեհ մարգարեն:

Խոստովանությունները նաև վերացնում, ջախջախում են կուռքերին: Խոստովանողն արդեն կուռք չէ, որքան էլ մեծ լինի, այնքան քեզ հեռու է պահում իրեն կուռքի նման բարձրացնելուց: Ընդհակառակը. եթե ուշադիր լինես, իր անկեղծությամբ քեզ էլ է խոստովանել տալիս, և Աստված նրանց միջոցով հովվելով քեզ՝ քայլ առ քայլ մոտեցնում է Իրեն՝ Սիրո աղբյուրին: Այդ է պատճառը, որ ճշմարիտ մեծերն անկարելի է, որ երբևէ կուռք դառնան: Որովհետև հոգով կենդանի են, իսկ ինչ հավիտենական Կյանքի մեջ է և կենդանի՝ նա մաս է,

մասնիկ Քրիստոսի բանական մարմնի ու այդպես կուռք երբևէ չի դառնում: Օրինակ՝ անհեթեթ կլիներ, եթե մեկն Աստծուն կուռքի պես սիրեր: Դրանով կբարկացներ Աստծուն և ինքն էլ կապականվեր: Նույնպես և՝ Աստված դեմ է որևէ մարդու կուռք դարձնել, մարդուն կուռքի պես սիրել, որքան էլ նա մեծություն լինի: Տգետները կամ մոլորվածները միայն կարող են ճշմարիտ մեծերին կուռք համարել, բայց նրանց գնահատանքը մեզ համար երբևէ չափանիշ չէ: Ինչպես որ չափանիշ չէ հիվանդի հիվանդ կարծիքը բժշկության մասին կամ խեղ մարմին ունեցողի կարծիքը՝ կատարյալ մարմին ունենալու մասին: Առանց Աստծո ո՞վ կարող է կատարելանալ այս կամ այն հարցում: ԱՌԱՆՑ ԻՆՁ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՈՉԻՆՉ ԱՆԵԼ,- ասում է Հիսուս Աստված Ավետարանում: Կուռքը ընդհատում, սահմանափակում է կյանքը: Կուռքը մոլորեցնում է, երբ սատանան գայթակղում է հոգին նյութականացնելով գեղեցիկ որևէ պատկերով պատրել ու կորստի գայթակղել մարդուն, այդ պատկերը Աստված համարելով՝ նա այդպես երևույթը կուռք է դարձնում և խաբվողին մահվան կեր: Իսկ ինչ կուռք է, մի օր փլուզվում է և մարդը մնում է ամայի՝ իր շեղ սիրո պատճառով առաջացած ավերակների վրա: Մեծերը կարող են լինել հենման չափանիշ, եթե այդ չափանիշը Աստծոն գնալով ես ինքդ լրացնում: Որովհետև մեծերն էլ մարդ լինելով սխալներ ունեն, հանկարծ չբռնվես նրանց սխալներից: Եթե Աստծով ես, չես բռնվի և մեծերը կմեծացնեն քեզ՝ քո սիրո համեմատ, իրենց շնորհների համեմատ: Ուստիև՝ որևէ մեկին, մանավանդ մեծերին կուռք դարձնելը՝ մեղք է: Վնաս կուռք դարձնողին: Ով որևէ մեկի կուռք է դարձնում, նա դեռ չի ճանաչում, դեռ չի սիրում նրան: Եվ իր բժշկումը չի որոնում: Նրանք են մեծերին կուռք դարձնում, ովքեր տգետ են, ճշմարտությամբ հասու չեն նրանց գործին: Կուռք դարձնողները անգիր կապկումների են սովոր, ստեղծագործ հոգի չունեն և անգիրներով են բավարարվում: Եվ եթե մեծերից մեկն ու մեկին որպես կուռքի ենք մոտենում՝ այդ մեր մեղքի կաղությունից է միայն: Որովհետև կուռքը ոչ թե կենդանի կյանքն է, այլ քարացածության է պարտադրում զարգացումը, թե իբր այլևս աճ չկա, այս գագաթնակետն էր, ամենակատարյալը: Ես հասել եմ որոշակի կատարելության, բայց իմ հասած կատարելությունը երբևէ ամբողջականը չէ, անսահմանը չէ, որ Աստված է և Աստված Սեր է իրեններին հավիտենարժեք դարձնող: Իսկ մենք, երբ Աստծո Սիրո ճառագայթն ենք ներկրում, և ներկրում ենք, որովհետև դա է մեզ կյանք, այդ չի նշանակում թե Նրա Սիրո մեջ լինելով՝ Ամբողջականից մասնակի ճառագայթներ արտահայտելով՝ հավասարվեցինք Նրան՝ Ամբողջին: Սակայն երբ հասկանում ենք, որ Աստված ջանում է մեզ ամբողջապես Աստվածացնել, այդժամ առավել ենք սիրում նրան և հեռանում ամենայն կռապաշտությունից: Այդտեղից է սկսվում նորմալ մարդու խաչակրությունը: Ժամանակի մեջ է Աստծո ողորմածությունը և գթությունը, ապա երբ իրենով մեզ կերտելու գործընթացն ավարտի, այդժամ պիտի կտրի մեզնից ու կրակի մատնի մեր բոլոր ավելորդությունները, որ հավիտենական կյանքի համար անպիտան են կամ հավիտենական Սիրոն են խոչընդոտում: Այդ էտումից կրկին մենք ենք շահում, որովհետև ազատվում ենք չար սովորություններից, որ արգելակ էին մեր հոգևոր աճին և մեր Աստծո հետ հոգով մեկանալուն, որտեղից էինք նախքան ադամական անկումը:

Անձնապաշտն իր ընկերոջն անկարող է իր անձի պես սիրել, որովհետև ինքն իրեն որպես Աստծոն է պաշտում: Կորած մարդ է նմանը: Վախ չունի Աստվածճանաչություն չունենալու կամ միայն արտաքնապաշտ լինելու պատճառով: Երբ իմաստուններն ասում են. «Տիրոջից վախեցողն է իմաստուն դառնում»: Որովհետև, ով Տիրոջից վախենում է, նա իր հավիտենական սերն ու կյանքը կորցնելուց է վախենում, քանի որ

ադամական մարդ է մեղավոր: Եթե Տիրոջից վախենաս քո կյանքի համար, ապա և նրան անսահման կսկսես սիրել՝ քեզ անսահման սիրելու և կյանք տալու համար: Իսկ երբ ճշմարիտ սիրես Քրիստոսին՝ վախդ կանհետանա, որովհետև Աստծո մեջ վախ չկա:

- Կռապաշտների Աստվածն իրենց որովայնն է,- ասում է Պողոս առաքյալը: Որևէ մարդու ունեցած կատարելությունը, շնորհը՝ Անսահմանից մաս պիտի դիտենք, իսկ եթե մասն ամբողջականն ենք համարում, որ անհնար է և սուտ, ապա այդքան իսկ կռապաշտում ենք ուրեմն: Այդքան իսկ սակավացնում ենք Աստծո պատկերացումը մեր մեջ: Որովհետև մարդու ոտն երբևէ չի նշանակում մարդու ողջ մարմինը, այլ՝ մասը մարմնի: Եվ ոտը որպես ողջ մարմին դիտողը՝ հպարտանում է միայն իր տգիտության պատճառով: Ինչպես ժողովուրդն է ասում. «Անսիրտ մարդը չի փափագում ճշմարիտ Աստվածանաչ լինել և ողջ կյանքն էլ Աստվածաշունչ կարդա, նույնն է մնում կամ կարող է դառնալ ավելի վատթար՝ գայլ այսինքն»: Ինչի պատճառով և հերձվածներ կան կամ շատ մոլորվածներ:

Ես իմ որդուն ասացի. որդի, ես մարդ եմ մեղավոր և սխալական և ապաշխարող՝ սխալներիս համար, մեղքերիս համար էլ՝ խաչս եմ տանում կարողացածիս չափ: Որպեսզի իմ սխալները հանկարծ ճիշտ չհամարես և դրանք չընկրկնես, և դրանց պատճառով իզուր չչարչարվես, և դրանցով վայր չընկնես՝ ի սրտե կարդա Ավետարանը, Աստվածաշունչը լավ ուսումնասիրիր, և իմ սխալները կտեսնես, կզգուշանաս ու հեռու կպահես քեզ դրանցից: Երբ քո մարմնավոր հայրն եմ, ինձ կուռքի պես մի սիրիր և Աստված կազատագրի քեզ իմ սխալներից ու թերի մասերից, իմ բոլոր մեղքերից: Սա արդեն զարգացում է: Ճշմարիտ զարգացում: Որովհետև հաճախ չե՞նք հայրերս կուռք դառնում մեր որդիների համար և չարաչար կասեցնում նրանց հոգևոր զարգացումը, նրանց անհատականացումը: Նմանվել մե՞զ, մեր մեջ եղած բարուն՝ այո, բայց ոչ մեր անկատարություններին, որոնց համար ապաշխարում ենք: Եվ մեզ հարկ է այնպես ապաշխարել, որ մեր սխալների պատիժը մեր որդիների վրա կասեցվի: Կամ հնարավորինս կասեցվի: Այլ մարդուն հարկ է ձգտել Տիրոջը նմանվել, այդ է ամենքիս էլ կատարելացնում: Որովհետև ինչ կուռք է՝ պատրանք է, զարգացում մահացնող, այսինքն թե՝ կեղծը որպես ճշմարտություն ներկայացնելով է խաբող մեզ և մեր երկրավոր կարճ ժամանակը չարաչար վատնող: Կեղծը ճշմարտախառն՝ մարդուն կարող է Հայր Աստծու առաջ խորթ զավակ դարձնել, ինչպես որոշ քարոզիչների օրենքներին գայթակղեցնող գրականությունը, երբ մեղավորի համար փրկությունը Ավետարանի խոստումներով է, այսինքն՝ հավատով և ոչ թե օրինապահությամբ, քանի որ մեղավոր մարդու օրենք պահելը ծանր լինելու համար շնորհն եղավ: Օրենքով դատ անելն ու դատվելը դյուրին է, բայց շնորհով է հնար մեղքի համար անկեղծ կուրծք ծեծել՝ Տիրոջով արդարանալ, որովհետև ամենքս էլ մարդ ենք ադամական մեղանչման պարտքերով և, ըստ այդմ՝ ներող մեր նմանակիցներին, ովքեր շնորհներով են ընթանում:

Չէ՞ որ Տիրոջ մանկանց համար Սուրբ Հոգին Ուրախականն է, Մխիթարողը և Շնորհաբերը ի բժշկում Հանդիմանողը և ոչ թե նրանց այսահարողը: Եթե մեղավորից նրա մեղքի դիմաց օրենքի դատ պահանջես, ապա էլ ու՞ր կմնա Քրիստոսով փրկությունը: Կեղծ քրիստոնյա չե՞ս արդեն: Քրիստոս իրավունք ունի դատելու, բայց նման դեպքում չի դատում, ինչպես շնացող կնոջն էլ չդատեց, այլ ցույց է տալիս թե որոնք են մարդու համար երանելիները և որոնք՝ վայերը, որպեսզի քաջալերի շնորհով ընթանալ և ոչ թե օրենքի ծանր լծով ու դատով, որպեսզի սրտով արժանավորները, ճշմարիտ հավատավորները մտնեն հոգևոր ասպարեզ, իսկ սրտով խոզերը

դուրս մնան: Սակայն խոզերը խոզ էլ մնում են ամեն տեղ, նրանք իրենց անձը Աստծուց առավել սիրելու պատճառով, այլոց անվամբ (մորթիով) եկեղեցի խցկվելով, իրենց անձը կուռք դիտել տալով, իրենց փափուկ, գարշակեր մարմնին փշրանք իսկ չարչարանքներ չտանելով, և Քրիստոսի անեղ անունը գործադրելով՝ իրենց սուտը կյանքին խմորելով՝ չեն էլ տեսնում, որ այդպես օրըստօրե, կամա թե ակամա, հակաքրիստոնեությանն են ընդառաջ ելել: Ցավոք, Քրիստոսի անունը գործադրելով են այդ անում, որ հավելյալ մոլորեցումներ կարող է ավելացնել ու ավելացնում է:

Քրիստոնեությունը կուռքեր չունի:

Քրիստոնեության մեջ կան առաքյալներ, մարգարեներ, Հայրեր, սրբեր, քահանաներ, նահատակներ, իմաստուններ, սուրբ զորավարներ, եղբայրներ, բարեկամներ, բայց ոչ երբևէ կուռքեր և ամենքն էլ կենդանի են՝ 2000 տարի առաջ ծնված լինեն թե մեր ժամանակում: Որովհետև «Աստված՝ կենդանիների Աստվածն է» և ոչ թե դատարկ, մեռած անունների, և ոչ թե՝ արձանների վերածած գերեզմանների: Քրիստոնյաները մեկը մյուսի համար օգնական և միաբան են Աստծո մեկ Հոգով, և ամենքն էլ՝ նույն Արեգակի ճառագայթներից են ու Տիրոջ նույն հաղթանակի մեջ, որ է ԱստվածՈրդին՝ կենդանի Քրիստոս: Եվ (բոլոր քարոզիչները) մեծ են այնքանով, որքանով (խոսքով թե գործով) Քրիստոսին են մատնացույց անում՝ որպես ճշմարտության Հովիվ, Կյանք, Դեղ, Բժիշկ, Ուսուցիչ, Ուղեկից, առավել կատարյալ, քան մարդը, այսինքն՝ Աստծուն են քարոզում մարդու մեջ և չեն կեղծում: Ամենքն էլ (մեծերը) Քրիստոսին՝ Ամենամեծին են արտահայտում և ոչ իրենց անձերը կամ ամենասակավ՝ իրենց անձերը: Եթե իրենց անձերը արտահայտեին և ոչ թե Աստծուն իրենց մեջ, ապա այդքանով իսկ կզզվեինք նրանցից: Եվ մարդկության մեջ նա է առավել մեծ, ով իր վարքով, ով իր միջոցով, իր կյանքով առավել է



Քրիստոսին Հոգով արտահայտում, որպես Բան ու Բանականություն, այսինքն՝ կենդանություն, որով եղավ ամեն բան և անմահականությունը մարդուն: Եղավ ճշմարտությունը, անվերջ կենսասիրությունը և անձանձրալի Կյանքն Աստծով: Եվ երգում է նման մարդը և կյանք է նրա երգը՝ բանական օրհներգություն և սաղմոս:

Ուրեմն ինչու՞ Նժդեհն այնքան նվիրական էր ընդունում Աստծուն՝ Հայրենիքն էլ ետնադասելով Աստծուն. բնական է, նա վստահ էր, որ Հայրենիքի կյանքն Աստծուց է: (Այդպես էր և Վարդան Մամիկոնյանը, որովհետև առանց հոգևոր կյանքի առաքինի Հայրենիք չի լինում, մանավանդ՝ հոգևոր Հայրենիք): Ոմանք ասում են նախ՝ Հայրենիքը, ապա Արարիչը: Այսինքն՝ նախ անհոգի և անկյանք հողատարա՞ծքը: Երիցս ոչ նման խեղ մտքին:

«Մեր Հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստծու փեշից՝ դուք էլ ինձանից բռնեցեք» ասելով, Նժդեհը ոչ այնքան իր ընկերներին նկատի ունի, ովքեր պիտի իր նման ազգի բանականության հաղթանակների լուծը կրեն, այլ նրանց, որ սիրելի են, բայց դեռ հասու չեն հանուն ազգի ավելի ծանր խաչ վերցնել. նրանց՝ որ դեռ աշակերտում են և դեռ մշակ չեն հանուն Հայոց, հանուն մարդու: Այսինքն՝ դպրոցի, ԲՈՒՀ-ի աշակերտներին, մտավորականների դեռ կազմավորվող մի խավին, ժողովրդի մի խավին է ասում, որ դեռ լիարժեք մշակ չեն և իրենով կերտվելու քաղցը դեռ չեն հագեցրել: Բնականաբար իր նման խաչ կրողներին Նժդեհն այլ բան չի ասում, քան թե՝ «Ես բռնել եմ Աստծու փեշից՝ ԴՈՒՔ ԷԼ ԻՆՁ ՆՄԱՆ ԱՍՏԾՈՒ ՓԵՇԻՑ ԲՌՆԵՑԵՔ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆՅԱՅՑ»: Հիսուս իր աշակերտներին, երբ նրանք արդեն պատրաստ էին առաքելության, թեպետ Տերն էր նրանց, բայց նրանց եղբայր անվանեց, այսինքն՝ արդեն ավելի բարձր տեսավ նրանց, քան առաջ էին՝ որպես աշակերտ: Ի վերջո, աշակերտելը ոչ թե հա-

վիտենական մի բան է, այլ ընթացք, ձեռք բերված գործնական իմացություն, որ աշակերտելու արդյունքում՝ գործակիցը և նմանը դառնաս նրա, ում աշակերտում ես: Նժդեհին աշակերտողի համար բնական և կենսատու կաթ է «ԴՈՒՔ ԷԼ ԻՆՁԱՆԻՑ ԲՈՆԵՑԵՔ»- ը: Բայց հասուն մշակի համար, ինքն իրեն հայրենասեր ճանաչողի համար արդեն պահանջ է դառնում Նժդեհի բուն նպատակը՝ «ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱԽՏԻ ՀԱՄԱՐ ԴՈՒՔ ԷԼ ԻՆՁ ՆՄԱՆ ԱՍՏՈՇ ՓԵՇԻՑ ԲՈՆԵՑԵՔ, ՈՐՊԵՍԶԻ ՁԵՐ ՀԵՏԵՒՈՐԴՆԵՐՆ ԷԼ ՁԵՁԱՆԻՑ ԲՈՆԵՆ՝ ՄԻՆՉԵՒ ԻՐԵՆՔ ԵՒՍ ՁԵՐ ՆՄԱՆ ՀԱՍՈՒՆԱՆԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆՅԱՅՑ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՔ ԵՎՍ ԱՍՏՈՇ ՓԵՇԻՑ ԲՈՆԵՆ»:

Այս ասում եմ այն բանի համար, որ ոմանք իրենց գիտակցական կյանքի ողջ ընթացքում, հասուն այրեր իրենց համարելով, չեն առաջանում այնքան, որ Աստծո փեշից բռնեն: Երբ յուրաքանչյուր առաքելության, նաև Նժդեհի առաքելության նպատակը նույնն է՝ մարդուն «նշանել» իր Փրկիչ Աստծո հետ: Այդժամ է միայն այդ մարդը ապահով դառնում: Եվ իր Փրկիչ Աստծո հետ նշանված Հայրենին է ամենաապահովը ու ամենայն փորձություններ հաղթանակողը: Ամե՛ն:



## «ԿՅԱՆՔՈՒՄ ԽՂՃՄՏԱՆՔԵՍ ՉԱՏ ԵՍ ՃԱՆԱՉԵՑԻ ԵՐԿՈՒ ԱՅԼ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՒՍ՝ ԱՍՏՎԱԾ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ»

**«Աստծո հողմաղացները աղում են հանդարտ, բայց շատ մանր: Հայաստանի նախկին պետանվտանգության նախարար Կրիմյանը գնդակահարվել է որպես դավաճան: Այդ գազա՛նը գերեզմանեց ինձ»** *(ՆԺԴԵՀ. Եղբորն ուղղված նամակից):*

**«Կյանքում խղճմտանքես զատ ես ճանաչեցի երկու այլ դատավորների ևս՝ Աստվա՛ծ և ժողովո՛ւրդ: Առաջինի դեմ մեղանչեցի...»** *(ՆԺԴԵՀ. Հատընտիր, Բանտային գրառումներ):*

**«Մեր օրերի հակակրոն հովերը պիտի բացատրել մարդկային տիպի հոգևոր անկատարելությամբ: Առողջ հոգեվիճակ չէ՛ անկրոնությունը: Մարդը միշտ էլ նախ հեռանում է իր նմաններից և ապա հետո՝ իր Աստծուց: Ո՛վ հեռանում է կրոնից՝ անձնասպանորեն կտրում է իր զարկերակը: Իր Արարչի դեմ գործողը պիտի չքաշվի գործել և իր նմանների դեմ»** *(ՆԺԴԵՀ. «Ռազմիկ« թերթի թղթակցին տրված հարցազրույցից):*

Ինչպես հայտնի է՝ խղճմտանքը Աստծո ներկայության ժողովրդական ըմբռնումն է: Խղճմտանք ունենալն իսկ՝ քո ներսում Աստված ունենալ է նշանակել և նշանակում: Անխղճմտանք մարդը նշանակել ու նշանակում է՝ Անաստված մարդ: Անգամ Աստծո Հին կտակարանային օրենքի ու պատվիրանների հետևորդները շատ հեռու են ճշմարիտ Աստծուց, քան Քրիստոսով խղճմտանք ունեցող մարդիկ, որոնք Սուրբ Հոգուց երկնքի որդի լինելու ճառագայթ ունեն իրենց մեջ ԽՂՃՄՏԱՆՔ անվանումով: Նժդեհի իմաստասիրական գրվածքները, մեծ մասամբ, Աստծո Հոգով եղած հայտնություններ, ճանաչումներ, վկայություններ են, հոգևոր պայծառատեսության վրա հիմնված համոզումներ. հաճախ՝ անկասկածելի վստահարանների վերածված բանական ոսկիներ, հստակ խղճմտանքի արտահայտություններով, որ նշանա-

կում է՝ Տերն է ապրել նրա մեջ: Եվ հավատ և հույս ունենք, որ Նժդեհի նշած «Աստծո հողմաղացները» մի օր էլ պիտի «Մանր աղան» հայկական հոգևորի, Հոգևոր Հայաստանի դեմ եղած բոլոր որոգայթային հարցերում, որսալով և վնասազերծելով այդ որոգայթները լարողներին:

Եվ, ցավոք, երկրավոր քաղաքականության դաշտում այսօր քչերն են ճանաչում Աստծուն որպես դատավոր, ինչպես Նժդեհն էր ճանաչում: Սակայն որքան էլ ուշացնի, Աստված մահացու մեղքն ու հանցանքը անպատիժ չի՛ թողել և չի՛ թողնի, վստա՛հ և վստա՛հ եղիր,- վստահեցնում է Նժդեհը:

- Առաքելական թղթերից գիտենք, որ Աստված հաճախ ուշացնում է դատաստանը, որպեսզի ավելի մեծ թվով ապաշխարողներ, ի սրտե դարձի եկողներ լինեն, որ նշան է թե. «Աստծո հողմաղացները հանդարտ են աղում»: Սակայն մեծ հանցագործների համար համբերության ժամանակը լրանալիս. «ավելի մանր են աղում», այսինքն՝ պատիժն ավելի մեծ է լինում, որովհետև ոչ թե միայն մարմնի սպանդի են արժանանում, այլ նաև՝ հոգևոր դատաստանի, որ ավելի սաստիկ շարունակվում է մարմնի մահից այն կողմում էլ. հավասար հոգու դեմ կատարած հանցանքներին (հայհոյանքներին), որ Հիսուսի խոսքի համեմատ. «Ոչ այս աշխարհում է ներվում և ոչ մյուսում՝ (մահից այն կողմ էլ)»: Օրինակ. Պետրոս Առաքյալի դատերից մեկի ժամանակ. Սուրբ Հոգուն խաբող ամուսինները մեռած ընկան Առաքյալի ոտքերի առաջ: Սրանց դատաստանը, սակայն, պիտի շարունակվեր մահից այն կողմում էլ, որովհետև Սուրբ Հոգուն էին ստել: Իսկ ստելու մասին, մեծ Նժդեհն իրավամբ ասում է.

«ՍՏԵԼԸ՝ ՀԱՅՀՈՅՈՒԹՅՈՒՆ է»:

Այս բանալիով, երբ ընթերցում ենք Հիսուսի Խոսքը, թե. «Ամենայն մեղք ու հայհոյություն պիտի ներվի մարդկանց որդիներին, բացի Սուրբ Հոգու դեմ ուղղված հայհոյությունից»:-



Հասկանում ենք, որ Նժդեհի խոսքը նման ուխտադրուժ ստի և նման հայհոյության մասին է:

«ՍՏԵԼԸ՝ ՀԱՅՀՈՅՈՒԹՅՈՒՆ է»:

Սքանչելի՜ իմաստությամբ է ասելիքը գտնված: Բազմաթիվ մաքրամոլ թվացող պոռնիկներ և իժաց զավակներ պիտի բռնվեն «Աստծո հողմաղացների» Նժդեհյան Աստվածաշունչ այս պայծառախոսությամբ:

Ինչպես Նժդեհի և հոգով այլ ուժեղների դեպքում ենք տեսնում, Աստծո սիրելին կարող է անգամ բանտում, շղթաների մեջ էլ հաղթել աշխարհին: Հոգով ազատ լինելով է հաղթում: Հոգին ազատ է շղթաներից: Բայց ազատության մեջ գտնվողներ կան, որոնց Տերունական ահասարսուռ դատն է սպասվում՝ անդենային պատժով, եթե իրենց ընձեռված ապաշխարության ժամանակը ի բարին չգործադրեն, եթե երկյուղով չբարեգործեն, եթե չարաշահեն, եթե չգործադրեն դարձի համար իրենց տրված «անցնող ժամանակի սերն ու շնորհը, կարճ ընթացքը»: Նժդեհը բանտում վախճանվեց՝ երկար տարիներ մարմնապես խաչյալի նման չարչարվելով, սակայն հոգով ազատ մնաց և օրեօր ավելի է պայծառանում, իսկ շատ դավադիր- մարդասպաններ իրենք հայտնվեցին ճշմարիտ դատաստանի մեջ, որ նրանց ոչ միայն մարմնավոր, այլև հոգևոր խայտառակությունն էր ցույց տալիս և ժողովրդի մշտական արհամարհանքի վարձը-վաստակեցին: Պատմությունը ներքին մի զզվանքով առանձնացրեց նրանց, և զզվանքը նրանց արարքների հանդեպ փոխանցվում է սերունդներին: Եվ Նժդեհին դատող ԽՍՀՄ-ն ինքն ևս դատվեց փլուզման: Ասես չէր էլ եղել: Դանդաղ են պտտվում Տերունական հողմաղացները, բայց երբ Սուրբ Հոգուն որևէ հայհոյչի (ստոր, մատնիչի, մարդասպանի, գործով անարգողի, թալանողի, զրկողի, հոգեխեղի, խարդախողի) ժամանակը երբ հասնում է, այդժամ սկսում է «մանր աղալ», մինչև «ամենավերջին նա-

քարակիթը՝ պարտքի հոգևոր գրոշը», և մահից անդին էլ կշարունակեն մանր աղալ:

Մեր համոզմամբ, չապաշխարած մեղքերի իսկական վայնասունը՝ մահից այն կողմում է սկսվում կամ հենց հոգին տալու պահին, որովհետև չափորոշիչները, ըստ Աստծո պատվիրանների՝ մնալու են, իսկ ապաշխարության պայմաններն ու ժամանակը նվազելու, հավասարվելու զրոյականի: Ավարտվելու են: Որովհետև ոմանք անմահ Հոգին փորձեցին սպանել, մեռնող մարմին դարձնել: Ուստի Սատանան մեր՝ մարդկանցս կործանումը ցանկանալով, որոնում է այս կյանքում մեզ մոլորեցնել՝ մեր ժամանակը վատնել տալ, խաբելով թե, իբր պատասխանատվություն չկա, որպեսզի թե՝ տեղյակ չլինենք մահից հետո, մանավանդ այն կողմում ինչ դատաստան է սպասվում՝ երբ. «Աստծո հողմաղացներն սկսեն ավելի մանր աղալ»: Այն ժամանակ, երբ մարդն «Իր խոսած յուրաքանչյուր անմիտ խոսքի համար անգամ սկսում է պատասխան տալ»,- սովորեցնում է Հիսուս: Այնպես որ, Նժդեհ սպանողներին կթվա, թե Նժդեհին սպանեցին, մինչդեռ մահից այն կողմ Նժդեհը արևի նման շողշողում է, իսկ սպանողները, խարդախողները, ատողները, խեղողները, ստողները հայտնվում են իրենց իսկ դատաստանի տակ: Եվ սատանայի բոլոր մոլորանքներին ճշմարտության ճանաչմամբ ով այս աշխարհում հաղթի, ամիջապես էլ ջանում է թողնել այս աշխարհում ամեն գայլային գայթակղություն և... ժամանակին ձգտում ապաշխարել: Այդ է իմաստությունը, որովհետև ոչ մեկս էլ այնքան մեծ, անսահման ժամանակ չունենք այս անկայուն, անցողիկ աշխարհում, թե՛ երեխա լինենք և թե՛ ծեր: Որովհետև ժամանակի լծակները թեպետ կոտրվում են անհատի մարմնի համար, սակայն կյանքը ոչ թե այդպես ավարտվում է, այլ նոր սկիզբ սկսում: Նժդեհյան հոգևոր ուսուցանումները տանում են մարդուն այն բանին, որ չլինի թե այստեղ հնարավորություն ունեցողը այն կյանքում հայտնվի Նրա ձեռքում, Ում այստեղ հակառակորդ դարձավ՝ անօրենություն գործելը սիրելով: Քանի որ այդ է արդար ճշմարտությունը, երբ ուղիղ դիտենք ու դատենք:



**«Ո՞րն է պատմության ամենաուսանելի դասը.**

**- Չկորցնել չափի զգացումը, երբ դիպվածը մեր ախոյանին մեր ձեռքն է հանձնել: Վաղը կարող է պատմությունը մեր ախոյանին կարգել դատավոր՝ մեզ դատելու համար: Եղի՛ր արդար, արդար եղիր, քանզի դա՛ է լավագույն քաղաքականությունը: Գիտցի՛ր, մեր արդարությունից մենք ենք առաջին շահողը:**

**Մեր երկրագնդի վրա դեռ ոչ ոք չի զղջացել արդար լինելու համար:**

**Ճշմարտորեն զորավորն է արդար:**

**Եվ միայն արդարն է ճշմարտորեն զորավոր»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

Այդպես է եղել բոլոր ժամանակներում:

Առանց Աստծո կորած է մարդ արարածը. այդ եզրահանգմանն է հանգում Նժդեհը և Կրոնից մարդու հեռանալը դիտում է որպես տգիտությամբ ինքնադատաստան, ինքնասպանություն ու մարդասպանություն: Ուստի երկրիդ մեջ լավագույնս պիտի Ավետարանը՝ Սրբությունը աշխատի, որպեսզի մարդը հանցանքներից ետ դառնա և Աստծո դատաստանից զերծ մնա: Դատաստան, որ մարդու մահից հետո է լիարժեք սկսվում և ոչ թե մահով վերջանում: Մահով վերջանալը ինչպես խաբում են ոմանք կամ տգետներն են թութակում այլոց ստածները:

«ԻՐ ԱՐԱՐՉԻ ԴԵՄ ԳՈՐԾՈՂԸ ՊԻՏԻ ՉՔԱՇՎԻ ԳՈՐԾԵԼ ԵՎ ԻՐ ՆՄԱՆՆԵՐԻ ԴԵՄ»- ահա կարևոր այն իմաստությունը, որ Աստված մարդուն մատուցում է Նժդեհի ընտիր շեփորումով: Այն քարոզիչները, հոգևոր և քաղաքական գործիչները, ովքեր Աստծո խոսքերը փոփոխում են կամ իրենց խոսածի, ի-

ռենց աղոթածի հակառակն են ապրում, ստում ու ստագործում, մի՞թե իրենց Արարչի դեմ չեն աշխատում: Այդժամ, բնականաբար, չեն վարանի իրենց նմանների, իրենց ժողովրդի դեմ գործելն էլ: ԵՎ այդպես էլ անում են՝ ի դատաստան իրենց վաղվա:

Ուստի, մեր ժողովրդին. **«Հոգով Վերանորոգել է պետք»**,- համոզված է և վստահեցնում է մեզ մեծ Նժդեհը:

Քանի որ՝

**«Մարդը, գաղափարի ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՐԴՆ է ՄԵՌԵԼ, մարդն է պակասում մեզ եսականության ու մաղձի, նյութապաշտության ու շահի այս անփառունակ ու կոշմարային օրերում»** *(ՆԺԴԵՀ. Երկեր, հտ. 2):*

Իսկ մյուս կողմից էլ պատմությունը՝ բնության, Աստծո խղճմտանքով զավակներից պահանջարկու է դառնում իրենց նախնիների մեղքերի դիմաց:

**«Պատմությունը որդիների մեջ հալածում և պատժում է հայրերի մեղքերը հին»** *(ՆԺԴԵՀ-Ցեղի ոգու շարժը):*

Ելքը՝ հոգով վերանորոգվելն է մնում:

- Նժդեհը կյանքի ճանաչողությամբ վկայում է այն, ինչ Հին Կտակարանի Օրենքից հայտնի է մեզ: Որդիները մինչև 3-4 սերունդ պարտավոր են մահացած հայրերի համար այն ամենում, որ նրանք (հայրերը) զլացել են Աստծո փրկարար կամքով ապրել-կատարել, այսինքն՝ իրենց իսկ և որդիների ու թոռների օգուտի դեմ են ապրել և ստագործել: Եվ չարաբախտություն է, երբ որդիներն իրենց հայրերի նման անփառունակ ապրեն՝ չապաշխարելով հայրերի մեղքերը. «եթե իրենց հասանելիք խաչը չկրեն»: Մանավանդ, երբ Քրիստոս այդ բեռը թեթևացնում է, օգնում «յուրաքանչյուրիս՝ մեր անհատական խաչը շնորհների մխիթարությամբ վերցնել»: Օրենքով այդ անհնար դուրս եկավ. Հարկ էր մեզ հետևել Շնորհի՛ Ավետարանին: Այն ինչ որ հրամանով անկարելի էր, պահանջով



անտանելի, այժմ շնորհով տանելի և մխիթարական է դառնում: Քրիստոս քեզ հետ հավասար սկսում է քո իսկ խաչը կրել, որ քաջալերվես ու սիրես արդարությունը: Մանավանդ որ Քրիստոս արժանի հավատացողներին ազատագրում է այն անեծքներից, որոնց տակ ենք մեր նախնիների կամ մերձավորների պատճառով: Իսկ նախնիների մեղքերը խաչի նման հեզորեն կրողներին՝ Աստված է օգնական և մշտապես: Ի վերջո սերը հրամանով չի լինում՝ ոչ մերձավորի և ոչ էլ Հայրենիքի հանդեպ: Այստեղ ինքնակամ խաչակրությունն է պետք, հոգով հասուն մարդու խաչակրություն: Մենք հաճախ նշում ենք Գրիգոր Լուսավորչի 14 տարիների հանիրավի բանտարկությունը հորում, սակայն մոռանում ենք, որ մեծ Սուրբը բանտարկվեց իր հոր հանցանքի դիմաց: Մի քանի խոսքով վերհիշենք, որովհետև Սուրբ Գրիգորը Լուսավորիչ դարձավ նաև իր որդիներով ու նրանց ժառանգներով էլ, որոնք երկար ժամանակներ Հայոց հոտն հովվելու խաչը կրեցին և նշանավոր մարդիկ եղան մեր ողջ ազգության համար, ինչպես Ներսես մեծը, սուրբ Սահակ Պարթևը, Վարդան Զորավարը և այլ մեծանուն, ազնվակերտ, Քրիստոսանվեր այրեր: ԵՎ այսպես, սքանչելի Գրիգորը Ավետարանի առակի այն ցորենի հատիկի նման եղավ, որ իր վարքով՝ բազում սքանչելի ու հաղթ պտուղներ տվեց Հայոց աշխարհի հոգևոր շենացման համար և տալու է դեռ՝ մինչև այս աշխարհի ավարտը:

Սուրբ Գրիգորն ինքը Քրիստոսի վարդապետությամբ կերտված մեծ հաղթանակողներից է, որովհետև եթե այսօր մեկի հայրը մարդասպան լինի կամ մեկ այլ հանցանքի տեր, որդիները դիտվում են որպես արատավորներ և հասարակության կողմից մերժված ու պախարակելի, հաճախ, իրենք էլ դառնալով շեղ վարքի տերեր, իսկ Գրիգորի հայրը՝ Անակ Պարթևը, դավադրությամբ սպանեց Հայոց Խոսրով թագավորին: Սակայն Անակի որդի Գրիգորը, մանկուց մեծանալով

քրիստոնյա մեկ այլ ընտանիքում, հավատալով և տիրապետելով արդեն սուրբ Ավետարանը և լսելով, թե իր հայրն ինչ չարիք է գործել, որոշեց նրա ծանր հանցանքն ապաշխարել՝ Սուրբ Ավետարանի Լույսն ու փրկությունը քարոզելով Խոսրովի որդուն՝ Տրդատ արքային: Եվ ահա այդ ապաշխարության համար էր, որ մեծ սուրբը եկավ ընդունվեց Հայոց Տրդատ թագավորի մոտ, որպես գրագիր ծառայելու: Այն մտքով թե՝ իմ հայրը քո հորը սպանեց, բայց ես Քրիստոսի ոսկի վարդապետությամբ քո մեջ հավիտենական կյանք եմ սերմնացանելու և այդպես եմ ապաշխարելու իմ հոր հանցանքը:

Ծնողասիրության և որդիական ապաշխարության այս մի լուրջ օրինակ է, որ սուրբ Գրիգորը դրեց բոլոր այն զավակների առաջ, որոնց հայրերը մեծ ու փոքր հանցանքների տերեր են: Տրդատն այդժամ կռապաշտ էր և զայրանում էր Գրիգորից լսելով ճշմարտության և Տիեզերական վարդապետության մասին: Եվ այդ պատճառով նա բազմաթիվ ծանր ու անմարդկային չարչարանքների ենթարկեց մարդասպանի որդուն: Գրիգորը ոչ միայն հեզությամբ ենթարկվեց իր հոր հանցանքի դիմաց Խաչյալի նմանությամբ չարչարանքներ կրելուն, այլև չդադարեց այդ չարչարանքների ժամերին էլ իր հրաշունչ քարոզները՝ հանուն Տրդատի հավիտենական կյանքի: Եվ երբ Տրդատը, որ նախապես չգիտեր և լսեց, թե սուրբ այրը նաև որդին է Անակ Պարթևի, որ իր հորն սպանել է, նրան նետել տվեց Խոր Վիրապի հորը, ուր նետում էին մահապարտներին: Եվ մեծ այրը իր հոր հանցանքի դիմաց այդ Խաչը կրելու դեմ երբևէ չբողոքեց, ինչպես որ Քրիստոս ոչ միայն չբողոքեց ողջ մարդկության հանցանքի Խաչը կրելիս և չխորշեց իրեն մարդու Որդի էլ անվանեն, այլև հայտարարեց, որ «Յուրաքանչյուրն, ով իր Խաչը չվերցնի և իր ետևից չգնա՝ իրեն արժանի չէ»:



ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԸ ԻՐ ԽԱՉԸ ԿՐԵԼՈՒՑ ՉՓԱԽԱՎ ԵՒ ՆՐԱ ՍԵՐՈՒՆԴՆ ԱՅԴ ԽԱՉԱԿՐՈՒԹՅԱՄԲ ԴԱՐՁԱՎ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ, ՀԱՅՈՑ ՄԵԾԱՆՈՒՆ ՈՒ ՍԻՐՎԱԾ ԱՅՐԵՐԻ, ԱԶԳԱՆՎԵՐ ՁՈՐԱՎԱՐՆԵՐԻ ՍԵՐՈՒՆԴ:

Ահա թե հանուն հայրերի խաչակրությունը Տիրոջ օրինակի համաձայն տանելով՝ հանցավորների որդիները ինչպես կարող են իրենց ազգն ու ցեղը բարձրացնել, բազում ախտերից մաքրել ու սրբացնել երկնքի ներքո: Սրբազան Խաչակրության շնորհիվ: Եվ ոչ թե պիտի տրտնջալ թե՝ մեր հայրերի հանցանքների պատճառով ինչ թշվառ ճակատագիր ունենք, որ Օրենքի անփոփոխ անեծքն է, այլ մեր խաչերը վերցնելուց պիտի չփախչենք, չխորշենք, երբ հասու լինենք այդ վեհ ընթրանմանը: ԵՎ մեր սերունդը պիտի նման խաչ վերցնելով սրբանա, ազնավակերտվի ու բարձրանա: Վեհանա: Նժդեհը նման Խաչակրության կողնակիցն էր, և ասում է, եթե խաչդ չես վերցնում, միևնույնն է՝ պատմության դատաստանից չես փախչի, որ հայրերի հանցանքների համար բռնեցնում է որդիներին:

Ուրեմն, որդիներն այնքան իմաստուն պիտի լինեն, որ քաջ լինեն իրենց սերընդաբանական խաչը ինքնակամ վերցնել և դեպի սրբություն տանել, իրենց անհատական գողգոթայում նահատակությամբ սերունդը սրբագործելու համար: Այդպես ազատվելով այն ախտ ու աղետներից, շարունակական ծագող թշվառություններից, որ ի բնե, 3-4 և ավելի սերունդ, որպես խաչի բեռ՝ հանդիպում և հանդիպելու է ճանապարհիդ, մինչև տեսակիդ ու ազգիդ մեջ չելնեն իրենց ազգացեղային խաչը հեզությամբ կրողները, իրենց ազգ ու ցեղը խաչակրությամբ սրբագործողները: Քրիստոսի նման՝ հանուն ժողովուրդ սիրելիիդ: Քաջ լինենք, մեր հայրերի թողած խաչի բեռը չմերժենք մի օր վերցնել: Մանավանդ, ինչպես ասա-

ցինք, այդ անելը Աստծո Հոգու Շնորհներով մխիթարական է, բայց հին Օրենքներով անհնար էր:

**«ԱՄԵՆԱԾԱՆՐԸ,- ԱՍՈՒՄ Է ՆԺԴԵՀԸ,- ԺՈՂՈՎՐԴԻԴ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԽԱՉԸ ԿՐԵԼՆ Է»:**

## ԵԹԵ ՀԱՂՈՐԴ ԵՍ ՆԱԽՆԻՆԵՐԻԴ ՓԱՌՔԵՐԻՆ

Սակայն Խաչդ վերցնելու համար ԽՂՃՄՏԱՆՔ է պետք ունենալ, որ խաչակրությունդ կյանք լինի, ճշմարիտ խիզախում լինի և ոչ թե այլոց դուր գալու համար ներկայացում: Ճշմարիտ խաչակիրներով է կազմավորվում ժողովուրդն ազնվական: Ուստիև.

**«ԱՄԵՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ ՊԵՏՔ է ՍԿՍՎԻ ԽՂՃՄՏԱՆՔԻՑ»**,- ասում է մեծ Նժդեհը:

Որովհետև մարդու մեջ խղճմտանքի ներկայությունը Աստծո ներկայությունն է մարդու մեջ՝ հեթանոսների համար,- Պողոս առաքյալի միջոցով ուսուցանում է մեզ Սուրբ Գիրքը: Եվ հեթանոսները Աստծուն, որպես ըմբռնվող իրողություն՝ պատկերացնում են մարդու մեջ եղած Աստծո հեղած խղճմտանքի չափ ու տեսակից, որովհետև նման խղճմտանքն այլ տեղից չի ծագում: Եթե ոչ, կովին ծաղիկ նվիրես՝ կուտի, եթե խոզին՝ ոսկու շեղջեր տաս՝ իր աղբի հետ կխառնի և կկոխկրճի կսպանի քեզ: Եվ շնություն սիրող մարդուց արդյունքում լավ բան երբևէ չես սովորի, քանի որ. «Շունն իր փսխածին է կրկին դառնում», չկասկածելով, որ կերածը վտանգավոր էր կյանքի համար, այդ պատճառով էր, որ փսխեց կամ անբնական, ագահությամբ ուտելուց էր, որ փսխեց: Երկիրը չի բարեփոխվի, եթե սոցիալական բարեփոխում կատարենք,- ասում է Նժդեհը.



**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ Է: ՕՐԵՆՔԸ ՓՈԽԵԼԷ ԱՌԱՋ, ՓՈԽԻՐ ՄԱՐԴԸ»**, - շարունակում է ուսուցանել մեծ Նժդեհը *(Նժդեհ. հտ. 1-ին):*

Թվում է՝ Սահմանադրության արմատական 1/3-ը Նժդեհյան այս մեկ նախադասության վրա պիտի հենվի, որ երկիրն առողջանա: Եվ սուրբ և ճշմարիտ է այդպես անել: Բարոյական չէ, եթե ոմնաց դրամի ու կեղծ բարեկեցության խոստման դիմաց կեղծ օրենքներ են սարքվում, որ իրենց ներքինով խորապես անբարոյական են: Օրինակ, այսօր իսկ դրսի ուժերի կողմից միասեռականությունն ընդունել տալու, օրենսդրելու պնդումը Հայոց խորհրդարանին մեր ժողովրդի ոսկյա ձեռքբերումները ապականել-արատավորելու որս չէ՞ միթե: Բնականաբար:

Երբ առանց Աստծո Ստեղծարար ու նորոգող ձեռքերին հանձնվելու, առանց ճշմարիտ խղճմտանքից ծնված քարոզության, առանց անհատական խաչդ կրելու, առանց Քրիստոսի սիրոն խոնարհվելու, անկարելի է որ մարդը փոխվի: Այդ պատճառով Նժդեհը խորշում է ամեն տեսակի մարդուց, ով կրոնից հեռու է գտնվում, նմանն իր սեփական հպարտանքի մեջ է մխրճված և ոչ թե պատրաստ է տալ, այլ՝ միայն վերցնել, աղավաղել, փչացնել, մոլորեցնել, ոտնակոխել: Եթե մեկն Աստծուց վախ չունի, աղտոտ վարք կունենա, կեղծ արդար ցուցանվելով: Նմանը մտածում է ոչ թե ուրիշներ երջանկանան իր տվածով, այլ որ՝ ինքը խոզի նման գիրանա, հաստանա ժողովրդի և հոտ եկեղեցու հաշվին, և ընթացքում. **«Իր ցանկությունների մեջ ուրիշների տառապանքով ձեռք բերած ոսկիները մաշեցնելով, դրանց տերերին խեղելով և սպանելով և նրանցից խլածներն անհոգորեն փչացնելով և շրջապատը այլանդակելով ու գեշ ապականելով»** *(Առաքելական թղթեր):*

Սակայն Նժդեհյան ուսմունքը բուն Ավետարանականն է մատնանշում.

**«ԳԵՐԱԳՈՒՅՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ Է, ՈՐ ՊԱՏՃԱՌ ԿԴԱՌՆԱ ԵՒ ԱՅԼՈՑ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ»** *(Նժդեհ. Երջանկության պրոբլեմը):*

**«ԱՆԻՄԱՍՏ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ Է ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ, ԵԹԵ ԴԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԷ ԻԴԵԱԼԻ, ԿԱՏԱՐՈՒՄԸ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆՑ»** *(Նժդեհ. Որդիների պայքարը հայրերի դեմ):*

Իսկ ով դիմակայի նման բնական ճշմարտության՝ մեղք է գործում, սակայն ապուպապով անգամ չմարված.

**«ՄԵՂՔԸ ՉԻ ՄՆՈՒՄ ԱՆՊԱՏԻԺ, ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉՎԱՐՉԱՏՐՎԱԾ»** *(Նժդեհ. Երջանկության պրոբլեմը):*

Եվ միակ լավը հենվելն է Առաքինության և Սիրո վրա: Այդ է մեր ժողովրդի հզորությունը.

**«ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ Է»** *(Նժդեհ. Երջանկության պրոբլեմը):*

- Ընտի՛ր է ասվել՝ Առաքինությունը հզորություն է: Չկա առավել փառահեղ բան, քան Տիրոջով առաքինությունն է, որ պտուղն է Քրիստոսով պաշտամունքային կյանք ապրելու, ճշմարիտ Սիրո մեջ ապրելու: Եթե զերծ ենք չար նախանձից: Եթե տականք լինելու չափ տգետ չենք: Նախանձում է նա, ով իր նախնիներով իրեն բաժին հասած հատուցման խաչը չի ուզում երբևէ կրել և իր անձն հանիրավի է բարձրացնում, և ձեռքի հետ էլ ձեռքբերումներ է գողանում և դրանք ապականում, ավելի ևս հանցանք գործելով, իր հետնորդների և շրջապատի խաչն ավելի ևս խոզավայել ծանրացնելով և խեղելով, դիվահարելով միամիտներիս և անվերջ սպանելով: Սակայն երբ դու նախ քո խաչն ես կրում, այդժամ ուրիշի արդյունքներն էլ չես զավթում, աչք չես դնում այլոց ձեռքբերումների վրա, քանի որ քո քիչն էլ, բազմաթիվ շնորհներիդ առատացումով քեզ բավարար է. եթե ոչ «Նեղ Դռնով դեպի կյանք» մտնելը չէր լինի, այլ՝ լայնով կլիներ, միայն խոզի նման այլոց կյանքն ուտել խմելդ աստվածացնելով կլիներ: Խաչդ երբ



անտրտունջ, իմաստությամբ տանես և որքան հաղթես, այնքան շնորհներդ ավելանում են, որ ավելի մխիթարական ընթանաս, մինչև հասունանաս ազգայինի կամ մարդկության համար էլ խաչակրության: Իսկ երբ արժանանաս դառնալ որդի, Սուրբ ԱստվածՈրդու եղբայրներից, այդժամ, ինչի կարիք ունես, Աստծով ավելին էլ կունենանաս՝ համբերատարությամբ հանդերձ: Ինչպես Տերն է թերահավատներին Ավետարանում խրատել թե՝ ՆԱԽԸ՝ ԱՍՏԾՈ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՆԵԼՆ է: ՄՆԱՑԱԾՆ ԻՆՉ ՊԵՏՔ է՝ ԱՎԵԼՈՎ ԿՏՐՎԻ ՔԵԶ, ԵԹԵ ԱՅԴ ՈՒՂԻՈՎ ԸՆԹԱՆԱՍ:

Նախանձում է նա, ով իր բաժին խաչից փախչում է աշխարհի թեթևամիտ հեշտության ապրելակերպին և գիշատչի պես ատամները խրել է աղքատների ոսկորների, աղքատների սրտի մեջ՝ վայրաբար խժռելով ազգեր, ժողովուրդներ, ընտանիքներ:

**«ՉԱՐ ԱՆԱՍՈՒՆ Է ՄԱՐԴԱ, ԵՐԲ ՆԱԽԱՆՁՈՒՄ Է»** *(Նժդեհ. Երկեր, հտ. 1, 2002թ.):*

**«ՄԻ՛ ՆԱԽԱՆՁԻՐ, ՔԱՆԶԻ ԱՇԽԱՐՀԸ ՈՉԻՆՉ ՉՈՒՆԻ, ՈՐ ՉՈՒՆԵՆԱ ՔՈ ՀՈԳԻՆ»** *(Նժդեհ. Երջանկության պրոբլեմը):*

**«ՍԻՐԻ՛Ր ՎԵՀԸ, ԳԵՂԵՑԻԿԸ, ՀԵՐՈՍԱԿԱՆԸ՝ ՆՈՒՅՆԻՍԿ ԹՇՆԱՄԻՆԵՐԻԴ ՄԵՋ»** *(Նժդեհ. Որդիների պայքարը հայրերի դեմ):*

Համազգային նման վտանգների ժամանակ երկնալույս խոսնակ դարձավ Նժդեհը: Քրիստոսանման իր չարչարանքներն են նրա խոսքերի ետևում՝ վեմի նման հաստատուն և իր խոսքերին ներշնչարան: Հենց այնպես չի խոսում Նժդեհը, այլ միայն ճշմարտության նեղ ճանապարհին է վստահ իր անձնական փորձառությամբ.

**«ՏԱՌԱՊԱՆՔԸ ՄՈՏԵՑՆՈՒՄ Է ԱՍՏԾՈՒՆ»:**

Եվ ճշմարիտ որ՝ Աստծուն մոտենալու մեծերի տառապանքով ժողովուրդներ են հարստանում, լուսավորվում, բժշկվում, մաքրվում, գտնում Վեմ հենարանը Վերն Արդարության: Եթե ոչ՝ օրենքն անկարող էր մեղքով զարկվածներիս

և մեղքի պատճառով զրկվածներիս առավել Աստծուն մոտեցնել, քան ստվերագրային չափով: Հոգին ամեն բան է քննում, իսկ սերը ներում ու շնորհումներ ունի՝ մխիթարություններ ու բժշկումներ՝ ճշմարիտ խոստովանող- դարձողներին: Եվ Հոգով քննության պայծառակերպությամբ է, որ Նժդեհը տեսնում է ասես յուրաքանչյուր շարժառիթը մեր դժբախտությունների: Ոչ թե պիտի սպասել, որ հանցանքն առաջանա և ապա սկսել պատերազմել դրա դեմ, այլ պիտի պատերազմել նախօրոք: Մշակությամբ պատերազմել, ուսուցմամբ, քանի որ մարդուս անմշակ, անաստված մտքում կամ սրտում է նախ հանցանքն առաջանում: Ուրեմն մտավոր դաշտի Ավետարանական մշակում է պետք իրագործել: Եթե ուշադիր լինենք, կտեսնենք որ, Նժդեհյան իմաստնությունները ոչ միայն Աստծո տասը պատվիրանները կյանք դարձնելու բանալիներ են Սիրո հաղթող հովվությամբ, այլ ավելին, դրանցում նաև Լեռան քարոզի կատարյալ ազնվական պատվիրաններն են հիմունքում ներսուզված: Ավելացնենք՝ ի սրտե (թվում է՝ մարդկային կարողությունից էլ վեր) մեզ ներկայացրած բանալիներ են՝ Աստծո սիրո հաղթանակը տոնելով խոսած խոսքի մեջ, ընթերցողներիս մեջ: Ասես կենսագրական վկայություններ լինեն մարդու մեջ Աստծո ներկայության մասին: Այսինքն, այս բանալիները սոսկ որպես գիտություն չեն ներկայանում, այլ Նժդեհյան մատուցմամբ ներքինում ընթերցողին պայծառ սեր է փոխանցվում և նրա հոգում շողարձակվում, որն իր հերթին ասելիքը սքանչելիապես դարձնում է պարզ, հստակ ու սիրտ ընդունվող և բժշկարար ճառագայթ:

**«ՁԱՅՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՊԵՏՔ Է ԽԱՉՎԵԼ ՆՐԱ ԱՊՐԱԾ ԳՈՂԳՈԹԱՅԻ ՎՐԱ: ԻՍԿ ԱՅՍՊԵՍ ՎԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԸՆԴՈՒՆԱԿ ՊԻՏԻ ԼԻՆԵԼ ԱՆՍԱՀՄԱՆ ՍԻՐՈ ԵՒ ՋՈՀԱԲԵՐՈՒԹՅԱՆ»** *(Նժդեհ-Բաց Նամակ Մայքլ Արլէնին):*



**«ՄԵՆՔ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ՝ ԳՈՂԳՈԹԱՅԷՆ ՀԵՏՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ: ԵՎ ԱՐԴԱՐ Է ՄԵՐ ՀԱՎԱՏՔԸ»,-** եզրափակում է Աստծուն Դատավոր ընդունող հոգևոր Նժդեհը *(Նժդեհ-Բաց Նամակ Մայքլ Արլէնին):*

## ՆԺԴԵՀԻ ՈՐՈՆԱԾՆ ԱՐԴԵՆ ԿԱՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

### ա). ՆԺԴԵՀԸ ՀԱՐԱԲԵՐՎԵՑ ՄՈԼՈՐՄԱՆ ԾԱՆՐ ՎՏԱՆԳԻՆ

Մեծ անհատներին պատահած փորձություններն էլ են մեծ լինում: Եվ պատմության մեջ քիչ թիվ չեն կազմում այն մեծանուն անհատները, որ ահեղ փորձություններ են հաղթահարել:

«ՆԵՐԻ՛Ր, ՏԵՐ, ՆԵՐԻ՛Ր, ԵԹԵ ՄԻ ՕՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՂԱՆՉԵՄ ՔՈ ԴԵՄ: ԱՐԴԱՐ Է ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼ ԱՄԵՆ ԻՆՉՈՎ, ԲԱՑԻ ՍՏՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ» *(Նժդեհ. Բանտային գրառումներ: Հատընտիր):*

Նախ Քրիստոսին ուղղված Նժդեհի այս աղոթքը վերլուծենք: Նման կառուցվածքի աղոթք հիմնականում հանդիպում ենք Աստվածաշնչյան մարգարեների աղոթքներում և Սաղմոսների գրքում: Հիշենք որ՝ Սաղմոսները նույնպես մարգարեություններ են: Նման կառույցը կազմված է ա). հայեցում-խնդրանքից և բ). Աստծո պատասխանից: «ՆԵՐԻ՛Ր, ՏԵ՛Ր, ՆԵՐԻ՛Ր. ԵԹԵ ՄԻ ՕՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՂԱՆՉԵՄ ՔՈ ԴԵՄ»: Այս է, որ Նժդեհի հայեցում աղոթքն է և ամիջապես էլ հենց մարգարե Նժդեհի միջոցով և հենց նրա ձեռքով հետևում է Աստծո պատասխանը. «ԱՐԴԱՐ Է ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼ ԱՄԵՆ ԻՆՉՈՎ, ԲԱՑԻ ՍՏՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ»: Այս արդեն Նժդեհի խոսքը չէ, այլ Աստծո պատասխանը Նժդեհին և յուրաքանչյուր մարդու Նժդեհի միջոցով էլ: Սա Հայտնատեսական գրքերի ժամանակներ գետնող խոսակերպն է, որոնց մեջ հարցիդ՝ Կենդանի Աստծո պատասխանն է հնչում մարգարեների միջոցով: Այս դեպքում՝ Նժդեհ մարգարեի:

Ժամանակներ գետնող Նժդեհը, իր փորձությամբ, ցավոք մի պահ ետդարձ ապրեց՝ հարաբերվելով մեծ վտանգին: Նա իր ցեղակրոնությամբ որոշ չափով մտավ զգացապաշտական ոլորտ, որ ցած էր նրա իսկ բանական, իմաստասիրական, գիտակցական հոգևոր ոլորտից: Հոգևոր Նժդեհից: Ասես իմաստության վարդերի կողքից անցնելիս հանդիպես փշերի մի կծիկի, որ փակում է ճամփադ: Ոչ թե ցեղակրոնությունը Աստծուց չէր, որի մասին խոսեցինք՝ ժողովրդի խաչակրությամբ մաքրվելու Քրիստոսի դրած օրինակով և Լուսավորչի օրինակով էլ, այլ մատուցումն էր Աստծուց խիստ նեղացածությամբ, հետևաբար էլ դարձել է հեթանոսախառն անգիտակիցը, փշախառնն էր խառնվել Նժդեհի զուլալ խոսքին: Դեպի ետը որպես թե դեպի առաջ էր խառնվել դեպի առաջին: Նժդեհյան Աստված և Հայրենիք ըմբռնումն իրենց տեղերն այստեղ ցավոք փոխել են, դարձել՝ Հայրենիք և Աստված, ինչ-որ տեղ հակադրվել «Աստված և Հայրենիք» ասող հոգևոր Նժդեհին: Ասես թե հանուն հայրենիքի մոլորվել կարելի լիներ[1]: Նժդեհը մի պահ սակայն կանգնեց այս ինքնահակառակության առաջ: Որովհետև. առանց նախ Աստծո՝ էլ

[1] Այստեղ ավելորդ չէ հիշել Հնդկաստանի (նաև՝ մարդկության) հոգևոր Ուսուցիչներից մեկի՝ Աուրոբինդո Գհոշի մասին: Նա, Անգլիայում ուսումն ավարտելուց հետո վերադառնալով Հնդկաստան, ամբողջովին նվիրվում է Հնդկաստանն Անգլիայի ստրկական իշխանությունից ազատագրելուն, խտրականություն չդնելով մեթոդների մեջ՝ կիրառելով անգամ տեռորիստական ակտեր: Նա դիմում էր ցանկացած ուժի օգտագործմանը, միայն թե Հնդկաստանն ազատագրվեր: մի օր, երբ խորասուզվել էր Յոգայի ուժերի օվկիանոսում, Աստված նրան հանձնարարում է թողնել ազատագրական պայքարը և ամբողջովին նվիրվել հոգևոր մեծ աշխատանքին, որին նա կոչված էր: «Իսկ Հնդկաստանի ազատությո՞ւնը»,- առարկում է Աուրոբինդո Գհոշը: «Հնդկաստանն ազատ կլինի, Ես խոստանում եմ»,- ասում է Արարիչը: Եվ մեծ հայրենասերը, թեթևացած հոգով թողնելով ազատագրական պայքարը, անցնում է մարդկության հոգևոր ազատագրմանը: Հիշյալ երկխոսությունից 17 տարի անց Հնդկաստանի ազատության դեկլարացիան ընթերցվեց Աուրոբինդո Գհոշի ծննդյան օրը՝ օգոստոսի 15-ին *(ծանոթ. հրատարակչի)*:



ի՞նչ հոգևոր հայրենիք, ինչպես ինքն իսկ բազում եղանակներով քարոզեց:

Եթե հետևել ենք մեծ մարդկանց, անգամ սրբերի վարքերին, նրանցից ոմանք էլ, Աստծուն գնալու ճանապարհին, արգելակող խնդիրներ, անգամ մեծ անկումներ ունեցողներ են եղել: Լավ է նման խնդիրներ չլինեին, բայց եղել են, քանի որ մարդկային տկարությունների մեջ են եղել: Մենք մի՞թե չենք ունեցել կամ չունե՞նք նման խնդիրներ: Բազմաթիվ: Մեծ թե փոքր: Եվ գրեթե ամեն օր ենք ստիպված լինում նման խնդիրներ հաղթահարել: Լուսավորիչը բացեր չունե՞ր: Եթե ոչ կասեինք՝ առաքյալ և ոչ առաքելանման այր, երբ Տիրոջից առաքելությունը ժամանակ չի ճանաչում: Ունե՛ր ուրեմն: Աստծո առաջ ամենքս էլ մարդ ենք մեղավոր: Մեծ թե փոքր: Բայց սրբերի դեպքում բարի է նրանց շնորհներով հաղթանակների մասին հիմնականում խոսել՝ ի քաջալերանք ամենքիս, նրանցից հաղթանակներ սովորելով: Սակայն նրանց տկարությունների ի հայտ անելն էլ նման վիճակների մեջ հայտնվածներիս համար նման փորձություններից ազատվելու բանալիներ են հուշում: Եվ սերն ու կենդանությունը մեծերի հոգևոր հաղթանակների մեջ է և ոչ նրանց պահի մեջ մարդկային անկման վիճակների: Իսկ Տերունի բուն ընտրյալները փորձության մեջ ընկնելով չեն մնացել ճանապարհին: Տիրոջ ներմամբ հաղթել են փորձությանը և ավելի մեծ զորությամբ են շեփորել Բանական Լույսի անհրաժեշտությունն Աստծո մարդկանց մեջ և այդ Լույսի համար անգամ չեն երկմտել նահատակվել:

Ինչպես տեսնում ենք, Նժդեհի աղոթքից, նա նախ ներում խնդրեց Քրիստոսից, այսինքն, լավ էլ հասկացավ, որ իր գործածը մեղք է, ապա որպես մարգարե՝ Աստծո պատասխանն ստացավ, թե՝ մի վախեցիր, եթե արածդ ստորություն չէ: Ապա, ցավոք, մեղանչեց: Սակայն Նժդեհյան ինքնահակառակ այդ մի քանի խոսքերն էլ կարդալով, թե Տիրոջ փոխարեն՝ դարձ պի-

տի անել դեպի հին աստվածներ ու նրանց տաճարները, հասկանում ես, որ ընդդիմողը, ի բնե նեղացած քրիստոնյա է, և 15 թվի ջարդ տեսած մարդու նեղացածության խոսք է, որ ասում է, ասես մարդկայնորեն է ընդվզում արդարության համար: Կարելի է այդ անկումը հասկանալ: Մարդ ենք մեղանչական: Հոգևոր Նժդեհն էլ չդիմացավ: Կոմիտասն էլ չդիմացավ, խելագարվեց:

Օտարի չխնդրեց, այլ իր Տիրոջը՝ Քրիստոսին նախ իր աղոթքում խնդրեց թե՝ հնարավոր է Հայրենիքիս նեղության պատճառով փորձության մեջ ընկնեմ, որ մեղք է Քո դեմ, այդ-ժան, Տե՛ր, ների՛ր: Եվ այդ փորձության պատճառն այլ բան չէր, քան մեր ժողովրդի ծանր ճակատագիրը: Նժդեհը մարդ լինելով անկարող եղավ ժողովրդի ծանր փորձությանը նայելդիմանալ և քանի որ զորավար էր, դեմ խոսեց չհասկանալով և ոչ թե ստորությունից: Եվ մտածեց ռազմահայրենասիրական ցեղ կազմավորել՝ դիմակայելու հային չորս կողմից ստորացնողներին:

Ըստ Աստվածաշնչի ոչ թե Աստված դեմ պիտի լիներ, այլ առավելս պիտի օգներ նրան այդ գործում: Սակայն Նժդեհը մի պահ կարծեց թե՝ քրիստոնեությունը խեղճություն է, երբ ինքն էր քարոզում թե՝ ամենազորություն է Խաչելությամբ հաղթելը և մեր ողջ ժողովրդին էր տեսնում Խաչյալ Հիսուսի նման Խաչի վրա, աշխարհի լկտիությանն ու ծաղրանքին հաղթելիս: Սակայն Մեծ եղեռնին նայելը դյուրին բան չէր: Որպեսզի մարդկայնորեն չդատենք, այս բաները լավ է հիշենք: ԵՎ այս պարագան Նժդեհյան անհատի ողբերգության մեջ է մտնում: Եվ Նժդեհն այդ ցավից մի պահ հայացքը թեքեց դեպի հեթանոս աստվածներին, որոնք ևս տկար արարածներ էին և ոչ Ամենազոր Արարիչը: Երբ Ամենաբարձրյալին էր Նժդեհը պաշտում՝ իր ամենասիրելի Հայրենիքից էլ Նրան բարձր դասել՝ դիտելով և Նրանից պատկառելով, Նրան իր և



ամենքի արդար Դատավորը տեսնում: Երբ ասում էր. ՆԱ ՈՎ ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ՉԷ, ԵՇՄԱՐԻՏ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԼԻՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ: Այստեղ է Նժդեհ անհատի հիմնական ողբերգությունը:

Սակայն եկեք հիշենք, որ Աստծո մեծ մարդկանցից շատերն են մեծ մոլորման մեջ ընկել:

Դավիթ մարգարեն, որին Հիսուս մոր կողմից հայր անվանեց, այդքան իսկ կարևորելով ու բարձրացնելով նրան, մեծ մեղք չգործե՞ց. սպանման մատնեց իր զինակիցներից մեկին և տիրացավ նրա կնոջը: Եվ թեպետ մեծ պատիժներով էլ Տերը նրան պատժեց, բայց Իրենն էր, ապա ներեց, քանի որ Դավիթը ետ դարձավ և ապաշխարեց:

Սողոմոնը, որին Տերը մարդկության ամենամեծ իմաստունն անվանեց. «Այստեղ Սողոմոնից էլ մեծը կա»՝ ասելով, այդքան արժեքավորելով ու բարձրացնելով Սողոմոնի իմաստությունը, Սողոմոնն ևս անկումային մեղք չգործե՞ց՝ որոշ ժամանակ վարակվելով ու տրվելով կախարդությանը, այդկերպ գերվելով չարից և անգամ Աստվածընդդեմ աշխատություն էլ գրեց: Սակայն դարձի եկավ և խոստովանեց և ներվեց:

Պետրոս առաքյա՞լը չուրացավ Քրիստոսին: Ուրացավ, այն էլ երեք անգամ: Բայց մարդկային տկարության անկում էր այդ անկումը և ոչ թե սրտի օձության և Տերը նրան ներեց: Իրենն էր: Եվ ուրացող նույն Պետրոսը Սուրբ Հոգով այնքան քաջասրտացավ, որ հանուն իր Տիրոջ ու Փրկչի՝ ինքն ևս խաչվեց, արդեն ամենևին չերկմտելով: Եվ իր խաչելությամբ ինքն իր ուրացման օձի գլուխը ջարդեց:

Պողոս առաքյա՞լը մեղք չգործեց. նա մի խմբի գլուխ անցած սպանդի ու բանտի էր մատնում Քրիստոսի հետևորդներին, մինչև որ Քրիստոս երկնքից նրան հայտնապես երևաց, Պողոսն այդ երևումից կուրացավ ու դարձի եկավ և ամենադժվար առաքելությունն ինքը հանձն առավ՝ քարոզեց

հեթանոսներին: Եվ Ում մի ժամանակ հալածում էր, հանուն Նրա, հանուն Սիրո Հովվի նահատակվեց:

Մարդկության մեջ բազում և բազում են Աստծո դեմ մեծերի նման հանցանքներն ու ներումները: ԻՄԸ ՕՐՎԱ ՄԵՋ ՅՈԹ ԱՆԳԱՄ ԷԼ ԸՆԿՆԻ, ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՑՆԵՄ,- խոստացել է Աստված:

Եղեռն տեսնելով Կոմիտասը խելագարվեց, իսկ Նժդեհը, մեր մեծ Նժդեհը... մի պահ մոլորվեց թե՝ իբր արիություն չէ քրիստոնեությունը, եթե մեզ կոտորում են: Երբ մինչ այդ հակառակն էր քարոզում: Եվ որ պետք է ռազմահայրենասիրական ցեղ կազմավորել՝ դիմակայելու չարին:

Սուրբ Գիրքն ասում է. «Ամենքը մեղանչեցին», այսինքն, բոլոր ադամորդիները: Եվ եթե դատում ենք նրանց՝ մեղք գործած մարգարեների և առաքյալների, իմաստունների ու զորավարների, նրանց, ում Աստված կրկին դարձ է ապրեցնում ու ներում, և ասում ենք, նման ցած հանցանք մենք չէինք անի, արդյո՞ք փորձության դեպքում չէինք անի կամ գուցե արե՞լ ենք, կամ ավելի՞ վատթարն ենք, երբ մարդն իր բնույթով մեղանչական է, այդ ինչպե՞ս եղավ, որ մենք ամենագերազանցն եղանք, երբ մեղանչական է ամենայն մարդ: Պարզապես մենք գուցե մեծ չենք, այդ պատճառո՞վ չի երևում մեր այս կամ այն հանցանքն ու մեղանչումը: Եվ հետո՝ ոչինչ չանողը կարող է և մեծ փորձություններ չունենալ: Այսինքն, ամենքս ենք մեղանչական, և ծանր մեղքի մեջ չհայտնվելու համար ենք Աստծուն խնդրում. «ԵՎ ՄԻ ՏԱՆԻՐ ՄԵՋ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ԱԶԱՏԻՐ ՄԵՋ ՉԱՐԻՑ»: Այսինքն թե, քանի որ մարդ ենք մեղանչական բնույթով, մեզ համար ավելի լավ է փորձության մեջ չընկնելը, քան փորձության ենթարկվելը: Եվ ովքեր, որ չարությամբ մարգարեների ու առաքյալների, իմաստունների են դատում, ասես անտեղյակ լինեն, որ Աստված ամենքի սրտերն է կարդում և «Գիտի թե՝ ում ինչու է ներում և



ում ինչու է ողորմում և ում ինչու և որքան է դատում կամ պատժում»: Մանավանդ, երբ նախապես Նժդեհի խնդրանքը կա թե՝ ՏԵՐ, ՆԵՐԻՐ, ապա Աստված է ներողն ու արդարացողը և ոչ թե որևէ մարդ:

Նժդեհը Ամենաներողից՝ Տիրոջից է ներում խնդրում, ոչ թե որևէ մարդուց և Տերը կների, սակայն ինքնասեր կամ ինքն իրեն իր թերի կարծիքով կատարյալ արդար տեսնող մարդը չի ների: Որովհետև Նժդեհը թե իր այս անկումից առաջ և թե հետո, այնուամենայնիվ խոստովանում է Քրիստոսին, և այս շեղումից հետո է, որ հենվելով Վարդանանց ուխտին, մեծ զորավարը քարոզում է ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Այսինքն՝ դարձ է ապրում:

Եվ ահա Նժդեհի Ցեղակրոնությանը հետևեց Տարոնականությունը, որի հիմքը՝ սուրբ Վարդանանք էին, իսկ Վարդանանք՝ լավագույն Եկեղեցականները մեր երկրի: Եվ ցեղակրոնությունն էլ հենվելով արիության վրա՝ թեպետ խիստ խառն ու հեթանոսահայաց էր, այլևս անցյալ ու վնաս, հակընդեմ, ցածության փշերի մեջ, սակայն քրիստոնյայի շունչ կար, ասելիք-ոսկե միջուկ կար այդ փշերի մեջ:

Պողոս առաքյալն ևս Նժդեհի նման իր ազգի ճակատագրի համար գայթակղություն ունեցավ Աստծունը ետնադասել: Խոստովանում է թե. «ԻՄ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ ՈՒԶԵՑԻ ԱՆՁՍ ՆԶՈՎՔԻ ՏԱԿ ԴՆԵԼ, ԲԱՅՑ ՏԵՐԸ ՉԸՆԴՈՒՆԵՑ»: Այսինքն թե, անգամ հանուն ազգի՝ Աստծունը չպիտի ետնադասել, որովհետև մի օր կպարզվի, որ այդ ետնադասումը ի վնաս եղավ ազգին և ոչ թե ի օգուտ:

Մեր կարծիքն այն է, որ Նժդեհի քրիստոնեականն ու ոչ քրիստոնեականը կամ խառնը, պիտի տարանջատել և ընդունել քրիստոնեականը, ինչպես Սողոմոն իմաստունի Աստվածային իմաստությունն ենք տարաբաժանում նրա կախար-

դություններից և ընդունում Աստվածայինը՝ այն համարելով համամարդկային:

Ակամա կրկին հիշում ենք անկումից առաջ Նժդեհի աղոթքը. «Ների՛ր, Տեր, ների՛ր, եթե մի օր հայրենիքիս օգտակար լինելու համար մեղանչեմ Քո դեմ: Արդար է հայրենիքին ծառայել ամեն ինչով, բացի ստորությունից»: Եվ ապա հիշում Նժդեհի վերականգնումը առ Քրիստոս ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, երբ Նժդեհը ներքին պարծանքով է հատկանշում, թե. **«ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ... ԴԱ ՀԱՅ ՌԱԶՄԻԿԻ ԳՈՐԾՆ Է, ՈՐ ՀԱՂԹԱԿԱՆ Է, ՈՐՈՎՀԵՏԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՕՐՀՆԵՑ ՆՐԱՆ»** *(Գ.Նժդեհ, հտ. առաջին, էջ 412-414):*

ՈՐՈՎՀԵՏԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ ՕՐՀՆԵՑ ՆՐԱՆ խոսքի մեջ, ճշմարիտ որ պարծանք կա և օրհնյալ որդու պարծանք, իր եկեղեցու կողմից որդիորեն ընդունվողի պարծանք:

Այսինքն, Նժդեհին կարդանք, բայց և հարկ չէ երբևէ նրա մոլորմամբ գայթակղվենք: Մանավանդ, որ Նժդեհն Աստծով բանալին տվել է, թե.

ՆԱԽՆԻՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԿ Է ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԲԱՐ ՎԱՐՎԵԼ ԵՒ ՈՉ ՆՐԱՆՑ ՆՄԱՆԱԿԵԼ ԿԱՄ ԿԱՊԿԵԼ:

Ինչպես և մենք ևս ջանացինք այդպես անել՝ Աստծո սիրով առաջնորդվելով:

### բ). ՑԵՂԱԿՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՉԿԱ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՎԱՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԽԶՈՒՄԸ...,- ԱՍՈՒՄ Է ՆԺԴԵՀԸ

Ինչպես ասացինք, Նժդեհն անգամ ցեղակրոնության մեջ արդեն իր օրհնյալ ժառանգավորությամբ (քահանայի որդի էր և տիրացուի թոռ) միայն բառային շերտի բորբոքումով, խաբվելով թե քրիստոնեությունը խեղծություն է, այդ պատճառով ընդվզեց: Սակայն Նժդեհի ցեղակրոնության օրինակն իսկ՝ Հին Կտակարանում արդեն կար: Եվ ահա Նժդեհը ցեղակրոնության մեջ գրում է.



**«Ցեղակրոնի համար չկա ավելի մեծ վատություն, ՔԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԽԶՈՒՄԸ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԻՋԵԼ: Նորահաս սերունդը կտրվե՞ց անցնող կամ անցած սերունդներէն- նա էապես կտրվում է մինչ այդ գոյություն ունեցող ցեղի արժեքներէն ու սրբություններէն, ԿՐՈՆԷՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆԷՆ»** *(Նշումներն իմն են՝ Մ.Ռ.) (ՆԺԴԵՀ. Հտ. 1, 2002թ., էջ 224):*

### գ). ՀԻՆ ԿՏԱԿԻ ՈՍԿՅԱ ԲԱՆԱԼԻՆ

Վարդանանք այդ Բանալու ասպետներն էին, որովհետև ցեղին Ապավեն լինել խոստացել էր Ինքն՝ Արարիչը, Կենդանի Աստված՝ Քրիստոսով: Այսինքն՝ ցեղի Ապավենը՝ Քրիստոս Սկզբից կար, որով Հայկն ևս երկնայինով առաջնորդվող ցեղ կազմավորեց և հաղթեց առաջին գլոբալացնող թագավոր Բելին:

Հաղթելու համար Նժդեհը՝ սկզբից ևեթ այդ նշելով պիտի վարդապետեր, և նրա ցեղակրոնությունն առանց հեթանոս փշերի կլիներ և հաղթող: Որովհետև աշխարհը Աստծո անեծքի տակ է և անեծքի պարտքը ազգ ու ժողովրդից հեռանում են միայն Քրիստոսի միջնորդությամբ: Այդ հենակետը կորցնելն էր ուսմունքի սխալը: Արմատական սխալը:

Այժմ Հին կտակից մեջբերենք հոգևոր- ռազմահայրենասիրական աստվածաշնչյան դաստիարակության այդ հզոր ուղին, որն այնուամենայնիվ՝ մեծ Նժդեհի փափագած- որոնածն էր, արդեն սակայն պսակ-Վարդանանցով: Այս դեպքում ցեղն իր Ապավենով է, ցեղը հենակետ ունի, ցեղի Տերն Արարիչն է: Այս պիտի ընտրեր Նժդեհը որպես հենակետ:

«ԵԹԵ ԻՄ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ ՊԱՀԵՔ ԵՒ ԴՐԱՆՔ ԳՈՐԾԻ ԴՆԵՔ, ԵՍ ԷԼ ՁԵԶ ԱՆՁՐԵՒՆԵՐԸ ԿՏԱՄ ԻՐԵՆՑ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՒ ԵՐԿԻՐՆ ԻՐ ՊՏՈՒՂԸ ԿՏԱ... ԵՒ ՁԵՐ ՀԱՑԸ ԿՈՒՇՏ ԿՈՒՏԵՔ ԵՒ ՁԵՐ ԵՐԿՐԻ ՄԵՋ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՄԲ ԿԲՆԱԿՎԵՔ, ՔԱՆԻ ՈՐ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՄ ՁԵՐ ԵՐԿՐԻՆ... ԵՒ ԿՎԵՐՑՆԵՄ ԵՐԿՐԻՑ ՁԱՐ ԳԱՁԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՁԵՐ ԵՐԿՐԻ ՄԻՋՈՎ ՍՈՒՐ ՉԻ ԱՆՑ-

ՆԻ. ԵՒ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ ԿՀԱԼԱԾԵՔ ԵՒ ՁԵԶԱՆԻՑ ՀԻՆԳԸ ՀԱՐՅՈՒՐԻՆ ՊԻՏԻ ՀԱԼԱԾԻ ԵՒ ՁԵԶԱՆԻՑ ՀԱՐՅՈՒՐԸ՝ ՏԱՍԸ ՀԱԶԱՐԻՆ ԵՒ ՆՐԱՆՔ ՍՐՈՎ ՊԻՏԻ ԸՆԿՆԵՆ ՁԵՐ ԱՌԱՋ... ԵՒ ՁԵԶ ՎՐԱ ՊԻՏԻ ՆԱՅԵՄ ԵՒ ՁԵԶ ԱՇԵՑՆԵՄ ՈՒ ՇԱՏԱՑՆԵՄ ԵՒ ԻՄ ՈՒԽՏԸ ՁԵԶ ՀԵՏ ՀԱՍՏԱՏԵՄ: ԵՒ ԵՍ ԻՄ ԽՈՐԱՆԸ ՁԵՐ ՄԵՋ ՊԻՏԻ ԴՆԵՄ ԵՒ ԻՄ ՀՈԳԻՆ ՁԵԶԱՆԻՑ ԷԼ ՉԻ ՁՁՎԻ ԵՒ ՁԵՐ ՄԵՋ ՊԻՏԻ ՇՐՋԵՄ ԵՒ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՍՏՎԱԾ ՊԻՏԻ ԼԻՆԵՄ ԵՒ ԴՈՒՔ ԻՆՁ ՀԱՄԱՐ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴ...»- ԽՈՍՏԱՑԵԼ Է ԱՍՏՎԱԾ *(ՂԵՒՏԱՑԻ, 26. 3:12)*

Փոքրաթիվ, բայց սուրբ ազգ, սուրբ ցեղ ու արքայական ժողովուրդ: Եվ վա՜յ է նրան, ով ելնի նման ցեղ ժողովրդի դեմ, որովհետև Աստծո անտես ու առկա զորություններն են նրա հետ, նրա առջևից և ամեն կողմից միաժամանակ պատերազմում:

Աստծո կատարյալ պատվիրանների գործադրում, և հզոր հովանիով՝ մշտահաղթ, սուրբ, արքայական, առաքելական ցեղ ենք ունենում: Մոտեցի՛ր, վերցրո՛ւ,- ասում է Աստված, ով է այն ազգը, որ այդ օրինյալ գործը կանի:

Նման ցեղ կազմավորելով՝ մեր կորցրած երկի՛րն էլ մեզ կվերադարձնենք, որովհետև վայը պիտի հալածի նրանց, ովքեր ընդդիմեն նման Աստվածաշնչյան ցեղին: Որովհետև հատընտիր ազգ ցեղն է երկրի վրա՝ իր Երկնային Ապավենով, ում դեմ ելնող ոչ մի շունչ չի դիմանա: Եվ բացի այդ. Արարիչ Աստված մարգարեություններում Ինքը խոստում ունի նման դարձ ապրող ցեղ-ազգության կորցրած «երկիրն ետ վերադարձնել»: Արդյո՞ք այս բանալին այսօր չենք կարող գործադրել, երբ պատվերը բոլոր ժամանակների համար է: Բնականաբար՝ կարո՛ղ ենք, միայն թե՝ չինտեգրվելով այլոց ապական կամքին ու աղտոտ բարքին, որ այսօր Նոր Բաբելոնով ելել է աշխարհի վրա, մեր երկրի վրա էլ: Երբ դրսից ամեն ջանք գործածում են քայքայել մեզ մեր իսկ ձեռքով:



Եվ լավ է մեզ համար գիտակցել, որ պատմության մեջ մենք ևս գործող անձեր ենք և ոչ թե ենթականեր, որպես թե քամուց քշվող տերև ու մղեղ: Ամոթ համարենք մենք մեզ քամուց քշվող դիտել, երբ Քրիստոս որպես անշարժ ժայռ է, բոլոր փոթորիկների դեմ աներեր: Այդժամ քաջ կլինենք Աստվածաշնչյանը լավագույնս շարունակել, վարք ապրելով: Այս վերջին միտքը, ինչպես արդեն ասացինք, Նժդեհը բազմաթիվ անգամներ է ասում՝ մեծերի արժեքավոր գտածը շարունակելու իր խոսքում. «Մեծերին ստեղծագործաբար զարգացնելով առաջ ընթացնելով և ոչ թե նրանց կապկելով»: Որ տեղում դոփել կամ ճահճանալ կնշանակեր:

### դ). ԱԴԱՄ ՀԵԹԱՆՈՍ ՉԱՍՏԵՂԾՎԵՑ, ԵՒ ՆՈՅԸ ՀԵԹԱՆՈՍ ՉԷՐ

**«Ուզու՞մ եք խորապես ճանաչեք մեկին, խոսեք և խոսակցեք նրան Աստծո մասին, և նա իր պաշտանքի կամ անհավատության միջոցավ պիտի մատնե իր հոգևոր հասակը»** *(«Խոսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ. Գարեգին Նժդեհ. հտ. 1):*

Այսօր Նժդեհի անունով բազմաթիվ կուսակցություններ կան, որոնց մի մասը, ցավոք, դեռ հեթանոսախառն են և անգամ Քրիստոս Աստծո մասին այբբենական ճշմարտություններն են ժխտում, այդպես իսկ շատ բաներում հակառակ կանգնելով իրենց իսկ վարդապետին՝ Նժդեհին:

Բայց հեթանոսական ժամանակները, ինչպես առաքյալներն էլ են հաստատում՝ մարդկության մոլորության ժամանակներն էին և ոչ թե մեր Սկիզբը: Որովհետև ոչ Ադամը, որ տեսնում էր Աստծուն և ոչ Աստծո սիրելի Նոյը հեթանոս լինել չէին կարող: Ադամից սկսած տասը սերունդ մոլորվեցին մեղքերով ու վայրագ կրքերով, այդպես փչացան և եղավ ջրհեղեղը: Միայն Աստծո ձայնը լսող Նոյը փրկվեց իր ընտանիքով: Եվ ամենքն էլ այսօր Աստվածապաշտ նույն Նոյի զար-

մերն են, ողջ մարդկությունը: Հեթանոսությունն ուրեմն՝ Նոյի զարմերի Աստծուց հեռանալու, տգիտորեն կամ ստվերային կարգով երևույթները քննելու կամ մեծազոր մարդկանց որպես աստվածություն կռապաշտելու հետևանքով եղավ: Կամ արքան մահվան սպառնալիքով հրաման էր տալիս իր վաղամեռիկ որդու արձանը պաշտել, դրան զոհեր մատուցել: Կամ ավելի խայտառակն էլ. աստվածներ էին համարում անբան անասունների արձանները և այլն: Իբրև թե անբան կենդանիներն են իրենց ստեղծել: Դրանք ամենքն էլ Աստծո տված բանականությունից, Բանից, այն է՝ ճշմարտությունից հեռանալու մեծ մոլորումներ, մեծ շեղումներ էին և ենթակա աղետներով կործանման:

Եվ հետո պիտի պատմության մեջ ամեն բան ճշգրտվեր Արարչի Որդի Քրիստոսի, Աստծո Բանի- Բանականության որպես մարդ ծնվելով, և Աստծո Հոգով, որ մեր մեջ նորոգեց նաև մեր գենետիկ հիշողությունը ճշմարտության մասին:

Եվ ճշմարտությունը կորցրածները պիտի Քրիստոսով վերստին վերագտնեին ճշմարտությունը:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՈՎ ԵՂԱՎ,- Քրիստոսի մասին վկայում է Հովհաննես Ավետարանիչը:

Կրկին ընթերցենք Հովհաննեսի Ավետարանից, տեսնենք, որ այդպես է.

«Սկզբից էր Բանը նաև՝ բանականությունը և Բանը Աստծո մոտ էր: Եվ Բանը Աստված էր: Նա սկզբից Աստծո մոտ էր: Ամեն ինչ նրանով եղավ և առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղել է: Կյանքը Նրանով էր և կյանքը մարդկանց ներսում լույս էր: Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է և խավարը Նրան չնվաճեց» *(Հովհ. 1, 1-5):*

Այս այն նույն բանական լույսն է, որ Աստված ասաց.- Թող լինի լույս և եղավ լույս: Եվ այդ լույսը Քրիստոսով երկուհազար տարիներ ի վեր նաև մարդկանցս մեջ եղավ: Որովհետև ԿՅԱՆՔԸ ՆՐԱՆՈՎ ԷՐ:

Որ ողջ արարչագործությունը Քրիստոսի ձեռքով ստեղծեց Աստված, այդ մասին կարդում ենք մարգարեություններում էլ, ԱստվածՈրդու խոսքում, որ ասում է. «Երբ ամենայն բան, որ ստեղծվում էր, ես Նրա (Հայր Աստծուն նկատի ունի) մոտ ճարտարապետ էի»:

Այդ է պատճառ, որ մեզ համար օր առաջ հասկանալ-ընդունելը լավ է Քրիստոսի՝ Արարչի մարդկանց մոտ ուղարկված Որդու այն խոսքը, թե.

«ԱՌԱՆՑ ԻՆՁ ՈՉԻՆՉ ԱՆԵԼ ՉԵՔ ԿԱՐՈՂ»: Նախ, որ Արարիչը ամեն բան հանձնեց իր Որդուն: Երկրորդը, որ Արարչին մարդն ավելի ակնհայտ սկսեց ճանաչել նրա Որդի Քրիստոսով միայն: -ԻՆՁ ՏԵՍԱՔ, ԱՄԵՆՔԻՆ ՍՏԵՂԾՈՂ ՀՈՐԸ ՏԵՍԱՔ,- ԱՍԱՑ ՔՐԻՍՏՈՍ: Երրորդը, որ Տերը մշտապես լավ ու բարի գործ նախաձեռնողներին է ասում. «Առանց ինձ ոչինչ անել չեք կարող»: Իսկ ահա գործ անելիս Արարչին դիմելիս՝ գործդ առավելապատիկ և զորությամբ ես իրագործում և պսակում հաջողությամբ: Ահա թե ինչու յուրաքանչյուր բարի գործ կամ բարի ուսմունք կամ բարի արարք, եթե ի բնե Քրիստոս Վեմին ինչ չափով որ չի հենվում, ապա այդքան սակավօգուտ է դուրս գալիս կամ կորստի ենթակա իր վատ պտուղներով:

### Ե). ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԻՐԱՎԻ Է ԴԻՏՎՈՒՄ ԽԵՂՃԻ ԿՐՈՆ

Քրիստոնեությունը ճշմարտության կրոն լինելով, միակն է, որ պահպանում է մարդու անհատականությունը: Եվ Աստված մարդկային արդարությունը երկնայինի հետ համեմատելով ասում է. «Մարդկայինը երկնային արդարության հետ համեմատած՝ նման է դաշտանի կեղտոտ լաթի»: Նույն դեպքում Պողոս առաքյալն ասում է՝ Օրենքի արդարությունը Աստծո Սիրո արդարության համեմատ՝ Ստվերի է նման: Այսինքն թե,

Պատվիրանապահությունն անգամ ստվերի նման է, երբ դու Հարուցյալ Աստծո Որդու հաղթանակի Շնորհներով ես ընթանում: Քրիստոսին հավատալով: Քանի որ այդպես կամա-ակամա կատարած ես լինում բոլոր պատվիրանները՝ սիրո մեջ լինելով: Քանի որ Կատարյալ Աստված Սեր է և Սիրո հովվություն: Կատարյալ Սուրբ- արդար: Իսկ Սիրո մեջ մեղք չկա: Այդ Սիրոն արժան ցեղ ու ժողովուրդ է միայն արժան կազմավորել: Աստված մարդկանցս ասում է՝ դարձեք, մոտեցեք ինձ, մտեք այդ Սիրո մեջ և ինչի կարիքն ունեք՝ կունենանք և ավելին կունենաք, ներառյալ և կյանք-անմահությունը: Մի՛ երկմտեք, դարձի քայլ արեք, կտեսնեք, կճանաչեք բարին:

Նման ճանապարհով ընթացողը երբևէ խեղճ լինել չի կարող: Արտաքինից կարող է այդպես թվալ, բայց ոչ երբևէ ներքին մարդու տեսակետից:

Ով կյանքն է սիրում՝ անհնար է, որ առավել կատարելանալու փափագ ու ձգտում չունենա, երբ կատարելությունը սահմանափակումներ չունի: Խեղճը չի էլ ձգտում կատարելության: Ճշմարիտ քրիստոնյան շարունակ ձգտում է Աստծո կատարելությանը իր ըմբռնման համեմատ: Մեռած հոգով կամ մոլորված մարդն է, որ իր անկումների մեջ ավելի կատարելանալու փափագ ու ձգտում չի ունենում և գոհ է իր մեռած վիճակից: Կամ իրեն պետքն էլ չէ, թե շեղ է գնում: Իրեն պետք էլ չէ աշխարհի մեղքի և դատաստանի պատճառն իմանալ: Եվ կատարյալ լինելու փափագն արթնանում է, երբ դիմում ենք աստվածճանաչման և Տիրոջով ինքնաճանաչման: Եվ միայն Աստված կարող է ճշմարիտ ինքնաճանաչում սովորեցնել մեզ, քանի որ իր ստեղծածին լավագույնս գիտի, քան ստեղծվածն ինքն իրեն: Նման ուսուցում նա տալիս է նախ՝ բնության բարոյականության չափանիշներով, հոգևոր գիտության բանալիներով, իսկ հանցավոր մարդկանց դարձի համար արտահայտում որպես օրենք ու կանոն: Ինչպես Մխիթար Գոշն է ասում, թե՝ օրենքը հանցանքն անդամահատելու և հանցավորներին գոնե միջակ մարդ դարձնելու համար է, մարդուն անբարո ինքնակործանումից ետ պահող հատող դրույթներով, որ երկիրը բարօրության մեջ շենանա: Գոշը ոչ քրիստոնյաների համար օրենքը ողջ խստությամբ է կիրառում, իսկ քրիստոնյաների համար պատիժը՝ շնորհի ներումով արտահայտում, ըստ Ավետարանի շնորհումի, այսինքն՝ հանցավորն իր պատիժը լրացնում է ինքնակամ ապաշխարությամբ: Սա ևս ոչ թե խեղճ, այլ հոգեպես ուժեղ լինելու հատկանիշ է: Որովհետև, եթե մեկն արդեն պատրաստակամ է իր պատիժն Աստծով լավագույնս խոնարհ կրել, իր խաչն ինքը տանել, ապա մարմնավոր օրենքի խստությունն ավելորդ է նրա համար, որ յոթնիցս ցած է իր գտածից: Քանի որ Քրիստոսով է հնարավոր մարդ կերտվել: Մի դեպքում նրան պատժում են, մյուս դեպքում ինքն է իր պատժի խաչը վերցնում Աստծո կամքով և Հոգով: Հոգով ուժեղն է մարդ կերտվելու համար իր խաչը վերցնում և ոչ թե տկարը:

Յուրաքանչյուրս իր խաչն ընդունում է իր երկնքի որդի վերածնվելու դարձի չափ:

Նման մեկն արդեն ոչ թե խեղճ է, այլ իր տկարությամբ զորավոր, անչափ զորավոր: Հերոս այսինքն: Ինքն իր անմարդկային գծերը պարտության մատնող հերոսին խեղճ ասելն է մտավոր խեղճություն:

Որովհետև ով սիրո շնորհով ազատ է օրենքից և վեր է օրենքից, և սուրբ ապրելով է վեր, նա արդեն Աստծո որդի է: Մեզ թող չխաբի նրա արտաքին խեղճությամբ ապրելը, մարմնավոր մեծ աղքատությունը, երբ այդպիսի մարդու հագած լաթերն իսկ լույսի նման են: Ինքն իրեն հաղթողն արդեն օրենքի իմացումն ու հարգանքն իր մեջ ունի, թեպետ ավելի վեր է օրենքից: Յուրաքանչյուրս իր հավատի դարձի չափով. չափ, որ որոշվում է ոչ միայն մեր կամ տվյալ ազգի հավա-

տով, այլ մեր հավատավոր նախնիների թողած հոգևոր ժառանգությունը հարգանքով հենարան դարձնելով: Եթե այդ ժառանգությունը այս կամ այն չափով չենք դրժել կամ խառնակել կամ ապականել՝ կեղտոտ նպատակներով արված գրագողություններով, որ ոմանք անում են: Ուստի անհատ և ազգ կատարելացնող ու բժշկող այս ճանապարհը հոգով ծույլերի տեղը չէ և ոչ էլ բանագողերի: Կատարելացման ճանապարհի մեջ ծուլությունը մահացու մեղք է համարվում: Իսկ բանագողերը ինչ գողացան ապականում են, ըստ իրենց խոզավարք ընթացքի: Ով մեկն ունի՝ քրիստոնեությամբ կրկնակի հոգևոր շնորհ կարող է ունենալ, աշխատել, նվաճել, ով տասն ունի՝ քսանը: Հոգու վերանորգման, պահպանման, հոգին Աստծո Բանի միջոցով՝ կատարյալ, արքայական դարձնելու, զորավորման կրոն է մեր կրոնը, աստվածանման մարդ դառնալու կրոն, եթե... չենք ապականում նրան կեղծ խոնարհություն ցուցաբերելով: Աստծո կրոնը թե՛ ամենաետին հանցագործից դեպի միջակ մարդ դառնալու համար է և թե՛ ամենամեծ մարդու՝ հանճարի համար էլ, նրան՝ Աստծո նմանությամբ դարձնելու: Յուրաքանչյուրին, ըստ իր չափանիշների:

«ԻՆՉ ՉԱՓՈՎ ՉԱՓԵՍ՝ ՆՈՒՅՆ ՉԱՓՈՎ ՊԻՏԻ ՉԱՓՎԻ ՔԵԶ ՀԱՄԱՐ»: «ԻՆՉ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՍ ԱՅԼՈՔ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՆԵՆ, ՆՈՒՅՆՆ ԻՆՔԴ ԱՐԱ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ»:- խրատում է Հիսուս:

Ոչ մի խեղճ նման պատվիրաններով մի օր էլ չի կարող ապրել, այլ միայն հոգով ուժեղը, հոգևոր հերոսը, որ հայացքն ուղղել է հավիտենականին, որ արդեն հավիտենականի մեջ է բնակվում, մարմնով միայն գտնվելով այս աշխարհում:

Բանտում՝ հանցագործն էլ կարող է Քրիստոսի հետ՝ հոգով մխիթարվել, մարդանալ, հոգով հայտնվել ազատության մեջ, երկրի թագավորն ու կաթողիկոսն ևս Տիրոջով այնպես օրհնվել, որ այդ օրհնությունը զգա, այդ Լույսից ծագող գործերով աճ ապրի ողջ հոտն ու ժողովուրդը: Երբ ամենքն ուղղության մեջ լինեն, ամենքն էլ պիտի օրհնվեն, պիտի զորավորվեն Ակունքի, այն է՝ Վերին զորությամբ և իրենց մեջ պիտի օրհնեն Տիրոջ Հայտնությունը: Եվ իրենց այդ նոր բնույթով, Սիրո բնույթով Աստծո հոգածությունը արտահայտեն մեր ողջ ազգի մեջ. Ինչպես գրվածքն է ասում. «Ոմանք 100 հնարավորից՝ 30- ը, ոմանք 100 հնարավորից՝ 60- ը, ոմանք էլ՝ 100 հնարավորից 100-ն էլ»: Այսինքն, ինչպես գրվել է՝ որքան նախօրոք դառնանք Աստծոն, որ սուրբ է, և որ չափով դառնանք, այնքան Աստված դեպի մեզ պիտի դառնա՝ Իր Խոստմամբ, շնորհներով և զորությամբ, ամենահաղթությամբ: Այսինքն. ով սրտանց դիմի Քրիստոս Հիսուսին՝ երբևէ ձեռնունայն չի մնա: Եվ որքան կատարյալ լինես, ըստ Աստծո Քրիստոս Բանականության, այնքան ինձ չես վնասի և քո վնասին ի պատասխան, ըստ ոսկե օրենքի՝ ես քեզ չեմ վնասի, ընդհակառակը, հարկ եղած պահին՝ կօգնենք միմյանց՝ անձի պես միմյանց սիրելու Վիթխարի դեղատոմսը գործադրելով: Արժանի մարդկանց համար եմ ասում այս: Քանի որ այստեղ Թագավորը՝ սերն է միայն: Քանի որ անարժանների չափանիշներն այլ են և խիստ եսակենտրոն, որով անկարելի է ոչ Աստծու և ոչ էլ անձի ճանաչումը:

Հոգևոր Նժդեհը հիմնականում իմաստության այս բանալիով է խոսքով հոգեկերտում իրականացնում: Նախ մարդու մեջ ներուժ է արթնացնում, որ մարդն ինքն իր մեջ իր անմարդկային գծերը հաղթահարի, նաև աշխարհային ու ժառանգական բացասումները՝ նախանձը, քենը, ժլատությունը, նաև որ՝ նախնի հոգևոր մեր հսկաների հետ հաշվի նստի: Հոգևոր Նժդեհը քաջալերում է հաղթահարել կրոնամերժությունը, կուսակցամոլությունը և այլ նման ախտեր. և անձի ու անձնականի նսեմ այլ հատկանիշներ է մերժել տալիս՝ հանուն վեհ նպատակների:

Միայն խիզախներին հատուկ վարքագիծ է անհրաժեշտ նոր, աստվածանման մարդուն. այդ է շարունակ քեզ հետ միացած ի սեր հուշում Նժդեհը: Սուտը, կեղծիքը, ամենայն ստորությունները մարդն ինքն իր մեջ գտնել- վերացնելու՝ հերոսական վարքագիծ է անհրաժեշտ,- շեփորում է իմաստուն զորավարը:

Սեփական խաչիդ մոտենալու ու այն վերցնելու կենսատու ջատագովումներ ու ոգեշնչումներ են Նժդեհի խոսքերը և ոչ թե ծանծրալի, անտարբեր քարոզներ կամ հոգով և ոգով մեռած մարդկանց խոսքերի անհամ կրկնություններ: Եվ Նժդեհյան մատուցումներն արվում են ազգի փորձված նահապետի արթուն սիրով:

**«Արդար է հայրենիքին ծառայել ամեն ինչով, բացի ստորությունից»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ: Հատընտիր):*

Մինչև մարդը սուրբ ու աննախանձ չլինի, Աստվածաշնչյան դպրություն մինչև չունենա իր հոգում, մարդասեր մինչև չլինի, ինչի՞ նման պիտի լինի նրա ծառայությունը Հայրենիքին: Խարդախի ծառայությունը Հայրենիքին Հայրենիքի հանդեպ էլ խարդախություն գործելը չէ՞ միթե:

Որովհետև Աստված սուրբ է և արդար:

**«...Գոյությունդ քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա, մի՛ ստիր...»** *(Նժդեհ. «Դաշնակցության պանթեոնը« շարքից):*

Հոգևոր Նժդեհի համար՝ նախ Աստվածն է, ամեն բանից վեր, ապա Հայրենիքը: ԲՆԱԿԱՆ է, ՆԺԴԵՀԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՀԸ ՄԻ ԿՈՂՄ ԵՆՔ ԴՆՈՒՄ, ՔԱՆԻ ՈՐ ԻՆՔՆ ԻՍԿ, ԻՆՉՊԵՍ ՏԵՍԱՆՔ, ՏԻՐՈՋԻՑ ՆԵՐՈՒՄ Է ԽՆԴՐՈՒՄ ԻՐ ՄԵՂՔԻ ԴԻՄԱՑ:

«ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ»- քարոզում է ընդհանրական հոգևոր Նժդեհը:

Որովհետև եթե մարդն ըստ Աստծո պատվիրանների չապրի իր Հայրենիքում, ապա Հայրենիքը կդառնա ապականությունների վայր: Այդ է պատճառը, որ Նժդեհը առանձնակի



փափագով է խոսում մեր ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ մասին, ջանալով Հոգևոր Հայրենիքի համար սրբավարք և զորընդեղ քաղաքացիներ պատրաստել, դաստիարակել, ովքեր թշվառին չիցե թե ոտնատակ տան, այլ՝ ծառայեն:

**«...Սիրի՛ր թշվառին, ծառայի՛ր սրան, թող քո ցավը թշվառի ցավը, Քո Աստվածը՝ թշվառի Աստվածը լինի...»** *(Նժդեհ. «Դաշնակցության պանթեոնը« շարքից):*

Այս ուղղորդման նժդեհյան Բանալին, Կարևորը նախ՝ ՑԵՂԻ ԱՊԱՎԵՆՆ է. նախ Աստված, ապա Հայրենիք (ցեղը):

Աստված, որ սրբացնող ծնողն է Հայրենիքի, ցեղի (ազգի, ժողովրդի) և հոգևոր ու մարմնավոր հացը, սնուցողը կենսականության և խրատատուն և դաստիարակը և զորավորողը և գլխավոր զորավարը և հաղթանակի տանողն ու պարգևը Հայրենիքի: Ցեղն առանց Աստծո՝ որբ է: Նախ Տերն Աստված, որ ցեղն ազնվանա, մաքրվի, պահպանվի ու չշեղվի ճշմարիտ նպատակ ու հանգրվանից, ճշմարիտ վարքից և ապա ցեղը, որ երկրորդ պատվիրանն է թե՝ սիրիր ընկերոջդ (մերձավորիդ և թե հասու ես՝ ցեղիդ, ժողովրդիդ սիրիր և թե ավելիին էլ ես հասու՝ մարդկությանը սիրիր): Եվ ինչպես քո անձը կսիրես՝ այդպե՛ս սիրիր: Այս վերջին պարագան արդեն խաչակրության բնագավառն է՝ հանուն մերձավորի սիրո և մարդասիրության:

ՀՈԳՈՎ ՈՒԺԵՂՆԵՐՆ ԵՆ ՄԻԱՅՆ ԽԱՉԱԿԻՐ՝ ՀԱՆՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ:

Ապա, ուրեմն, ժողովուրդ մեծ ընտանիք է, ցեղը՝ տեսակ, սակայն որի հիմնադրույթը նախ ազգային կրոնի և ազգային սրբությունների լիարժեք պահպանումն է՝ թե բարոյական լինելու պատվիրանները և թե զոհաբերությունները, և վերջիններս (զոհաբերությունները) իմաստասեր Նժդեհի համար ոչ թե կենդանիներ մորթելու դրդումն ունեն, որ հին է և թյուրըմբռնվում է հեթանոսների կողմից, այլ՝ գաղափարական են՝ Քրիստոսատուր, հանուն Աստծո, հանուն ընկերոջ,

ազգի, հանուն թշվառի, հանուն սրբություններ ու արժեքներ պահպանելու համար են: Այսինքն՝ գիտակցական են, ԲԱՆԱԿԱՆ: Անձի ու անձնականի զոհաբերել- նվիրաբերելն է. այդ է Նժդեհական Աստվածաշնչյանը, ներառյալ և կյանք դնելը հանուն հայրենյայց նվիրական բաների, հանուն թշվառի մխիթարության: Նժդեհի քարոզածը հանուն այլոց մարդ ձևավորման՝ նահատակության նման մի բան է: Այդժամ բանավոր նահատակդ կմոտենաս Աստծուն, կդառնաս մարդ- Աստված:

ՄԵՋԲԵՐԵՆՔ ՆԺԴԵՀ ՄԱՐԳԱՐԵԻ ԱՅԴ ՈՍԿԻՆ.

**«Զոհաբերի՛ր...**

**Զոհաբերի՛ր անվերջ՝ առանց մնացորդի:**

**Սովորի՛ր և սիրի՛ր զոհաբերել ու տանջվել բավականության լուսափայլ ժպիտը երեսիդ... և դու կմոտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ- Աստված...**

**Այդպես է պատգամում իմ մարգարեն իր հրեղեն խոսքը...**

**Մոռացի՛ր քեզ...**

**Հանուն թշվառների մոռացիր քեզ, երբ հազար հազարներին սև ցավն է ընկերանում, բռնակալ կարիքը նեղում...**

**Ուրախ քրքջալու ժամին մի՛ մոռանա, որ դառնորեն լացողներ կան...**

**Սիրի՛ր թշվառին, ծառայի՛ր սրան, թող քո ցավը թշվառի ցավը, Քո Աստվածը՝ թշվառի Աստվածը լինի...**

**...Գոյությունդ քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա, մի՛ ստիր...**

**Ստել՝ նշանակում է՝ հայհոյել ճշմարիտը, ուրանալ՝ նշանակում է դադարել մարդ լինելուց...**

**Եղի՛ր բացարձակ...**

**Այսպես է պատգամում իմ մարգարեն իր աստվածաշունչ խոսքը և հոգիս նրա հրեղեն պատգամներին գերի՝ վեհորեն իր թևերն է պարզում....»** *(ՆԺԴԵՀ. «Դաշնակցության պանթեոնը» շարքից):*



Եվ այս հրեղեն կոչն այն բանի համար է, որ խաչ վերցնելը պատիվ, պարտք ու սեր դիտենք և ոչ թե միայն դժվար, տհաճ կամ անիծապարտ մի հրաման, այլ որդիական ինքնակամ ըմբռնում՝ և հանուն Աստծո՝ պատարագ լինելու, շատ քչերին հասու բանավոր կյանք: Տկարները նման բան չեն կարող, բայց քիչ բան չէ, երբ ողջ կամքով և հոգով կարող են համաձայնվել այդ արդարությանը, բայց հոգով արծիվները կարո՛ղ են՝ Քրիստոսով իրենց մահացու ցանկությունները ընկճելով, այդ վերելքը ապրելով: Տիրոջ նման Գողգոթա բարձրանալով է, որ կարող են: Որովհետև հանուն սիրո են այդ անում, որ նշանակում է ժողովրդի և Աստծո որդի լինել և ոչ որպես ստրուկ, ըստ Օրենքի հրամանի մեքենայության:

Այդպես՝ կարող են և քչեր այդպես անում էլ են:

Որովհետև սա Հայաստանն է, Նոյյան որթատունկի արմատի վայրը: Տա՛ Աստված, որ խոստովանության և ապաշխարության զենքերով, ոմանքս, գոնե ետիններից, որդի և ընկեր լինենք նրանց շարքում, ում Հոգով մեր մեծերի մեջ առաջիններ ենք տեսնում:

Եվ որքան կատարյալին ենք նայում, այնքան մեր հոգու աղքատություններն ի հայտ են լինում մեզ և մղում այդ աղքատությունները հարստության վերափոխել՝ մեր կենդանի, աշխատող վարքերով: Եվ եթե մի օր մեզ թվա, թե՝ այլևս հոգևոր աղքատ չենք, նշանակում է, թե՝ դադարել ենք Կատարյալին նայել, որովհետև Աստծո տված շնորհները սահմաններ չեն ճանաչում, այլ մարդուն տանում են՝ Աստվածացման, ինչպես Նժդեհը ևս ասում է և վստահ հաստատում: Որովհետև Աստված ինքն իր նմանություններն է մարդկանցից կերտում: Ինչպես որ իր իսկ ձեռքով, իր նմանությամբ աճեցրած առաքյալներին Հիսուս արդեն եղբայրներ անվանեց՝ տեսնելով նրանց արդեն Աստծո որդիներ լինելու արժանավորության մեջ: Նժդեհյան ուսուցումները՝ հանուն մերձավորի նահա-

տակության նման կյանք ապրելու, տանում են մարդուն Տիրոջ եղբայրներն անվանվել:

«Սովորի՛ր և սիրի՛ր զոհաբերել ու տանջվել բավականության լուսապիայլ ժպիտը երեսիդ... և դու կմոտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ- Աստված...»

Այսպիսով, Տիրոջով կատարյալ լինելու խոսքն է հոգևոր Նժդեհն ասում, թե. «Կատարյալ եղեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ»: Տա՛ Աստված. մենք էլ ոչ միայն լսողներ լինենք, այլ նաև՝ ի սրտե հնարավորինս առավել կատարողներ: Ամե՛ն:

Իսկ ինչ վերաբերում է մեզ՝ քրիստոնյաներիս ուղղված այն մեղադրանքին թե. «Մի այտիդ երբ ապտակեն, մյուսն էլ դարձրու» Տերունական խոսքը, որն իբր խեղճություն է սովորեցնում, այդ մտքի խեղճությամբ, սրտում սեր չունենալով մտածողներին, չկամ մտածողներին այդպես կարող է միայն թվալ: Ինչու՞: Գողգոթայի ճանապարհին մեր Տիրոջը թե ապտակում էին, թե հայհոյում, թե ծաղրում, թե վրան թքում, բայց նա ոչնչով չէր պատասխանում, որովհետև Գողգոթայի ծրագիրն էր իրականացնում: Այդտեղ խոշոր, համամարդկային, համատիեզերական հաղթանակ էր կայանում և ոչ թե խեղճության: Որովհետև եթե պատասխաներ՝ մարդասիրության, մեծ ներման ծրագիրը չէր արդարանա, և Խաչելությունը կդառնար ոչ թե մեղքերի ներում և շնորհների գործադրմամբ փրկության ելք՝ այդ ներմամբ, այլ կդառնար միայն Օրենքի սխալ կատարած, խարդավված, սխալ մի դատաստան: Մարդկային վայրընթաց մի բան: Կդառնար չիրագործված, խափանված ծրագիր: Մարդն իր կատարելացման կամ սիրելիների համար Գողգոթա բարձրանալիս այն նախադրյալը, թե. «Մի այտիդ երբ ապտակեն, մյուսն էլ դարձրու» անկարելի է, որ չընդունի, եթե ոչ՝ Ավետարանի քարոզած մարդը չէ, և օտար է մեզ: Այսինքն. ոչ թե խեղճը, այլ միայն հոգով զորավորն ու հոգով հաղթողը, հոգով արքան կարող է այդպես լինել և անել, վարվել. չարչարվելով իր մերձավորների, յուրայինների, իր սիրելիների, ազգության հոգևոր կատարելացման համար՝ նրանց անարդար վարմունքներին չպատասխանելով, որովհետև երբ մերձավորդ երեսիդ ապտակի, լավ է մյուս երեսդ էլ պարզես, քան ապտակով պատասխանես, քանի որ նա դեռ քո հասկացողությունը չունենալով՝ քո պատասխան ապտակից կարող է իսպառ կործանվել: Մերձավորներիդ սիրո համար պատրաստ ես մյուս այտդ էլ պարզել վերստին ապտակ ընդունելու: Այս սիրող մեծությունն է: Այդ վեհ լինելուդ վկայությունն է: Վարքիդ կատարելությունն է: Անհասկացող մերձավորներիդ շրջանում՝ նահատակության նման, համբերատար կյանքիցդ է շարունակ մերձավորներից ապտակ ընդունելն ու ապտակով չպատասխանելը: Նման մարդկանց է, որ Հիսուս ասաց՝ դուք եք լույսն աշխարհի և աղը երկրի: Այդ խաչելության նման կյանք է՝ հանուն մերձավորի: Վեհություն է և ոչ երբևէ խեղճություն: Հզորի սիրո արտահայտություն է և ոչ երբեք տկարության արտահայտություն: Տհասին, տգետին կարող է Հոգով զորեղի համբերատար նման հաղթանակը խեղճություն թվալ, ընկած կյանք, բայց ոչ Աստծո սիրով ընթացողին: Տա Աստված, նման զորեղներ լինենք՝ հանուն մեր մերձավորների սիրո: Եվ այտ շուռ տալու Տերունական այս խոսքը ամենևին կապ չունի ազգամիջյան բախումների հետ, երբ գալիս են քո արժեքները պղծելու և հոգևորդ արատավորելու, մերձավորներիդ փչացնելու: Շնորհներով, նեղությամբ ձեռքբերածներդ՝ ոտնատակելու ու կորստի մատնելու[2]: Այլ այստեղ պիտի հիշել տաճարի սրբությունը պահպանելու համար Հիսուսի վարքը, երբ Հիսուս չվանով

[2] Նորից մեջբերում անենք Աուրոբինդո Գհոշից. «Երբ չարը գալիս է քո բարիքը, արարվածքը խժռելու, ավերելու, նրա դեմ Ուժով դուրս չգալը կնշանակի դառնալ նրա հանցակիցը (ծանոթ.՝ հրատարակչի):

ծեծ տալով տաճարից դուրս արեց ավազակներին, ասելով.- Սա աղոթքի տուն է, իսկ դուք ավազակների ո՞րջ եք դարձրել:

Գողգոթայի ճանապարհին հանուն հավատացյալ մարդկության Քրիստոս անարգումներին ոչնչով չպատասխանեց, սակայն տաճարը պղծողներին ծեծելով դուրս արեց: Երբ մենք մեզ Հիսուսի դերում պատկերացնենք և տաճարը մեր հայրենիքի, այդժամ հարցը պարզ կդառնա, թե այդ դեմ անելը սրբություն ոտնակոխողներին չի վերաբերվում, այլ մերձավորներիդ համար բանավոր խաչելությանդ մասն է կազմում:

Ուրեմն. Հանուն հայրենյայց քո սրբությունները ավազակությամբ ապականողներին՝ հեռու պիտի շպրտես քեզանից, քո տաճարից, քո հայրենիքից և ոչ թե այդ դեմ տալու նման ասես, այս մեր գյուղերն ապականեցիր, մյուսներն էլ, խնդրեմ, ապականիր:

Անհասկացող սիրելի մերձավորի համար Խաչը վերցնողին է վերաբերվում այդ շուռ տալը, վեհերին առավել վեհացնող այդ պատվերը:

Եվ ովքերս դեռ հասու չենք փոքր կամ մեծ խաչակրության, մյուս այդն էլ մերձավորի ապտակին պարզելու, հանուն այդ իսկ մերձավորի կյանքի, չենք էլ հասկանա: Կամ. «Մեր ժամանակը դեռ չի հասել» այդ բանը հասկանալու: Գուցե՝ վերջինը: Բայց տա Աստված, որ խելամիտ որևէ մեկիս համար ուշ չլինի և ամեն մեկիս ժամանակը ժամանակին էլ հասնի, ըստ մեր գործերի և երբեք ու երբեք չուշանանք մեր Տեր Աստծո առաջ և ոչ մի բանով: Ամե՛ն:

## ԳԻՏԱԿԻՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՕՐԻՆԱԿԻ

**«Ի՞նչ է նշանակում, երբ Հայ եկեղեցին սրբացնում է Մամիկոնյան ոգին, այդ ոգու կրողներին: Արդյո՞ք դա միայն երախտագիտության տուրք է, թե՞ նաև խորագույն մտահոգություն հայրենիքի ապագայի հանդեպ: Սրբացնելով ու հավերժացնելով Մամիկոնյանների ուխտը՝ եկեղեցին մեր ժողովրդին տվել է ինքնապաշտպանության զենքերից ամենահատունն ու հաղթականը.- «մահ գիտացյալը»: Հենց ա՛յդ է տարոնականությունը»** *(ԵԺՇԵՀ. Հատընտիր. «Ինչու՞ տարոնականություն»):*

...Պտուղը ծառից հեռու չէր կարող ընկնել. և քահանայի որդի ու տիրացուի թոռ մեծ իմաստասեր Նժդեհն աշխարհի չարության մեջ մեր ազգի պատվով ապրել կարողանալու ճշմարիտ ելքը գտավ ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ մեջ: Սա արդեն առավելս առաջ էր, քան ցեղակրոնությունը: Այսինքն ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆՄԱՆ ԳԻՏԱԿԻՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՒ ՄԵՋ ԷՐ ՄԵՐ, ՓՈՔՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՎՈՎ ՀԱՐԱՏԵՒԵԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ: ՎԱՐԴԱՆԱՆՔ: ԱՍԵԼ է ԹԵ՝ ՆԱՀԱՏԱԿՎԵԼ, ԲԱՅՑ ՉԱՐԻՆ ԿՈՒԼ ԳՆԱԼՈՒ ՏԵՂԻՔ ԵՐԲԵՎԷ ՉՏԱԼ: ՀԱՂԹԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՆԴԱՆԻ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԴՐԱՇ ՕՐԻՆԱԿՈՎ: ԵՎ ԵՐԲ ԱՅԼ ԵԼՔ ՉԿԱ, ՀԱՂԹԵԼ՝ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՊԱՏԱՐԱԳՈՎ, ՈՐ ՀԱՎԻՏՅԱՆ ՉԻ ՄՈՌԱՑՎՈՒՄ: ԱՅԼ ՊԱՏԳԱՄ ՉԷՐ ԿԱՐՈՂ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐԴԱՆԸ:

ԳԻՏԱԿԻՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՄԲ ՀԱՂԹԵԼ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՒ «ԳԻՏԱԿԻՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ է». այս Քրիստոնեական ճանապարհն է, արդեն հոգով անմահների՛, պատվով ապրելու, արքայության մարդկանց ճանապարհը՝ բոլոր անհնարին ժամանակներում:

ԵՎ ԻՆՔՍՏԻՆՔՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ է՝ ԱՎԵՏԱՐԱՆԵԼ ՎԱՐՔՈ՛Վ ԵՒ ԿՅԱՆՔՈ՛Վ: ՎԱՐԴԱՊԵՏԵԼ ՔՐԻՍՏՈՍԱՏՈՒՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ:

Աստծուց երկիր առաքված Քրիստոս՝ Որդին Աստծո և մարդու, նահատակվելով ու հարություն առնելով, հաղթեց չարին ու մահին: Վարդանը մեր ազգի համար Քրիստոսի օրինակով նահատակվեց և իր կենդանի հոգով ապրելու ոգի դարձավ մեր ազգի բանական սիրո դաշտում: Առանց Քրիստոսի Վարդան լինել չէ՛ր կարող: Ճշմարտությունը մեկն է, և

մեր ազգի բանական ներկայացուցիչը, ուշ թե շուտ, իր սրտի իշխող բոլոր կուռքերը մի կողմ է դնելու, հետևելու այս ճշմարտությանը: Մանավանդ, երբ գիտենք, որ Վարդանն ու Վարդանանք մեր ազգի մեջ քրիստոնեության, եկեղեցապահպան ամենամեծ խորհրդանիշերն են: Ցեղակրոնությունը Նժդեհի համար չհաստատված էր, մոլորությամբ, շեղամոլությամբ, որ ի վերջո ավարտեց՝ մատնանշելով եկեղեցապահ Վարդանանց: Չէ՞ որ Վարդանանք այլ որևէ մի ճանապարհ նվաստացնող դիտեցին քրիստոնյա հայի համար, որովհետև մեկ արտահայտությամբ՝ Վարդանանք էին. Լուսավորչի և սուրբ Սահակ Պարթևի ժառանգորդներն ու լիարյուն ժառանգավոր հետևորդները: Եվ ինչպես տեսնում ենք մեջբերումից, որի մասին էլի ենք խոսել, Նժդեհը պարծենում է եկեղեցու օրհնությամբ, երբ եկեղեցին է օրհնում Վարդանանց ուխտը, ապա ավելի մեծ գնահատման այլ չափանիշ Նժդեհի համար գոյություն չունի:

Վարդանանց կռիվ. խրատ օրինակը մշտակա է Հայոց աշխարհում, մշտակա, քանի որ ճշմարիտ քրիստոնեությունը և ճշմարիտ արդարությունը աշխարհում բոլոր ժամանակներում է գիշակերների կողմից հալածանքի մեջ: Իսկ քրիստոնեություն և ազգ՝ մեր ազգի մեջ նույնական են, ինչպես Նժդեհն էլ է ասում. «Սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը ձուլված են ի մի բնություն....Այս երկուսի ճակատագիրը նույնացած է»: Եվ այդ նույնացած ենք տեսնում՝ առավել Վարդանանց օրինակում:

Այսօր, երբ Հայտնության Գրքի գործոններն են իրականանում և աշխարհը գլոբալացվելով, որպես շինծու «ազգայնացված« ծրագրերով՝ ասես նյութական հրաշքներից հիպնոսացված («բարեփոխում», «օպտիմալացում», «ինտեգրում». «դեմոկրատիա», «միասեռականություն», «ձիահ», «շտրիխ կոդեր», «սոցիալական քարտեր», «666-ի պիղծ ծածկագրեր», «հղիության ընդհատում», «ծնելիության կրճատում», «տան իրերը ամուսինների միջև բաժանում», «ամուսնանալուց արհեստականորեն խուսափում», քրիստոնեությանը հակառակ նման չար այլ բարքերով մշակույթի ապականում, կեղծ բարեկամություններ, ծրագրված աղքատության տարածում և նույն ձեռքով կեղծորեն աղքատին օգնելու ինքափառաբանում, որ դրդում են հեղափոխությունների, վայրընթաց բարքերի և նման էլի մեծ խառնակ բաների, որոնք գործում են այսօր ողջ աշխարհում՝ Նեռի, անգամ Աստծո անվամբ Նեռի, սակայն Նեռի նշանով, Նեռի բնույթով և վեցանոց մտայնությամբ ուղեկցվելով): Այսպես աշխարհը նյութականի պատրանքով գայթակղվում է Քրիստոսին թողած ընդունել եկող Նեռին, կեղծ քրիստոսին, որպես թե ազգերի նոր թագավորի: Մի ժամանակ է, երբ անգամ «ընտրյալներն են գայթակղվում» և հայ եկեղեցին ևս գտնվում է այդ վտանգների առաջ: Հայ եկեղեցու առանձին, հավաք, միաբան կարգավիճակն անգամ մեր իսկ պետության մեջ՝ դրսի ուժերը «անօրինական» են դիտել տալիս՝ կեղծ օրենքների ու հակասաստված հրահանգների միջոցով առաքելականը գրեթե հավասարադասելով աղանդներին: Այդպես անօրեն բաներ պարտադրել ուզելով երկուհազարամյա քրիստոնյա հայերիս, ապա՝ այս պայմաններում առավել և առավել է կարևորվում ՎԱՐԴԱՆԱՆՑ ՈՒԽՏԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է՝
ՀԱՆՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ:

Նժդեհի խոսած ոսկու պես՝ «ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ» նշանաբանով:

«Մեր եղբայրները հաղթեցին (վիշապին) Գառան արյունով և նրա վկայության խոսքով: Եվ չհամաձայնեցին վիշապի հետ նույնիսկ ի գին իրենց մահվան»: (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ- 12): Սուրբ Ավետարանից և նաև Հայտնության Գրքի այս սերմնահատիկից են կյանքի կոչվել Վարդանանք: Եվ, իհարկե, այսօր

արդեն կյանքի կոչվող և ոգեկոչով ելնող մեր օրերի Վարդանանք:

Վարդանանց Ռիխտի Նժդեհականներին ուսուցանողը Նժդեհն է, որ բիզնեսով երբեք չէր զբաղվել, անգամ հրաժարվում էր աշխատավարձ ու թոշակ ստանալ, և իր նեղությունների, չարչարանքների մեջ էր Ավետարանը մատուցել որպես կենդանի հաց: Բայց Հիսուս նախօրոք մոլորված մարդկության աղտոտումը տեսնելով է ասել. «Գայթակղություններ անհնար է որ չգան, բայց վայը պիտի լինի գայթակղողին»: Այսինքն՝ գայթակղվածին Տերը կազատի:

**«Կորցնելով սրբության զգացումը՝ մարդն անխուսափելիորեն դառնում է շնական և մարդատյաց»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

Հստակ է ասված՝ Նեռի բերած անսրբության հետևանքների մասին: Մեծ Նժդեհի նշած շնական և մարդատյաց Նեռն է հառնել աշխարհի վրա, և նրան հարողներն ուրախացած, ժամանակավորապես աշխուժացել են, որովհետև իրենց պղծությունները ժամանակավորապես դատող դեռ չկա:

Ասելիքս այն է, որ մեր դավանանքի Արծիվը եկեք չնսեմացնենք՝ չղջիկ կոչելով, որ ցերեկվա լույսով չի թռչում: Բարի նախանձախնդրությամբ լցվենք, որ Աստված էլ մեզ օգնականի և մեր եկեղեցին առավել ու առավել զորավորվի ու պայծառանա Հայտնության Գրքի հաղթանակների մեջ: Նորից հարկ է հիշենք Նժդեհի խոսքը եկեղեցու զորեղ լինելու մասին: Եկեք հիշենք, որ մեր հայրերը փափագում էին մեր ողջ ժողովրդին որպես Աստծո եկեղեցի տեսնել, ապա ավելի ջանադիր կլինենք և ավելի հավատարմողներ ի սեր մեր ողջ ազգություն-եկեղեցու և մեզ: Եվ Աստված կարողության ուժ կտա ամենքիս:

«... ՍԻՐՈՒՄ Է ՆԱ, ՈՎ ՈՒԺԵՂ Է. ՔՐԻՍՏՈՍ ՍԻՐՈՒՄ ԷՐ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՈՒԺԵՂ ԷՐ... ՆԱ ՍԻՐՈՒՄ ԷՐ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՍԻՐԵԼՈՒ



ԵՒ ՆԵՐԵԼՈՒ ՉԱՓ ՀԶՈՐ ԷՐ: ՆՐԱ (ՔՐԻՍՏՈՍԻ: Մ.Ռ.) ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՊԻՏԻ ԴԱՌՆԱ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ...»

Հիշելով Սուրբ Սահակի տեսիլքը Նեռի դեմ հայերիս սքանչելի հաղթանակի մասին, համոզված եմ, որ մեր ազգի մեջ առավել պտղաբեր պիտի լինի Վարդանանց սերմը՝ մեր օրերի բանավոր Վարդանանցով և Վարդանանցից էլ ավելիով, քանի որ Վարդանանք արդեն եղել են և զորության հենք են՝ իրենցով առավելս ավելացնելով մեր օրերի եկած և եկող նվիրյալներին:

## «ՈՎ ՉԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ԻՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ»

**«Ով չի գերազանցում իր նախորդներին, նա անարգում է նրանց անունը՝ մեղանչելով հոգու զարգացման օրենքի դեմ»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

Եվ երբ պատվեր է՝ գերազանցել-զարգացնելը, ապա որքա՜ն վատ է՝ դրանք ետընթաց տանելը կամ բարոյալքելը կամ կապկելը կամ զարգացումն արգելակելը:

**«Մարդկային իմացականության դեմ խորապես մեղանչում է նա, ով իրեն տրված հրամանը չի գործադրում ստեղծագործաբար»** *(Նժդեհ. Բանտային գրառումներ):*

**«Ստեղծագործո՛ղ, ոչ նմանվող: Անձնասպանություն է նմանվելը»** *(Նժդեհ. Որդիների պայքարը հայրերի դեմ):*

Կրկին հիշենք Մխիթար Գոշի խոսքը նույնի մասին. «Որովհետև ի սկզբանե ոչ թե ամենայն արվեստի գործ մեկ սկսողի կողմից ավարտվեց, այլ բազում ժառանգորդ այրերի ձեռքով»:

Անհոգի նմանվելը, նմանակելն ու կապկելը առաջընթաց չունեն, այլ գարշեցում են առաջացնում: Սատանայի մասին ասում են, որ նաև ամենաճարպիկ կապկողն է, խաբեականորեն պատրողը, սակայն ոչ երբեք կյանք ունեցող ստեղ-

ծագործը: Այսինքն. ըստ էության Բանը չէր ընդունում, Նրան մաս չէր կազմում, որով է միայն կյանք ունեցող ստեղծագործությունը:

Բնականաբար, ինչպես ժողովուրդն է ասում՝ սարի գագաթին կանգնողը՝ բարձր է սարից, բայց սարն է նրա հենարանը: Եվ երբ դեռ սարի փեշին ես կամ լանջին, սարով կարող ես ուրախանալ, բայց նրան երբևէ չգերազանցել: Սակայն հարկ է ազգային ձեռքբերումների կատարը ստեղծագործաբար բարձրանալ. այս է ասում մեծ Նժդեհը: Այսինքն. պիտի մեր նախորդներին ճանաչե՞նք, ընդունե՞նք, խոնարհվե՞նք (ոչ թե կապկենք), եթե ոչ անգիր անելով ոչինչ էլ չենք հասկանա նրանց տվածից: Պիտի հարգենք նախորդներին, որ ապա կարողանանք գերազանցել՝ իրենց ձեռքբերածները ստեղծագործաբար շարունակելով, քանի որ Աստծունը ավելի վեր է և վեհ, քան մարդկային տեսանելի անգամ մեր սիրելի մեծերի գագաթները: Որովհետև իր մեծերի հետ անմիաբանը՝ օտար է այսինքն:

Մեր մեծերի մշակույթի սար կազմողներից է Նժդեհը, ում ևս պիտի ստեղծագործաբար մոտենանք և ոչ թե կապկենք կամ կռապաշտենք, ինչպես, ցավոք, կուսակցություններն են այս կամ այն չափով հակված անել:

## «ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒ ԿԱՅԾԸ»

Նժդեհի քրիստոնեական խոսքում Տիրոջ Հարության կենսականությունը կա: Եվ իր հստակությամբ ապշեցուցիչ է՝ թմրած կամ կիսակենդան հոգուն հարություն պարգևող իր զորությամբ: Այս առումով՝ Աստծո առաքյալ է մեծ Նժդեհը, որովհետև Քրիստոսի հարուցանող կենդանությունը կա նրա խոսքի մեջ այնպես, Ինչպես ինքն է վկայել.

**«Քրիստոնյան նա չէ, ով քրիստոնեական վարդապետության տարրերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մեջ և տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մեջ մի քիչ քրիստոնեություն կա, կայծ Ամենահզոր Աստվածամարդու (իմա՝ Քրիստոսի: Մ.Ռ.) հոգուց»,-** գրում է Նժդեհը:

Աստվածամարդու հոգուց կայծ ունի մեր Նժդեհը:

Այնքան էլ շատ չեն Նժդեհ զորավարի ոչ քրիստոնեական, կամ մեղանչման, հակասական էջերը: Ուստի, մեր ազգի լուսավոր այրերն ևս, դրանք և խիստ կուսակցական էջերը մի կողմ դնելով (էտելով), «որպեսզի առողջ ճյուղերն ավելի առատ բերք տան» (Աստվածաշունչ), կարծում եմ, բարի կլինի այդպես՝ Մեծ Նժդեհին ներկայացնել դպրոց, ԲՈՒՀ և լայն հասարակայնությանը: Ինչպես ասացինք՝ Սողոմոն իմաստունի աշխատանքներն ևս այդպես մատուցվեցին. Աստվածաշունչ ներմուծելով նրա Աստվածայինը և ոչ թե մարդկային մոլորումներն ու հակասական ըմբռնումները:

Իսկ Նժդեհն ինչ քրիստոնեությունից խոսեց, այնքան լավ խոսեց, որ այդ բանի համար է երբեմն թվում թե՝ քիչ խոսեց: Նժդեհն իր քրիստոնեական ոսկիներն՝ իր կյանքով վկայեց, այդ պատճառով նրա խոսածները համաքրիստոնեական արժեքներ դարձան՝ այդ ամենը ընմռնողների համար:

## ԵԹԵ «ԱՍՏՈ ՓԵՇԻՑ ԲՈՆԱԾ ԱՊՐԵԻՆՔ», ԵՂԵՌՆԸ ՉԷՐ ԼԻՆԻ

**«Մեր հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստծո փեշից, դուք էլ բռնեք ինձանից»** *(Ռ. Համբարձումյան «Վարք Նժդեհի», էջ 105):*

Հաճախ կրկնեցինք այս նախադասությունը և հարկ էր կրկնել:

Ըստ քննության, մեր ազգի եղեռնը թե Խաչելություն էր և թե ինքնապահպանման Աստվածային պատվիրաններ բարձիթողի անելու հետևանք: «Աստծո փեշը բաց թողնելու» հետևանք: Երկու հակադիր բաներ: Մեկը՝ մինչ ի մահ նվիրում,

մյուսը՝ անպատասխանատվություն՝ վատ հովիվների, թերահավատ կամ խառնհավատ անհատների, միայն իրենց անձնական հարստացումը փնտրողների պատճառով:

Ըստ Աստվածաշնչյան Բանալու, եթե ժամանակին լսեինք Աստծո Խոսքը և ոչ միայն լսեինք, այլ նաև այդ Խոսքը կարողանայինք պահել՝ մեծ եղեռն չէր էլ լինի.

Նախ Հիսուս Քրիստոսի խոստումն ունենք այս մասին.

«ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՒ ՈՉ ԹԵ՝ ՁՈՀ»:

Ուրեմն մեր զոհ լինելն Աստված չէր կամենում, այլ, քանի որ ամեն մարդ ու ազգ է մեղավոր, Աստված կամենում էր իրեն լսողների պակասներն իր գերմարդկային ողորմությամբ լցներ, լրացներ, մեր վերքերը բժշկեր, մեզ դաստիարակեր, մեզ խնամեր ու աճեցներ:

Կրկին մեջբերենք մշտահաղթ ցեղ դառնալու ոսկյա Բանալին, որի գործադրման դեպքում՝ անկարելի պիտի լիներ, որ եղեռն լիներ:

«ԵԹԵ ԻՄ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ ՊԱՀԵՔ ԵՒ ԴՐԱՆՔ ԳՈՐԾԻ ԴՆԵՔ, ԵՍ ԷԼ ՁԵԶ ԱՆՁՐԵՒՆԵՐԸ ԿՏԱՄ ԻՐԵՆՑ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՒ ԵՐԿԻՐՆ ԻՐ ՊՏՈՒՂԸ ԿՏԱ... ԵՒ ՁԵՐ ՀԱՑԸ ԿՈՒՇՏ ԿՈՒՏԵՔ ԵՒ ՁԵՐ ԵՐԿՐԻ ՄԵՋ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՄԲ ԿԲՆԱԿՎԵՔ, ՔԱՆԻ ՈՐ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԿՏԱՄ ՁԵՐ ԵՐԿՐԻՆ... ԵՒ ԿՎԵՐՑՆԵՄ ԵՐԿՐԻՑ ՁԱՐ ԳԱՁԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՁԵՐ ԵՐԿՐԻ ՄԻՋՈՎ ՍՈՒՐ ՉԻ ԱՆՑՆԻ. ԵՒ ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ ԿՀԱԼԱԾԵՔ ԵՒ ՁԵԶԱՆԻՑ ՀԻՆԳԸ՝ ՀԱՐՅՈՒՐԻՆ ՊԻՏԻ ՀԱԼԱԾԻ ԵՒ ՁԵԶԱՆԻՑ ՀԱՐՅՈՒՐԸ՝ ՏԱՍԸ ՀԱՁԱՐԻՆ ԵՒ ՆՐԱՆՔ ՍՐՈՎ ՊԻՏԻ ԸՆԿՆԵՆ ՁԵՐ ԱՌԱՋ... ԵՒ ՁԵԶ ՎՐԱ ՊԻՏԻ ՆԱՅԵՄ ԵՒ ՁԵԶ ԱՃԵՑՆԵՄ ՈՒ ՇԱՏԱՑՆԵՄ ԵՒ ԻՄ ՈՒԽՏԸ ՁԵԶ ՀԵՏ ՀԱՍՏԱՏԵՄ: ԵՒ ԵՍ ԻՄ ԽՈՐԱՆԸ ՁԵՐ ՄԵՋ ՊԻՏԻ ԴՆԵՄ ԵՒ ԻՄ ՀՈԳԻՆ ՁԵԶԱՆԻՑ ԷԼ ՉԻ ՁՁՎԻ ԵՒ ՁԵՐ ՄԵՋ ՊԻՏԻ ՇՐՋԵՄ ԵՒ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՍՏՎԱԾ ՊԻՏԻ ԼԻՆԵՄ ԵՒ ԴՈՒՔ ԻՆՁ ՀԱՄԱՐ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴ...«- ասում է Աստված *(ՂԵՒՏԱՑԻ, 26. 3:12)*



Ի՞նչ է առաջարկում մեզ Աստված. ԴԱՌՆԱԼ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՅԱԼ ՏԵՍԱԿ, ՈՐ ՓՈՔՐ ԼԻՆԵԼՈՎ ԷԼ՝ ԱՆԿԱՐԵԼԻ է, ՈՐ ԵՐԲԵՒԷ ԿՈՏՈՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԻ, ՔԱՆԻ ՈՐ ԻՐ ԴԵՄ ԵԼԱԾՆԵՐԻՆ՝ ԻՆՔԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՍ Ի ՍՐՏԵ ԿՀԱՂԹԻ, ԿԿՈՏՈՐԻ ԵՐԿՆԱՅԻՆԻ ՀՈՎԱՆԻՈՎ: Անգամ համաշխարհային իշխանությանն էլ կհաղթի, եթե այդ իշխանությունը նման ժողովրդի դեմ ելնի, ինչպես եղավ Հայկ Նահապետի ժամանակ: Այլ մի բան այստեղ չկա: Այս Բանալին Նոր Կտակարանով առավել ևս դյուրին է գործածել, քան միայն Հնով: Որովհետև Նորով, ընկածի համար հավելյալ այս Բանալու՝ ունենք Փրկչական ձեռքն ու հոգով աղքատացածի համար՝ Սուրբ Հոգով նորոգումը, Ավետարանի առաջնորդող բոլոր իմաստությունները: Մեղանչածի համար դատաստանի փոխարեն՝ ապաշխարությունը, որ Հնով գրեթե չկար կամ դեռ ստվերային եղանակով կար: Ունենք հիվանդի համար՝ զորավոր Բժիշկը, որ Հնով մարդկանց մեջ չկար, քանի որ Հնով օրենքն էր իշխում, որ խղճմտանք չուներ: Իսկ Նորով ունենք Շնորհը, ուր առողջ գիտակցությունն է առաջնորդողը: Այսինքն. մեր տկարներին ոչ թե գայլի ձեռքը պիտի թողնեինք, ինչպես վայրի բնության մեջ է ընդունված, այլ՝ ինքներս պիտի կարողանայինք նրանց պաշտպանել, առողջության առաջնորդել, անխորտակ պարիսպ լինել նրանց համար:

Ուրեմն, ստացվում է, որ ցավոք, ամեն ժամանակ չէ, որ զորավոր, հսկա հովիվներ ենք ունեցել, որ կարողանային այդ ամենը ժամանակին կարգավորել, կարգադրել, օրինակել, հսկել, հովվել:

Կատարյալ, արքայական ազգ ու մշտահաղթ ցեղ լինելու միակ համազգային տեսակն է Աստվածաշնչյան այս հզոր Բանալին և ոչ այլ մի բան: Ներառյալ նաև այն Վարդապետական, իմաստնության ընբռնումները, որ օրենքը չուներ և մենք այդ էլ հավելյալ ունեինք՝ Սուրբ Ավետարանով, Սուրբ Հոգու

շնորհներով, որոնք տալիս են մարդուն կյանք, կենսասիրություն, մխիթարություն, իմաստնություն, հանճար, արծիվ բնավորություն և աստվածամարդ կերտվելու այլ վեհ արժեքներ: Բաներ, որոնք Աստված որոնում է տալ իր Որդուն Թագավոր ընդունող բոլոր մարդկանց՝ նրանց նսեմ բոլոր վիճակներից բարձրացնելով:

Ուրեմն, նշանակում է՝ պատվիրաններ խախտեցինք և այդ պատճառով այս Բանալին անկարող եղանք գործածել: Սակայն պատմական մեր սխալները դիտարկելը՝ օգուտ է մեզ՝ նույն սխալներին այլևս տեղիք չտալու համար:

Եղեռնի Աստվածաշնչյան պատճառաբանությունները հաշվի առնելու համար, փորձենք ավելի խորամուխ լինել մարգարեությունների մեջ, որ վստահեցնում են, թե՝ Աստծուց հեռացումն է հանգեցնում ամեն տեսակ եղեռնի: Եթե կյանքը սիրենք՝ չենք զլանա ուշադրություն դարձնել:

Մեջբերումներս մի փոքր վերապատմելով է, որպեսզի կարողանանք կարճ ծավալում ամենքիս հասկանալի՝ երկու խոսք արտահայտել.

«Իմ պատվիրաններն անարգելուդ պատճառով (երեսս պիտի շուռ տամ քեզանից) և (իմ պահպանությունից քեզ թուլացած տեսնելով) մի չար ազգ, որ նման առիթի էր սպասում, հարվածելու է քեզ, կոտորելու և սփռելու աշխարհով մեկ, որովհետև ի բնե չար է, և ձևացնելու է, թե իմ կամքն է անում, ոչ թե իր չար կամքը, ուստի ես հետո պիտի շուռ գամ այդ չար ազգի դեմ և, ինչ քո դեմ արել է՝ կրկնակին եմ նրան կոտորելով հատուցելու՝ կրկնակի չափով սպանդի մատնելով դրան: Թեպետ հիշիր, որ դու չար ազգի կոտորման տակ ընկար, ոչ թե ինձ սիրելու, այլ իմ պատվիրանները անտեսելու հետևանքով: Այդ պատճառով էր, որ քեզ պահպանիչ իմ Հոգին, որ ինձ լսելուդ օրերին քեզ կենսասիրություն, զորություն, իմաստություն և հաղթանակ էր տալիս, քեզանից զզվելով հեռացավ և չար ազգը անպաշտպան տեսնելով քեզ, պահը որսաց և ջարդեց քեզ»:



Աստվածաշնչյան մարգարեություններից մենք միատեղեցինք հարցի վերաբերյալ բավարար տեղեկատվական ասելիքը ընդհանրապես եղեռնների մասին:

Սակայն մեր հոգևոր գիտակները, և Նժդեհն ևս, իմաստությամբ ասում են, որ եղեռնը նաև մեր ազգի խաչելությունն էր: Այդ ճշմարիտ, նաև այդպես է, որովհետև հայ ընտանիքի գլխավորները, որ զենք կարող էին վերցնել, և գլուխն ու իմաստությունը, որ մտավորականներն էին, նախ խաբեությամբ հեռացվեցին և սպանդի մատնվեցին: Ապա միայն մեծ կոտորումով ու անգթորեն ջարդեցին անկարող ծերերին, կանանց ու երեխաներին: Մանկանց ու մեր մայրերի և ծերերի կոտորումը անտանելի, աղաղակող խաչելություն եղավ մեր ազգի համար և սուրբ վրիժառություն արթնացնող: Նրանց աղաղակների անմեղ ձայները, եթե ուշադիր լինենք, ամեն օր են մեր մեջ, անգամ մեր աչքերի արտահայտությամբ են խոսում: Որ նշանակում է, թե՝ մենք նաև պատարագված ազգ ենք: Եվ այդ ձայները մեզ պահանջ են ներկայացնում ո՛չ միայն Աստծո արդար դատաստանի, այլ մեր հոգևոր առավել սրբման, առավել ապաշխարության և առավել հասունացման, որ այլևս պատվիրաններ չանտեսենք, ազգովին գոնե՝ մահացու հանցանքներ չգործենք, և էլ երբեք մեզ վայրի սպանդի մատնվելու տեղիք չտանք մեր վայրի հակառակորդին: Որպեսզի, Աստված չանի, հանկարծ այսօր էլ չհետևենք մարդկանց կամ աշխարհի, այլ ազգերի անիրավ և աղտոտ սովորույթներին ու որոգայթներին, որոնք այսօր բաբելացման վիշապի տեսքով ահեղորեն հառնել են ողջ աշխարհի վրա և մեր երկրի վրա էլ:

Ուրեմն, սուացվում է, երկու հակադիր վիճակ: Մեկով, որ պատվիրանապահ չլինելով անկարող էինք դարձել Աստվա-

ծաշնչյան՝ մշտապես հաղթողների յուրահատուկ ժողովուրդ լինել: Եվ այս վիճակի համար մեղքը «վատ հովիվներինն» է, դրսի որոգայթներին կառչող անհատներինը, սակավ նվիրյալներինը: Նաև մեր կողմից մեզ օգտակարը «Աստծուն լսել չկարողանալունը», կամ վատ ուսուցիչներինը, ինչպես Եսային է ասում. «Բազմաթիվ սուտ հովիվներինը, որ ակունքի ջուրը խմում, ապա այն ոտքերով պղտորում են, որ այդ պղտորվածը ծարավ հոտը (ժողովուրդը) խմի»: Մի խոսքով՝ ասելիքս եկեղեցու տկարության մասին է նաև: Այդ պատճառով Նժդեհի երազանքն էր՝ եկեղեցին տեսնել իր Տիրոջ՝ Քրիստոսի նման զորավոր: Ամեն ժամանակում՝ Ներսես Մեծ ունեցող եկեղեցի էր երազում Նժդեհը: Աստվածամարդ Քրիստոսից կայծ ունեցող եկեղեցի և ոչ միայն տկարներ, որ «ընկել է նախապաշարումների ցանցի մեջ և տկարացել կորչելու աստիճան»- Նժդեհ:

Եվ մյուս, արդար վիճակը, որ միամիտ ժողովրդին է վերաբերվում՝ Խաչելությունն էր: Որովհետև ժողովուրդը թեպետ ջարդվեց, բայց հավատով ու հույսով մնաց առ Աստված: Ուստի եղեռնը մեր ժողովրդի համար եղավ նաև հայի Հիսուսանման Խաչելությունը, որի մասին ևս խոսում է մեծ Նժդեհը և նկարագրում այդ խաչելությունը:

ԱՅՍԻՆՔՆ ԹԵ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՂԱՎ ՎԱՏ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ, ՍԱԿԱՅՆ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ: ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼՈՎ՝ ԵՐԲԵՒԷ ՉԻ ՄՈՌԱՑՎԻ:

Վայրի և չար ազգն այսօր կա՞: Կա՛: Եվ հավելյալ՝ նոր Բելը՝ Համաշխարհային Նեռն է ձևավորվում այսօր աշխարհում: Այդ առավել է մղում մեզ, որ Աստվածաշնչյան գրվածքները դիտենք ժողովորդների կյանքի համար որոնած միակ արժանի ոսկին: Ուրեմն մեր հոգևոր Հայկյան Հայաստանում «Հայրենակիցդ՝ եղբայրն է քո» սկզբունքը կարևորն է լինելու



մեզ համար: Որ Ավետարանով երկրորդ մեծ պատվիարանն է, թե. «Սիրիր ընկերոջդ, ինչպես քո անձը»:

Տարիներ առաջ մի իմաստուն քարոզիչ պատվիրանապահության դժվար խնդիրն այսպես բացատրեց, որովհետև ասում էինք՝ չէ՞ որ պատվիրանների մեծ մասը պահում ենք, քչերը դեռ չենք կարողանում: Ասաց. «Եթե առյուծը կապված լինի 10 շղթաներով և շուրջն հրդեհ սկսվի, և առյուծին հաջողվի 9-ը շղթաները կտրել, իսկ վերջինը չհասցնի, արդյո՞ք ազատվել կկարողանա հրդեհից»: Այդ շղթաները պատվիրաններն են և ապաշխարություններով են կտրվում, խոստովանություններով քանդվում, որ Աստված մեր ապականությունները մաքրի: Ի ՎԵՐՋՈ, ԱՍՏԾՈ ՀՈԳՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ ՊԱՏՎԻՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ ԷԼ ՉԷ: Որովհետև, երբ սիրում ես Աստծուն և ընկերոջդ՝ կատարած ես լինում բոլոր պատվիրանները-հայտնել է Հիսուս: Այդքան դյուրի՞ն: Այո: Բայց սիրտ ու խղճմտանք ունեցող մարդկանց համար և ոչ թե հաշվենկատ ճարպիկների ու ամեն բան հանուն դրամի ու պիղծ շահի խարդախողների: Հաղթող ազգ լինելու համար դեղն այդժամ կրկին մեր լիովին ապաշխարությունն է: Մեր հայրենիքում միմյանց սիրելով ապրելը, այնպես որ այդ սիրո մեջ որևէ օտար պղծություն չկարողանա ներթափանցել Հայաստան: Նժդեհի ասածի նման՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՈԳՈՒՑ ԿԱՅԾ ՈՒՆԵՆԱԼՈՎ է ՄԵՋ ՀԱՐԿ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԼԻՆԵԼ և ոչ թե տկար, պաղ, ծույլ, ստորին նախապաշարումներով ընկած կամ անկյալ կամ վարք գողացող և ոչ թե ձևավորող:

Քրիստոսին առավել լիարժեք հավատալը Նրա խոսքը լիարժեք պահելն է, այդպես միայն Աստծո Հոգով ընթանալու համար, որով և՝ կատարյալ Աստծո ժողովուրդ կարող ենք կազմավորել: Զգուշություններ, որ մեր ազգի իմաստուն ուղեղների, գլխավորների, ոչ միայն եկեղեցականների ամենօրյա ուշադրության, մշակության կենտրոնում պիտի լինեն:

Նաև որ՝ այս ամենը գիտակցող և հոտի համար կյանք դնող զորեղ եկեղեցի պիտի ունենանք: Աղոթենք և կամենանք, որ այդպես լինի: Վարդանանց Եկեղեցու նման և ավելի նվիրյալ Եկեղեցի այսօր պիտի ունենանք, քանի որ Վարդանանց եկեղեցին որպես պատմական հենարան-օրինակ՝ արդեն և արդեն ունենք: Իսկ հայերիս համար առավելն ունենալը լիովին հնարավոր է, եթե ազգովի դիմենք գործերով ապաշխարության:

Այսինքն՝ ոչ թե աշխարհիկ քաղաքականություններով պիտի մեր ազգային խնդիրները քննենք, այլ մեր իշխանությունների հավաքույթներն էլ պիտի լինեն Աստվածաշնչյան, գլխավորապես ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ իմացություններով լի, որպեսզի չարով չգայթակղվենք և ազգովին մեծ կորուստների այլևս տեղիք չտանք: Որովհետև փոքր ազգի համար փոքր կորուստն էլ է մեծ, ուր մնացին փոքրի ազգի մեծ կորուստները:

Բնականաբար, Աստվածաշնչյան մարգարեությունների իմացումն ու Սուրբ Ավետարանով նորոգվելը մեծ օգուտ կլիներ մեր ազգի կենսընթացը ճիշտ կարգավորելու, պատվիրանապահությամբ՝ օտարի հարվածներից նախօրոք ազատվելու կամ եղած հարվածներին արժանվույնս դիմակայելու համար: Այդպես նախապես խուսափելով տարերային աղետներից, որոնք ծանր պատիժներ են պատվիրանանարգության դիմաց: Իսկ եթե մահացու հանցանքներ չգործենք, ինչու՞ պիտի տարերային պատիժներ լինեն: Որովհետև, ըստ մարգարեությունների՝ տարերային ահռելի աղետները երբևէ պատահական չեն: Հիշենք Հայտնության Գիրքը, որ խոսում է տարերային աղետների դրդապատճառների մասին: Այսինքն. եթե դրդապատճառ հարցերը Տիրոջով լուծում ենք, ապա տարերային աղետն էլ հեռու է վանվում քո ժողովրդից, քո երկրից:

Չենք կարող մեղադրել մեր հայրերին՝ թե ինչու՞ ժամանակին Հին Կտակի մարգարեությունները չթարգմանեցին, որպեսզի մենք էլ ժամանակին իմանայինք, գործադրեինք: Թարգմանեցի՛ն: Մենք չգիտես ինչու ծուլացանք, ազգովին ժամանակին կարդալ իմանալ, ուսումնասիրել, մեր խորհրդարաններում կամ այլևայլ ժողովներում դրանք իմաստությամբ քննարկել:

Ի ցավ մեզ, պարտադիր կրթությունը միայն ԽՍՀՄԻ օրերին եղավ: Այն էլ՝ անհավատության ամենօրյա, ամենժամյա բռնությամբ: Այդպես, շատ անհրաժեշտ բաներ ժամանակին հաշվի չառանք, ազգովին (հոգևոր հովիվներով, թագավորով, մտավորականներով, մշակույթի գործիչներով): Հարկ եղած չափի չխորհեցինք դրանց շուրջ՝ ի օգուտ մեր ազգի այդ իմաստությունները գործադրելու, կենսագործելու համար: Գոնե այսօր այդ ամենն անենք: Երբ ըստ Վերին դպրության՝ անհատի և ազգի ճակատագիրը Աստվածասեր անհատների և ժողովրդի բանական մասի ձեռքով է կազմավորվում, կարգավորվում և ոչ թե քաոսով կամ պատահմունքով: Այլ՝ իմաստությամբ և խելամտությամբ: Եվ ամենակարևորով՝ հավատով առ Աստված, որ մեր ջանադիր ձեռքով Աստված կյանք դարձնի: Ես որ օրեօր ավելի մեծ հույս ունեմ, որ մեր ազգը այդ ամենը կհաղթահարի: Քանի որ չար ժամանակի մեջ շնորհն ևս զորանում է, ինչպես առաքյալն է ասում իր թղթում:

Այսինքն՝ եթե պատվիրաններ ոտնելով չապրեինք, ապա մեծ եղեռն չէր էլ լինի, որովհետև Աստծո զորությամբ, մեր մի խումբ զինյալների դեմ անգամ զորավոր բանակներ պիտի ընկնեին կամ փախուստ տային: Որովհետև. «Սուրբ Հոգին ամեն բան է քննում, բայց ինքը ոչ մեկից չի քննվում և նախօրոք հայտնում է ամեն բան և նախօրոք կազմակերպում փրկություն և ազատություն և հաղթանակ»: Այդ որ՝ անկարելի է այդպես չլիներ: Այսինքն, եթե Աստծո Սուրբ Հոգին պատվիրանանարգության պատճառով, մանավանդ՝ միմյանց սիրելու պատվիրանի, մեր ազգից հեռացած չլիներ, ապա նա-

խորոք ազգային ազատագրական հաղթական մարտի պիտի պատրաստեր մեզ և վեր հաներ մեզ՝ մեծ հաղթանակով, փոխան մեծ եղեռնի:

ԱՄԵՆ ԲԱՆ ՔՆՆՈՂ ԵՒ ԱՄԵՆ ԾԱԾՈՒԿ Ի ՀԱՅՏ ԱՆՈՂ ԱՍՏԾՈ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, որ ողջ մեր ժողովրդին Գրքով նախապես զգուշացրել էր ընդհանրական եղելություններն ու ելքերի ընդհանրական բանալիները, և իր հետ հաշվի նստելու, հաշտ լինելու համար էր այդ զգուշացումներն արել և ոչ թե անտեսվելու, որով մեր կորուստներն են եղել և լինում: Պարզ, ինչպես մեկին գումարած մեկ: Որովհետև Աստծո Հոգու ներկայությամբ՝ չարի բոլոր ծրագրերը կխափանվեին, ինչպես որ գրված է:

Ուրեմն, այսօր էլ չանարգենք Աստծուն, և միմյանց սիրելու պատվիրանները մեր հավատն իսկ արհամարհողների առաջ չնսեմացնենք. Նսեմացումներ, որ այսօր օտարներն են մի քանի գրոշով հարյուրավոր քայքայիչ ծրագրեր, իբր մեծ սիրուց դրդված մեր ազգի պարանոցին ջանում փաթաթել: Դրանք մեր փրկության Աստծուց մեզ օտարացնող ծրագրեր են, որ օրեօր բազմացնում են՝ բարություն պատրելով: Մեր ձեռքով իսկ մեզ որոգայթումը եկեք թույլ չտանք և Տիրոջով միաբան լինելով է այդ միայն հնարավոր: Սթափ լինենք ուրեմն՝ ամրապնդել գործնական մեր հավատը, այլ ոչ թե երազայինը, մի կտոր հացով կամ մարմնի վախով չխաբենք մեր խիղճն ու հոգին, կամ իբր թե հավատը միայն քահանաների գործն է ասելով: Քահանայությունն Աստծո առջև պատվականն է, բայց եթե մենք լավագույն քրիստոնյաններ, հավատավորներ չլինենք, ապա քահանայությունն արդյո՞ք սակավապտուղ չի մնա: Չէ՞ որ Թադեոսի և Բարդուղիմեոսի, Լուսավորչի, սուրբ Սահակի, սուրբ Մեսրոպի և մյուս ազնվազարմերի լիարժեք պտուղները պիտի լինենք, այդպե՛ս հարգելով քահանայությունը և մեծ նախորդներին: Նրանցով ավելի՛ն



պիտի լինենք և պարտավոր էլ ենք, քանի որ արդեն նրանք կան: Որպեսզի զարգացում կայանա: Քրիստոնյա լինելը մեր բոլոր հայրենակիցների համար լավ կլիներ, երբ բարի հետևորդությամբ լիներ: Որ մի օր կուսակցություն այլևս չլիներ, քանի որ կամա-ակամա, կուսակցությունները տարաբաժանում են մեկ ընդհանուր ազգությունը: Գուցե այսօր դրանք պետք են, վախեցած մարդու այն առակի համաձայն, որ, չար ժամանակների պատճառով իր դրամը մասերի է բաժանում, որ եթե մի մասը գողանան, մյուսն էլ հաջողեցնեն գողանալ, գոնե երրորդ մասով կարողանա ապրել: Սակայն եթե ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒՑ ԿԱՅԾ ՈՒՆԵՑՈՂ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ լինենք, ապա կուսակցությունները մեզ ամենևին պետք չեն գա:

Քրիստոնեությունից, մարգարեական և Հայտնության Գրքերից մեր հեռու լինելու մտածողությունը այլևս պիտի ամոթալի դիտել, դիտել՝ տգիտություն, ազգընդդեմ, վնասաբեր, չարաբեր, չարաղետ երևույթ և անզգամություն:

«ՆԱ, ՈՎ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՉԻ ԿԱՐԴԱՑԵԼ, ՆՐԱՆ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԳՐԱԳԵՏ ՄԱՐԴ ԱՆՎԱՆԵԼ»,- ԱՍՈՒՄ ԷՐ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՒԱԿԸ:

Յուրաքանչյուր մարդ և խումբ և ազգ ու ժողովուրդ կոչված է Աստծուն, քանի որ նրանից ծագեց: Հավատանք, ճանաչենք գործնականորեն, դպրությամբ, սուրբ Հայտնությամբ, հավատարմությամբ, որ Աստծո Հոգին մեզանից այլևս երես չթեքի, չզզվի: Եթե ոչ, քիչ չեն մեզանում ոմանք, որ անձնական իրենց դժվարություններն ու դժբախտությունները վկայակոչելով, պնդում են թե՝ այսօր էլ լավագույն պատվիրանապահներն իրենք են, հապա թե՝ ինչո՞ւ պատժվեցինք, աղետվեցինք՝ այս կամ այն դեպքում, տատամսում են, լռում, բայց առողջ, բարեբեր քննություն, հետևություն չեն անում իրենց և մեր ընդհանրական առողջացման համար: Չենք քննում, այդ պատճառով էլ գայթակղվում ենք բաբելացման ապականութ-

յուններով: Կամ Քրիստոս ու մամոնա խառն դիտելով: Հանցավոր մարդկությանը հանցավոր օրենքներն էլ համատեղում են և նոր հանցանքների գայթակղություններով տապալում միլիոնավոր իրենց նմանների: Եվ եթե մի փոքր մարդ էին, դառնում են ասես անասուններ, հաճախ էլ՝ անասուններից ավելի վատթար ու տգեղաբարք:

Սակայն լավ է տարբերենք մեր մարդկայինն՝ իր պարտավորություններով և Աստծունն՝ իր խոստումներով: Խելամի՞տ է արդյոք՝ մեր պարտավորություններն անտեսելն ու միայն Աստծո խոստումները սիրելը: Չէ՞ որ դա էլ է ինքնախաբեության ու ստի մի տեսակ ստացվում: «Ես անտեսում եմ քեզ, քո առջև իմ ապաշխարության պարտավորությունը, բայց դու՝ խոստումդ պահիր»: Թարգմանաբար կստացվի՝ ես ուրանում եմ քեզ, բայց փոխարենը դու անձիցդ ավելին ինձ սիրիր, ինձ պարգև տուր ուրացմանս դիմաց, ուրացմանս դիմաց կյանքդ նվիրիր ինձ: Ինչու՞: Քո խաչն ինքդ տար և կողքինիցդ մի կառչիր, և նրա շալակը մի բարձրացիր, նրա, որ մի կերպ է իր խաչը տանում, իր այդ վիճակի մեջ իսկ փառավորելով Աստծուն:

Ուստի՝ լավ է մեզ Աստծո առաջ լսող ու խոնարհ լինենք և արդար, անկեղծ պարտավորություններ ունեցողներ, քան, այսպես թե այնպես, անտեսող-անարգողներ ու արտաքինից հանիրավի լավագույն պատվիրանապահ այլոց ցուցադրվողներ: Լավագույն պատվիրանապահ, ցավոք, Ազգովի՛ն դեռ չենք: Մեղմ ասած: Շատ մեղմ ասած: Երբեմն՝ չափազանց մեղմ ասած:

«Լավ է Աստծո որդիների մեջ վերջինը լինենք, քան աշխարհի որդիների մեջ՝ առաջինը», ինչպես հնուց ասվել է: Եվ խիստ սխալ են հոգևոր ոչ քիչ թվով հովիվները, ովքեր ասում են՝ մենք Ավետարանը կարդում ենք և այդ մեզ բավական է, էլ ինչու՞ չարչարվենք մարգարեություններն էլ խելամիտ ուսումնասիրել: Մինչդեռ լավ հովիվները պարտավոր են այդ անել, այդ մասին Սուրբ Գիրքն է ասել: Այսինքն՝ լավ հովվի համար անհրաժեշտ է քաջ իմանալ և «ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՄԲ ՄԱՏՈՒՑԵԼ ԹԵ ՆՈՐ ԿՏԱԿԸ ԵՒ ԹԵ՝ ՀԻՆԸ, ԸՍՏ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋԻ», քանի որ մարգարեությունները պատմում, զգուշացնում են մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը աշխարհում կատարվող բոլոր խոշոր դեպքերի, աղետների, պատիժների և դրանց պատճառների մասին, իսկ Ավետարանն այդ եղելություններից փրկության Բանալիներն է մատուցում, ներառյալ մատուցում՝ Վերածնունդ, ներում և Հոգու նորոգում, ապաշխարությամբ մեղքերի թողություն և մուտք՝ դեպի հավիտենություն: Այսինքն թե՝ Աստվածաշունչն ամբողջությամբ է իր ամբողջական դերը կատարում և ոչ թե միայն մասնակիով:

Աստվածաշունչը քարացած Գիրք չլինելով՝ հնարավորություն է տալիս Աստծուն դարձով շատ աղետներից ազատագրվել և ազգովին Հաղթել: Աստվածաշնչյան խոսքերն ուրեմն՝ «լսելու ականջ ունեցողների համար են» և ոչ այն հովիվների, ովքեր սաստիկ ծույլ են դարձել լսել, և որոնց հարկ էր սիրող և ջերմեռանդ լինեին ավելի, քան են: Սուրբ Գիրքը լավ հովիվների մասին այս է ասում. «Լավ հովիվը ճիշտ ժամանակին իր մախաղից հանում և մատուցում է թե Հինը և թե Նորը», ինչպես որ վերևում նշեցինք: Հին ու Նոր Կտակարանների մասին է խոսքը, այսինքն նաև՝ Աստվածաշնչյան մարգարեությունների, Հայտնության Գրքի մասին, որոնք եկեք չարհամարհենք, չանտեսենք, որովհետև չարիք է ծնում մեր անտեսումը: Ինչպես Սուրբ Սահակի տեսիլքից գիտենք, այս չար օրերի մեջ մեր իշխանությունները պիտի մեծ հաղթության գործեր ևս իրականացնեն, ընդդեմ բաբելացման ժողովուրդներ փչացնող գործընթացների պիտի անեն և որոշ չափով անում էլ են: Սուրբ Սահակի տեսիլքը ապագայից մեզ

ուղղված պայծառ մի լույս է, որ հույս ու կորով է ներշնչում մեզ՝ մեր դժվարին օրերի մեջ: Հույս ու կորով, բայց ոչ երբեք գլխի տակ փափուկ բարձ կամ ամլացում, որ ոմանք են ամեն գործի մեջ հակառակորդից մղված որոնում: Որովհետև Հայրենիքի որդիները ամեն ժամ են աշխատում իրենց Հայրենիքի համար:

## «ԵՐԲԵ՞Ք ԵՒ Ո՞Չ ՄԻ ՏԵՂ ԱՌԱՆՑ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ»

*Հոգևոր անվտանգության այսօրվա հարցերից մեկի մասին*

**«Ով չի գերազանցում իր նախորդներին, նա անարգում է նրանց անունը՝ մեղանչելով հոգու զարգացման օրենքի դեմ»** *(ՆԺԴԵՀ. Բանտային գրառումներ):*

Մեր մեծերն իրենց միաբանությամբ, ինչպես ասացինք, նման են մեծ մի լեռան, որ մեզ բարձրացնում են իրենց գագաթը՝ իրենց հաղթանակները մերը դարձնելով, որ նրանց համախումբ բարձրությունից ավելի լավ ու ավելի հստակ տեսնենք. լավ ճանաչենք աշխարհն իր մոլորություններով ու հավիտենական կյանքը ճանաչենք ու այդ ընտրենք: Նրանցից շատեր զոհաբերվեցին, որ դյուրին լինի մեր վեր բարձրանալը: Այս միաբան ճանապարհի մեջ միմյանց խաբողներ պիտի չլինեն: Կեղծողներ և կեղծավորեցնողներ պիտի չլինեն: Միմյանց ի չարն գայթակղողներ պիտի չլինեն: Այս միաբան ճանապարհի մեջ բռնատիրողներ, զեղծարարներ, այլասերողներ, կեղծ դավանողներ, հոգեգողեր, ձեռքբերումներդ փչացման մատնողներ, տակ փորողներ, ոչխարի մորթով գայլեր պիտի չլինեն, որ... անկարելի է չլինեն, որովհետև՝ չար է աշխարհը և քիչ չեն գայլերը՝ ապաշխարողների ետևից ընկած, շարունակ նրանց մեղավոր անցյալների ետևից, որ մեր մեղքի շյուղերը դատելով՝ իրենց գերան-իսպառ փչացած



խնդիրներն են լվանում, կամ «ապրանքափոխանակություն» հաջողացնում, բայց հոգեպես ու բարոյապես սպանելով: Չգիտես ինչու: Ասես այլ ապաշխարողների արյուն-արցունքով են լվացվում ամեն օր՝ «պատշաճ» տեսք ընդունելու, ագահորեն նյութական ավելին ունենալու համար: Մեր կյանքը հոգեփոխման շուկայի են վերածել ու վերածում: Մեկին սպանելով՝ մյուսների ետևից շտապելով, որ նրան էլ հոգեպես սպանեն: Միայն արտաքին արդար, ճարպիկ տեսք, սակայն կեղծ ապաշխարություն ցուցադրելով՝ դիվագարներ են վեր ելել: Մինչև որ՝ Տերը պատերազմի այդ գայլերի դեմ: Նրանց համար Քրիստոսի խաչելությունը բավարար չէ, նրանք ուզում են նրա ոչխարների արյունն ևս հանել ու լափել, որ այդ օրը հանգիստ քնեն: Նրանց համար ունեցվածքն այնքան արժեքավոր է, որքան մեզ համար կյանքը, նրանց համար նյութունեցվածքն է իրենց բուն Աստվածը, շատերի կյանքից էլ ավելի, որ նրանց իսկ դժոխքին կապելու որոգայթն է: Եվ եթե որպես թե ողորմում են, ապա նրանց տված հինգ դրամն իրենց հաշվեթղթերի մեջ՝ քո կյանքը վերցնելու դիմաց հավասար են դարձնում: Մինչև զոհի մահը կամ խեղումը նրանք չեն հանգստանում, որ ապա գնան այլոց էլ գայթակղեն ու սպանեն: Բաներ, որոնք ողորմածության հետ կապ չունեն և կեղծավորի նենգ որոգայթներ են: Եվ մեր կյանքից են սկսում կառչել, մեր մուտքի իրավունքն են խարդախում մեզ արգելելով՝ մենք սրանց փոխարեն,- ասելով և նոր ու պինդ որոգայթները լարելով: Միշտ՝ մինչև զոհի մահ: Մինչև բարկացնում են Աստծուն՝ իրենց արածը իրենց իսկ գլխին բերելու: Նրանք մեզնից խլած ամեն լուման, որպես թե Տիրոջ անվան համար՝ յուղելով են մեզ տալիս, որպես ողորմածություն, սակայն իրենց ապագա նոր որոգայթներին-հենարան են սարքում: Ըստ իրենց ցուցակների ողջ կյանքդ ես պարտք, ասում են: Եվ պարզվում է, որ մի քանի լումայի դիմաց արդեն՝ դու վաղուց չկաս: Եվ պարզվում

է քո կամքին հակառակ իրենց մտքում գնել են քեզ: Եվ այդ ամենը քո ընկերը հանդես գալու անվան տակ են արել: Ահա ինչպիսին է խոզը եկեղեցում: Կարիք չունեն, բայց սովորույթ է՝ խլել կյանքիդ վերջին հույսն էլ, փշուրդ էլ հոգևոր հացի, որ Աստծո գոհությամբ էիր ընդունում, վայելում: Երբ Աստված պակաս չունի, որ խնդրողին ողորմի: Բայց սովոր են ընկերներից խլել:

Ոմանքս լեռան փեշին դեռ նոր հասած, կարծում ու կարծեցնում ենք թե՝ գագաթի վրայից ենք խոսում, ոմանքս՝ լանջին հասած լինելով՝ կրկին որպես գագաթից նայելու նման ենք խոսում և քչերս ենք համբերում, հասնում գագաթին և գագաթից նայելով խոսում:

Բայց եթե քեզ հասանելիք խաչդ չես վերցնում, սակայն խոսում ես «կրածդ խաչի տառապանքներից», որովհետև պանծալի թեմա է քեզ համար, ապա զգո՛ւյշ եղիր, որ քո սարքած որոգայթն աշխարհում արդեն եղածին հավելյալ կեղծիք ավելացնելուդ պատճառով մի օր էլ քեզ կբռնեցնի: Եվ այն ժամանակ կբռնեցնի, երբ անկարող լինես արդեն ապաշխարություն իրականացնել, երբ զորություններդ ի արդարություն չգործածելուդ պատճառով՝ մի օր լքեն և արդեն հակառակեն քեզ: Որովհետև զորությունների Տերն Աստված է, որ ճշգրտում է միշտ:

Ուստիև. եթե լեռան փեշին ես, փեշից խոսիր, սիրելի՛ կլինես այդ չափով, եթե լանջին ես արդեն՝ լանջի՛ց խոսիր, սիրելի՛ կլինես այդ չափով, բայց եթե ներքևներում լինելով գայթակղվել ես ինքդ քեզ խաբել ու այլոց մոլորեցնել, թե՝ գագաթից ես տեսնում ու խոսում, ապա զգո՛ւյշ եղիր արդար դատաստանից, որ օրերից մի օր կբռնեցնի քեզ՝ քո խաչ կրելը այլոցից կառչելը դիտել-համոզելու, այլոց տառապանքի խաչերն անարգելու համար, որպեսզի այդպես քո քստմնելի անձը երևելի ցույց տաս: Նմանը առանց ապաշխարության է՝ ուզում ստանալ Սուրբն ու Հավիտենականը, կամ իր հոգու խղճմտանքի պահեստը երեսուն տոկոսանոց տեղ ունի միայն, բայց ցանկանում է ուրիշին խեղել, սպանելով, նրանց պտուղը թռցնելով ավելին ունենալ, սակայն իր երեսունաչափ փոքր խղճմտանքի վայրում: Բան, որ և անհնար է և եթե հաջողում են՝ հետևանքը այլոց մահն ու աղետն է լինում:

**«Իր Արարչի դեմ գործողը պիտի չքաշվի գործել և իր նմանների դեմ»,-** ասել է Նժդեհը *(ՆԺԴԵՀ. «Ռազմիկ» թերթի թղթակցին տրված հարցազրույցից):*

Մատը մատին չեն տա ապաշխարության նեղության մեջ մտնելու համար: Եվ եթե տաս տոկոս մի բան անեն էլ, որի համար Աստծով վարձ են ստանում, իրենց արածը իրենց կյանքի զոհաբերությունն են հաշվում: Ապաշխարությունը իրենց պատվից ու անգամ հագուստից ցած բան են անվանում:

Այսինքն թե՝ Աստծուն սեր կեղծողներն են նման բաներ անում: Սակայն «Նմանների պատիժը քնած չի մնում«,- լրացնում է Պողոս առաքյալը:

Ուրեմն, հոգևոր հայրենիքը՝ Քրիստոս զգեցած բարի պատերազմներով է և ոչ թե քնեածությամբ, և ոչ գոհագողությամբ, որ ոմանք են անում այդ անօրեն համոզումը հանիրավի վերագրելով Քրիստոսին և նրա եկեղեցուն՝ խեղճ են ասելով:

## ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑՈՒ ԽՐԱՏ-ՕՐԻՆԱԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Եթե մեր Հայրերի ձեռքբերած հոգևոր ներուժը հիմք ընդունենք և գործադրենք՝ օտարի լծին երբևէ չենք ենթարկվի, չենք ընկնի, չենք ստորանա հացի պատճառով: Մենք այլևս զորավոր լինելով՝ մեզնից հոգևորից հազարապատիկ ետընթաց ուժեղների չենք ինտեգրվի: Նժդեհը, քահանայի որդի լինելով, այս իմաստությունը գիտեր և նսեմ, անհոգի ու պարտ-

վող էր անվանում այն ազգերին, ովքեր որպես հենարան չունեն իրենց մեծ նախնիներին: Սակայն ցավն այն է, որ մեզանում որդիներ կան՝ իրենց հայրերի թողած հանցանքների պարտքերի խաչը չեն կամենում կրել, գուցե թե՝ ոմանք չար ժամանակի պատճառով չեն էլ ըմբռնում դրա կարևորությունը: Սակայն Լուսավորիչն ընտիր օրինակ թողեց մեզ. նա իր դավադիր և մարդասպան հոր փոխարեն, որպես հատուցում՝ 14 տարի հորում (բանտում) չարչարանալից կյանքով ապրեց: Ես չեմ ասում, թե մեզանից շատեր մինչև երրորդ-չորրորդ նախնիների հանցանքների պատճառով, որ Աստծո օրենքն է ասում, որպես հատուցում՝ բանտ գնանք կամ այլ մի հասարակական դատաստանի: Այլ որ՝ ներում հայցենք, ապաշխարության լիարժեք գործեր անենք մեր նախնիների հանցանքների դիմաց: Որ եթե ծանր փորձություններ լինեն մեր ժողովրդի կամ մեր հայրերի հանցանքների պատճառով՝ Լուսավորչի նման հաղթանակող դուրս գանք: Չէ՞ որ այդ հանցանքներ գործողները ոչ թե օտարներ, այլ չարից խաբված, խարդախված՝ մեր նախնիներն են եղել: Որովհետև «Չար ծառը բարի պիտի դարձնենք արմատից, որ պտուղներն էլ բարի լինեն» ամենքի Տերն է Ավետարանով հուշել բժշկարար այդ բանալին, որպեսզի ազգովին առողջանանք, առավելանանք և մտնենք Բուն էության Հաղթանակի մեջ: Ճիշտ է, մեր նախնիների պարտքերը, որ չէինք կարող տանել, Քրիստոս մեզ ներել է, բայց մի պահ իսկ Քրիստոսից դուրս գալով, «արդար ենք» կամ «Խնամակալության տարիքից արդեն մեծացել ենք», կամ «Երեխա չենք, մեծ ենք» ասելով՝ Շնորհի Խնամարկությունից այդպես դուրս գալով, ամիջապես էլ հանդիպում ենք Աստծո օրենքի դատին, որ մշտական է: Պիտի ջանանք հասկանալ նաև Քրիստոսի ներումը, որ մեզ մարդ դարձնելու համար է, որպեսզի տված առատ շնորհների օգնությամբ կարողանանք հնարավորինս հատուցել նաև



մեր հայրերի պարտքերը, որ Աստծո բնության և սրբության դեմ գործեցին և որպես գենետիկ-ժառանգավորություն՝ մեր մեջ մարդկայնորեն կան: Ինչպես տեսանք՝ Լուսավորիչը Քրիստոսի օգնությամբ, որպես արդեն կարող և հզոր անհատ՝ հատուցում արեց իր հոր հանցանքի դիմաց: Եվ ծանր հատուցում: Այդ պատճառով Լուսավորչին հիշելիս ոչ մեկս նրան դավադրի կամ մարդասպանի որդի չենք անվանում, այլ Լուսավորչի արածը որպես գովեստի և հաղթանակի օրինակ ենք հիշում, քանի որ իր հոր ծանր պատիժ խաչն Աստծո առաջ օտար և մի կողմ դնելիք չկոչեց, այլ իր ժառանգական պարտքը Տիրոջ օգնությամբ հնարավորինս հատուցեց Աստծո առաջ և առանց դժգոհելու, խոնարհությամբ այդ արեց, որպես բարի, ճաճանչավոր հսկա: Որովհետև Խաչն (հատուցում անելն) իրենն էր՝ ուրիշի տանելիքը չհամարեց: Եվ Լուսավորիչ ասելիս՝ Աստծով Գրիգոր հսկայի հաղթական այդ գործերն ենք հիշում և նրա հոր հանցանքով որդուն չենք դատապարտում:

Ուստի չպիտի թողնենք, որ թուլանան մեր մեծ նախնիների հոգևոր մեծ ներուժերը, մեր արմատներն ու հենարանները, որոնց վրա էինք մեզ պատվարժան ու հոգեկիր, հաղթող ու անպարտ ճանաչել ու ճանաչում: Մենք, որ վայելող ենք մեր արմատների հաղթական ներուժերի և պարտական նույն ներուժերը տվող մեր նախնիների կիսատ թողած գործերին, որպես ժառանգորդներ: Եվ այդ արմատները մեր ժառանգական պարտքերը հատուցելով են ուժեղանում՝ ՃԱՌԻ ԱՌԱՎԵԼ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՐԻ ԴԱՌՆԱԼՈՎ, և ոչ այլ մի կերպ, քան Քրիստոս Հիսուսի օգնությամբ է այդ հնարավոր: Որովհետև այնկողմնային երևույթները միայն Նա հայտնեց աշխարհին և խոստացավ իրենց պարտքերի խաչը վերցնողներին օգնել, նրանց հետ համահավասար խաչակիր դառնալ: Այնպես, ինչպես օգնեց Լուսավորչին: Եվ ովքեր իրենց խաչը

վերցրեցին՝ հավաստեցին նաև Տիրոջ մեծ սիրո օգնության մասին, նաև վստահեցրեցին ասելով՝ երբ խաչդ վերցնում ես, ապա Տերն ամեն օր ու ամեն ժամ սկսում է ակնհայտորեն օգնել ու քաջալերել քեզ, մինչև որ հաղթես: Հաճախ անգամ խաչիդ ծանրության բեռան մեծ մասն ինքն է վերցնում: Օրեր ու ժամեր կան, երբ անկարող ես՝ այդժամ ամբողջ բեռդ է վերցնում, մինչև կրկին կարողանաս խաչդ ինքդ տանել: Այդպիսին է մեր Աստված: Միայն թե, որպես բանական մարդ՝ մտքով չհրաժարվես հասանելիք խաչիցդ: Քրիստոս մարդկության համար խաչ վերցրեց, մենք նախ՝ մեր և մեր մերձավորների համար պիտի վերցնենք: Որովհետև եթե հաղորդ ես ցեղիդ փառքերին, ապա ուժերդ ներածին չափ պարտապան ես նաև հանցանքների համար ևս, այդ հանցանքների դիմաց գործերի ապաշխարությամբ, որ ծառն արմատից սկսած ի բարին փոխվի: Նախ քո, ապա ազգի և ապա մարդկության: Մի՛ մերժիր քո մեծ, կենդանի նախնիներին և մարդկության մեծ մշակներին ու մարդկության քրիստոնյա մեծ նախնիներին, որ նրանք էլ նեղության պահին զորավիգ լինեն քեզ, մեկ լինեն քեզ հետ՝ իրենց կենդանի և արդար բանական դաշտով և համախմբով: Բնական է՝ սկզբում քո անձի, ընտանիքի հոգևոր կարիքները ավելի դյուրին է հոգաս, քան դեռ քո ազգի և ավելի դյուրին է քո ազգի հոգևոր կարիքները հոգաս, քան ողջ մարդկության՝ ազգերի հոգսը, որ Աստծո Որդու՝ Քրիստոսի ընդհանուր հոգածության և հովվության բնագավառն է՝ իր առաքած մեծերով, որոնց մարդկանց որդիներից ընտրեց ու բարի մշակներ նշանակեց իրեն լսող հավատավորներից:

Նժդեհը վերարթնացրեց Աստվածաշնչյան նահապետական կենդանությունը, որպեսզի ժողովրդի մեջ կրկին կյանքի կոչենք: Որովհետև տեսավ և վկայեց թե՝ մեր նախնիների հոգիները Աստծով կենդանի են և մեր արդար պատերազմների ժամանակ, երբ կոչում ենք նրանց օգնության, նրանք մեզ



հետ ելնում են բարի պատերազմի: Ես կավելացնեի՝ չկոչեն էլ՝ ելնում են, եթե մենք ելնում ենք բարի պատերազմների: Նաև կավելացնեի, ի՞նչ իմանանք, որ նրանց հոգով, նրանց ոգեկոչով չէ, որ ելանք բարի պատերազմների: Ամենքս էլ:

Որպեսզի մեր արմատների հետ կապն ամրանա, Նժդեհը գիտեր, որ «Հայրերի հին մեղքերի դիմաց որդիներն են հատուցում և այդ պարտավորությունից փախչողներին պատմությունը որոնում, գտնում է ու դատում»:

Ոչ մի հանցասեր և մեղսասեր իր մեջ կյանք ունենալ չի կարող, եթե ոչ միայն Աստծով: Ինչպես ասում են՝ Աստծո ձեռքից և ոչ մի հանցագործի ազատում չի լինում, եթե մեղավորը ապաշխարություն չի հատուցում: Այլ միայն Աստծուց ներում (թողություն) խնդրելը և ապաշխարելն է օգտակարը, որպեսզի թե ավելի չապականվենք և թե՛ ավելի մեծ դատաստան չսկսվի:

Այնուամենայնիվ, առաջին Բաբելոնից հետո Բաբելոնյան խաթարումը ողջ մարդկության մեջ որպես մահացու հիվանդություն գործեց: Նախ ամենքը ապստամբեցին Աստծո դեմ, ապականվեցին ու ջրհեղեղով կործանվեցին: Միայն Նոյն իր ընտանիքով ազատվեց: Մյուս Բաբելոնով՝ լեզուների խառնակում եղավ: ԽՍՀՄ Բաբելոնով՝ անհավատության չարիքը հարվածեց մարդկության մի մասին և գրվածքի համեմատ՝ ուղիղ յոթանասուն տարի անց՝ ԽՍՀՄ Բաբելոնը փլուզվեց: Ապա, վերջին Բաբելոնն է այսօր կազմավորվում, որ արդեն՝ կրակե հեղեղով է կործանվելու և այլ մեծ աղետներով, ինչպես Գրվածքն է ասել: Արևը պիտի խորշակահար անի ապստամբներին. մի դատաստան, որ փոքր ինչ արդեն սկսվել է «Համընդհանուր տաքացմամբ»: Օրինակ. 2003թ. Ֆրանսիայում արևի տապից 18000 մարդ մեռավ, 2005 թ. ամռան սկիզբում, Իտալիայում արևի տապից մեռածները 20 000 մարդ էր հաշվվում: 2005-ի Պակիստանի երկրաշարժի

զոհերը առայժմ 72 հազար է հաշվվում: Ամերիկյան մեծ փոթորիկների ու զոհերի, ավերների մասին ասվում է թե՝ պատմության մեջ դեռ նման մեծությամբ չեն եղել և առաջիկայում էլ, եթե ապաշխարություններ չլինեն՝ ավելի պիտի մեծանան այդ աղետներն աշխարհում: Որտեղ հակաԱստվածաշնչյան դրույթներ են մարդիկ հասունացնում, այնտեղ էլ՝ հասունանում են այդ ահռելի աղետները: Ճշմարիտ որ.

«ԵԹԵ ՉԱՊԱՇԽԱՐԵՔ՝ ԱՄԵՆՔՈՎ ԿՈՐՉԵԼՈՒ ԵՔ» Տերունական խոսքն է սկսել իրականանալ, Տերունական մեկ այլ խոսքի բանալիով թե.

«ԱՅՆ ԽՈՍՔԸ, ՈՐ ԽՈՍԵՑԻ, ԱՅԴ ԽՈՍՔԸ ՊԻՏԻ ԴԱՏԻ ԱՇԽԱՐՀԻՆ», բնականաբար այն ժամանակ, երբ դատաստանը սկսվի: Որովհետև ճշմարտությունը խոսեց ու չլսեցին: Ուրեմն՝ այդ խոսքն է լսել մեզ պետք, որովհետև ով ուշադիր չեղավ կամ խարդախեց այդ խոսքին, նա իր կորուստն ինքն է նախապատրաստում: է, ինչու՞ այդքան անխելք լինել՝ անբան անասունների նման:

Եվ այս ամեն դատաստանների և հետո լինելիքների մասին Քրիստոս զգուշացրել է Հովհաննեսի Հայտնության Գրքում: Այսինքն՝ չապաշխարողների համար՝ տապն ու հզորազոր աղետները ավելի հզորանալու են: Գիտնականներն արդեն անհանգիստ են, որ «Ողջ երկրի ջերմությունն է սկսել բարձրանալ», երբ մեղքից մարդկության դարձով է միայն, որ ամեն բան կկարգավորվեր. որ զգուշացրել է Աստված: Ինչ ցանում եք՝ այդ եք հնձելու,- ասել է իմաստուն խոսքը:

ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՐԵՄՆ՝ ԱՄԵՆԱՄԵԾ ՉԱՐԻՔՆ է:

Իսկ Աստծո Սուրբ Եկեղեցի՞ն: Նրանք, որոնց Տերը խոսք է տվել փրկել: Չէ՞ որ նրանք ևս կարող են ընկնել այդ պատիժների տակ: Սակայն կարդում ենք, որ երկրագնդի ահռելի պատիժներից առաջ, Աստված իր սուրբ եկեղեցին երկրից զատելու-վերցնելու է երկինք, իր մոտ, ապա մնացող չապաշ-



պարողների վրա են իջնելու Աստծո դատապարտության ահռելի պատիժները: Եվ այն եկեղեցիները, որոնք խնդիրներ են ունենալու Աստծո առաջ, նույնպես պատժի տակ են լինելու, եթե ժամանակին չապաշխարեն: Եվ սին են լինելու նրանց հույսերը, ովքեր ասում են՝ մկրտված ենք և վերջ, այժմ ինչ չարիք ասես կարող ենք գործել առանց դատ ու դատաստանի: Հիշենք, որ Հուդա Իսկարովտացին ևս մկրտված էր: Եվ մեծ աղետից հետո Աստված իր եկեղեցին կրկին իջեցնելու է երկիր:

Այսինքն թե, Աստծուն չընդունող հավատացյալները նույնպես, ըստ հիմար կույսերի առակի օրինակի պիտի մնան այդ պատիժների հատուցման մեջ, քանի որ աշխարհին հաճո ապրելն ու հոգևորը նույնահավասար դիտեցին: Եվ պիղծ և սուրբ լինելը նույնը համարեցին: Եկեք, մեր չարչարված Հայաստանով չվազենք դեպի աղետ ու կործանում և այդժամ Տիրոջով լավագույնս պիտի կարգավորենք մեզ ու մեր երկիրը:

Աշխարհակուլ բաբելոնացման խառնակ կարելին այսօր Աստծո արդարությունն ու սատանայի դրդած հանցանքները մեկ է դիտում, հաճախ դրանք շփոթել տալիս՝ հանցանքը որպես Աստծո արդարություն և Աստծո արդարությունը որպես հանցանք օրենսդրելով ու պարտադրելով ազգերին: Օրինակ՝ միասեռականությունը օրենսդրորեն հարգելի իրավունք դիտել տալով: Կամ հանցանքն ավելի վեր դասելով արդարությունից և հանցանքը պատվելով ու պատվել տալով մոլորվածների միջոցով: Բաներ, որ մեծ դատաստանի են արժանանալու: Ինչպես ասում են՝ Խառնակ և պոռնկացող Բաբելոնը Աստծո համբերությունն է փորձելու: Բնական է՝ ապականության մեծացման հետ այդ համբերությունը պիտի սակավանա և պատժաբեր բարկությունն ավելանա բնական խոշոր աղետներով՝ որ ողջ աշխարհի վրա են ելել, նաև Հայաստանի վրա կելնեն, եթե մեզ անհրաժեշտ ապաշխարությունն-

ները քաջությամբ չիրագործենք: Այնպես որ՝ աղետների պատճառների ապաշխարությունը մնում է հրամայական խնդիր, օրախնդիր՝ ամենքի համար էլ:

Ծանոթ լինելով Նեռի աշխարհ գալու արձանագրություններին, Նժդեհը խորապես գիտակցեց, որ բաբելոնների և մեծ Բաբելոնի դեմ հնարավոր է միայն Աստծո պատվերով՝ ազգային եկեղեցու հզորացմամբ հաղթանակ տանել: ՉԱՊԱԿԱՆՎԵԼ:

Մեր նախնիներն ասում էին՝ ԵՎ ԲԱՆՆ ԷՐ ՃԻԳ ՈՒ ՋԱՆՔ: Այսինքն, եթե մեկի ուժերն էլ չէր պատում, ապա ճիգ ու ջանք էին գործադրում՝ Աստծով կերտվելու և ազնվականանալու: Եվ հաղթո՛ւմ էին: Հաղթո՛ւմ էին ամեն օր. ամեն պահ՝ ծուլությունն անվանելով մահ և թույն: Խաչակրության ազնվական, աշխարհին անտանելի թվացող, սակայն քաղցր ասպարեզում էին հաղթում:

Մեր լուսավոր հայրերը, որ դժվարին ձեռքբերումներով առավել իմաստուն էին, քան մենք, մենք, որ շատացած գայթակղությունների պատճառով սրբություններից թվում է անհամեմատ ետ ենք մնացել, հայտնվել մի չար ժամանակում, ուր միմյանց ապաշխարություններն են յուրացնում, Աստծուց խորթանալով, խորթացնելով՝ անազնվականության գայթակղությունների որոգայթներով, ուրիշի արյունը խմելով և ամենևին չամաչելով. «Տերն ամեն ինչ ներում է, մեր եղբայրասպանությունն էլ կների», պոռնկորեն բարբաջելով: Սակայն առանց ժամանակին ապաշխարության ինչու՞ պիտի երբևէ ներում լինի: Նրանք (սուրբ Հայրերը) որպես հոգու ինքնակամ, պարտավոր, մեզ համար խաչյալ բժիշկներ՝ առավել էին ժողովրդասեր, մարդասեր, քանի որ առավել Աստվածասեր էին: Նրանց որդիները պիտի լինենք: Նրանք երեկ արդեն ճշմարիտ այն հետևությանն էին եկել, որ ժողովուրդը ոտքի կելնի միայն իր ազնվական Ապավենով՝ Քրիստոսով: Միայն օրինություն կիջնի մեր ազգի մեջ կենսառողջ քրիստոնեությամբ: Եվ բնական ու ճշմարիտ էր այդ հետևությունը, որովհետև նա, ով ստեղծել է մեզ, ավելին գիտի մեր մասին, քան մենք ինքներս մեր մասին. ուրեմն՝ բժշկելիս էլ նա առավել լավ և կատարյալ է բժշկում, խնամարկում, քան մենք ինքներս մեզ: Այսինքն՝ Դեղն Ինքն է և մեր մարդկային գետնաքարշ փորձություններից դուրս գալու Դուռն Ինքն է, և ճանապարհն Ինքն է՝ ՔՐԻՍՏՈՍ, հայ ժողովրդի Աստված-Ապավենը: Այդ է հաղթականն ու միակ առողջը՝ Վերին այդ Գավթում մեզ համար տեղ ունենալու: Որովհետև Աստվածային խոստումն ասում է. «Ով (այդ հավատարմություն-շնորհն) ՈՒՆԻ՝ ԱՌԱՎԵԼԸ ԿՈՒՆԵՆԱ». մի խոստում, որ հույս ապավեն և վստահարան է թե հանճարի, թե թագավորի և թե ծառայի համար էլ, եթե նրանք ընդունում են:

Բարի Սամարացու առակը Տիեզերական մեծ արդարություն և խորհրդապաշտություն է մեզ այս առումով ուսուցանում: Մինչ ի մահ ծեծվածի ու թալանվածի ցեղակիցների տարբեր խավեր անցնում են մինչ ի մահ ծեծվածի կողքից և խուսափում են նրան օգնել, «ո՞վ կուզենա գլխացավանքի մեջ ընկնել, իրենք իբր ավելի կարևոր գործեր ունեն, հայրենասիրական»: Ինչպես ասենք հայ ոչ քիչ հարուստներն են հայ աղքատների կողքից անցնում և նրանց «չեն նկատում», որ չխղճմտեն: Եվ ոչ միայն չեն օգնում, այլ իրենց չօգնելն անգամ «ընտիր կերպով», վարպետ ստով արդարացնում են՝ իրենց իսկ և իրենց նմանների աչքին: Սակայն ահա այդ նույն ցեղի կողմից արհամարհված Սամարացի ճամփորդի խղճմտանքը չի տանում և ճամփորդությունն ընդհատելով՝ օգնում է մինչ ի մահ ծեծվածին, առաջին օգնությամբ բժշկում, իջևանի վարձ տալիս ու ավելին տալ էլ խոստանում վերադարձի ժամանակ, եթե իջևանատան խնամողները ծեծվածին բժշկելիս ավելին ծախսած լինեին: Այս ամենը Բարի

Սամարացին անում է «անծանոթ» մի մարդու համար և ոչ թե իր ցեղակցի, մի մարդու համար է անում, որին ամենևին չէր ճանաչում և որին առաջին անգամ էր տեսնում: Այսինքն, եթե այս կերպ չէ հայրենասիրությունդ, ապա ուրեմն ինչ որ մի կարևոր տեղում վնասել, ստել, ապականել, խաբել ես քո ժողովրդին:

Այսօր էլ, համոթ մեզ, հեռուստացույց երբ միացնես, ամեն տեղից օտար-կեղտոտ բարքեր են ներխուժում սենյակդ, աչքդ ու միտքդ ապականում կամ գայթակղում, մինչ ի մահ ստորացնում ու հոգևորապես մինչ ի մահ ծեծում, թալանում, խեղում են ու սպանում: Մարդկայինը թողած հուշում քեզ անասնայինը կամ անասնայինից էլ ցածը: Թվում է, արդեն քո տանն էլ չես կարողանում թաքնվել եկող բազմատեսակ հողմերից ու պիղծ հեղեղներից: Իսկ հայրենակիցներիդ մյուս ունևոր մասն էլ տեսնում են մահամերձ վիճակդ, բայց արհամարհում են քեզ, անցնում կողքիցդ և նսեմ ես նրանց աչքին, կորած ու անհենարան այլևս իրենց տռզած բաբելոն վիճակի համեմատ: Եվ հանգիստ թողնում են, որ վերքերիցդ մեռնես, իբր ազգախնդիր, արժեքավոր կարևոր գործեր ունեն, «Փրկիչ ծրագրեր են գնում քարոզելու, թե ինչպես պիտի ընկերոջն օգնել»: Այդպես իսկ կեղծավորվում են Բանի և գործի միջև: Երբ առաջին գործը ծեծվածին ծեռք մեկնելը պիտի լիներ, ըստ իրենց խոսած քարոզների: Որպես վկայություն, թե՝ ճիշտ էր իրենց խոսած խոսքի գաղափարը: Եթե ոչ՝ էլ ի՞նչ ազգախնդիր, կարևոր գործեր. առանց մահամերձ հայրենակցիդ, ընկերոջդ, տեսածդ նեղյալին օգնելու: Կեղծավոր գործեր չե՞ն լինի դրանք, փտած կամ մեռած: Չէ՞ որ՝ այդպե՛ս իսկ են:

Ուրեմն. խոսքն Աստծո արդարության մասին է, որ մեր նախնառաջը պիտի լինի: Մարդկայինից բարձր արդարությունը պիտի որոնենք, որ ճշմարտությանն էլ հաղորդ լինենք: Որովհետև ճշմարտությունը միշտ վեհ ու վեր է մարդկային ամենայն արդարությունից: Ուստիև. Տիեզերական արդարությունը՝ մեզ գտնելու, նորոգելու համար է, այսինքն՝ Աստծո մարդասիրությունն առավել առաջնային՝ Նախն է դառնում յուրաքանչյուրիս հանապազորդ կյանքում, ապա ազգը, որ շատ բաներով, մեծ Բարեկամի՝ Հիսուս Քրիստոսի կարիքն ունի, որ բժշկվի: Այսինքն. յուրաքանչյուրս որպես անհատ՝ նախ Բարի Սամարացու կարիքն ունենք և Բարի Սամարացի լինելու պակասը միմյանց հանդեպ մեզանով լրացնելու, կիրառելու կարիքն ունենք, որ լավ է ժամանակին լրացնենք և ոչ թե ուշացած, ուշացումներ է, որ դժբախտություններ է առաջացնում: Երբևէ չասենք թե՝ այս հարցերը մեզ չեն վերաբերում: Առակում պատմվող ծեծվածի կողքից անտարբեր անցնողներն են մեր մեջ մեր ազգակիցների վատթար օրինակները:

Նժդեհյան գաղափարախոսության հիմքը հենց այստեղից է: Նա մեծ հայրենասեր լինելով է, որ հայտարարեց

ՆԱԽ՝ ԱՍՏՎԱԾ, ԱՊԱ՝ ՀԱՅՐԵՆԻՔ:

ԵՎ «ԽԻՍՏ ԿԱՍԿԱԾԵԼԻ Է ՆՐԱՆՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՎՔԵՐ ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏ ՉԵՆ»,- ասաց մեծ իմաստասերը:

Որովհետև առանց Աստծո Հայրենիք. մանավանդ հոգևոր Հայրենիք՝ երբևէ լինել չի կարող: Ոչ հոգևոր կամ կեղծ հոգևոր հայրենիքն ընդամենը՝ կարող է դառնալ ավազակների որջ և ոչ թե եղբայրասիրության ծաղկուն այգեստան: Որոնենք ԵՂԲԱՅՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՏԱՆԸ, որին մեր լուսավոր Հայրերը Առաքելական հավատով և մեր սուրբ եկեղեցիով ձգտել են ունենալ:

Աստված հոգևոր հայրենիք քարոզող բոլոր ձգտողներիս, ծուլությունը մերժող հավատավորներիս ամենայն օր և ժամ հաղթանակ պարգևի: Օրհնությամբ ամենասուրբ Երրորդության, որին հավիտյանս մեր պատարագ վարքերով փառք տվողներ լինենք: Ամե՛ն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

*Աստվածաշունչ*

*Գարեգին Նժդեհ-Երևան-1995. Մ. Լալայանի աշխատասիրությունը*

*Ռաֆայել Համբարձումյան- Վարք Նժդեհի, Երևան-2001*

*Գարեգին Նժդեհ-Հատընտիր, Երևան-2001*

*Գարեգին Նժդեհ- Ասույթներ, Երևան-2002*

*Ռաֆայել Համբարձումյան-Գարեգին Նժդեհ, Երևան-2003*

*Ռ. Համբարձումյան-Գարեգին Նժդեհ, կենսագրական յուելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ, Երևան-2005*



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Հեղինակի առաջաբանը* ..... 3

Սուրբ հաղորդության պահեր՝
ձեռամբ Նժդեհ-իմաստունի ..... 10

Անհոգի մարդը չարագործ է,
հոգի՞ն է բանալին տիեզերքի ..... 10

Ուզո՞ւմ եք խորապես ճանաչեք մեկին.
խոսակցեք նրան Աստծո մասին ..... 10

Հոգու զույգ հենարանները՝
Աստված և հայրենիք ..... 11

Գիտություն և կրոն ..... 11

Առողջ հոգեվիճակ չէ անկրոնությունը ..... 11

Չկա մշակույթ առանց կրոնական զգացումի ..... 11

Գարեգին Տեր-Հարությունյանն ինքն իրեն
անվանեց Նժդեհ, այսինքն՝ օտարական ..... 12

Նժդեհը և եկեղեցին ..... 14

Նժդեհը՝ աշխարհ առաքված իմաստասեր ..... 18

Եթե Նա կա, ես անմահ եմ ..... 23

Եղել եմ խոր հավատքի և էթիկայի մարդ .

Թող փայլի՝ խաչը ..... 30

Հայ ժողովրդի հավաքական խաչելիության
նժդեհյան նկարագիրը ..... 39

Ուժը չի կարող ծնել ճշմարիտ իրավունք ..... 45

Նժդեհ և Անդրանիկ ..... 59

Կուսակցամոլություն ..... 69

Մայրերի ափի մեջ պիտի փնտրել
ազգերի ճակատագիրը ..... 76

Նժդեհը՝ մարգարե ..... 90

«Աստծու փեշից բռնեցեք հանուն հայրենյայց» ..... 101

«Կյանքում խղճմտանքես զատ ես ճանաչեցի
երկու այլ դատավորներ ևս՝ Աստված և ժողովուրդ» ..... 111

Եթե հաղորդ ես նախնիներիդ փառքին ..... 120

Նժդեհի որոնածն արդեն կար Հին կտակարանում ..... 125

ա). Նժդեհը հարաբերվեց մոլորման ծանր վտանգին . ..... 125

բ). Ցեղակրոնի համար չկա ավելի մեծ վատություն,

քան հոգևոր խզումը...- ասում է Նժդեհը ..... 132
գ). Հին կտակի ոսկյա բանալին ..... 133
դ). Ադամ հեթանոս չստեղծվեց և Նոյը հեթանոս չէր ..... 135
ե). Քրիստոնեությունը հանիրավի է դիտվում
խեղճի կրոն ..... 137
Գիտակից նահատակությունը Վարդանանց օրինակի ..... 148
«Ով չի գերազանցում իր նախնիներին» ..... 153
«Աստվածամարդու հոգու կայծը» ..... 154
Եթե «Աստծո փեշից բռնած ապրեինք»
եղեռնը չէր լինի ..... 155
«Երբեք և ոչ մի տեղ առանց հոգևոր հայրենիքի» ..... 168
Բարի սամարացու խրատ-օրինակի դիտարկում ..... 171
*Օգտագործված գրականություն* ..... 182

ՄԱՔՍԻՄ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆ

# ՀՈԳԵՎՈՐ ՆԺԴԵՀԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՍԱԲԱՑ
PUBLISHING HOUSE

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 46
Հեռ.՝ 53-96-47, (091) 42-51-63
E-mail: lusabatc@mail. ru
lusabats@netsys.am

Հրատարակչության տնօրեն և գլխավոր խմբագիր՝
Վ. ԱՄԼԱՆՅԱՆ
Համակարգչային աշխատանքները՝
Ս. ԲԱՐՈՅԱՆԻ
Շապիկի ձևավորումը՝
Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր՝
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տպագրված է «Լուսաբաց հրատարակչատան» տպարանում

Կարեն Սմբատյան - ՆԺԴԵՀ

1200.00 դր